

Հ. ԱՃԱՌՅԱՆ

ՔՆՆՈՒԹՅՈՒՆ
ՎԱՆԻ ԲԱՐԲԱՌԻ

ԵՐԵՎԱՆ
1958



Р. АЧАРЯН

ИССЛЕДОВАНИЕ ВАНСКОГО ДИАЛЕКТА



ИЗДАТЕЛЬСТВО ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА

ЕРЕВАН — 1952

Հ. ԱՃԱՌՅԱՆ

ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՎԱՆԻ ԲԱՐԲԱՆԻ




Պատ. խմբագիրներ՝

պրոֆ. է. Բ. ԱՂԱՅՅՆ

և

դոց. Մ. Գ. ՏԵՐ-ՂԱԶԱՐՅԱՆ՝



Mr. H. H. H. H. H.

ՀՐԱՉՅԱ ԱՃԱՌՅԱՆ

1953 թ. ապրիլի 16-ին վախճանվեց ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, Երևանի Վ. Մ. Մուրադովի անվան պետական համալսարանի արևելյան լեզուների ամբիոնի վարիչ, Չեխոսլովակիայի Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, ՀՍՍՌ գիտության վաստակավոր գործիչ, պրոֆեսոր-դոկտոր Հրաչյա Հակոբի Անաոյանը:

Բազմավաստակ գիտնական Հրաչյա Անաոյանը իր բեղմնավոր ստեղծագործական կյանքը, իր գիտական մեծ կարողություններն ի սպաս է դրել հայ լեզվաբանության ու բանասիրության զարգացման գործին: Աշխարհի լեզվաբանական գիտական հասարակայնությունը նրան ճանաչում է որպես անխոնջ հետազոտողի, որպես հմուտ լեզվաբան-հայագետի, որ հարստացրել է հայագիտությունը մի շարք կապիտալ աշխատություններով:

Հրաչյա Անաոյանը ծնվել է 1876 թվականին, Կոստանդնուպոլսում, արհեստավորի ընտանիքում: Սկզբնական կրթությունն ստացել է իր ծննդավայրում՝ սովորելով Պոլսի Կենդրոնական վարժարանում, ապա՝ 1895-ին մեկնել է Ֆրանսիա՝ բարձրագույն կրթություն ստանալու. այստեղ նա սովորել է Սորբոնի համալսարանում, աշակերտելով հատկապես Անտուան Մեյեին: 1897 թվականին Փարիզի

լեզվաբանական ընկերությանը (Société de linguistique de Paris) ներկայացնելով լազերենի ուսումնասիրությունը՝ բնութագրում է ընկերության անդամ: Նույն թվականին մասնակցում է արևելագետների տասներեքերորդ կոնգրեսին՝ Փարիզում: Այդտեղ նա կարդում է երկու գեկուցում հայերենի մասին. Հյուրըման հայագետը, որ նիստի նախագահն էր, հավանելով գեկուցումները՝ հրավիրում է Անադյանին իր մոտ՝ Ստրասբուրգ, յուր դասախոսությունները լսելու: Ընդունելով այդ հրավերը, Անադյանը 1898 թվականին գնում է Ստրասբուրգ և մեկ սեմեստր ունկնդրում Հյուրըմանին: Ավարտելով բարձրագույն կրթությունը և ստանալով լեզվաբանական մեծ պատրաստություն՝ Անադյանը 1898 թվականին գալիս է Անդրկովկաս և ամբողջությամբ նվիրվում գիտական-մանկավարժական գործունեության, իբրև ուսուցիչ աշխատելով էջմիածնում, Շուշում, Նոր Բայազետում և այլուր: Սակայն Անադյանի գիտական բեղմնավոր գործունեությունն սկսվում է Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո: Հիմնադրվում է Նրևանի պետական համալսարանը. Անադյանը հրավիրվում է որպես հայագիտական, լեզվաբանական ու արևելագիտական առարկաների դասախոս և անհուն սիրով ու ոգևորությամբ նվիրվում երիտասարդ սերնդի դաստիարակության պատվավոր գործին: Հենց այս շրջանում էլ Անադյանը հրատարակում է իր խոշոր մենագրական աշխատությունները: Նրա գրչին են պատկանում շուրջ երկու հարյուր գիտական մեծածեփ աշխատություններ: Նրա «Հայերեն արմատական բառարանը», «Հայ բարբառագիտությունը», «Հայոց անձնանունների բառարանը», «Հայոց լեզվի պատմությունը», «Հայոց լեզվի լիակատար ֆերականությունը» և այլ մենագրական ստվարածավալ աշխատությունները մեծագույն ավանդ են ոչ միայն հայագիտության, այլև սովետական լեզվաբանական գիտության բնագավառում: Նա է նիմնադիրը հայ գիտական բարբառագիտության. նրա գրչին են պատկանում ինչպես հայերեն բարբառների ընդհանուր ուսումնասիրությունն ու գիտական դասակարգումը, այնպես էլ բազմաթիվ հայերեն բարբառների մենագրական ուսումնասիրությունները, որոնցից մեկն է սույն՝ վանի բարբառի ֆենությունը: Նրան է պատկանում հայոց լեզվի պատմության խոր գիտական, ամբողջական ուսումնասիրությունը:

Անդով կերպով զբաղվելով իր գիտական ուսումնասիրություններով՝ Անաոյանը միաժամանակ անձնուրացության հասնող ոգևորությամբ ու խանդավառությամբ անցնում էր լեզվաբանական կարգեր: Նրա անեցրած կարգերից շատերն այժմ արդեն ստացել են ֆիլոլոգիական գիտությունների դոկտորի կամ քեկնաժողի գիտական աստիճան և աշխատում են հայագիտության ու ընդհանուր լեզվաբանության բնագավառում:

Սովետական ժողովուրդը, Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը միշտ էլ բարձր են գնահատել այն խոշոր ծառայությունները, որ մատուցել է Հ. Անաոյանը սովետական գիտության զարգացման գործին: 1935 թվականին Սովետական կառավարությունը նրան շնորհեց Հայկական ՍՍՌ գիտության վաստակավոր գործիչի պատվավոր կոչում: 1943 թվականին Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հիմնադրման առաջին իսկ օրից Հ. Հ. Անաոյանը ընտրվում է ակադեմիայի իսկական անդամ և անսպառ եռանդով մասնակցում նրա գիտական աշխատանքներին:

Չնայած իր զառամյալ հասակին և վատառողջ վիճակին, Հ. Հ. Անաոյանը մինչև իր կյանքի վերջին օրը երիտասարդի խանդավառությամբ շարունակում էր մանկավարժական ու գիտական գործունեությունը, աշխատելով հատկապես «Հայոց լեզվի լիակատար բերականություն» բազմահատոր աշխատության վրա:

Հրաշյա Անաոյանի կյանքը գիտության անխոնջ մշակի, մեղավաշան աշխատողի փայլուն օրինակ է: Արտակարգ բեղմնավորության հասնող իր աշխատասիրությամբ նա մեզ բողբ է գիտական մեծարժեք ու հարուստ ժառանգություն, որ անմահ փառքով է պսակվում նրա անունը:

Հայ ժողովուրդը երախտագիտությամբ է համակված իր հարազատ ողբու, հայ նշանավոր լեզվաբանի նկատմամբ:

*
*
*

«Փննություն մանի բարբառի» աշխատությունը տպագրության էր հանձնվել հեղինակի կենդանության օրոք: Չնայած մշտական վատառողջ վիճակին և աչքերի կուրության, Հ. Հ. Անաոյանը հսկում

Էր տպագրության բնթացքին և անհրաժեշտ ուղղումներ կատարում: Այդ աշխատանքը նա կատարել է մինչև չորրորդ մամուլի վերջը (էջ 64): Շարունակությունը տպագրվել է հեղինակի մանվանից հետո՝ դոցենտ Մելիքսեթ Տեր-Ղազարյանի անմիջական նսկողությամբ:

ԷԳ. ԱՂԱՅԱՆ

Ա. Ռ. Ա. Ջ. Ա. Բ. Ա. Ն.

Վանի բարբառի քննությունը ձեռնարկել եմ էջմիածնում 1898—1902 թվերին, երբ Գևորգյան ձեմարանում տաճկերեն լեզվի ուսուցիչ էի: Ինձ աջակցում էին բարձր լսարանների տասնյակ ուսանողներս, որոնք բոլորը նոր էին գաղթել Վանից և շատ լավ գիտեին իրենց մայրենի բարբառը:

Վանի բարբառին զուգընթաց ուսումնասիրել եմ նաև Ուլմիի Ֆնթաբարբառը, նույնպես էջմիածնում, 1899 թ., ուլմեցի մի նորեկ գաղթականի վրա, որ բացի իր մայրենի բարբառից ո՛չ մի լեզու չգիտեր: Կազմեցի նրա հետ ուլմեցոց բառերի ցանկը՝ մինչև Ֆաւակատի բառը, որից հետո, դժբախտաբար, հանկարծ ուլմեցիս անհետացավ:

Մոկաց բարբառի բառացանկս կազմել եմ Երևանում, 1926 թ., աջակցությամբ մոկացի մի ուսանողի, Մոկսի Դաշտ թաղից (քաղաքից միայն կես վերստ հեռու), ծնված 1890 թվին, ավարտած մեր համալսարանի պատմա-լեզվագրական բաժինը, դասախոս բանֆակում: Մոկսում եղած ժամանակ ինքն է օգնել ակ. Հ. Ա. Օրբելիին կազմելու համար Մոկաց բարբառի ուսումնասիրությունը, որը դեռ անտիպ է:

Աշխատությունս առաջին մասը (Վանի բարբառի ձայնաբանությունը) հրատարակվեց գերմաներեն լեզվով, «Zeitschrift für ar-

menische Philologie» ուսումնաթերթի մեջ, հտ. 1, էջ 74—86 և 121—138, «Lautlehre des Van-Dialekts» վերնագրով, ապա արտատպվեց առանձին տետրակով (Marburg, 1901):

Քերականության ուրվագիծը տպվեց իմ «Հայ բարբառագիտություն» աշխատության մեջ, Նոր-Նախիջևան, 1911, էջ 140—158 (նմուշներով միասին):

1948 թվին, 46 տարի անց, Հայկական ՍՍՌ Գիտ. ակադեմիան առաջարկեց ինձ վերամշակել և ավարտել կիսատ աշխատությունս: Սիրով ընդունեցի առաջարկը և գործի ձեռնարկեցի: Այս անգամ իմ գլխավոր աշակիցն եղավ մեր համալսարանի շրջանավարտ, բանասիրական գիտությունների թեկնածու, հայերենի և լատիներենի դասախոս ընկ. Մելիքսեթ Տեր-Ղազարյանը: Լինելով վանեցի՝ նա հատկապես մասնագիտորեն տեղյակ է Վանի բարբառին, որի ընդարձակ և ամբողջական բառարանն է կազմում: Նա վերստուգեց ամբողջ աշխատությունս, սխալներն ուղղեց, և իր հետ միասին գիտական ուղղագրության վերածեցինք այն բոլոր նմուշները, որոնք հատկապես իմ այս գործի համար գրեցին իմ մի խումբ ծանոթներս ու բարեկամներս:—Սրտագին շնորհակալություն բոլորին:

ՄԱՏԵՆԱԿԻՏՈՒԹՅՈՒՆ

Ազգային երգերու և ուրիշ ավանդներու վրա, «Բազմավեպ», 1843, էջ 332—334:

Աղանյան Գ., Գավառաբաներ (Վանի բարբառով), «Լուսն», 1898, Ա, էջ 325—327 և 1899, Ա, էջ 269—275:

Աղանյան Ն., Ժողովրդական գավառաբաներ և Վանի կյանքից, «Լուսն», 1898, Բ, էջ 270—289:

Աղբար, Մածկախոսություն (վանեցոց ճնճղկերենը, կոկերենը և ծածկայեզվով բաներ), «Արձագանք», 1897, № 17:

Աղուանյան Գ., Վարազա այգեպանի այծը և սիրերգ, «Լուսն», 1898, Ա, էջ 321—324:

Անառյան Հ., Lautlehre des Van-Dialekts, ZAPh հտ. 1, 74—86, 121—138 (արտատպ. Marburg, 1901):

Անառյան Հ., Թուրքերենի ազդեցությունը հայերենի վրա և թուրքերենե փոխառյալ բաները Պոլսի հայ ժողովրդական լեզուին մեջ, համեմատություն Վանի, Ղարաբաղի և Նոր-Նախիջևանի բարբառներուն, Վաղարշապատ, 1902:

Անառյան Հ., Քմականներու կոկորդական մնալը, «Հանդես ամսօրյա», 1905, էջ 254:

Անառյան Հ., Չորեքշաբթի (Վանի բարբառով), «Հանդես ամսօրյա», 1906, էջ 129—130:

Adjarian H., Gutturales issues de semi-occlusives par dissimilation. MSL, 14, 288.

Անադյան Հ., Հայ բարբառագիտություն, նոր-նախիչևան, 1911, էջ 140—158: (Խոստում է Վանի բարբառի մասին. նույնը հմ.ս. Classification des dialectes arméniens, Paris, 1909, էջ 51—54):

Ամիրճանյան Տ., Թո՛ղ ախպեր, թո՛ղ որ իմ սիրտ, «Ծիւն Եւփարայրի», 1866, № 7:

Անանյան Մ., Հոռովեղներ, «Փորձ», Գ տարի, ապրիլ, էջ 71—73:

Ապրո, Ժողովրդական երգեր (Վանի), «Մշակ», 1899, № 148 և 1890, № 4:

Գաղթական ոմն, Կադանդ Ս. էջմիածնի Գեորգյան ճեմարանում, «Արձադանք», 1897, № 3:

Գութանի երգը, «Աշխատանք», 1917, № 82:

Գրիչ, Մատենախոսություն «Մանանայի», «Փորձ», Ա տարի, № 2, էջ 339—358 (վերջում կա Վանի բարբառի քննությունը):

Գրիչ, Պանդուխտ վանցին (մատենախոսական), «Փորձ», Ա տարի, № 3, էջ 113—135:

Դադյան Խ., Տղա Դավթի և աղջիկ Խանդութի հեքիաթը, «Արարատ», 1895, էջ 431—438, 484—487:

Դանիելյան Մ., Իրկուան աղոթք Վանա բարբառով, «Բյուրական», 1898, էջ 459—460:

Երգ վանեցվոց: Համբարձման երկուշաբթին, «Բազմավեպ», 1887, էջ 16:

Երգ Վանի լեզուով, «Հայկական աշխարհ», 1868, էջ 81—83:

Ժողովրդի խոսք նարեկացու մասին, «Լուծա», 1899, Բ, էջ 325—328:

Իսահակյան Ա., Փշրանքներ ժողովրդական բանահյուսություն-նից (նաև Վանի բարբառով), «Ազգագրական հանդես», ԺԲ, էջ 104—108:

Լալայան Ե., Վասպուրական (բանահյուսություն), Ա պրակ (Վանի բարբառ), Թիֆլիս, 1912 (արտատպ. «Ազգագրական հանդեսից»):

Լալայան Ե., Վասպուրական (ազգագրություն), Բ պրակ (Շատախի բարբառ), Թիֆլիս, 1914:

Լալայան Ե., Երկու երգ (Մշ և Վն.), «Տեղեկագիր գիտութ. և արվեստի ինստիտուտի», 2 (1927), էջ 222:

Լևոնյան Խ., Դիցապաշտական նշմարներ գավառի մեջ (ունի Վանի ժող. բառեր), «Ավետաբեր», 1913, № 29—34:

Լևոնյան Խ., Համբարձման տոներ գավառի մեջ (ունի Վանի բարբառով երգեր), «Ավետաբեր», 1914, էջ 594—596, 622—623:

Խալաթյան Բ., Իրանի հերոսները հայ ժողովրդի մեջ (Վանա, Կողբի և Ապարանի բարբառներով), Պարիս, 1901:

Միլվան Գ. Լ., Վանեցոց մանկական բառեր և Վանա արկողյան բարբառեն նմուշ մը, «Բյուրակն», 1900, էջ 13—14:

Միլվան Գ. Լ., Սիրերգ, պարերգ, «Բյուրակն», 1899, էջ 15—16:

Միլվան Գ. Լ., Մեկ անգամ (երգ Վանի բարբառով), «Բյուրակն», 1899, էջ 151:

Կաթոռիկ, Վանեցոց պարերգը, «Բյուրակն», 1898, էջ 558:

Կաթոռիկ, Ժողովրդական պարերը Վանա բարբառով, «Բյուրակն», 1898, 583:

Հայկունի Ս., Առածներ Վանա բարբառով, «Արարատ», 1895, էջ 16, 123, 161—162:

Հայկունի Ս., «Էմինյան ազգագրական ժողովածո», հտ. Բ, էջ 432—442:

Հայկունի Ս., «Էմինյան ազգագրական ժողովածո», հտ. Ե, էջ 201—227:

Հայկունի Ս., «Էմինյան ազգագրական ժողովածո», հտ. Զ, էջ 22—24, 27—31, 42—54, 66, 68, 85—87, 126, 143—148, 151—152, 157—158, 160—162, 186—191, 299—301, 310—311, 326—327, 339, 348, 350, 366, 377—378:

Ղաբիբյան Ա., Համառոտություն հայ բարբառագիտության, Երևան, 1941, էջ 340—345:

Մելիք-Հակոբյանց Հ. (Րաֆֆի), Աղթամարա վանքը, «Հյուսիս-սափայլ», 1860, նոյ., էջ 418—421:

Մելիքյան Սպ., Վանա ժողովրդական երգեր, «Տեղեկագիր գիտութ. և արվեստի ինստիտուտի», 1 (1926), էջ 229-ից մինչև վերջ:

Միսախոբյան Մ. Կ., Վանեցի պառավ Սառայի խրատ առ Կուտրաթ խաթուն և պատասխան, «Հանդես գրականական», 1888, Ա, 319—322:

Մկրչյան Մ., Գավառական պարերը, «Բյուրակն», 1898, էջ 182—183:

Մկրյան Մ., Լողվոր (պարերգ), «Բյուրական», 1898, էջ 395:
Նավասարդյան Տ., Հայ-ժողովրդական հեքիաթներ, հտ. 2, էջ 34—47, 98—102, հտ. է, էջ 108—112, առածներ Վանա բարբառով:

Շերենց Գ., Վանա սազ, Թիֆլիս, Ա, 1885, Բ, 1899:

Շիրոյանց Ղ., Անիոս Մարգարիտ, Պոլիս, 1875, էջ 53—54, (Վանի բարբառով):

Պեյլերյան Ա., Գեղջկական հարսանիք ի Հայաստան, Պոլիս, 1870 (ունի ժող. երգեր Վանից):

Սեդրակյան Ա., Քնար մշեցոց և վանեցոց, Վաղարշապատ, 1874:

Սրուանձտյանց Գ., Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի գուռ, Պոլիս, 1875:

Սրուանձտյանց Գ., Գավառական երգեր, «Լուամ», 1904, № 2, էջ 36—52:

Սրուանձտյանց Գ., Մանանա, Պոլիս, 1876:

Սրուանձտյանց Գ., Համով-հոտով, Պոլիս, 1884:

Սրուանձտյանց Գ., Գավառական ժողովրդական երգեր, «Արեւիկյան մամուլ», 1883, էջ 440, 465—468 և 1884, էջ 584—588:

Վանեցոց երգ կաթավու, «Բաղմավեպ», 1850, էջ 230:

Վանեցոց սիրո երգ, «Ազգագրական հանդես», ԻՅ, էջ 108:

Վանեցվոց քանի մի առածներ, «Արծիվ Վասպուրականի», 1861, էջ 32:

Վանիկ, Սիրերգ Վանա ու Երևանի գավառաբարբառով, «Բյուրական», 1898, էջ 566:

Վանցիների առածներ և անեծքներ ու բառեր, «Արմենիա», 1892, № 10, 14:

Վարդ, Արհեստը Հայաստանում, «Արաքս», հտ. է, 1897, գիրք Բ, էջ 26—29:

Վարդ, Մի պտույտ Վանի շրջակայքում, «Արաքս», հտ. Ը, 1898, գիրք Ա, էջ 53—65:

Տեկանց Մ., Ասիկն և իր աղջիկն, «Արտեմիս», 1903, էջ 37:

Տեկանց Հայկ. Գեովանդ (պարերգ Վասպուրականի գավառաբարբառով), «Գեղարուեստ», № 6, էջ 198—199:

Տեր-Սարգսյանց Ա., Պանդուխտ վանցին, Պոլիս, 1876:

Տեր-Սարգսեանց Ա., Շահեն ի Սիսիբ, Պոլիս, 1877:

Յավակցութիւն կնոջ, Մաշտեմ իրիկս մկա տ՞որ ի, «Մեղու»,
1863, էջ 21:

Փիղալեմյան Ղ., Չորս ընկերք, Թիֆլիս, 1882, էջ 56 և 117
(Վանի բարբառով):

Փշկյան Ղ., Փորի՞ ցավ թե սրտի ցավ, «Ծաղիկ», 1895, էջ
402—411 (պիեսա Վանի բարբառով):

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

Վանի բարբառը պատկանում է կը ճյուղին և համաձայն իմ «Հայ բարբառագիտության» դասավորության, հայ բարբառների մեջ բռնում է երրորդ տեղը: Արևմուտքից նա սահմանակից է Մշո և Բաղեշի բարբառին, արևելքից Ուրմիայի, Խոյի և Սալմաստի բարբառներին: Հարավում գտնվում են քրդախոս և արաբախոս հայերը, որով Վանի բարբառը դառնում է հայերենի հարավային սահմանապահը: Մշո բարբառից տարբերվում է նախ նրանով, որ զուրկ է շնչեղ թրթռուն բաղաձայններից (բ', գ', դ', ձ', ջ'), երկրորդ՝ նրանով, որ զրաբարի թրթռուն բաղաձայնները (բ, գ, դ, ձ, ջ) դարձնում է խուլ (պ, կ, տ, ծ, ճ) և երրորդ՝ նրանով, որ զուրկ է հայցականի գ նախդիրից: Վանի բարբառը նման է Մշո բարբառին և և մանավանդ ու երկբարբառային հնչումներով: Վանի բարբառը և ձայնը վերածում է իս-ի, ինչ որ չգիտե Մշո բարբառը, բայց նրա հյուսիսային մասը (Հարք գավառ—Բուլանըլս) ունի: Վանի բարբառը իր արևելյան սահմանակիցների հետ նույնն է հենց այս >իս ձայնափոխությամբ, թրթռունների խլացումով և էօ, իս ձայներով, որոնք նաև Ղարաբաղի բարբառի հատկանիշներն են: Սակայն արևելելյան հարևաններից նա բոլորովին տարբերվում է բայերի խոնարհման ձևով, ըստ որում Ուրմիայի, Խոյի և Սալմաստի բարբառները պատկանում են ել խմբին:

Երևանի բարբառի հետ նմանության գլխավոր կետերն են նախ՝ բացառականի -ից մասնիկով կազմությունը և երկրորդ՝ այն, որ շնչավոր էակաների սեռի խնդիրը կադմովում է ինչպես հայցական, նույնպես և տրական հոլովով: Այս երկու կետերով Վանի բարբառը գտնվում է «արևելյան և արևմտյան» կոչված բարբառների միջև:

Վանի բարբառը թեև ունի բավական շատ շեղումներ գրաբարի բառաձևերի համեմատությամբ, բայց դրանք չափազանց ալլափոխված չեն և սակավ վարժությամբ կարող են հասկանալի դառնալ բոլորին: Գլուղական բարբառը մի քիչ ավելի հեռու է գրաբարից: Օրինակ՝

Թօ կյո խեմ ի՛նչ տը անի ձիկ

«Թող գա տեսնեմ ի՛նչ պիտի անի ինձ»:

Իմ Բարբառագիտության մեջ (էջ 145) Վանի բարբառի ենթաբարբառներն եմ դրել՝ Տիատին, Մոկք և Ոզմի: Ենթաբարբառների սահմանը միշտ խախտու է. այս հարցի որոշման մեջ ես նկատի եմ առել նաև շրջանի մեծությունը կամ կարևորությունը: Այժմ ուրիշները Մոկք և Ոզմի առանձին բարբառ են ուզում հաշվել: Իմ այս աշխատության մեջ թեև բառացանկում համեմատության եմ դրել նաև Մոկաց և Ոզմիի բարբառային ձևերը, բայց նրանց ձայնաբանությունը և ձևաբանությունը քննության չեմ առել:

Ե. ՄԱՍ

ՉԱՅՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

1. Վանի բարբառի ձայնական դրությունը պարունակում է ընդամենը 46 ձայն, հետևյալ ձևով.

Ձայնավորներ՝ 9 հատ.

ա, ու, է, բ, ի, օ, էօ, ու, իւ:

Երկբարբառներ՝ 3 հատ.

ե, ո, հ:

Բաղաձայններ՝ 34 հատ.

Թրթռուն պայթականներ՝ բ, գ, դ, ղ, ձ, ջ

Սուլ պայթականներ՝ պ, կ, կյ, տ, ծ, ճ

Թավ պայթականներ՝ փ, ք, քյ, թ, ց, չ

Սեղմ բաղաձայններ՝ զ, ժ, յ, ը, ու, լ, մ, ն, վ, ֆ, հ,

հյ, ս, շ, խ, ղ:

Շնչեղ Թրթռուն բաղաձայններ չկան Վանի բարբառում.

2. Սրանց արտասանության եղանակը հետևյալ ձևով է.

Ա-ն արտասանվում է (հատկապես շեշտի տակ) փակ ձևով,

անգլիական a ձայնի նման, բայց նրանից մի քիչ բաց.— հյ. ա և • ձայնավորների միջին աստիճանն է:

ու-ն այն հնչումն է, որ գտնում ենք նաև Ղարաբաղի, Ագուլիսի, Մեղրիի, Մարաղայի և այլ բարբառներում. Չկա Երևանի, Թբիլիսիի և Պոլսի բարբառներում. Առատորեն

գտնվում է Վանի (ինչպես նաև Մոկաց և Ոզմիի) բարբառում։
Մյուս ձայնավորները պահում են հայերենի սովորական հնչումը։

3. Ե և Ո երկբարբառները համապատասխանում են մշեցի-
ների և Կարնո գյուղացիների ե, ո հնչումներին, բայց սրանց
չափ ծանր ու դանդաղ չեն, և արտասանվում են շատ ավելի
արագ, հատկապես Վն. ե-ն ավելի արագ է Մշ. ե-ից, քան Թե Վն.
ո-ն՝ Մշ. ո-ից։

Ո արտասանվում է մոտավորապես իւէօ (üö) ձայնախմբ-
ի նման, բայց ավելի արագ և մոտ է ձայնավոր հնչման. Նա-
խորդ աշխատություններիս մեջ ներկայացրել եմ էն, Ծ ձևերով՝
տպարանական հարմարության համար։

Երեք երկբարբառների մեջ էլ e և o բաց ձայնավորներ են։

4. Խուլ պայթականները ունեն շատ հստակ հնչում, Երեա-
նի կամ Ղաբաբաղի պ, կ, տ, ծ, և հնչյունների նման. նրանք չեն
տատանվում Թրթռուն և խուլ աստիճանների միջև (ինչպես են
Պոլսում և Նոր-Նախիջևանում)։ Գյ, կյ, քյ, ինչպես նաև ևյ,
քմային հնչում ունեն։ Վերջինը յուրահատուկ մի ձայն է, որ
գտնվում է նաև Ղաբաբաղի բարբառում, ինչպես Ղրբ. բրիյնեալ
«արեգակ»։ Արդի վանեցիները դժվարանում են այժմ հնչել այս
ձայնը և արտասանում են յ։

Շնչեղ Թրթռուն բաղաձայններ, ինչպես ասացինք, (բ', գ',
դ' և ալն) չկան բարբառիս մեջ։ Հ ձայնը շատ հազվագյուտ է։

Վանեցիները ունեն յուրահատուկ մի արտասանություն, որ
զանազանվում է մնացյալ բոլոր հայերի արտասանությունից և
որ մնում է վանեցիների ձայնի մեջ մշտապես, մինչև վերջ։ Այդ
արտասանությունը կարելի է զգալ, բայց նկարագրել անհնարին
է։ Փարիզում ուսանողությանս միջոցին, դժբախտաբար չկար
որևէ վանեցի հայ ուսանող, որպեսզի կարողանայի քննել նրա
ձայնը աբբա Rousselot-ի ձայնական մեքենաներով։ Ինձ թվում
է, Թե այդ յուրահատուկ արտասանությունը արդյունք է այն
բանի, որ վանեցիների կատիկը միշտ մի քիչ բաց է, հետևաբար՝
արտասանությունն էլ միշտ մի քիչ ոնգային։

Բ ՄԱՍ

ՁԱՅՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Ա

5. Հին հայերենի ա ձայնավորը վանի բարբառում սովորաբար ամեն գիրքի մեջ էլ փնում է ա, ինչ.

Բառասկզբում՝

ականջ>ականջ, ասեղն>ասեղ, արիւն>արուն, արծաթ>առծաթ, աղաչանք>աղանձեք, աղանանք,

Բառամիջում՝

սպիտակ>սիվտակ, հպարտ>խպառտ, հրեշտակ>խրէշտակ, խրիշտակ, պարապ>պարապ, պատկեր>պատկեռք, (հ)ազանիլ>>խայնել, պայծառ>պոծառ, սարկաւազ>սարկավաք.

Բառավերջում՝

այս>էսա, այդ>էտա, այն>էնա, տհա>տհա, իհա, գհա՝>>կրնա՛, արա՛>արա՛, ասա՛>ասա՛.

6. Շատ անգամ ա ձայնավորը դառնում է ու.

Կարևոր է քննել այս ու-ի ծագման հանգամանքները.

Հին լեզուներից հունարենն ու լատիներենը չունեն Թ ձայնավորը. Հնդիկները, որոնք ունեն այնպիսի հարուստ այբուբեն և որոնց քերականները այնպիսի հմտությամբ, ուշադրությամբ և մանրակրկիտ կերպով ուսումնասիրել են սանսկրիտի ձայնական գրությունը, չեն ճանաչում Թ ձայնավորը. Delitzsch, Klein-
ne Sumerische Sprachlehre, Leipzig, 1914, էջ 3 գտնում է, որ

սումբերներն լեղվի մեջ a -ն հնչվում էր $\tilde{a}$, ըստ որում սումբերական արձանագրություններում շատ հաճախ a ձայնավորը գրված է e : Եբրայեցիներնի և արաբերենի մեջ էլ a -ն հնչվում էր $\tilde{a}$: Հին հայերենը, ինչպես և վրացերենը չգիտեն այսպիսի ձայն, ըստ որում իրենց այբուբենի մեջ ոչ մի նշան չունեն այդ հնչման համար: Սակայն հին աղվանից լեզուն ուներ թե՛ a և թե՛ $\tilde{a}$, դրա համար էլ Մեսրոպի հնարած աղվաներեն այբուբենի մեջ կա երկու սուսնձին տառ a ձայնի համար:

Արդի լեզուներից $\tilde{a}$ ձայնը առատորեն ունի անգլերենը, բայց ֆրանսերենը, գերմաներենը, ինչպես և ուսերենը չունեն: Մեր շրջակա ազգերից ա ունեն կովկասյան լեզուները, պարսկերենը, քրդերենը, արևելյան թուրքերենը, բայց տաճիկերենը չունի: Առատորեն պոռվում է բոլոր ալթայական լեզուներում:

Այս ա ձայնավորի ծագումը երկու ձևով կարող ենք մեկնել:

Հին պարսկերենը, ինչպես ընկեր սանսկրիտի, անշուշտ չունի այս ձայնավորը: Նա ուներ երկու տեսակ a , որոնք զանազանվում էին իրարից միայն տևողությամբ ($\bar{a}$ և $\tilde{a}$): Միջին պարսկերենն էլ այս վիճակումն էր պահպանում. բայց արդի պարսկերենը այսպես չէ. Նախ նա ձայնավորների տևողությունը հավասարեցրել է. երկար ու կարճ չի ճանաչում այլևս: Այն, ինչ որ հին պարսկերենում և պահլավերենում $\bar{a}$ էր, դարձել է այժմ պարզ a , իսկ այն, ինչ որ a էր (կարճ), դարձել է այժմ $\tilde{a}$:

Այս է ահա $\tilde{a}$ ձայնավորի ծագման առաջին ձևը ($a > \tilde{a}$, $\bar{a} > a$):

Երկրորդ ձևը a ձայնավորի կողքի բաղաձայնների ազդեցությամբ է. ալթայական լեզուների մեջ որոշ բաղաձայններ ծանր են և պահանջում են ծանր ձայնավոր (a , $\bar{a}$, u , $\bar{o}$), իսկ որոշ բաղաձայններ էլ թեթև են և պահանջում են թեթև ձայնավոր ($\tilde{a}$ կամ e , i , $\tilde{u}$, $\tilde{o}$):

Գավառական տաճիկերենը այս վերջին ձևով է. իսկ Պոլսի տաճիկերենը իսպառ անգիրտանում է $\tilde{a}$ ձայնը և նրա տեղ գիտե միայն e :

Հայ բարբառներից Երևանի, Թբիլիսիի, Նուր-Նախիջևանի, Խրիմի, Առախայի, Պոլսի բարբառները չունեն $\tilde{a}$ ($\bar{a}$) ձայնավորը: Առատորեն պոռվում է Ղարաբաղի, Շամախիի, Ապուլիսի, Մեղրու, Վանի, Սալմաստի, Ուրմիայի, Մարաղայի, Թավրիզի, Կիլիկիայի բարբառներում: Տիգրանակերտի բարբառը բոլոր ա-երը

գարձրել է ա, միայն ուի մոտ պահում է ա։ Նոր-Ջուղայի բարբառը չգիտե ա, բայց նոր սերունդը սկսել է պարսկերենից փոխառյալ բառերը հնչել պարսկական ă ձայնով (մինչդեռ հները հնչում են դեռ ա-ով)։ Կարիճում ă ձայնավորը երևում է միայն թուրքերենից փոխառյալ բառերում. ավելի արևմուտք գտնում ենք արգեն ă։

Խոդիր է առաջանում, թե հայ բարբառների այս ձայնավորը ինչ ծագում ունի. պատկանում է արդյոք առաջին ձևին, թե՞ երկրորդ ձևին։

Շատ կարևոր է ճշտել այս խնդիրը, որովհետև, եթե առաջին ձևին պատկանի, այդ նշանակում է, թե հայերենը ունեցել է հին ժամանակ կարճ ու երկար, երկու տեսակ ա. իսկ եթե երկրորդ ձևին պատկանի, այդ ենթադրությունը վերանում է։

7. Վանի բարբառը այս հարցի քննություն մեջ շատ կարևոր ծառայություն է մատուցում։

ա. Նախ նկատենք, որ վ բաղաձայնով սկսվող ամեն մի բառ, եթե այս բաղաձայնից հետո ա ձայնավոր ունենա, ապա դա իսկույն վերածում է ա-ի։ Օրինակները տես բառացանկում, որոնց վրա պետք է ավելացնել նույնիսկ Վան > Վան քաղաքի անունը, որից էլ վանեցի > վանքի։ Բացառություն է միայն վաթսուն բառը։

բ. Ամեն մի բառ, որ սկսվում է կյ բաղաձայնով (ծագած գրաբարի գ-ից), իրեն հաջորդող ա ձայնավորը դարձնում է ա (օրինակները տես բառացանկում. բացառություն չկա)։

գ. Ի հակառակեն՝ ամեն բառ, որ սկսվում է կ բաղաձայնով, սրան հաջորդող ա ձայնավորը պահում է ա և չի վերածում ա-ի (օրինակները՝ թվով ավելի քան 50, տես բառացանկում. բացառություն են միայն կոնջոմկ և կոթառ)։ տես նաև § 263.

դ. Նույնպես ի հակառակեն՝ այն բառերը, որոնք սկսվում են ք > քյ բաղաձայնով, սրան հաջորդող ա ձայնավորը պահում են ա (օրինակները տես բառացանկում. բացառություն են միայն քյոնի, քյոթու, քյոշել, քյոքյ)։

Եթե այս վերջին կանոնը իր 4 բացառությամբ չփաջալերի մեզ, մյուս երեքը մեզ կարող են հաստատ համոզել, թե ա ձայնավորի գոյացումը կախված է նախորդ բաղաձայնից (վ-ն և կյ-ն բառակազմում պահանջում են ա, կ-ն և քյ-ն պահանջում են ա)։

Ի՞նչ հիմնական տարբերութիւն կա կշ և կ ձայների մեջ, որ առաջինը պահանջում է տ, իսկ երկրորդը՝ ա։ Այդ երկուսի տարբերութիւնն այն է, որ առաջինը ծագում է գ-ից, երկրորդը կ-ից. ուրիշ խոսքով թրթռուն բաղաձայնից հետո գրվում է տ, խուլ բաղաձայնից հետո՝ ա։

Այժմ փորձենք, թե նույնը կարելի՞ է գտնել նաև ուրիշ շարքի բաղաձայնների վրա։

Բառասկզբում դ-ն Վանի բարբառում դառնում է տ. բառացանկում տեսնում ենք 19 օրինակ, որոնց մեջ այս տ բաղաձայնին հաջորդում է ա, բոլորն էլ ունենաւ Լնդհակառակը գրաբարի տ ձայնը մնում է տ. բառացանկում ունենք 20 օրինակ, որոնց մեջ տ-ից հետո հաջորդում է ա. բոլորն էլ մաքուր ա են։

Բ բաղաձայնը Վանի բարբառում բառասկզբում դառնում է պ. բառացանկում ունենք 30 օրինակ, որոնք բոլորն էլ ունենաւ. կա միայն 4 բացառութիւն, որոնց մեջ ա-ն մնում է ա (այն է՝ բալ>պալ, բամբասել>պամբասել, բարձր>պանցր, բարձրանալ>պանցր(ա)նալ)։ Լնդհակառակը գրաբարի պ-ն մնում է Վանի բարբառում պ. բառացանկում ունենք 37 բառ, որոնց մեջ պ-ին հաջորդում է ա և բոլորն էլ մաքուր ա են. ո՛չ մի տ չկա։

Ձ բաղաձայնը դառնում է ծ, իսկ ծ-ն մնում է ծ. բառացանկում առաջին դեպքի համար ունենք 3 օրինակ տ ձայնավորով (ձափ>ծափ, ձախ>ծախ, ձաւար>ծաւար), երկրորդ դեպքի համար՝ 16 օրինակ, բոլորն էլ մաքուր ա են։ Բացառութիւն չկա երկու դեպքումն էլ։

Ջ բաղաձայնը դառնում է ճ, իսկ ճ-ն մնում է ճ. բառացանկում առաջին դեպքի համար ունենք 2 օրինակ, որոնք ունենաւ (ջրադայ>ճաղայ, ջարդել>ճարտել), իսկ երկրորդի համար՝ 19 օրինակ, ուր միշտ գտնում ենք ա, և կա միայն մի բացառութիւն (ճանապարհ>ճամբոխ), ուր ունենք տ։

Գումարելով այս բոլորը՝ գտնում ենք հետևյալ ընդհանուր կանոնը.—Գրաբարի բ, գ, դ, ձ, ջ բաղաձայնները Վանի բարբառում բառասկզբում դառնում են պ, կշ, տ, ծ, և և նրանց կողքին գտնվող ա ձայնավորը դառնում է տ, իսկ պ, կ, տ, ծ, և մնում են անփոփոխ, և նրանց կողքին գտնվող ա ձայնավորն էլ մնում է անփոփոխ։

Շուտ տալով կանոնը հակադարձ ձևով, կարող ենք ասել, թե Վանի բարբառում ա ձայնավորը, եթե հաջորդի այնպիսի պ, կ, տ, ծ, և բաղաձայնների, որոնք ծագում են գրաբարի բ, ք, դ, ձ, ջ բաղաձայններից, դառնում է ո, իսկ եթե այդ բաղաձայնները ծագած լինեն գրաբարի պ, կ, տ, ծ, և բաղաձայններից, մնում է ա:

Ավելի համառոտ ամփոփելով կանոնը, կարող ենք ասել.

Վանի բարբառում ա ձայնավորը, գտնվելով գրաբարի բրբր-ռուն պայթականից առաջացած խուլի մոտ, դառնում է ո, իսկ խուլից առաջացած խուլի մոտ մնում է ա:

Այս կանոնը այնպիսի հեռանկարներ է բաց անում մեր առաջ և այնպիսի դադանիքների բանալին է հանդիսանում, որ ես համարում եմ իմ բոլոր բարբառագիտական աշխատանքների պսակը և հրճվանքով լցված տնվանում եմ «Աճառյանի օրենք»:

1901 թվին, երբ հրատարակեցի Վանի բարբառի ձայնաբանությունը, դեռ այս կանոնի մասին ոչ մի դադափար չունեի: 1911 թվին, երբ հրատարակեցի իմ «Հայ բարբառագիտությունը», արդեն նկատել էի (էջ 141), որ վա ձայնախումբը բառասկզբում դառնում է միշտ վո: 1948 թ. հունվարի 10-ին նկատեցի զ>կյ և կ ձայների հարաբերությունը, իսկ հունվարի 14-ին պարզվեց ամբողջ օրենքը:

Բայց վանեցին որտեղից իմացավ, որ իր խուլ ձայներից այսինչը առաջանում է թրթռունից, մյուսը՝ խուլից: Ուրեմն ու-ի և ա-ի ձայնափոխությունը տեղի ունեցավ այն ժամանակ, երբ թրթռուն բաղաձայնները գոյություն ունեին դեռ և խուլի վերածված չէին: Ըստ այսմ ունենք երեք ժամանակագրական շրջան:

Ա շրջան (գրաբար)

բա գա դա ձա ջա
պա կա տա ծա ճա

Բ շրջան (անցման)

բո գո դո ձո ջո
պո կո տո ծո ճո

Գ շրջան (Վանի բարբառ)

պո կյո տո ծո ճո
պա կա տա ծա ճա

Հաստատելու համար այն, որ և ձայնավորը տ-ի է վերած-
վել նախորդ բաղաձայնի թրթռուն լինելու պատճառով, իբր ա-
պացույց ունենք հենց արդի Վանի բարբառը, ուր թրթռուն
բաղաձայնը եթե որևէ պատճառով մնում է թրթռուն, նրա
կողքի և ձայնավորն էլ դառնում է տ. ինչպես օրինակ՝ բադ>
բոտ, բաղ>բոգո, բախո>բոխո, բակլայ>բոյլո, բամբակ>
պոմբոկ, բանջար>պոնյոր, բաշ>բոշ, բարտի>բորդի, դադել
«այրել»>դոդել, գազ (չափը)>գյոզ, գանգատ>կյոնգյոտ, գան-
գակ>գոնգյոկ, խոնջան>խոնջոն, խոնգատ>խոքնդոտ, կանկառ
>կոնգյոռ, կնճակ>կնջոկ, կորնգան>կորքնգոն, մանգաղ>
մոնգյող, պատինճան>պաքնջոն:

Այս օրենքով պիտի բացատրենք կամ հիմնավորենք Մա-
բաղայի, Խոյի, Մալմաստի, նաև Ղարաբաղի, Շամախիի բար-
բառների մեջ, մի կողմից, և ձայնավորի գոյացման երևույթը,
մյուս կողմից, թրթռուն բաղաձայնների խլանալու երևույթը:

Այս օրենքով պիտի բացատրենք թե ինչու Ղարաբաղի
բարբառում մի կողմից ունենք՝

դու>տիւ, ձու>ծիւ, բան>պէն, դուռն>տօնը
ձուկն>ծիւկնը,

իսկ մյուս կողմից՝

տուն>տօն, տուր>տօ, քուն>քօն, թուրք>թօրք.

այսինքն մի կողմից ու>իւ, մյուս կողմից ու>օ. որովհետև ա-
ռաջին դեպքում Ղրբ. խուլ տ-ն առաջացած է եղել նախորդ
թրթռուն բաղաձայնից, իսկ երկրորդ դեպքում Ղրբ. խուլ տ-ն
շարունակությունն է նախորդ խուլ տ-ի:

Այս երևույթների մանրամասն քննությունը պիտի կատա-
րենք, երբ հաջողվի մեզ կազմել Ղարաբաղի բարբառի քննու-
թյան նոր հրատարակությունը:

Ե՞րբ արդյոք տեղի ունեցավ այս ձայնափոխ երևույթը
մեր մեջ:

Վերևում հիշված Ղրբ. թօրք բառը մի սքանչելի ուղեցույց
է մեզ համար: Ղարաբաղում ունենք նաև ոռա բառը, բայց
չենք ասում ոռ, ինչպես պահանջում էր ու ձայնավորի օ
դառնալու օրենքը: Չենք ասում, որովհետև ու>օ ձայնական
օրենքը Ղարաբաղում գործել և վերջացել է ոռաների գալուց

առաջ, Սակայն ասում են թորք. ուրեմն ու>օ ձայնական օրենքը գործել և վերջացել է թուրքերի արշավանքից հետո (այն է ժԱ.—ԺԲ դար)։

Վանի բարբառի մեջ ա ձայնավորի գոյացումը արդյոք թուրքերենից փոխառություն չէ՞։

Վերը նկատեցինք, որ անցման շրջանում Վանի բարբառը ներկայացնում էր թրթռուն և պարզ խուլ բաղաձայնների տասը բաղադրություն. այն է՝

բո գո դո ձո ջո
պա կա տա ծա նա

Այս 10 բաղադրություններից չորսը (ձո, ծա, ձա, պա) բնավ գոյություն չունեն թուրքերենում։ Բայց կան Յ qa (կա) և Ե fa (տա) բաղադրությունները, որոնք միշտ ծանր (սաքիլ) են և բնավ չեն կարող կազմել qä, fä բաղադրությունները։ Իսկ b, g, d-ն թուրքերենում թե՛ ծանր են և թե՛ թեթև, ուստի կարող են կազմել ba, be, ga, ge, da, de բաղադրությունները։ Սրանով վերոհիշյալ 10 կետերից միայն երկուսն են, որ նման են դուրս գալիս թուրքերենին, իսկ մնացյալ չորսը կապ չունեն, չորսն էլ գոյություն չունեն թուրքերենում։ Այսպիսի չնչին հիմունքից հետևեցին, թե Վանի բարբառի ä (ա) ձայնը ձևավորված է թուրքերենից՝ բոլորովին անտեղի է։ Ձայների փոխառությունը այնքան դժվարին գործ է, որ պահանջում է երկու ժողովուրդների դարավոր կենսիկցություն և փոխառյալ բառերի խոշոր քանակ։ Շատ ուշ այդ բառերի հետ վերջապես կատարվում է նաև պակասող ձայնի փոխառությունը։ Վանի բարբառը թուրքերենից այդքան խոշոր ազդեցություն դեռ չէր էլ կրել հատկապես այն ժամանակ, երբ ըստ մեր ենթադրության տեղի է ունեցել ä (ա) ձայնավորի գոյացումը։

Վանի բարբառի համար այն համոզումը գոյացնելուց հետո, թե թրթռունից հետո լինում է ա, խուլից հետո՝ ա, մենք կարող ենք մեր քննությունը առաջ տանել ավելի հեռու։ Օրինակ՝ խ բաղաձայնով սկսող բառերը խ-ից հետո ունենում են միշտ ա ձայնավորը և չունեն ա (օրինակները՝ թփով 20, տես բառացանկում)։ բացառություն են միայն խարազան > խարեզմե, խոնձրել, որից և խոնձրոխամ։

Ժ-ն թրթռուն բաղաձայն է. բառացանկում ունենք 10 օրինակ, որոնց մեջ Ժ-ին հաջորդում է ա ձայնավորը. բոլորն էլ ունենում են (այն է՝ արժան>էժմն, դժուար>տիժոր, ժաժ «խոբի»>ժաժ, կրկնությամբ ժաժժեխ, կրճատ ժա—ժեխ, ժամ>ժամ «եկեղեցի», ժանդ>ժոնգյ, ժանգառ>ժոնգյոռի, ժառանգ>ժոռոնգյ, ժժան «խոբի»>ժժոն, շարժ>ժոժ, ժոժի «երկրաշարժ», վարժապետ>վորժոպետ)։

Նմանապես երբ բառակզբի հ-ն դառնում է խ, նրանից հետո եկող ա ձայնավորը մնում է և չի դառնում ու. այսպես ունենք 38 օրինակ, որոնք աես բառացանկում. բացառություն են հազ>խոզ, հաչալ>խոզուլ, հազար>խոզոր. նկատելի է, որ բոլորն էլ ու-ից հետո ունեն գ. սրանով հարցի քննությունը ավելի է բարդանում և ստեղծվում են նորանոր մանրամասնություններ։

Օրինակ՝ երկու բառ, սիւն և ձիւն բառերի հին սեռականները՝ սեան և ձեան, Վանի բարբառում լինում են սան և ծոն, մեկի մեջ ա-ն անփոփոխ է մնացել, մյուսի մեջ դարձել է ու։ Երկու ձևերն էլ բացարձակապես նույնն են, երկուսն էլ միավանի, երկուսն էլ -ան վերջավորությամբ, տարբեր են միմիայն առաջին բաղաձայնները։ Ուրեմն ձայնավորի երանգի փոփոխություն համար ոչ մի ուրիշ պատճառ չի կարելի բերել, եթե ոչ հենց նույն բաղաձայնները. եվ իրոք, եթե մի տկնարկ պցենք և նախաձայնով սկսվող բառերի վրա, կանանք, որ նրան հաջորդող ա ձայնավորը միշտ պահում է իր երանգը և չի դառնում երբեք ու։ Այսպես ունենք 22 օրինակ և չկա բացառություն (աես բառացանկը)։

Ա ձայնավորի երանգի փոփոխություն օրինակներ գտնում ենք նաև 5-րդ հոլովման մեջ. որի վերջավորությունն է ան (կամ ոն)։ Օրինակների թիվն է ընդամենը 73, որոնք բաժանվում են հետևյալ ձևով.—կան 20, ղան 7, վան 3, նան 2, ման 5, ոան 9, քան 4, ցան 1, տան 3, խան 1, քան 3, սան 1, քյան 1, սրանք ունեն պարզ ա.—գյոն 6, բոն 1, ծոն 1, զոն 1, սրանք էլ ունեն լեքյալ ա.—իսկ փան ունի 3 օրինակ պարզ ա, մի օրինակ թեք ո (ափան, տփան, խփան, թփոն)։

8. Մինչև այստեղ խոսեցինք ու ձայնավորի ձևավորման

մասին բառի նախափանկի, մասամբ էլ վերջավորության մեջ՝ Այժմ պիտի խոսենք միջավանկի մասին:

Բառամիջում վ բաղաձայնին հարորդող ա-ն մի քանի դեպքում լինում է ու. այսպես են՝ լուսնալ, լուսալ>լըվալ, վըրալ, ձաւալ>ծովալ, գովել>կյէօվալ, զգուիլ>զըզվալ, վարդավառ>վորաէվալ, ձուածեղ>ծվազեղ, աւազան>ավազոն, գաւազան>կյավազոն, դաւանում>տավանում, գուարթ>զվորթ:

Բայց մեծ մասամբ ֆնում են անփոփոխ. այսպես են՝ նետաղեղն>նետվանեղ, ամբարտաւան>ամբարտավան, ապաւէն մեռեալ>ապավանեռ, աստուած>աստված, ասպած, աւազ>ավազ, բուրվառ>պուրվար, երեւալ>էրէվալ, թաւալիլ>քավալիլ, խաւար>խավար, խոստովանիլ>խօստօվանիլ, հաւտալ>ավատալ, հաւառ>խավատ, հիւանդ>խիվանդ, յաւանակ>ավանակ, հուալ>նվալ «մլավել», նուաղիլ>նվաղիւտալ, շատրուան>շատրովան, շտտոռվան, շուար>շիվար, չուան>չըվան, սարկաւազ>սարկավաք, սուան>սավան, տուար>տավար:

Բառամիջում կլո ձայնախումբը պատահում է վեց անգամ և ամեն դեպքում էլ միշտ կլո ձևով. այն է՝ ազուգայ>ռկյիւկլո, անադան>ռնկլոն, արեգակն>արեկլոկ, գապաթն>կլոկլար, հոգալ>խոկլոլ, շողգամ>շոխկլոմ: Բացառութիւն չկա:

Նմանապես գլո ձայնախումբը (միշտ ռնգականից հետո) պատահում է վեց անգամ և ամեն դեպքում էլ գլո ձևով. այն է՝ գանգատ>կլոնգլոտ, գանգակ>գոնգլոկ, ժանգառի>ժոնգլոռի, կանկառ>կանգլոռ, կորնդան>կորրնգլոն, մանգաղ>մոնգլող:

Իսկ կա ձայնախումբը բառամիջում պատահում է 22 անգամ և միշտ կա: Չունենք բնավ կո ձևը:

9. Ուրիշ պայմաններում գտնված ա>ո ձայնափոխության հանգամանքները ամբողջապես չեն կարողացել պարզելուստի ավելի լավ եմ համարում հավաքել այնուեղ այն բոլոր օրինակները, որոնք դուրս են գանվում նախորդ §-ում հիշված պայմաններից:

ազի>ռկյի
ազաաիլ>ռզոտեի
ալիւր>ռլիւր

աղաչանք>ռղոնոնքյ
աղբիւր>ռխալիւր
ամբար>ռմբոր

անդրանիկ > տնդրտնէկ
 ապարանջան > արպընջոն
 առաջին > տոնին
 առաջեան > տոնեկ
 առիք > տոիքյ
 առու > տոու
 առուոյտ > տովոտ
 առակ > տատկ
 արդար > տրտոր
 արբանեակ > տրպնէկ
 արթուն > տրթին
 արժան > էժոն
 արմաւ, ամբրաւ > տմբրտր
 (տմբրտւ)

արջառ > տնոռ
 աւագան > տվոգոն
 աւելի > տվել
 աւելորդ > տվիլորթ > տվիլիթթ
 ափ (ձեռքի) > ափ
 ափն (գետի) > տփ
 աքիս > տքյիս
 գազան > կյոգոն
 գալար > կյոլոր
 գաւազան > կյովոգոն
 գդակ > կտոկ
 գլար > տոլոր
 գանակ > տոնոկ
 գմակ > տմակ, տմոկ
 գրախտ > տրոխտ
 երթալ > էրթոլ
 երնջնակ > էրէժնոկ (գ. էրընջ-
 գանդակ > գոնգյոկ [նակ])
 գատիկ > գոտիկ
 գարդարանք > գորտորտոնքյ
 գարկանել > գոնել, գորկի
 թագ > թոքյ

թագաւոր > թաքավոր (երկու
 ձևով կա)
 թաթ > թոթ
 թանաք > թոնոքյ
 թարթել > թորթել
 թարթափ > թորթոփ
 թափել > թոփել
 իմանալ > իմնոլ
 իրար > իրոր
 լալ > լոլ
 լար > լոր
 լաց > լոց
 լափել > լոփել
 խարազան > խորէգոն
 խելացի > խելոցի
 խիզար > խիգոր
 խնդրակ > խնդրոկ
 խոնջան > խոնջոն
 խոնդատ > խորոնդատ
 ծառգարդար > ծառգորտոր
 ծմակ > ծմո
 կանճրակ > կոնջրոկ
 կարդալ > կորտոլ
 հազալ > խոգոլ
 հազար > խոգոր
 հետ իրերաց > խտրոց
 հերուին > խէրզնոմ
 հիւանդանալ > խիվընդնոլ
 հնազանդ > խնոգոնդ
 հոգալ > խոկյոլ
 մանգաղ > մոնգյոլ
 ճչալ > ճչոլ
 մարդակ > մորտոկ
 յառաջ > տոռոն
 յարդ > տրթ (հարթ)
 յաջողիլ > տնողել

շաբաթ > շապոթ

շալակ > շլակ

շաղկամ > շոխկյոմ

շաքար > շոքար

ուրբաթ > ուրպոթ

չար > չոթ

չարչարել > չոթչոթել

չափ > չոփ

չորեքշաբթի > չեօթեօթյուպոթ

(չեօթեչաթ)

պատինճան > պատընջոն

ջրաղաց > ճողոց

ռեհան > ըոհոն

սիրամարգ > սիմոմախաֆթյ

վարագոյր > վարակյուռ

վարդապետ > վարտապետ

վարժապետ > վորժոպետ

փաթաթել > փոթիւթել

փակել > փոկել

փարչ > փոռչ

փափուկ > փոփիւկ

փեթակ > փեթոկ

քան զ > չունձ

քանի > քյոնի

քարաթոթոշ > քյոռոթթեօշ

քարթու. (օթեկ) > քյոռոթու

քարշել > քյոշել

քաք > քյոքյ

Թեև վերևում հաստատեցինք, թե ու ձայնը Վանի բարբառում ինքնին առաջացած ձայնական երևույթ է և ոչ թե օտար փոխառություն, բայց դրանով չենք մերժում այն, որ որոշ բառեր իրենց ու ձայնով փոխառյալ են օտար լեզուներից և հատկապես թուրքերենից։ Այս կարգի անհայտ փոխառություններից են 80 և 90 (սոխյսոն, զոխսոն) թվականները. երկուսն էլ թուրքերեն են. առաջինն է թրք. seksen, երկրորդը թրք. doksan, Զարմանալի են այս բառերը. բայց վերջյան երկուսն էլ հանգում են ~san, բայց բայց հնչման Պսալի գրական թուրքերենում առաջինը հանգում է sen, երկրորդը՝ san. գաղառական թուրքերենում պիտի հնչված լինե՞ր առաջինը säk-sän, որից էլ Վն. սոքսոն, ապա դարձած սոխյսոն)։

Բառեր էլ կան, որ երկու անգամ են փոխ առնված. այսպես է Վն. քոփսի «պղնձյա մեծ լազան» և քեփսի «սեղանի պղնձյա ափսե, տարելիկա, պնակ». երկուսն էլ թրք. tepsi բառից ծագած, բայց զանազան թուրքական բարբառներից, որոնց վրա տես Будагов, I, 340. Երևույթը նույնն է, ինչ որ ուսներեն кофе «սուրճ» և кафэ «սրճարան»։

Ըստ այսմ վերահիշյալ ու ձայնավորով բառերից մի մասը կարող է ունենալ օտար ծագում և այդ ու ձայնավորն էլ կարելի է վերագրել դրան. ինչպես՝

դարման > դարման, պրս. درمان dārmān

գազ (չափը) > գյոզ, պրս. گاز gāz

բայց մյուս կողմից էլ՝

ռեհան > ըռհոն = արաբ. رايحان, raiḥān ևն.

10. Երեք և ավելի վանկով բառերի մեջ, միջին վանկերի ա ձայնավորը, ընդհանրապես, ընկնում է. և թե գրանից առաջ տեսնվում է բաղաձայնները խճողում, նրա փոխարեն ներմուծվում է ք. Օրինակներն են՝

ազանի > խայնել

ախանատ > ահնատ

ամաչել > ամչնալ

անալի > ալնի

անապան > տնկյուն

անապանի > տնկյունալ

անկանի > իյնել, ինել

անցանի > րնցնել

աշակերտ > աշկեռտ

ապսպարել > ապրսպրել

առաջին > տոնին

արբանեակ > արպրնէկ «օգնա-

արձակել > առցկել [կան»

արտասուք > առտսուեքյ

աւետարան > ավէտրան

բաժանել > պոժնել

բաղանիս > պողնիս

բանալի(ս) > պոլնիս

բուսանի > պիսնել, պիսել

գանգատի > կյոտել, կյոնգյտ-

գերանդի > կյէրընդի [վել

գտանի > կընդնել

դադարի > տոտրել

դրակից > տըրկեց

ելանել > էլնել

գարկանի > գոնել

թաթախել > թաթխել

թռանի > քըռնել

թօթափել > րախրըփել

իմանալ > իմնալ

իջանել > էննել

լուգանալ > լօխկնալ

խաւարծի > խաւըռծիլ

ծիծաղիլ > ծծղալ

կակազել > կակըզել

կանձկանձել = կաղկանձել >

> կընձկընձալ

կատաղիլ > կատղել

կարկատ(ան)ել > կարկտնել

կարտցի > կարցա, կառցա

կարակին > կարկին

կոճակել > կօնկել

համարել > խամբրել

համար. *համարանք > խամբ-
րանքյ

հասանի > խասնել

հասկանալ > խասկնալ

հատանի > խատնել «սատկել»

հարսանիք > խարսնիս

հայահան > խացխան

հաւանի > խավնել

հեծանել > խէզնել, խէծնել

հեշտարան > խէշ(տ)րան

հիւանդանալ > խիվընդնալ

հովանքել>խօվխրել
 ճախարակ>շախրակ
 ճակատ, սեռ. ճակատի>նայտի
 ճանաչել>նանշընալ
 ճանապարհ, սեռ. ճանապարհ
 հի>նոմքոխ, սեռ. նոմխի
 ճապաղել>նապղել
 մատանի>մատնիկ
 մարգարիտ>մարկյըրիտ
 մեռանիլ>մեռնել
 մոռանալ>մոռնալ
 մտանել>մտնել
 մրափել>մրափել, մոփել
 նապաստակ>լապրգոլըրակ
 չարչարել>շորչըրել
 պառակիլ>պառկել

պատանել>պատոնել
 պրծանիլ>պոծնել
 ջախջախել>ննշխել, (ծագում է
 *չանշախել ձևից՝ երկու ա-ի
 կորուստով),
 ջրցանել>նըրըրնել
 սատակիլ>սատկել
 սարսափիլ>սըրսփալ
 վաստակիլ>վոստ/կել
 տապակել>տոպկել
 տեսանել>տիսնալ
 ցամաքիլ>ցամքյել
 փրթանիլ>փոթնել «ազատվել»
 քառասուն>քյառսուն
 քարաթոթոշ>քյոթթոթէօշ.

Մանոր. 1. — Ա-ի սղման այս օրենքին չեն ենթարկվում այն բառերը, որոնք գրադարան կամ կրոնական լեզվից փոխառություն են: Այսպես են օրինակ՝ աղաչանք>աղանթոթյ, ամբարտաւան>ամպառտավան, սինասուն>անասուն, աւագան>ուվոգոն, բամբասել>պամբասել, բարկանալ>պոթկանալ, խոստանալ>խոստանալ և այլն:

Բայց այս սկզբունքը մի քիչ խախտւտ հիմք ունի. կլինեն բառեր, որոնք այսինչ բարբառում գրական համարվելով՝ չեն կորցնում ա ձայնը, իսկ այնինչ բարբառում սովորական գործածություն ունենալով լինելով՝ գրկվում են ա-ից: Օրինակ անտարան բառը իհարկե կրոնական փոխառություն է. ըստ այսմ Պոլսահայ բարբառում դառնում է ավէղարան, իսկ Վանի բարբառում այնպես է մերվել, որ դարձել է ավէարան: Ընդհակառակը՝ հաւատալ բառը Վանում մնում է ավատալ, իսկ Պոլսում դարձել է ավդալ: Այսպես և երանի բառը դարձել է Պոլսում երնէգ, Վանում՝ էրանէկ:

Մանոր. 2. — Բաղաձայնների խճողման մեջ ը ձայնավորի ներմուծումն էլ ունի իր տարբերակները: Վանեցիները շատ սիրահար չլինելով ը ձայնավորին, տեղ-տեղ չեն դնում ը, մինչդեռ ուրիշ բարբառներ ունեն: Այսպես ամաչել>Վն. ամշնալ,

արձակել>Վն. առց/կել, վաստակել>Վն. վաստ/կել բառերը երկավանկ են (չեն ներմուծում բ), մինչդեռ ուրիշ տեղեր գտնում ենք ամբջնալ, արցրկել, վաստրկիլ ևն (եռավանկ):

11. Առաջին վանկում գտնված ա ձայնավորը միշտ մնում է. բայց անկանոն կերպով վերածվում է ը-ի հետևյալ բառերի մեջ՝ ամենայն>միջ. հյ. ամէն>հրմէն (գյուղերում գրմէն), անցանել>ընցնել, շալակ>շըլոկ, անթատակ>հրնթիտակ:

12. Ա ձայնավորի ձայնափոխության մասնավոր դեպքեր են.

ա>է.— խարազան>խորէզմն (գյուղերում), խորիզմն (քաղաքում). նմանապես արիւն>արուն (քաղաքում), բայց էրուն (գյուղերում), սևո. էրնի, էրունի, կալամաս>կալամաստ, որ և կալէմագա, տարգալ, գգալ>կըտէլ, վարդավառ>վորտէվոր, արմուկն>արմունգ: կամ էրմունգ:—Արարմունք բառը՝ կրճատվելով արմունք գառնալուց հետո, նաև ձևափոխվելով դարձել է էրուրք կամ էրուք:

Արծան բառը՝ նախապես այժման ձև ստանալուց հետո, դարձել է էծմն, բայց արժել մնում է ածել:

ա>ի.— այսպես է նախ անկանիլ>ընկենել>Վն. իյնել բառի մեջ, ապա մատուտակ>մատուտիկ, քսակ>քյիսիկ, մարմար(իոն)>մորմորիկ բառերի մեջ, որոնց մեջ մասնիկն է միայն փոխված. Սրանց նման է նաև ծիծեռնակ>նըրոնէկ:

ա>յէ.— միայն աղաւնի>յէղունիկ բառի մեջ:

ա>օ.— միայն աղիւս>օղիս:

ա>էօ.— միայն ուղարկել>էօթօխկել, նախ շրջված *ուրաղկել>*ուրախկել, ապա ու>էօ՝ էօթօխկել:

ա>ու.— այսպես է ունձկուտոր, ունձկուտօր «հպարտ», որ կազմված է անձն և կոտոր բառերից (ինչպես կա «ջանի վրա կոտրատվող» դարձվածքը):

ա>իւ.— այսպես է փաթաթել>փոթիթել, որ անշուշտ նախ անցել է փաթուրել ձևից (փաթոյթ բառից): Այսպիսի մի ձայնափոխություն էլ ունենք անուր կամ անք բառի մեջ, որ դարձել է հիւնք, որից էլ անթատակ>ընթատակ (=սկ. հրնթիտակ) և անթել>Վն. հրնթել «թևի տակ դնել»: Վերջապես ա>իւ ձայնափոխությունը երևում է դափ>գիւֆ, որ սակայն նոր փոխառություն է ինչ որ քրդական բարբառից, ինչպես ցույց են տալիս մի կողմից դ-ն (փիւ. տ) և մյուս կողմից ֆ-ն (փիւ. փ):

ա>ե.— այսպես են նախանձ>վն. նեխած (որ ժողովրդական ստուգաբանությամբ նեխիլ «հոտիլ» բային մոտեցնելով՝ այս ձևին են վերածել) և շավեռ, որ Վանի և Մուշի բարբառներում նշանակում է «քյամանչա». նույնը Մոկաց բարբառով շավառ է կոչվում, իսկ ավելի հին հայերենում՝ շաւառն (տես Արմատական բառարան, ուր համեմատել եմ վրացերեն შავადონ շավարնի բառի հետ):

ա>է.— այս ձայնափոխությունը գտնում ենք նաև տապր>վն. տէքր բառի մեջ, բայց սա տալգր երկրորդական ձևի ներկայացուցիչն է:

Վերջացնելու համար ա ձայնավորի կրած փոփոխությունների թվումը, պիտի հիշենք սարսափիլ>վն. սըրսըփալ, որ գտնում ենք նաև Ազլ. սըրսափիլ, Սլմ. սըսըփալ, Մշ. սորսփալ ձևերով, և ծաքրին կամ ծոքրին, որի մասին տես ո ձայնի մեջ:

Ե

13. Բառակցում, միավանկ բառերի մեջ ե-ն դառնում է յե. եղած օրինակները հետևյալներն են. եզն>յեզ, եզր>յեզր, եղկ «գուլ»>յեխքյ, ես>յես, երբ>յեփ, եռ>յեռ, եփ>յեփ (թեև վերջինիս բայն է իփել):

14. Երկավանկ բառերի սկզբում ե-ն ունի երկու դիրք՝ գտնվում է կամ դ, ո բաղաձայններից առաջ և կամ ր բաղաձայնից առաջ. Առաջին դիրքի մեջ դառնում է նույնպես յե, իսկ երկրորդի մեջ՝ է. Օրինակներն են՝

ա) եղի (ցորենը)>յեղի, եղիճ>յեղինջ, եղնիկ>յեղնիկ, եղունգն>յեղունգյ, եռալ>յեռալ, եռանդ (օրը)>յեռանդ, երեսուն>յեսուն.

բ) երազ>էրազ, երակ>էրակ, երամ>էրամ, երան (քամի)>էրան, երդիք (հյգ.)>էրտիս, երդումն>էրտիւմ, երէկ>էրէկ, երթալ>էրթուլ, երկաթ>էրկաթ, երկայն>էրկէն, երկանք>էրկանքյ, երկինք>էրկինքյ, երկու>էրկու: Այստեղ է պատկանում նաև էրուն-թոշուն, որի իմաստը այժմ կորած է. նախապես՝ նըշանակել է «բոլոր անասունները և թռչունները». առաջին բառն է երէ, որի վրբ. հոգնակին է երունք:

Մանոր.— Երկինք բառի հարազատ ձևն է էրկինքյ, էրկնուց ևն. նոր կրոնական փոխառություն է յերկինքյ:

Ուրիշ բաղաձայններով ունենք միայն լ և կ, որոնք մքտնում են երկրորդ խմբի մեջ. այսպես են՝ ելանել>էլնել, հրմ. էլի, եկայ>էկա, հղայ>էլտ (գյուղական բարբառում ասվում է իկյավ, իլավ փոխանակ էկավ, էլավ):

Անցյալ կատարյալի գ դեմքի հավելադիր ե-ն դառնում է ի. օրինակ՝ եհան > իխան, եհար, *եզար>իզար, եբարձ>իպաղց, հեեր>իպոց, եթող>իթող, ելաց>իլոց, ելից>իլից:

Երբ ե-ն գտնվում է երկավանկ բառի մեջ և երկրորդ վանկի ձայնավորն է ե, առաջին ե-ն տարանմանությամբ դառնում է ի. այսպես են՝ երես>իրես, երեք>իրեք, եփել>իփել:

15. Երեք և չորս վանկով ունենք միայն 7 բառ. սրանք են՝ երանի>երանէկ, երերալ>երէրալ, երևալ>երէվալ, երնջնակ>էրնջնակ, էրթնոկ, երեկոյ>իրիկուն, երիցակին>իրիցկին, և եպիսկոպոս>յեպիսկոպոս, իպիսկոպոս. Առաջին չորսը ցույց են տալիս, որ բազմավանկ բառերի մեջ էլ նախաձայն ե-ն դառնում է ը-ից առաջ է (ինչպես նախորդի № 14՝ երկրորդ դիրքում). Հինգերորդ ձևի մեջ տեղի է ունեցել նախ տարանմանություն (իրեկուն) և ապա ձայնավորների նմանեցում (իրիկուն), այսպես նաև երիցակին—երիցկին>իրիցկին. իսկ վերջին բառը կրոնական փոխառություն է. այստեղ էլ երկրորդ ձևը նմանեցման արդյունք է (իպիսկոպոս):

16. Եղբայր>ախպէր բառը միջին հայերեն աղբայր ձևի շարունակությունն է:

17. Բառի վերջին վանկում գտնված ե (շեշտյալ ե) ձայնավորը մնում է միշտ ե (լե). Բազմաթիվ օրինակների թվում կարելի է հիշել նախ բոլոր -ել վերջացող բայերը, ապա զանազան բառեր. օր. աշակերտ>աշկեռտ, աղեղն>անեղ, առեղն>ասեղ, աներ>աներ, գիշեր>կիշեր, ընկեր>ինգյեր, թել>թել, գրռեհ >ցեխ>ցլռեխ «թարախ», համեմ>խամեմ, կապերտ>կարպետ, մեք>մեքք, մեղր>մեղր, ծեփ>ծեփ, խելք>խելք, խեղճ>խեղն, բենո>պիպեռ, շերեփ>շիրեփ, շեղշ >դեզ>շեղք, սիսեռ>սիսեռ, ստերշ>ստեռն, երեք>իրեք, ձմեռ>ծմեռ, հեղեղ>խղեղ, աւել>ավել, ջեր>ներ, «ոչ-պարզկայ գիշեր», պճեղն>պճեղ, «կճղակ», ևն, ևն:

18. Կան բառեր՝ որ մեր ձեռագրերում ավանդված են երկու տարբեր գրչությամբ. Վանի բարբառը հետևում է մեկ

կամ մյուս ձևին և կարող է ծառայել նրանց ծագումը պարզելու գործին. Այսպես՝

գմբեթ բառը ունի նաև գմբէթ ձևը. Վանի բարբառը գիտեքյումբէթ (Մկ. քյւմբէթ, Ուզմ. քումբէթ):

կանեփ բառը ունի երկու ձև. հինն է կանեփ, նորը՝ կանափ, որ ավանդված է ԺԱ. դարից. Վանի բարբառն ունի կանափ, որի հետ նույնն են նաև Մոկֆ և Ուզմի:

ամեն(այն) բառի մասին հայտնի է այն երկար վեճը, թե պետք է գրել ամե՞ն թե ամէն. Վանի բարբառն ունի նրմէն (նույնը Մոկֆ). գյուղերը՝ զրմէն, Ուզմին՝ համմէն:

շէկ բառը գրվում է նաև շեկ. բարդության և տծանցման մեջ ունենք շիկ- ձևով (շիկագույն, շիկահեր, շիկակարմիր, շիկ-նիլ), որոնք պահանջում են շէկ արմատը. այսպես է նաև Վն. շէկ. ուստի շեկ ձևը սխալ գրչություն է (տես Բազմավեպ, 1898, 222 բ):

Մանոք.— Ուղեղ բառը Վանի բարբառում ստացել է երկու ձև՝ ուղեղ և ուղող. այս երկուսը զանազանվում են նաև ըստ իմաստի. առաջինը գլխի ուղեղն է նշանակում, երկրորդը՝ սակորի ծուծն է:

19. Վերջավանկի ե>ե ձայնափոխության կանոնից բացառություն են կազմում՝ բեմ>փեմ (Պոլսի գրականից փոխառյալ), դեռ>վն. տէլ (Մոկֆ տալ), սերեկ (կաշի)>վն. սարէկ (Մոկֆ սարիկ), ցերեկ>ցէրէկ (նույնը նաև Մոկֆ).— Վերջին երկուսի համար հմմտ. կորեակ>կորեկ, բայց նաև վառեակ>վառէկ, սարեակ>սարէկ:

20. Բառամիջուկում ե ձայնավորը կրում է հետևյալ ձայնափոխությունները.

ե>ե.— այսպես են հետևյալ օրինակները՝ արեգակն>արեկյոկ, աւերակ>ավերակ, գերի>կյերի, դեղեկ>տեղել «թուռնավորել», դեղին>տեղին, թեղի>թեղի, լեղի>լեղի, լեղեղեկ>խեխտել, հանելուկ>խանելիկ, հուրն ի հրեղէն>խուրճի խրեղէն «շատ գեղեցիկ», մեղաւոր>մեղավոր, մեռանիլ>մեռնել, նեխիլ>նեխել, նետ և աղեղն>նետվանեղ, սեղան>սեղան, սերտեկ>սեռտել (գասը), տեսիլք>տեզէլք, քեռի>քյեռի, քենի>քյենի:

ե>է.— այսպես են՝ աւետարան>ավէտրան, բարեկամ>պարէկամ, բարեկենդան>պարէլէնդոմքյ, բերան>պէրան, գետին>

կյէտին, գերան>կյէրան, գերանդի>կյէրեղի, գերեզման>կյէ-
րեզման, երերալ>էրէրալ, լեզու>լէզիւ, խելացի>խէլոցի, կեդ-
ծաւոր>կէղծավոր, հեծանիւմ>խէզնել (խէծնել), հեշտարան>խէշ-
(տ)րան, «հարթ, անդորր», հերիք>խէրիք, հերու>խէրու, հրեշտակ
>խրէշտակ, խրիշտակ, յեսան>էսան, ջերիլ>ճէրել «օդը պարզիլ»,
սկեսարայր>կէսրէր, վեղար>վէղար, տագերակին>տեկյէրկին, տե-
սակ>տէսակ, ի վերայ>վէրէն, ցերեկ>ցէրէկ, փեթակ>փէ-
թակ, փեսայ>փէսա:

Ծանոթ.— Մեր բարբառներում ընդհանրապես ե-ն և է-ն
իրար են խառնված, երկուսն էլ դարձել են է. գեղեցիկ բացա-
ռություն է կազմում Վանի բարբառը, որ զանազանում է այդ
երկուսը իրարից: Վերջավանդում այդ զանազանությունը լավ է
պահված, ինչպես տեսանք. իսկ բառամիջում բացարձակ չէ, ինչ-
պես տեսնում ենք, և տատանվում է երկուսի միջև. Այստեղ էլ
սակայն կարելի է նկատել, որ դ բաղաձայնից առաջ ընդհանրա-
պես ե-ն մնում է ե, իսկ ք-ից առաջ՝ դառնում է է. Այս երևույթը
զարմանալի կերպով նույնանում է բառասկզբի ե> ե կամ է ձայ-
նափոխության պայմանների հետ (տես § 14):

21. Բառամիջի ե (անշեշտ) երբեմն էլ դառնում է ի. եղած
օրինակներն են՝ աւելել>ավիլել, աւելորդ>ավիժրթ, աւերել>
ավիրել, բերել>պիրել, երեկոյ>իրիկուն, գենուլ>գինել, ծեփել>
ծիփել, հերիւն>խիրուն, հերկել>խիրկել, ներկել>նիթկել, շերեփ
>շիրեփ, սերկէլ>սիրկիվիլ, սիկիվիլ, սկեսուր>կիսուր, տեսա-
նել>տիսնալ, փետել>փիտել, փետուր>փիտուր, քերել>քիրել:
Հոլովական ձևերի մեջ. ինչպես՝ գետ>կյետ, սեռ. կյիտու (կյետի),
աներ>աներ, սեռ. անիրոշ, վեր>սեռ. վիրի, ներքս>սեռ. նիրսի:
Նաև խոնարհման մեջ. ինչպես՝ սիրել>կտ. սիրիցի, փորել>
փորել, կտ. փորիցի են:

Նկատելի է, որ այստեղ էլ ե>ի ձայնափոխությունը մեծ
մասամբ ք բաղաձայնից առաջ է, և այն էլ շատը բաց վանկում:

22. Մասնավոր դեպքեր են՝

ե>ա.— աղեղնակ>անանակ «ծիածան», սերեկ>սարէկ
(կաշի), ստեպղին>տապղին, (որի մեջ ա-ն համաձայն է ճիշտ
հուն. σταφυλῖνος՝ ձևին, մինչ գրական ձևը (ստեպղին) շեղվում է
և ունի ե), (Սերեկ «կաշի» բառի մասին ունենք հետևյալ նկա-
տողությունը.— Վանի բարբառում երեք համանուն բառ կա.

նախ սարեակ թռչունը (դարձել է Վն. սարէկ), երկրորդ՝ սերեկ Վաշկե կափարիչ կաթի և յուղի ամանի բերանին» (դարձել է նույնպես Վն. սարէկ), և երրորդ՝ Վն. սեռիկ «նոյն բղիկ, որի մեջ դնում են յուղ, մածոն ևն»։ Առաջին երկուսը ձևով նույնացել են Վանի բարբառում)։

ե>էօ.— այսպես են միայն գերեզման, որ բացի սովորական կյէրէզման ձևից, ստանում է նաև կյէօթօզման ձևը և չորեքշաբթի>չէօթօքքշպոթ, ուր է-ն և ո-ն խաչաձևված են իրար հետ։

23. Երեք և ավելի վանկանի բառերի մեջ երբեմն ե-ն կորչում է. օրինակները հետևյալներն են. ածելի>արծըլի, անթեղոց>անթրոց, բարեկենդան>պոթկէնդոնքյ, գիտել, գիտենալ>կիտնալ, երեսուն>յեոսուն, թիթեռնիկ>թոթրոնէկ, ծիծեռնակ>ճճրոնէկ, կարենալ>կանալ, հայելի>խայլիկ, հեղեղ (երկավանկ)>խղեղ, հետ իրերաց>խտրոց, ձմերուկ>ծմրիկ, (ը)ռեհան>ըռհոն, վայելել>վէլի (վայելել), լէվել, ոսկերիչ>վոսկրիչ, քերթել (երկավանկ)>քյրոթել.— նաև հոլովական ձևերի մեջ, ինչ. աշակերտ>սեռ. աշկրտաի, շերեփ>սեռ. շիոփի (շիրեփի) ևն։

24. Թեթև բառը ազգվելով իր հականիշ ծանր>ծանդր բառից, նրա նմանողությամբ դարձել է թեթ, ուր թև վանկը շրջված է և մի նոր ր ավելացած։

է

25. Բառակզրում է-ն մնում է է. եղած օրինակներն են՝ էգ>էքյ, էշ>էշ, էր>էր (էական բայի անկատարը), Ավելացնենք նաև է՞ր, որ և հավելումն ստանալով դարձել է ևէ՞ր «Խնչպես թե»։

26. Վերջավանկի շեշտյալ է-ն մնում է միշտ է. եղած օրինակներն են՝ աղուէս>աղվէս, անէծք>անէծք, գէշ>կյեշ, գոմէշ>գյէօմէշ (կյէօմէշ), դէգ>տէզ, դէմ>տէմ, երէկ>էրէկ, կէս>կէս, հուրնի հրեղէն>խուրնիխրեղէն, ձէթ>ծէթ, մէջ>մէշ, մէջք>մէշք, շէկ>շէկ, շրէշ>շրէշտ, պէս>պէս, պէտք>պէտք, սէգ>սէզ, սէր>սէր, տէր>տէր, օրէնք>օրէնքյ։

27. Տարբեր ձայնափոխություն են ներկայացնում հետևյալ բառերը.

պարսէտ, հնում գրված է նաև պարսետ. Վանի բարբառն ունի պարսետ, պարսետիկ ձևերով։

ստէծ (գրված կա նաև ստեծ) > Վն. ստեծ «ոստայնի մասե-
րից մեկը»:

Խէծ դառնում է խիծ:

մողէգ «խլեգ» դառնում է մողոգիկ, երևի անցնելով մողո-
գիկ ձևից:

28. Բառավերջում ունենք միայն երեք բառ. առաջինն է
թէ, որ պահում է իր բնիկ ձևը (Վն. թէ). երկրորդն է կիրակէ,
որ նոր հունարենի համաձայն վերջածայնը դարձրել է ի (կիրա-
կի). երրորդն է երէ, որ գրաբարումն էլ կա երունք ձևով և Վա-
նի բարբառում միանալով թոշուն բառի հետ, դարձել է էրուն-
թոշուն «բոլոր անասունները և թռչունները»:

Բազէ բառը ունի բոլոր ձևը (այսպես նաև Մկ. և Ողմ.):

Բարբառումս եղել է նաև պախրէ «տավար» բառը, որ սա-
կայն հետո ջնջվել է, և պահվել է նրանից միայն սեռ. պախրի
միս «տավարի միս»:

Ը

29. Բառասկզբում միայն երկու բառ կա Վանի բարբա-
ռում, որոնց համապատասխան ձևը գրաբարում ունի նախաձայն
ը. դրանք են՝ ինգյեր «ընկեր» և գոգ «ընկույզ». Առաջինի մեջ
գրբ. ը-ն դարձել է ի. երկրորդը նախապես կարծում էի, թե
քրդերենից փոխառյալ մի ձև է. այժմ ընդհակառակը կարծում
եմ, որ հյ. ձևը ավելի հին է. բառի նախավանկի ըն- կորչում է.
հմմտ. անկողին, ընկողին > գվռ. կողինք, կողվենք, ընկեր > գէր,
ընդ որ > Վն. դո՞ր, ընդ ունչ > դունչ, ընդիւց «նրանից» > դիւց,
ինձ > ընձի, Վն. ձի, ձիկ, կնքաւոր > քյավո՞ր. ըստ այսմ ընկոյզ
դարձել է (ընգոյզ ձևից անցնելով) գոյզ, որից և Վն. գոգ:

30. Ներքին անգիր ը-երը դասավորվում են հետևյալ ձևով.

ա) բառասկզբում երկու բաղաձայնի միջև ներմուծվում է
ը. ինչ. կրակ > Վն. կըրակ, դժոխք > տըժոխքյ.

բ) երբ բառասկզբում հավաքված են 3 բաղաձայն, առաջին
երկուսի միջև դրվում է ը. իսկ երրորդ (վերջին) բաղաձայնը
միանում և վանկ է կազմում հաջորդ ձայնավորի հետ. ինչ. բըռ-
նել > պըռնել, ինձոր > խընձոր.

գ) երբ բառասկզբում չորս բաղաձայն կա հավաքված և

երկրորդ բաղաձայնը նայ է, այդ դեպքում առաջին բաղաձայնից հետո դրվում է ը, իսկ վերջին (չորրորդ) բաղաձայնը միանում է հաջորդ ձայնավորի հետ. ինչ. խրտնուլ>խրտսնել, խնդրակ>խրնդրակ, գտանել>կրնդ/նել.

դ) երբ բառասկզբում չորս բաղաձայն կա հավաքված և երկրորդը նայ չէ, այդ դեպքում ը ձայնավորի ներմուծումը լինում է երկու ձևով. 1) կամ առաջին բաղաձայնից և երկրորդ բաղաձայնից հետո դրվում է մի մի ը (ուրիշ խոսքով առաջին բաղաձայնի և երկրորդ բաղաձայնի միջև դրվում է մի ը, միաժամանակ երկրորդ բաղաձայնի և երրորդ բաղաձայնի միջև դրվում է մի ը). 2) կամ առաջին և երկրորդ բաղաձայնի միջև, միաժամանակ երրորդ և չորրորդ բաղաձայնի միջև դրվում է մի ը. Երկու դեպքումն էլ չորրորդ բաղաձայնը միանում և վանկ է կազմում հաջորդ ձայնավորի հետ. Առաջին պայմանի համար օրինակ են՝ բզկտել>պրզրկտել, ծիծեռնակ>նրնրոնել, իսկ երկրորդ պայմանի համար օրինակ է խշխշալ>խըշխըշալ.

ե) երբ բառասկզբում հավաքված է հինգ բաղաձայն, վերջինը գնում է հաջորդ ձայնավորին, մյուսները ներմուծելով ը՝ կազմում են առանձին վանկեր. ինչ. փռնգտալ>փրոնցյտալ, փրոյնցյտալ (7 բաղաձայն).

31. Բառամիջում երբ հավաքված է երեք բաղաձայն, երրորդը միշտ վանկ է կազմում հաջորդ ձայնավորի հետ. իսկ առաջին երկու բաղաձայնները կամ միանում են նախորդ ձայնավորի հետ (օր. անձրև>անձ/րեվ, արմաւ>տմբ/րով(բ), ամաչել>ամչ/նալ) և կամ իրենց միջև ներմուծելով մի ը, կազմում են առանձին մի վանկ (օր. շատրուան>շտաթո/վոն).

Երբ բառամիջում հավաքված են չորս բաղաձայն, վերջինը գնում է հաջորդ ձայնավորին, իսկ առաջին երեքը կազմում են առանձին վանկեր՝ ներմուծելով ը. ինչ. ցին>վն. կոր-ցրնրնէկ:

Երնջնակ բառի մեջ ներմուծվել է ը, որ ապա նախաձայնի համաձայն դարձել է «է» (էրէծնակ).

32. Բառավերջում երբ երկու կամ երեք բաղաձայն հավաքված են միասին, կապվում են նախորդ ձայնավորին և նրա հետ միասին մի վանկ են կազմում. Այս դեպքում, երբ վերջին բաղաձայնն է ը, ներմուծվում է անշեշտ ը, որով կազմվում է ա-

ռանձին վանկ. ինչ. հարսն>խարս, ծանր>ծա՛նդրր, քաղցր>քյախցրր, բարձր>պո՛նցրր.

Բառավերջում վանի բարբառը ք չգիտե. հացը, ջուրը ևն ձևերը դառնում են խաց, նիւր. իսկ միսըս, երեսս և այլ նման ձևեր հնչվում են միահար միսս, իրեսս (մի հատիկ երկար ս՛).

Ի

33. Ամեն դիրքի մեջ էլ մնում է ի, օր.

Բառասկզբում՝ իմանալ>իմնալ, ինն>ին.

բառամիջում՝ առաջին>առնին, բաղանիք>պողնիս, գիշեր>կիշեր, եպիսկոպոս>իպիսկոպոս, թիկնել>թիյնել, բանալիք>պալնիս, ծիծ>ծիծ, հերիսայ>խաբիսա, միս>միս, յիսուն>իսուն, յիշոց>իշունց, շինական>չինական, ոսկերիչ>վոսկրիչ, սիրամարգ>սինամոխաֆք, սերկևիլ>սի(ր)կիվիլ, սպիտակ>սիվտակ, օրինակ>օրինակ ևն.

բառավերջում՝ գինի>կյինի, գարի>կյոբի, այգի>իկյի, լի>իլին, ձի>ծի, հայելի>խայլիկ, հոգի>խոկյի ևն.

34. Քիչ անգամ դառնում է է, այսպես են հետևյալ բառերը. անկողին>կողինք>գյօղվենքյ, անդրանիկ>առնդրանէկ, արագիլ>առակյէլ, դիպնիլ>տէպնէլ, դրակից>տըրկէց, երինջ>էրէնջիկ, թիթեռնիկ>թըոթըոնէկ, թոնիր>թօնէր, իջանել>էննել, լինել>լյնել (շրջված ձև. հմմտ. Մկ. իլնիլ, Ոգմ. քլնիլ), ծոթրին>ծէթրէն, տեսիլք>տեզէլքյ. (կա և տըրկեց).

35. Դարձել է ե՝ հետևյալ բառերի մեջ. արի (եկ)>արե, ծիրա>ծեռտ, կշիւ>կշեոքյ, ջիղ>նեղ.

36. Նախորդ ու ձայնավորի հետ փոխադարձ ազդեցությամբ դառնում է իւ՝ միայն ուրիշ>իւրիշ բառի մեջ. իսկ յիշոց>իշունց բառի մեջ էլ՝ հաջորդ ձայնավորի ազդեցությամբ, դառնում է ուշունց.

37. Ջնջվում կամ ր-ի է վերածվում հետևյալ բառերի մեջ. թիթեռնիկ>թըոթըոնէկ, ծիծեռնակ>նընըոնէկ, ծիծաղիլ>ծըծղալ, կակժիրակ>կոնջրոկ, ճիպո>նպետք, պատինջան>պատընջոն, տանալիկին>տանտրկին, ցին>կոթ-ցընընէկ (թռչունը), սիմինդր սըմընդր.—Տարբեր բառ է կոծիծ>խուծոծ:

38. Միավանկ բառերի սկզբում ուն դառնում է միշտ վո (vuo). եղած բոլոր օրինակներն են՝ ոխ>վոխ, ողջ>վոխշ, ոռ>վոռ, ոսպն>վոսփ, ով>վով, ոտն (ոտք)>վոտ, որ>վոր, որդն>վորք, որթ (հորթ)>վորթիկ, որձ (արու)>վոռց:

39. Երկավանկ բառերի սկզբում ուն նմանապես դառնում է վո. եղած օրինակներն են՝ ոգնի>վոգնիկ, ողջոյն>վոխնում, ոչխար>վոչխար, ոջիլ>վոնիլ, ոռնալ>վոռնալ, ոսկի>վոսկի, ոստին (անջրդի)>վոստին, որդի>վորաի, որձկալ>վոռձկալ.—Սյատեղ կարելի է դնել նաև որթ (հորթ) բառը, եթե առնենք փաղաքշական ձևը՝ որթիկ>վորթիկ (այս փաղաքշականը սարքված է լեզվի մեջ՝ զանազանելու համար որդն>վորք բառը որթ>վորք բառից. երկուսն էլ կենդանիների անուն):

Ոսկր>ոսկոր բառը անկանոն կերպով նախաձայն ուն դարձրել է ու, որով ստացվել է ուսկոր:

40. Բազմավանկ բառերի նախաձայն ուն դառնում է օ. այսպես են՝ ողողել>օղօղել, որոճալ>օրօճալ, ողորմիլ>օղօրմել, իսկ ոլորել բառը քմայնացմամբ դարձել է (օլօրել ձևից անցնելով) էօլէօրել:

Ոսկերիչ բառը թեև եռավանկ, բայց կամ ոսկի>վոսկի բառի ազդեցությամբ և կամ որովհետև Վանի բարբառում դարձել է երկավանկ, նախաձայն ուն դարձրել է վո (հնչվում է վոսկ/րիչ).

Որբկայրի բառը թեև բազմավանկ, բայց կազմված լինելով որք բառից, իբրև միավանկ՝ նախաձայն ուն դարձրել է վո (եղել է վոռպէօվէրի):

41. Ինչպես եւն և էւն վերջավանկում (շեշտի տակ) պահում են իրենց ինքնությունը Վանի բարբառում, նույնպես են նաև ուն և օւն. Շեշտյալ ուն դառնում է ո (երկբարբառային ոօ), իսկ օւն մնում է պարզ ձայնավոր օ. Առաջին երևույթի օրինակները հետևյալներն են.

աթոռ>աթոռ(ք)

անթեղոց>անթրոց

ալեոր>խալիվոր

առողջ>առոխն

ալոջ (ուլ)>ալոն

ափսոս>ափսոս

ամուլ>ամոլ

զոց>կոց

դամոն > տոմոն
 եպիսկոպոս > յեպիսկոպոս,
 բայց և իպիսկոպոս
 թագաւոր > քակավոր
 թոռն > քոռ
 լակոտ > լակոտ
 խաղող > խավող
 խմոր > խմոր
 խող > խող
 խոտ > խոտ
 խոր > խոր
 խորթ > խորթ
 խոց > խոց
 խոփ > խոփ
 խստոր > օխտոր
 ծոմ > ծոմ
 ծոց > ծոց
 կաթուղիկոս > կաթաղիկոս
 կեղծաւոր > կէղծավոր
 կնքաւոր > քյավոր
 կոթ > կոթ
 կոծ > կոծ
 կոկ > կոկ
 կող > կող
 կոճ «գերան» > կոճ
 կոշտ > կոշտ
 կոպ > կոպ
 կոտոր > կոտոր
 կտոր > կտոր
 կոր > կոր
 կորդ (հող) > կորդ
 կորկոս > կորկոս
 հող > խող

հոտ > խոտ
 հոր > խոր
 ճգնաւոր > ճրյնավոր (ճրքնավոր)
 մեղաւոր > մեղավոր
 մոմ > մոմ
 միւռոն > մեռոն
 նոր > նոր
 շկուր > շկուր (պտուղը)
 շնորհք > շնոխք
 շնորհաւոր > շնախավոր
 շող (ցուք) > շող
 շոր > շոր
 ուխտաւոր > քխտավոր
 ուղղորդ > աղորդ
 չոր > չոր
 չորք > չորս
 պղտոր > քխտոր
 պոչ > պոչ
 պորտ > պոռտ
 սաղմոս > սաղմոս, - ոց
 սղոց > սղոց
 սոխ > սոխ
 փիլոն > փիլոն
 փոթ > փոնթ
 փոխ > փոխ
 փող > փող «սրինգ»
 փողոց > փուղոց «ճեմիշ»
 փոս > փոս
 փոր > փոր
 քակոր > քյակոռ
 քարոզ > քյարոզ
 քշոց > խշոց

42. Վերջավանկի շեշտյալ ո ձայնավորը կարող է վերած-
 վել նաև օ (üö) երկբարբառին. եղած օրինակները հետևյալներն են.

աւելորդ > ավիւրճ
բժոս > բժն
բող > պոգ
բուր > պիւր (շուրջ)
բող, բոխ > պոգ, տոնպոգ
բող > պոխ
բոց > պոց
գղթոր > կըթոր (ցըթոր)
գող > կոթ
գու > կո
գող > կո, կու
գամ > կոմ
գործ > կոծ

գորտ > կոտ
գոթ > արծոթ
գող > տո
թոք > քոք
լոր > լոր
խնձոր > խնձոր
կթոց > կթ (կաթի)
ձող > ձող, ձողիկ
ձոր > ձոր
ջնջոց > ճնջոց
ջոջ > ճոջ
ընդ որ > դոր

Այս և նախորդ ցուցակների համեմատութեանը ցույց է տալիս, որ այստեղ էլ գործում է Անառայնի օրենքը.— երբ ուն գտնվում է նախկին թրթռուն բ, գ, դ, ձ, ջ բաղաձայններից առաջացած խուլ պ, կ, տ, ծ, և բաղաձայններից հետո, դառնում է հ (նձ), իսկ երբ այդ խուլերը հենց նախկին խուլներից են առաջանում, ուն դառնում է ո (նո)։

43. Իբրև բացառութեան այս կանոնից, վերջավանկի շեշտյալ ուն դառնում է օ բայոր այն դեպքերում, երբ գտնվում է վ բաղաձայնից առաջ. այսպես են՝ կողով > կօղով, հով (շուաք) > խօվ, սով > սօվ, ծով > ծօվ, կով > կօվ։

Ձարմանալի է նաև գրականից փոխառյալ եպիսկոպոս բառը, որ ունի երկու ձև՝ յեպիսկոպոս և իպիսկօպօս։

44. Բառամիջի անշեշտ ո ձայնավորն էլ նախ մնում է անփոփոխ. եղած սակավաթիվ օրինակներն են.

գլորիլ > կորիլ
եպիսկոպոս > յեպիսկոպոս
խարտոցել > խառտոցել
խոթել > խոթել
խոլորիլ > խոլիկալ
խոնարհ > խոնար
խոստանալ > խոստանալ
խորան > խորան

խորիսի > խորիս
կոխել > կոխել
կոտրել > կոտրել
կորիզ > կողինձ
կորեակ > կորեկ
կործել > կոռծել
կորնկան > կորնգյուն
հոգալ > խոկյոլ

հոգի>խոկյի	փոխել>փոխել
հորդել>խորտել	փոխինդ>փոխինդ
մոխիր>մոխիր	փոշի>փոշի «ալյուրի»
մոռանալ>մոռնալ	փորձել>փործել
մորթել>մորթել	փորձանք>փործանք
յաջողիլ>մոռոկել	ցորեան>ցորեն
յորդորան>հորթորան	փորել>փորել, պորել
ջորի>հորի	քորել>քյորել
տոկանք>տոկանք «տանջանք»	

Անշուշտ սրանցից մի մասը գրական լեզվից է փոխ առնված.

45. Երկրորդ՝ բառամիջի անշեշտ ուն դառնում է օ կ այս է իր ավելի բնական ձայնափոխությունը. Եղած օրինակներն են՝

անկողին>գյօղվենք	կոճակ>կօհակ
գողի «անդամալույծ»>կյէտօի	կոճակել>կօհկել
թոռոմիլ>թօռօմել, թօմբոնել	հովահրել>խօվխրել
թողուլ>թօղնել	հովիւ>խօվիւ
թոնիր>թօնէր	հոտոտել>խօտօտալ
ժողովել>ժօղվել	հոպան>հօպան
լողանալ>լօխկնալ	մողէղ>մօղօգիկ
լողալ>լօղալ	որոճալ>օրօնալ
խողան>խօզան	ողողել>օղօղել
խոնջան>խօնջոն	ողորմիլ>օղօրմել
խոպան>խօպան	ջրյորդան>հօոթան, հօլօտրան
խոտտովանիլ>խօտտօվանել	պողպատ>պօղպատ
կողով>կօղօվ	սողալ>սօղալ
խոռվիլ>խօռվել	սովորել>սօվրել

Թեև, ինչպես ասացինք, երկու տեսակի ձայնափոխություն համար (ո, օ) որոշ օրենքներ չկան, բայց այնուամենայնիվ նկատելի է որ ո>օ ձայնափոխությունը տեղի է ունենում դ և վ բաղաձայններից առաջ. Վերի օրինակներից 10-ը դ-ից առաջ է, 5-ը վ-ից առաջ, իսկ նախորդ իմքի մեջ (ո>ո) այս 15-ի դեմ միայն երկու օրինակ կա դ~ով՝ (կորիւ>կողիւն և յաջողիլ>տնողիլ). մնացյալը մեծ մասամբ ք, ու-ից առաջ է (16 օրինակ).

46. Բառամիջի ուն (չեշտյալ կամ անշեշտ) կարող է դառ-

նալ նաև էօ, դարձյալ առանց որոշ օրենքի: Եղած օրինակ-
ներն են՝

աքլոր>անյլէօր
բոպիկ>պէօպիկ
բոխ (բուսը)>պէօխ
բովել>պէօվել
բղող>պղէօղ
բոտոտ>բղէօղ
բորբոքել>պէօրպրքել
բորբոս>պէօրպէօս
բորբոսնիլ>պէօրպրսնել
գոմէշ>գյէօմէշ
գոռալ>կյէօռալ

գովել>կյէօվալ
գողալ>տէօղալ
գոքանչ>գէօքյանչ
մորմոքել>մէօրմըքյալ
մոլորել>մէօլըրել
ոլորել>էօլէօրել
չորեքշաբթի>չէօրէօքշպոթ
ջոկ>ճէօկ
սարգոստայն-իկ>սարանդէօս-
տիկ
քարաթոթոշ>քյոռոթոթէօշ

Նկատելի է, որ 21 օրինակներից 18 հատը թրթռուն բա-
ղաձայններից հետո է:

47. Բառամիջի ո ձայնավորի փոփոխության մասնավոր
դեպքեր են.

ա) ո>ու.—կոտոշ>կուտոշ, կորուսել>կուրիս, կորկոտ>
կուրկոտ, խորովու>խուրուվու, կոծիծ>խուծոծ, սև սոնիճ>սեվսու-
նիճ, տորոն>տուրուն, փողոց>փուլոց, յիշոց>իշունց, ուշունց.

բ) ո>իւ.—միայն բոլոր>պիվոթ բառի մեջ.

գ) ո>ա.—միայն շնորհաւոր>շնախավոր, կաթողիկոս>կա-
թաղիկոս և եպիսկոպոս>յեպիսկապոս բառերի մեջ. առաջին եր-
կուսը հաջորդ և նախորդ ա-ից ազդված.

դ) ո ջնջված.— բոտոտ «որդ»>բղէօղ բառի նախավան-
կում և ժողովել>ժօղվել, մոլորել>մէօլըրել, մորմոքել>մէօր-
մըքյալ, սովորել>սօվրել, բորբոսիլ>պէօրպրսնել բառերի մի-
ջավանկում.

ե) շողգամ և բորակ բառերը երկու ձևով են ավանդված.
Վանի բարբառն ունի շոխկյոմ և պորոկ ձևով. իսկ ծոթրին ա-
վանդված է գանազան ձևերով. Վանը ունի ծէթրէն ձևով.

զ) քարաթոթոշ բառի մեջ թեև շեշտյալ ո-ն դարձել է էօ,
բայց անշեշտ ո-ն վերածվել է տ-ի (քյոռոթոթէօշ):

48. Բառասկզբում ու-ն մնում է ու. եղած օրինակներն են՝ ութ>ութ, ուլ>ուլ, ուլն, ուլունք>ուլնիկ, ուխտ>ուխտ, ուղեղ>ուղեղ, ուղոդ, ուղտ>ուղտ, ունիմ>ունեմ, ուտի>ուտի, ուտիլ>ուտել, ուտել>ուտել, ուրազ>ուրաքյ, ուրախ>ուրախ, ուրանալ>ուրանալ, ուրար>ուրար, ուրբաթ>ուրպոթ, ուրց>ուրց.

49. Մի քանի բառ միայն կա, որոնց նախաձայն ու-ն ձևափոխված է. այսպես են ուրիշ>իւրիշ, ուղարկել>էօրէօխկել (սը-րանց նախաձայնը ենթարկված է ձայնավորների ներդաշնակու-թյան օրենքին), ունկի>նուկի (շրջված կամ տեղափոխված), ուղղորդ>աղորդ (նախաձայն ու ջնջված, ապա ավելացած ա), ունջ ամուր>որից ունջկար և, շփոթելով մունջ բառի հետ՝ մունջ-կար (որ և մունջկար), ուխտաւոր>ըխքավոր (որի մեջ նախա-ձայն ու-ն ջնջված է կամ որ նույնն է՝ ը-ի վերածված):

50. Բառամիջում ու-ն մեծ մասամբ մնում է ու. ինչ. վաթ-սուն>վաքսուն, պուտուկ (աման)>պուտուկ, կուտ>կուտ, կտուց>կտուց, երեսուն>յեռսուն, մածուն>մածուն ևն, ևն.

Մի մասն էլ ու-ն դարձնում է իւ. ահա եղած բոլոր օրի-նակները.

ազուգայ>ուկյիւկյո
արթուն>արթիւն
բազուկ>պոզիւկ
բազումք>պոզիւմք
բարունակ>պոբիւնակ
բուսանիլ>պիւսնել
բուրդ>պիւրթ
բութ>պիւթյ
բրուտ>պրիւտ
գարուն>կյոբիւն
գութան>գյիւթան
գուլ>գյիւլ
գունտ>կյիւնդ
դդում>տտիւմ
դուր>տիւր (հիւսնի)
երդումն>էօրտիւմ
զրուցել>զրիւցել

թուզ>թիւզ
թութ>թիւթ
թումք>թիւմք
թուփ>թիւփ
թութ>թիւթյ
լուսնակ>լիւսնակ
լուծ>լիւծ
ձուկն>ծիւկ
համբուրել>խամբիւրել
հանելուկ>խանելիւկ
ձմերուկ>ծմրիւկ
շութ>շիւթյ
ջութ>ճիւր
*սեր-սութ>սէքսիւփ
փափուկ>փոփիւկ
փութ>փիւգ
փութ>փիւթյ

51. Թե ինչ դեպքում ուն մնում է ու, կամ դառնում է իւ, չկարողացա որևէ կանոն գտնել. Դեպքեր կան, երբ վերջաձայնն է որոշում հարցը, օր. երբ բառը վերջանում է ո-ով, նրա նախորդ ու ձայնավորը անփոփոխ է մնում. այսպես են՝

ապուռ > ապուռ «շատ էժան»	ծուռ > ծուռ
բուռն > պուռ	կուռն > կուռ
դուռն > տուռ	մամուռ > մամուռ
թրթուր > քոքուռ	նուռն > նուռ
ժուռ > ժուռ	փրփուր > փոփուռ

Նույնիսկ եթե ու-ի վրա ավելանա մի բաղաձայն ևս, դարձյալ ուն կմնա անփոփոխ. Այսպես՝

խուրձն > խուոց
շուրթն > շուոթ
ցուրտ > ցուոտ

-ունքյ, ունգյ վերջացող բառերն էլ պահում են իրենց ու ձայնավորը անփոփոխ. Այսպես են՝

արտասուք > առտսունքյ	կնունք > կնունքյ
արարմունք > արմունքյ	կռունկ > կռունգյ
արմուկն > արմունգյ	կրուկ(ն) > կրունգյ
եղունգն > յեղունգյ	ծունկ > ծունգյ
խունկ > խունգյ	սունկ > սունգյ

- ուն վերջացող բառերից 15 հատը անփոփոխ պահում են ու ձայնը. այն է՝

անուն > անուն	յխուն > իսուն
աշուն > աշուն	շուն > շուն
առաւօտուն > առատուն	վաթսուն > վաքսուն
անասուն > անասուն	տուն > տուն
երեսուն > յեոսուն	ցողուն > ցողուն
էրուն - թոչուն > էրուն - քոչուն	քառասուն > քյաոսուն
մածուն > մածուն	քուն > քյուն

Բացառութիւն են միայն արթուն > արթին և գարուն > կյարին:

2 վերջացող միայն երեք բառ ունենք, որոնք ու ձայնավոր ունեն և պահում են անփոփոխ. այն է՝ բուշ, նուշ, փուշ:

Մյուսն հակառակ քյ վերջացող բառերը ուն դարձնում են իւ. այսպես են՝ բուք>պիւքյ, թուք>թիւքյ, շուք>շիւքյ, փուք>փիւքյ, բայց բացառություն է սուգ բառը, որ մնում է սուքյ.

52. Բառավերջում ուն կամ մնում է ու և կամ դառնում է իւ, առանց դարձյալ որոշ կանոնի.

ա) ու>ու.

ածու>ածու,

կծու>կծու

առու>առու

հերու>խէրու

երկու>էրկու

քարթու>քյտոթու

կատու>կատու

բ) ու>իւ.

բու>կոր-պիւ

լեզու>լէզիւ

դու>տիւ

լու>լիւ

թթու>քքիւ

ծու>ծիւ

53. Մասնավոր դեպքեր.

«Բղուկ» բառի դեմ Վանի բարբառն ունի պղէղ, որ կարող է ծագած լինել թէ բղուղ և թէ բղող ձևից.

Գլուխ>կյըլէօխ բառի մեջ ուն դարձել է էօ.

Տուգա բառը պահված է երկու ձևով՝ տուղա և տեղա:

Սուրբ բառը չափազանց շատ գործածվելու պատճառով կըրճատվել և դարձել է սրփ:

Բունկալ (= բնակալ) բառի մեջ ուն դառնալով հ, տվել է պհնկալ. բայց այստեղ ձայնափոխությունը միայն բոյն>պհն բառի պատճառով է.

Չարմանալի է դուռն>տուռ, որի մեջ ուն պահված է անփոփոխ, բայց սրանից կազմված տիւր—տրկեց ձևի մեջ ուն դարձել է իւ:

ԵՐԿԱՄԲԱՌՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Ա.Յ

54. Բառակցում այ-ը դառնում է «է». այսպես են հախ միավանկ բառերը. ինչ. այծ>էծ, այն>էն, այլ>էլ.— «այս, այդ»

ցուցականները վերջից ստացել են ա ձայնավորը, բայց դարձյալ ունեն այ>է. այսպես՝ էսա, էտա.— Այր «բարայր» բառը թեև սկզբից ստացել է հ հավելվածը, բայց դարձյալ ունի այ>է և լինում է հէր. (Նկատելի է, որ այստեղ հն չի դառնում խ, ապա թե ոչ պիտի շփոթվեր հայր>խէր բառի հետ).— Այրի բառը թեև ծածկված է բարդության մեջ, բայց էլի պահում է այ>է և լինում է վոռպէովերի. Մնում են երեք բառ՝ այգի>իկյի, այր-իկ>իրիկ, այրել>իրիցել, որոնց մեջ այ-ը դարձել է ապօրինի կերպով ի. Հայտնի չէ թե այս փոփոխությունը տեղի է ունեցել որովհետև այդ երեք բառերն էլ իրենց երկրորդ վանկում ունեն ի ձայնավորը, թե՛ այ>ի ձայնափոխությունը օրինական է բազմավանկ բառերի սկզբում. Չունենալով ուրիշ որևէ անկախ օրինակ՝ դժվար է լուծել հարցը (հմտ. այրի):

Բայց ունենք երկու հետաքրքիր բառ ևս. առաջինն է էկյէստար՝ Վանի արվարձանը, որ «Այգեստան» ձևից են հանում. և երկրորդ էքպարէվ «նորապսակների կտուր բարձրանալով՝ նըվազածունների հետ միասին արևի ծագումը ողջունելը» <այգբարև (Ազգագր. հանդ. ԻԵ, 52):

Երկուսն էլ բազմավանկ են և ունեն նախաձայն այ>է, որոնց եթե միացնենք նաև բազմավանկի վերածված այս>էսա, այդ>էտա բառերը, կարող ենք ասել, թե վերի ենթադրություններից միայն առաջինն է ճիշտ և երկրորդը սխալ է. Ուրիշ խոսքով այ-ը նաև բազմավանկ բառերի սկզբում դառնում է «է», իսկ «այգի, այրել և այրիկ» բառերի մեջ նախաձայն այ-ը դարձել է ի՝ միայն երկրորդ վանկի ի ձայնավորի նմանողությամբ:

55. Բառամիջում այ՝ բաղաձայնից առաջ դառնում է է. այսպես են՝

դալլ>կյէլ
եղբայր>ախպէր
երկայն>էրկէն
ժայռ>ժէռ-քյար
լայն>լէն
խայթել>խէթել
ժայր>ժէր
կայծակ>կէծակ

հայր>խէր
ձայն>ձէն
մայր>մէր
սալլ>սէլ
սանահայր>սանախէր
սանամայր>սանամէր
սկեսրայր>կէսրէր
վայրի>վէրի

ի վերայ (վերայն) > վերէն	փայտ > փետ
տալար > տէքր	քայլել > քյէլել
փայլ, փայլեկտալ > փէլքյ,	քայլք > քյէլքյ
փէլքյերտալ	

Այս օրենքը տարածվում է նաև այն բառերի վրա, որոնք վերջանալով ա ձայնավորով (հին—այ), ստանում են որոշիչ հոդ և (~այն > էն). Օր. սատանայ, որոշյալ հոդով՝ սատանայն > Վանի բարբառով սատանա, բայց որոշյալ սատանէն, ճիշտ նույնն է նաև Երևանի բարբառում:

Մանոթ.— «Պանդուխտ Վանցին» գրքում (տպ. Պոլիս 1876, էջ 31) կա այսպիսի մի տող. մեր խիվանդ խէն տիո՞րի (իմա տիո՞ր ի): Այս անծանոթ խէն բառը ուղղում եմ մեկնել հայն «հայ մարդը» (մեր հիվանդ հայը թւր է):

56. Բազմավանկ բառերի վերջում այ-ը, կորցնելով իր կիսաձայնը, դառնում է ա կամ տ. այսպես են ազուգայ > տկյիւկյո, աշարայ > աշարա «նոր ցորեն», ապուղայ > արուղա, բակլայ > բոյլո, եղայ > էլո, ծառայ > ծառա, կասկարայ > կասկարա, կթխայ > կթխա, հերիսայ > խարիսա, շուշփայ > շուշփա, սատանայ > սատանա, տղայ > տղա, փեսայ > փեսա, քահանայ > քայխանա:

Միավանկ բառերի ծայրին կիսաձայնը մնում է. ինչ. հայ > խայ, վաճ բացագնչ.:

57. Բառամիջում երբայ-ը գտնվի ձայնավորից առաջ, կարող է մնալ անփոփոխ, կարող է նաև ձայնավորը ընկնել, կարող է նաև այ-ը դառնալ է: Այսպես են՝ վայելել > վայելի, վէլել, լէվել, խնայել > խնայել, վայելք > վէլք «վայելչություն» (օր. խալվի վէլք «հալավի վայելք, զգեստի վայելչություն», որից ոճով վէլք տալ «վայելչություն տալ»), մայել > պայել! կլայել > կլայելկ, հայել > խայլիկ, հայիլ «նայիլ» > խել (Շատախ), խենք ճնայինք», հրամայեա > խրամէ:

58. Մասնավոր դեպքեր.

Խայտառակ բառը գրականից փոխառյալ լինելով մնում է անփոփոխ.

Մեծղայ բառը վերջում ստանալով ալ մասնիկը՝ դարձել է ցրեճղակ:

Պայծառ բառի մեջ այ-ը ապօրինի կերպով դարձել է ո,

խոյ կայոյիք բառի մեջ էլ և (փխ. է), որով ունենք պոծառ, կե-
ռիկ անկանոն ձևերը.

Անկանոն է նաև գայո>քյոռ «ցեխ», որ տես § 88.

Սարդոստայն>սարանդէօստիկ բառը շատ է ձևափոխված,
այնուամենայնիվ երևում է այն>ան (և ոչ էն) ձայնափոխու-
թյունը.

ԱԻ

59. Բառակցքում կամ բառամիջում ձայնավորից առաջ
գտնված ժամանակ դառնում է ավ կամ ով. այսպես են՝

ամբարտաւան>	ամպառտավան	ծարաւիլ>	ծարավել
ապաւէն+մեռ>	ապավմեռ	կաւիճ>	կավիճ
աւազ>	ավազ	կեղծաւոր>	կեղծավոր
աւազան>	ովոգուն	կնքաւոր>	քյավոր
աւել>	ավել	հաւանիլ>	խավնել
աւելել>	ավիլել,	հաւասարիլ>	խավսըրվել
(տո)աւել>	ովել	հաւատալ>	ավատալ, խավատալ
աւելորդ>	ովիճոր	հաւատ>	խավատ
աւետարան>	ավէտրան	ծաւար>	ծովոր
աւերակ>	ավերակ	մեղաւոր>	մեղավոր
աւերել>	ավիրել	յաւանակ>	ավանակ
գաւազան>	կյոժովոգուն	շաւառն>	շավեռ
գաւառնում>	տովոնում	շնորհաւոր>	շնախավոր
թագաւոր>	թակավոր	ուխտաւոր>	ըխթավոր
թաւալիլ>	թավալել	սարկաւազ>	սարկավաքյ
խաւար>	խավար	սաւան>	սավան
խաւարծիլ>	խավրոծիլ	ճգնաւոր>	ճրյննավոր, ճրքնավոր
խաւիծ>	խավիծ		

60. Բառամիջում բաղաձայնից առաջ գտնված ժամանակ
աւ-ը դառնում է օ և այս օ հնչումը Վանի բարբառում շատ խստիվ
և հարազատությամբ պահվում է Կոստանց շփոթելու ո (երկբար-
բառային) հնչման հետ. Այսպես են՝ աղօթք>աղօթկ, աղօցկ,
աղօթել>աղօթել, ամօթ>ամօթ, անօւր>նօւր, արօւ>արօւ
(թռչուն), արօւ>արօւ, արօր>արօր, խարօր, արօր>արօր (թրու-
շուն), թափօր>թափօր լօշտակ>լօշտակ, խօւք>խօւք, կարօւ
>կարօւ, ճօճք>նօնիկ, մօւ>մօւ, յօրանջել>օրօշկրտալ, նա-

բօա>նարօա, նօթի>անօթի, տօն>տօն, Իսկ բառասկզբում՝ օծել
>օծել, օծ>օց, օղ>օղ, օրհնել>օխնել ևն.

61. Մի քանի տեղ Վանի բարբառը այս դեպքում տալիս է
մեզ որոշ ցուցումներ:

Հյ. կարոս բառը (բույսի անունը) գրականում ընդունված
է գրել ո տառով. վանեցիները հնչում են կարօս, այն է օ հըն-
չյունով. և այդ իրավացի է, որովհետև բառը ծագում է պրս.
karafs ձևից, որ տալիս է միջ. հյ. կարաւս (տես Արմ. բու.
Գ. 1100).

Հյ. ցող, ցողուն, քող բառերը տառանկում են ո և օ գրչու-
թյան մեջ. Վանի բարբառը հնչում է միշտ օ ցող (կոթ, ցողուն),
ցողուն, քյօղքյ:

Հյ. մօրոս բառն էլ ունի զանազան գրչություններ: Դըժ-
բախտաբար Վանի բարբառը այս դեպքում հաջորդ. ձայնավորի
նմանողությամբ ո-ն կամ օ-ն դարձնելով ու, ներկայացնում է
մեզ մուրոս երկբիմի ձևը: Մրս նման է նաև օրօրել>ուրուրել,
բայց որովհետև վերջինիս մեջ գիտենք, որ նախնական է օ, ուս-
տի կարելի է թերևս ենթադրել, թե Վն. մուրոս ձևն էլ ծագում
է մօրոս ձևից:

Հյ. աղանի բառը միակ բացառությունն է, ուր ունենք
ալ պահված անփոփոխ բաղաձայնից առաջ. Վանի բարբառը սրա
դեմ ունի յեղունիկ, որի նախաձևը դժվար է որոշել:— Թերևս
*եղօնիկ:

Հաւք>Վն. խաֆք «թռչուն» բառը, պահելով իր ստուգա-
բանական ծագումը՝ չի դարձել հօք>խօք, կազմելով այսպես մի
տարբեր անուն՝ հաւ «մարի» բառի դեմ:

62. Ալ երկբարբառի անսովոր ձևափոխություններն են՝

աւ>ո.— ալօս>ալոս բառի մեջ.

աւ>ու.— իօսել>խուսել, յօնք>ունքյ (հգ. ընքյվեր), նօթի
>անօթի, անուրի, հօտաղ>խուտաղ.

օ>էօ.— յօտել>էօտել, յօա>էօա, յօրանալ>հէօնանալ? օզն
>էօքյ, հէօքյ «օգնություն»:

աւ>ախ.— թօթափել>քախքիել (հմմտ. եօթն>օխտը):

աւ-ը և նույնիսկ աւօ-ն ջնջված են համառոտության հա-
մար՝ առաւօտուն>առատուն, առատման բառի մեջ. Դարձել է
ը՝ յօնք>ունքյ, հգ. ընքյվեր բառի մեջ:

63. Բառավերջում աւ-ը թանձրանալով դառնում է ավ (ով). ևղած օրինակներն են՝ ամբբաւ>ամբբով, գրաւ>գրավ, իրաւ>իրավ, ծարաւ>ծարավ, կաւ>կավ, կաքաւ>կաքավ, կըտաւ>կտավ, խաւ>խավ, պառաւ>պառավ, ցաւ>ցավ:

Հետաքրքրական է արմաւ, ամբբաւ բառը, որ ամբբով ձևն ստանալուց հետո դառնում է նաև ամբբոբ, ուր վ>բ. սրա-նից է ամբբոբիկ «մի տեսակ խմորեղեն արմավի ձևով»:

ԵԱ

64. Մեր ունեցած օրինակների մեջ եա-ն գտնվում է միշտ վերջավանկում և դառնում է է (ե). այսպես են արբանեակ>որպնէկ, *երանեակ>էրանէկ «երանի» (եթե լիներ *երանիկ ձև-վից, պիտի մնար անփոփոխ. ինչպես ցույց են տալիս աղաւնի>յեղունիկ, հայելի>խայլիկ բառերը), լեարդ>լէրթ, կորեակ>կորեկ, կլայեակ>կլայեկ, սարեակ>սարէկ, վառեակ>վառէկ. ցորեան>ցորէն, մի անգամ էլ ե. այն է սեամ>շեմբյ, սեռ. շիման:

Սեռ. սեան, ձեան դառնում են սան, ծոն:

Իրեար բառի մեջ եա դարձել է ո (իրոր):

Անց. դերբայի -եալ վերջավորությունը դառնում է -եր. ինչ. ասեր, տիսեր, խմեր, կիրեր, պիրեր ևն. Իսկ սեռ. -ուրեան վերջավորությունը, վերածվելով -ուրնի ձևին, կորցրել է երկ-բարբառը:

ԵԱՅ

65. Այս ձևով ունենք երկու բառ՝ ապակեայ>ապակէն, կըրեայ>կըրրա. բայց երկուսն էլ ձևափոխված են և երկբարբառի պատկերը կորցրած:

ԵԱԻ

66. Ունենք միայն երեք բառ՝ առաջեաւ>առնել, սեաւ>սել, բարեաւ>պարէօվ. առաջին երկուսի մեջ եաւ-ը դարձել է եվ, վերջինում՝ չօվ (անցնելով բարով ձևից):

67. Բառասկզբում կա միայն եաւթն, որ տալիս է յօթ՝ գրա-կանին նման (չի ասվում օխտը). Ձնջված է եօթանասուն բառը՝

տեղի տալով թրք. yetmiş ձևի առաջ. բայց Մոկաց բարբառում մնում է յօրմնասուն. և քանի որ եօթն>յօթ նույն է թե Վանում, թե Մոկսում և թե Ողմիում, ուստի եօթանասուն բառն էլ մնացած պիտի լիներ Վանի բարբառում նույն ձևով:

ԵԻ

68. Բառավերջում լինում է միշտ եվ. այսպես՝ անձրե> անձրեվ, արե>արեվ, թե>թեվ, ձե>ձեվ. նոր փոխառություն է միայն դէվ «դե», ուր գտնում ենք էվ (փխ. եվ):

69. Բառամիջում գտնում ենք եվ, էվ, իվ, էօվ, նույնիսկ իպ ձևով. այսպես են՝ թեթե>թեվթր, երեալ>էրէվալ, ակոր>խալիվոր, ձեեւ>ձիվել, սերկեւի>սիրկիվիլ, որբեայրի>վոռպէօվէրի, բեեռ>պիպեռ (վերջինը անշուշտ նախապես *պիվեռ, ապա նախաձայնի ազդեցությամբ վ դարձած պ):

ԻԱ, ԻԱՅ

70. Այս երկբարբառներով ունենք միայն երեք բառ. առաջինն է միակ, որ ամփոփվելով դառնում է մէկ, երկրորդն է միայնակ, որ նույնպես ամփոփվելով դառնում է մէկնակ, որով իա, իայ>է. երրորդն է պատրիարք, որ նախադասությամբ ստանալով ր բաղաձայնը, կորցրել է երկբարբառի հանդամանքը և դարձել է պատրիարք. Իսկ թիակ բառը ստանալով յ ձայնակապը, դարձել է թիյակ «թի»:

ԻԻ

71. Այս երկբարբառով բառակզրում ունենք միայն երեք բառ. առաջին երկուսն են իւր>ուր և իւրեանք>(իրենք), ուրանք, որոնք դարձրել են իւ>ու: Երրորդն է իւղ, որի մեջ իւ-ն հաջորդ դ-ի պատճառով դարձել է նախ ե, և ապա իբր միավանկ բառ, ե-ից առաջ ստանալով յ հավելվածը, ամբողջը եղել է յեղ:

72. Բառավերջում գտնված իւ-ն թավանալով դառնում է իվ. այսպես են արծիւ>առծիվ, թիւ>թիվ, կոիւ>կոփվ, հովիւ>խօփիվ: Նույն ձայնափոխությունն է կրում նաև բառամիջի իւ-ն՝ գտնվելով ձայնավորից առաջ. այսպես՝ հիւանդ>խիվանդ, հիւանդանալ>խիվընդնալ:

73. Վերջավանսում իւն գտնվելով շեշտի առկա ստանում է հետևյալ ձևերը.

ա) դառնում է իւ (յ). այսպես են ալիւր>ալիւր, աղբիւր>ալիւր, բիւր>փիւր, դիւր>ալիւր (բոլորն էլ ր բաղաձայնից առաջ), ձիւն>ծիւն.

բ) դառնում է ու. այսպես են արիւն>արուն, խիւս>խուն, հիւսն>խուն, հիւս (ձյան)>ունի, հերիւն>խիրուն, սիւն>սուն, շիւղ>շուղ, հիւր>խուր (մեծ մասամբ ն, ս բաղաձայններից առաջ, բացի վերջինից, որ պիտի գտնվեր նախորդ բաժնում).

գ) դառնում է ի. այսպես են՝ աղիւս>օղիս, հարիւր>խարիւր. Իսկ կիւրակէ>կիրակի բառը նոր հունարեն հնչման համաձայն է.

դ) դառնում է ե, ինչպես ունենք գիւղ>կյեղ, միւռն>մեռն, մըջիւն>մոնեմ, և բոլոր -ութիւն վերջացող բառերը.

ե) դառնում է օ՝ միայն ճիւղ>նօղ բառի մեջ.

ՈՅ

74. Միավանկ բառերի մեջ՝ ոյ-ը բաղաձայնից առաջ, դառնում է ձ կամ ո. այսպես են բոյթ (մատը)>պձթ, բոյն>պձն, գոյն>կյձն, թոյլ>թձլ, լոյս>լձս, կոյր>կոթ, շոյտ>շոտ, ոյժ>վոժ, քոյր>քձր, որոնց հետ կարելի է հիշել նաև (ըն)կոյզ>զձզ. Տարբեր է միայն բոյս>պիւս բառը.

Երկավանկ բառերից այստեղ հիշատակելի են կապոյտ>կապոտ, ճկոյթ>նկոթ, հանգոյց>խանգյոց:

75. Բազմավանկ բառերի մեջ ոյ-ը նույն դիրքում դառնում է ու. այսպես են անոյշ>անուշ, երեկոյն>իրիկուն, նմոյշ>նմուշ, ողջոյն>վոխնում, պատրոյզ>պատրուք, պատրոյս>պատրուս, վարագոյր>վորակյուռ:

Գրականից փոխառյալ է յոյս>նույս:

76. Այս բոլորից դուրս են մնում խոյ>խոյ, կոյ>կու, իսկ միավանկ սեռ. ո՞յր «որի՞» դառնում է վի՞ր:

ՈԻԱ.

77. Ընդհանրապես դառնում է վա, վա. եղած օրինակներն են՝ աստուած>աստված (բայց նաև ասպած. հմմտ. արմաւ>ամբրով ամբրոբ), աստուածածին>ասվածածին (բայց

նաև սասարածին), զուարթ>զվարթ, նուալ>նվալ, «կատվի մը-
լավել», նուաղիլ>նվաղիտալ, լուալ>լվալ, վալ, ձուածեղ>ծվա-
ղեղ, չուան>չրվան, շատրուան>շտարովուն, զզուիլ>զզուալ>
զրզվալ.— Դժուար բառը անցնելով դժար ձևից՝ դարձել է տի-
ժոր, այսպես նաև շուար>շիվար:

ՈՒԻ . . .

78. Ուն ուրիշ ձայնավորներէ հետ ունենք միայն՝

ուէ.— աղուէս>աղվէս.

ուե.— կտուել>կտվել (թթուել), ցրուել>ցվրել.

ուի.— նուիկ>նվիկ (խոտը).

ուսյ.— առուսյա>առվճա (բուսյը).

ԲԱՆԱՍԻԿԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Բ

79. Բառասկզբում բն իրանալով դառնում է պ. օր. բան
>պուն, բանալիք>պունիս, բարակ>պարակ, բարձ>պառց, բու-
սանիլ>պիւսնել, բղուղ>պղէօղ, բու>կորպիւ, բովել>պէօվել ևն.

80. Պոլսի գրական լեզվից փոխառյալ բառերի մեջ՝ բառա-
սկզբի բն դառնում է փ. ինչ. բառ>փառ, բեմ>փէմ, բիւր>
փիւր, փիյուր, բարբառ>փառփառ ևն.

81. Թուրքերենից և այլ արևելյան լեզուներից փոխառյալ
(կամ ազգված) բառերի նախաձայն բն մնում է բ. ինչ. բաղ>
բուտ, բազէ>բուզ, բախտ>բուխտ, բակլայ>բույլու, բաշ>բուշ
«ձիու մազ» (գյուղերում փուշ), բարտի>բուրդի.— Մի գեպքում
միայն նախաձայն բն՝ ազգվելով հաջորդ ժ-ից, դարձել է բ.
այն է բոտ>բոժոտ. Իսկ բոտոտ «որդ, ցեց» բառը դարձել է
բզժոտ՝ չշփոթելու համար պտոտ «ջրապտույտ» բառի հետ. Այս
բառի մեջ բուրբ խուլերը դարձել են թրթուռ.

Մանր.— Հետաքրքիր ձև ունի բաշ բառը. երբ նա նշա-
նակում է «ձիու մազ», դառնում է բուշ. իսկ երբ նշանակում է
«ճակնդեղի տերև կամ սոխի կանաչ երկար գոլը», ստանում է
պոշ ձևը:

82. Բառամիջուժ Բ-ն դառնում է նույնպես պ. անկախ օրինակները հետևյալներն են. բիբ, փղջը. *բիբիկ>պիպիկ, գաբ, փղջը>կյոպիկ, բոի, փղջը. բոբիկ>պէօպիկ, խաբել>խապել, շաբաթ>շոպոթ. Մնացյալ գեպքերում բառամիջի Բ-ն գտնվում է զանազան պայմանների տակ.

83. Մ բաղաձայնին հաջորդելու գեպքում մնում է Բ. այսպես են՝ ամբար>ոմբոթ, բամբակ>պոմբոկ, բամբասել>պամբասել, գմբեթ>քյումբէթ, թմբրիլ>թմբրել, համբուրել (աջը)>խամբիւրել, և մնում է միայն ամբարտաւան բառը, ուր Բ-ն դարձել է պ (ամպառտավան):

84. Բառամիջուժ Բ բաղաձայնից հետո Բ-ն դառնում է պ. այսպես են՝ արբանեակ>ոբպնէկ, բորբոքել>պէօբպրքել, բորբոս>պէօբպէօս, բորբոսիլ>պէօբպրսնել, դարբին>տոբպին, որբևայրի>վոռպէօվէրի, ուրբաթ>ուրպոթ, սրբել>սրպել:

85. Այս բոլորից դուրս, բառամիջի Բ-ն գտնվում է նաև հետևյալ բառերի մեջ.—

խ-ից հետո.— աղբիւր>ոխպիւր, եղբայր>ախպէր.

շ-ից հետո.— չորեքշաբթի>չէօբէօպոթ:

86. Բառավերջում գտնված Բ-երից անկախ է միայն գաբ (բույսը)>կյոպ. մյուսները ս, խ, ր, մ բաղաձայններից հետո են. այսպես՝ աղբն>ասպ, ասփ, աղբ>ախփ, երբ>յեփ, սուրբ>սրփ, կրկնված՝ սէրսիփ «մաքուր», թումբ>թիւմբ, թամբ, հգ. թամբք>թամբյ (բ ընկած):

Գ

87. Բառասկզբում Գ-ն ամեն տեսակի ձայնավորներից, նույնիսկ Բ-ից առաջ դառնում է կյ. ամբողջական օրինակները կարելի է տեսնել բառացանկում. այստեղ մեջ կրբերենք միայն մի քանի օրինակ.— գագաթն>կյոկյոթ, գալլ>կյէլ, գեա>կյետ, գզել>կյըզել, գինի>կյինի ևն.

Բացառություն է միայն գղթոր, որ դառնում է գըթխթոթ կամ գըթխտոթ, ուր պահված է թրթոուն ձևը.

Հետաքրքրական է Գօտի բառը, որ Վանի բարբառի օրենքով պիտի դառնար կյօտի. այս ձևը գործածական է գյուղերում. Քաղաքի բարբառում ձևացել է քօտի, որ ապա գործածությունից վերացվել է՝ փոխանակվելով մէջկապ բառով: Այս բոլորի

պատճառն է համանունն գոդի «անդամալուծ» նախատական բառը, որ Վանի բարբառում հնչվում է կյէօաի:

88. Պոլսի գրական լեզվից, ինչպես և եկեղեցական լեզվից փոխառյալ բառերի մեջ նախաձայն գ-ն դառնում է ք. ինչ. դադափար>քաղափար, գանձանակ>քանձանակ, գրաւ>քրավ:

Նախաձայն քյ-ն գտնում ենք նաև գմբեթ>քյոմբեթ և գայո «ցեխ»>քյօո բառերի մեջ. առաջինը քրդերենից է փոխառյալ, երկրորդը հայտնի չէ ինչն ունի ք:

89. Օտար փոխառությունների մեջ նախաձայն գ-ն դառնում է գյ. այսպես են գաղ (չափր)>գյոգ (=պրս. ۵ گāz), գոմէշ>գյէօմէշ, գութան>գյիթան: Բայց նաև գուլ>գյիլ «բուլ» և գոհ>գյրոխ «թարախ».— «Գոմէշ» բառը ունի երկու ձև. հարազատ ձևն է կյէօմէշ, իսկ քրդերենի աղեցուցմամբ կազմված է նաև գյէօմէշ:

90. Սրանցից դուրս, բառակցքում գտնում ենք նաև մաքուր կ (առանց քմայնացման) հետևյալ բառերի մեջ.— գտանել>կրնդնել, գնաց>կնաց, գտակ>կտակ, գլորիլ>կլորել, գոռզ>կոռզ, կոռմծ, գդալ>կտէլ, գիտենալ>կիտնալ, գիշեր>կիշեր:

91. Բառամիջում, անկախ լինելու դեպքում (այն է երկու ձայնավորի միջև), գ-ն դառնում է կյ. այսպես են՝ ադիլ>տկյի, ագուգայ>տկյիկյո, ալգիլ>իկյի, աբագիլ>առակյէլ, արեգակն>արեկյոկ, գադաթն>կյոկյոթ, հոգալ>խոկյոլ, հոգիլ>խոկյի, վարագոյր>վորտկյոռ, տագերակին>տէկյերկին:

Այսպես են նաև մարգարիտ>մարկյրիտ, մզլել «ամպուտիլ»>մրկյլել, շաղգամ>շոխկյոմ:

92. Բառամիջում, և ոնդականից հետո, գ-ն դառնում է գյ. այսպես են գանգատ>կյոնգյոտ, գանգակ>գոնգյոկ, ժանգառ>ժոնգյոռի, կորնգան>կորնգյոն, հանգիստ>խանգյիստ, հանգիլ «մարիլ»>խանգյել, հանգոյց>խանգյօոց, մանգաղ>մոնգյող, կնզուղ>կրնգյոլս «վեղար»:

Բացառաբար ունենք այս դեպքում անագան>ոնկյոն, որից էլ անագանիլ «ուշանալ»>ոնկյրննոլ: Սրանց մեջ գ-ն դարձել է կյ:

93. Երբ անկախ կամ ոնդականին հաջորդող գ ձայնը դեպքերի բերմամբ ընկնի բաղաձայնից առաջ, դառնում է յ. և նախորդ ոնդականն էլ կորչում է. այսպես են՝ ագանիլ>խայնել,

(անցնելով հագնիլ ձևից), կանգնել > կայնել, գանգատիլ > կյոյ-տել (անցնելով գանգտիլ ձևից), զնգզնգալ > զրջզրնգալ, Սրա հետ հմմտ. նաև §§ 133 և 134.

94. Քիչ անգամ բառամիջի գ-ն դառնում է ք կամ քյ. ինչ. պագանել > պագել > պաքել, գուգել > գչինել > սուքել, թա-գաւոր > քաքավոր (այսպես է գյուղերում, իսկ քաղաքում՝ քա-կավոր), տայգր > տէքր (բայց սեռ. տէկչեր, որ կանոնավոր է), ճգնել > ճրքնել (անշուշտ գրականից փոխառյալ):

95. Դժբախտաբար շատ քիչ օրինակ ունենք (ընդամենը երկու) այնպիսի դեպքերի համար, երբ այսպիսի ք ձայնը պա-տահում է բաղաձայնից առաջ. այս պայմանի տակ գ-ն դառ-նում է հյ. ինչ. ճգնաւոր > ճրհնավոր, փոնդտալ > փորննյալ (ճիշտ ինչպես ունենք աքլոր > ահյլէօր), իսկ գոգնոց բառի մեջ գ-ն ջնջվել է (անցնելով հյ-ից), այնպես որ ստացվել է կյինոց:

96. Երկու օրինակ միայն ունենք նաև այն դեպքի համար, երբ բառամիջի գ-ն պատահել է ս-ից հետո և դարձել է կ. այն է՝ ձգել > իսկել, ձցոտալ > սկրոտալ. — մակբայների շարքում տես և ըսկուն:

97. Առանձնապես հետաքրքրական են լոգանալ > լօխնալ և ծագիլ (արեւ) > ծաղկել բառերը. Առաջինը առաջացել է լողալ և լոգանալ մերձանիշ բառերի խաչաձևմամբ, որով և ստացվել է պատահաբար գ > խկ, իսկ երկրորդը մի նոր պատկերավոր բա-ցատրություն է:

98. Բառավերջում անկախ (այն է ձայնավորին հաջորդող) գ-ն դառնում է քյ. եղած օրինակներն են՝ գոգ > կյծքյ, էգ > էքյ, թագ > քոքյ, կարագ > կարաքյ, ձագ > ծոքյ, ճրագ > ճրաքյ, մա-րագ > մարաքյ, ուրագ > ուրաքյ, պագ > պաքյ, պատարագ > պա-տարաքյ, սարկաւադ > սարկավաքյ, պատրոյգ > պատրուքյ, սուգ > սուքյ:

99. Երբ բառավերջի գ-ն հաջորդի և ոնգականին, կդառնա գյ. այսպես են եղունգն > յեղունգյ, ժանգ > ժոնգյ, ժառանգ > ժո-ոնգյ, հինգ > խինգյ և սղանգն (բույսը) > սղանգյ: Արմ. բառ. Դ. 110 այստեղ եմ դրել նաև հանգ բառը, որ գտնում ենք զանազան բարբառներում (նաև Վն. խանքյ) < շունչ, հանգստություն > նշա-նակությամբ: Ոճով ասվում է խանքյ առնել < շունչ առնել, հան-գլբառանալ >. Այժմ սակայն կասկածում եմ այս ստուգաբանու-

Քյան վրա. բարբառների համեմատությունը ցույց է տալիս հանք և ոչ թե հանգ. Երևանի ձևն է հանք. Վանի խանքյ ձևը ենթադրվում է նույնպես հանք և ոչ թե հանգ. ուստի կարելի է կարծել, որ անմատն է հան (հանել, շունչ հանել) և ոչ հանգ (=հանգիստ).

100. Գրականից փոխառյալ ազգ բառը դարձել է ասք. ուր ունենք գ>ք (ս-ից հետո).

Դ

101. Բառասկզբում դ-ն դառնում է տ. ամբողջական օրինակները տես բառացանկում. նմուշի համար տալիս ենք այստեղ մի քանի օրինակ.— դու>տի, դանակ>տոնոկ, դալար>տոլոր, դատարկ>տոռտակ, դարբին>տորպին, դդում>տրտիւմ և այլն.

102. Նոր փոխառությունների մեջ բառասկզբի դ-ն մնում է դ. այսպես են՝ դարման սղեղ>դորման, դոփ>դիֆ, դե>դել:

Բացառաբար նաև դեն (դի, կողմ) բառը պահում է իր նախաձայնը և լինում է դելս:

103. Բառամիջում անկախ օրինակ շատ քիչ կա. այն է՝ գողի (քոսոտ)>կյօտի, գդակ>կտոկ, դադարիլ>տտարել, դդում>տրտիւմ, որոնց բոլորի մեջ էլ դ>տ:

104. Սովորաբար բառամիջի դ-ն գտնվում է ք-ից հետո և նույնպես դառնում է տ. Օրինակներն են՝ արդար>տրտոր, բրդել>պրտել, երգիք>էրտիս, երգումն>էօրտիւմ, դարդարանք գորտորտնքյ, ծառգարդար>ծառգորտոր, կարդալ>կորտոկ, հորդել>խորտել «տունը մաքրել, սրբել», մարդակ>մորտոկ, որդի>վորտի, ջարդել>նորտել, վարդավառ>վորտելտր, վարդապետ>վորտապետ, որդնիլ>վորտնել, դերբ. վորտնուկ «որդնած» (թեև արմատն է որդն>վորք § 107):

Մի քանի տեղ այս դ-ն դառնում է ք. այն է՝ խարդախ>խարբախ, որթ, հորթ—որթիկ>վորքիկ, յորդորան>հորքորան «հորդ, ալեկոծ, աղմկալից գետ»:

Ջրորդան «տանիքի ջրերի խողովակը», որ ամեն տեղ շատ փոփոխություն կրած մի բառ է, Վանի բարբառում ստացել է

նօյստքան, նօսօթան և նօսքան ձևերը, որոնց մեջ մեկ երևում է տ և մեկ ք:

Խեղդել բառն էլ, որ ունի դ-ից առաջ խ, դարձել է տ-ով խեխտել:

105. Բառամիջի դ-ն գտնվելով ուղղականից հետո, մնում է դ. օրինակներն են՝ անդունդ > անդունդք, բարեկենդան > պտրկեղոնք, գերանդի > կյերնդի, խղրակ > խըղրոկ, հիւանդանալ > խիվընդմոլ, խոնդատ (բույսը) > խոընդատ, սիմինդր > սըմընդր, քանդել > քյանդել, նույնիսկ սարդ-ոստայն-իկ բառը տեղափոխությամբ հանդերձ՝ պահում է ն-ից հետո դ (սարանդէօստիկ):

Միայն խնդրել > խնքրել և ցնդիլ > ցնքիլ «խենթենալ, ցնորվել» բառերի մեջ գտնում ենք ք:

106. Բառավերջում անկախ դ չկա. դ-ն գտնվում է ուղղականից հետո և մնում է դ. եղած օրինակներն են՝ պինդ > կյինդ, գունդ > կյինդ, եռանդ < նախորդ օրը > > յեռանդ, թունդ > բունդ, լինդ > լինդ, կաղանդ > կաղանդ, հիւանդ > խիվանդ, հնազանդ > խնոզոնդ, մարմանդ > մարմանդ, սանդ > սանդ, սպանդ (խտը) > սպանդ, փոխինդ > փոխինդ, փոխինձ:

107. Բառավերջում գտնվում է նաև ք-ից հետո և այս դեպքում դառնում է միշտ ք. եղած օրինակներն են՝ աւելորդ > ավիւրթք, բարդ > պտոթք, բերդ > պերթք, բուրդ > պիւրթք, լեարդ > լերթք, շառագույն > կորդ > կոոթ (հող), մարդ > մարթք, յարդ > տրթք, որդն > վորթք, ուղղորդ > աղորթք, վարդ > վտրթք:

108. Բառավերջում անկախ պիտի համարվեր բաղ բառը, բայց օտար փոխառությունն է, ինչպես ցույց է տալիս նախաձայնը (բոտ)։— Իսկ այդ ցուցականը վերջից ստանալով ա հավելվածը, դարձել է էտա, ուր դ-ն միջաձայն է և ըստ օրինի եղել է տ:

9

109. Ամեն դիրքով էլ գ-ն մնում է անփոփոխ գ. օր.

Բառակզբում՝ զատ > զատ «հեռու», պարկանել > զոմնել, զենուլ > զիննել, զոքանք > զէօքանչ և այլն:

Բառամիջում՝ լեզու > լէզիւ, հազար > խոզոթք, ոզնի > վոզնիկ, բազուկ > պոզիկ (բույսը), տզրուկ > տզրուկ, գզել > կյըզել և այլն:

Բառավերջում՝ վիզ>վիզ, մագ>մագ, կուզ (սկստուռ) ամենահին իմաստով>կուզ, խոզ>խոզ, թուզ>թիւզ, քնկոյզ>զոզ, աւագ>ավագ են:

110. Այս կանոնից բացառութիւն են կազմում՝

Բառասկզբում գուզել>ուքել «շինել», ուր նախաձայն գ-ն՝ երևի աղվելով խուլ ք-ից, դարձել է ս:

Բառավերջում՝ քան գ-, որ հայտնի չէ ինչ ճանապարհով անցնելով՝ դարձել է շունձ:

Վերջին ձայնափոխութեան հետ գրեթե նույնանում են կուրիզ>կողիւնձ, գոռզ>կոռզ, կոռնձ բառերը:

111. Բառամիջում խլանալով գ-ն դարձել է ս՝ ազքն>ասպ, ասփ և գրականից փոխառյալ ազզ>ասք բառերի մեջ:

Թ

112. Բառասկզբում ք-ն մնում է միշտ անփոփոխ ք. ինչ. թամբ>քոմք, թանձր>քանձր, թիկնել>քիւնել, թարթափ>քոքքոփ «թարթիչ» ևն (ամբողջական օրինակները տես բացանկում):

113. Բառամիջումն էլ ք-ն միշտ մնում է ք՝ առանց բացառութեան. Բազմաթիվ օրինակներից հիշենք մի քանիսը.— թաթախել>քաթախել, փաթաթել>փոթիւթել, փթթիլ>փրրթթել, վաթսուն>վաքսուն, թօթափել>քախքրփել, թթու>քքիւ, քարաթոթոշ>քյոռքոքէօշ ևն.— Գղթոր բառը դառնում է գլթխոթ կամ գլթխոթ, ուր ղը ձայնախումբը դարձած է խտ կամ խք:

114. Բառավերջումն էլ ք-ն մնում է միշտ ք. մոտ երեք տասնյակ օրինակներից հիշենք թութ>թիւք, բոյթ>պոթ, բլիթ>պլիք, արծաթ>առծաք, ձէթ>ձէք, ճկոյթ>ճկոք, շուրթն>շուոք, թուղթ>քուխք, անթ>հիւնք, գուարթ>գվոքք, կանթ>կանք ևն:

Միայն աղօթք բառն է, որ ունի երկու ձև՝ աղօթկ և աղօցկ. Վերջինիս մեջ ք-ն դարձել է ց:

Ժ

115. Ամեն դիրքի մեջ էլ մնում է ժ. օր. ժայռ>ժէռ-քար, ժողովել>ժօղվել, ժիր>ժիր, բաժանել>պոժնել, բաժին>պոժին, արժան>էժմն, դժուար>տիժոր, իսժ (գույն)>խաժ, խէժ>խիժ.

կարժ>կամ, շարժ>ժոժ (որից Կոնո ժոժիկ (խնոցին շարունակ շարժելուց այսպես կոչված), ոյժ>վոժ են։

Ձևափոխված է միայն պատիժ>պատին բառը, որի վերջածայնը դարձել է ն։

Վանի բարբառը գիտե նաև կոնջրոկ (բուլսը), որի համապատասխան գրական ձևն է կակժիրակ, Այստեղ պետք չկա կարծելու, թե ժ-ն դարձել է ջ կամ հակառակը, այլ մեկը ծաղում է պրո. յիրա ձևից, մյուսը չիրա ձևից։

Լ

116. Բառասկզբում մնում է միշտ լ. եղած օրինակներից հիշենք մի քանիսը. լեզու>լէզիւ, լայն>լէն, լոյս>լոս, լուանալ>լվուլ, վլուլ, լու>լիւ, լսել>լսել, լի>լիին, լինդ>լինդ, են (ամբողջական օրինակները տես բառացանկում)։

Միայն լիտր բառն է, որ դիտր ձևն ստանալուց հետո, դարձել է կիդր (սրանից էլ կդրոնոց), սրով ունենում ենք լ>կ անսովոր ձայնափոխութունը (§ 150)։

117. Բառամիջում լ-ն նմանապես մնում է լ. ինչ. ածելի>աքծըլի, ալևոր>խալիվոր, ալիւր>ուլիւր, անալի>ալնի, աւելել>ավիլել, աքլոր>աքլլէօր, բանալի>պոլնիս, բլիթ>պլիթ, հայելի>խալլիկ, մոլորիլ>մէօլըրել, ոլորել>էօլօրել, վայելել>վէլել, լէվել են։

118. Բառավերջում լ-ն նմանապես մնում է անփոփոխ. բացի անորոշի վերջավորութունից՝ հիշատակելի են այլ>էլ, գայլ>կյէլ, թել>քել, ոջիլ>վոնիլ, գդալ>կտէլ, տալ>տալվ, սերկել>սիկիվիլ, սիրկիվիլ, սայլ>սէլ, ուլ>ուլ, թոյլ>րոլ են։

Խ

119. Բառասկզբում մնում է միշտ անփոփոխ. բազմաթիվ օրինակներից հիշենք մի քանիսը. խուրձն>խուոց, խոփ>խոփ, խմել>խմել, խնձոր>խնձոթ, խոզ>խոզ, խոնջան>խօնջոն, խոտ>խոտ, խմոր>խմոր են (մնացյալը տես բառացանկում)։

120. Բառամիջումն էլ է խ-ն մնում անփոփոխ. ինչ. տալստակ>տալստակ, ոչխար>վոչխար, նելոլիլ>նելիլ, մոխիր>մո-

խիբ, պատասխան>պատասխան, փոխել>փոխել, փոխինք>փոխինք, կախել>կախել, խախուտ>խախուտ են.

Միայն շաղախել բառն է, որ միացած և խառնված է շաղաղել ձևի հետ: Վանեցիները միևնույն բառով ասում են «խըմոր շաղաղեց, մոխիր շաղաղեց, խող շաղաղի»:

121. Բառավերջումն էլ խ-ն մնում է միշտ խ. ինչ. անսնուխ>անանուխ, գլուխ>կյըլէօխ, թուխ>քուխ, կանուխ>կանուխ, ձախ>ծոխ, մորեխ>մորեխ, մուխ>մուխ, ոխ>վոխ, սոխ սոխ, վախ>վոխ, քացախ>քյացախ են:

Ծ

122. Բառասկզբում ծ-ն մնում է ընդհանրապես ծ. օր. ծառ>ծառ, ծաղիկ>ծաղիկ, ծարաւիկ>ծարվնալ, ծեփել>ծիփել, ծիծաղիկ>ծծղալ, ծանր>ծա՛նղրր, ծիրան>ծիրան են.

Այս կանոնից բացառություն են կազմում երկու բառ.— ծնծղայ>ցընձղակ և ծղխնի>նխան: Առաջինը, որ գրականից է փոխառնյալ, ազգված պետք է լինի ցնծալ «ուրախանալ» բայից. Երկրորդը հիմնված է ծղխնի ձևից տարբեր երկրորդական մի ձևի վրա:

123. Բառամիջում ևս ծ-ն պահվում է անփոփոխ ծ. ինչ. ա-նիծել>անիծել, ածելի>արծըլի, արծաթ>առծաթ, թրծել>թոծել, կայծակ>կէծակ, կծու>կծու, պայծառ>պոծառ, ործկալ>վոռծկալ, մածուն>մածուն են:

124. Ռնդակներից հետո ծ-ն դառնում է թրթռուն ձ. բայց սրա համար կա միայն երկու օրինակ. անծեղ>անձեղ, ծնծղայ>ցընձղակ. Վանի բարբառում չկա ուրիշ բառ, որի մեջ գտնվի նծ ձայնախումբը:— Բայց ունենք նաև մի երրորդ բառ՝ ծրընձել «մի լուր տարածել», որի կրավորականն էլ լինում է ծրընձվել «մի լուր տարածվել»: Կարծում եմ, որ այս բառը տարածել բայից է առաջացած՝ ն-ի հավելումով, որի պատճառով էլ ծ-ն դարձել է ձ:

125. Ուրիշ բարբառներից գիտենք, որ ծ-ն՝ գտնվելով մի ուրիշ բաղաձայնից առաջ, դառնում է գ. Այս օրինքի համաձայն Վանի բարբառում միայն մի օրինակ կա, որ է հեծանիլ>խէզնել, որ և խէծնել. Կարող ենք հիշել նաև լպրծիլ բառը, որ

տ սաստկականով լարծտիլ ձեւը ստանալուց հետո, շրջամաճը և ծ>զ ձայնափոխութեամբ, դարձել է լարտրալ:

Ուրիշ գեպքերում ծ-ն միշտ մնում է բաղաձայնից առաջ. ինչ. խծպել>խծպել (Պլ. խզբէլ), ծածկել>ծածկել (Պլ. ձագգէլ), ծիծաղիլ>ծծղալ (Սլմ. ծղզալ), կծկել>կծկել (Պլ. գրզգէլ) ևն, ևն.

126. Երկու ուրիշ բառեր էլ կան, որոնց մեջ միջաձայն ծ-ն ձևափոխված է. սրանք են՝ նախ ձուածեղ>ծվողեղ, որի բուն նախնական ձևը հայտնի չէ (ձու ամած ԵՊ). երկրորդ՝ աստուածածին, որ Վանի բարբառում ունի թե ասվածածին, և թե ասպարածին ձևը (Մկ. կանոնավոր ձևով գիտե աստվարածին, ասվարածին և ասպարածին). սակայն հայտնի չէ, թե ինչ բառի ազդեցութեամբ այս ծ-ն փոխվել դարձել է ր:

127. Բառավերջում ծ-ն միշտ մնում է ծ. ինչ. այծ>էծ, անիծ>անիծ, աստուած>աստված, ասպած, գործ>կյծոծ, լուծ>լիծ, խաւիծ>խավիծ, ծիծ>ծիծ, կոծ>կոծ, կոծիծ>խուծոծ!, ստէծ>ստեծ, քած>քյած.

Կ

128. Կ-ն բառասկզբում մնում է կ. թվով 130 բառերից (որոնք տես բառացանկում), հիշենք այստեղ մի քանիսը.— կոճակ >կօճակ, կշիռք>կշեոքյ, կարմիր>կարմիր, կապերտ>կարպետ, կաթն>կաթ, կամուրջ>կարմունջ, կանգնիլ>կայնել ևն.

Միմիայն կոծիծ բառն է, որ հվ գիտե ինչ նմանողութեամբ դարձել է խուծոծ (Մկ. կածօծ, Ոգմ. կոծոծ), ուր նախաձայն կ-ն դարձել է խ (այսպես և Սլմ. խուծուծ).— Կնքատր բառի մեջ ամբողջ առաջին վանկը ջնջված է:

129. Բառամիջում կ-ն ձայնավորից առաջ գտնվելով՝ մնում է միշտ կ. բաղմաթիվ օրինակներից հիշենք մի քանիսը.— տանախկին>տանաղկին, քակոր>քյակոռ, երկայն>էրկէն, երկանք>էրկանքյ, հասկանալ>խասկնալ, երեկոյ>իրիկուն, կորկոտ>կուրկոտ, մկրատ>մկրատ, ուղարկել>էօրէօխել, կալուղ>կակուղ, ականջ>ականջ, ճկոթ>նկոթ ևն, ևն.

130. Բառավերջում գտնված կ-ն թե բաղաձայնից, և թե ձայնավորից հետո մնում է միշտ կ. շատ բաղմաթիվ օրինակներից (շուրջ 110 բառ) հիշենք այստեղ մի քանիսը.— բակ>

պոկ, բարկ>պոբկ, բողկ>պոխկ, գիբկ>կյիբկ, ծակ>ծակ, ծա-
ղիկ>ծաղիկ, կոկ>կոկ, հասկ>խաշկ, մերկ>(մօբէ)մերկ, պարկ
>պարկ, տիկ>տիկ, շէկ>շէկ:

Նույնիսկ այն բոլոր բառերը, որոնք կազմված են նվազա-
կան կամ փաղաքշական ակ, եկ, իկ, ուկ վերջավորություններով
և մինչև անգամ իրենց ձայնավորը փափկացնելով դարձրել են
ո, էօ, իւ, դարձյալ վերջածայն կ-ն պահում են մաքուր կ, ա-
ռանց քմայնացնելու, հակառակ գ և ք բաղաձայնների, որոնք
բառավերջում դառնում են քյ:

Օրինակները առանձնապես վերցնում եմ հատկանշական
դեպքերից. աղէկ>աղէկ, արբանեակ>տրպնէկ, արեգակն>արեկյ-
ոկ, բազուկ (ճակնդեղ)>պոգիկ, բամբակ>պոմբոկ, բարունակ
պորիւնակ, բոպիկ>պէօպիկ, դանակ>տոմոկ, զանգակ>զոմ-
գյոկ, իւ>իիկ, լուսնակ>լիւսնակ, ձուկն>ծիկ, ձմերուկ>ծրմ-
րիկ, հանելուկ>խանելիկ, մարդակ>մորտոկ, շալակ>շլոկ, ջոկ
>ճէօկ ևն:

Առանձին հիշատակության արժանի է ատակ ճհարմար,
ընդունակ, որ գրաբարի էլ անսովոր բառերից է. կենդանի է
Վանի բարբառում տոտկ ձևով. սովում է օր. տոտյ կյոխ «պա-
րապ ժամանակ»:

131. Այս ընդհանուր կանոնից բացառություն են կազմում
հետևյալ բառերը.

Եղկ «գոլ, գաղջ» բառը դառնում է Վն. յեխքյ այստեղ դ-ն՝
բաղաձայնի մոտ դարձել է խ և սրա պատճառով կ բաղաձայնն
էլ դարձել է ք, որով և անցել է քյ քմականին. նման ձևով մի
բառ էլ կա, որ է թաղկել>թախքյել. այստեղ հին հայերենի
կ-ն դարձել է ք՝ կամ նմանությամբ թաղիք բառի (մազերը թա-
ղիք դառնալ) և կամ նախորդի նման քյ ձևացել է խ-ի ազդե-
ցությամբ. Սրանց նման մի երրորդ բառ էլ կա՝ բողկ, որ
դարձել է պոխկ. Այստեղ թեև դ-ն դարձել է խ, բայց կ-ն չի
դարձել նախորդի նման ք, ուստի չի էլ քմայնացել:

Կծիկ բառը ստացել է երկու ձև. սովորականն է կծիկ, բայց
կա նաև կծիքյ, որ ձևավորվել է այն ենթադրությամբ, թե բա-
ռը հոգնակի է:

Շապիկ բառը՝ ազդեցությամբ վարտիք բառի կարծվել է հոգ-
նակի և ստացել է Վն. շապիքյ ձևը (սակայն սեռ. լինում է շապկի),

132. Թե բառասկզբում, և թե բառավերջում, ուր որ կ-ն հաջորդում է ն ռնգակա՛նին, վերածվում է գյ-ի այսպես են ընկեր>ինգյեր, կանկար>կոնգյոռ, խունկ>խոնգյ, ծունկ>ծոնգյ, թանկ>թանգյ, ճանկ>ճանգյ, սունկ>սոնգյ, տնկել>տնգյել, կոունկ>կոոնգյ, կրունկ>կրոնգյ, արմուկն>շրջված արմունկ>ապա արմունգյ:

Այս օրենքի համաձայն է, որ ընկոյզ և անկոյին բառերը դարձել են նախ ընգոյզ, անգոյին, ապա նախավանկը կորչելով՝ գոգ, գյոզվէքյ, գյոզվա «ծալքատեղ»:

133. Երբ կ բաղաձայնը գտնվում է մի ուրիշ բաղաձայնից առաջ, վերածվում է յ-ի. ինչ. բակլայ>բոյլո, սեռ. ճակտի>նայտի. շինական>սեռ. շինայնի, շինայնու. իսկ եթե կ-ից առաջ ռնգակա՛ն կա, այդ էլ կորչում է. այս դեպքում ձևավորվում է ի ձայնավորը, որից հետո կորչում է նաև յ ձայնը. ինչ. անկանել>ընկնել>ինել, ցնկնել>ցինել, թիկն տալ>թինկ տալ>Վն. րիյ տալ, թիկնել>թիյնել>րինել, բանկն «առասպել»>պայնա:

134. Վանի բարբառում կա նաև մի բառ տօյնըվել ձևով, որ նշանակում է «մի բանից ֆլաս տեսնել, ֆլասվել»։ Այս բառը ծագած պիտի լինի *տոկնուիլ կամ *տոգնուիլ (§ 93) ձևից. Երկուսն էլ անծանոթ բառեր են։ Առաջինը հիշեցնում է Վն. տոկանք «տանջանք» բառը, որ ծագած պիտի լինի գրբ. տոկալ ձևից. Բայց «ֆլասվել» և «տանջվել» իմաստները չեն ծածկում իրար։ Ավելի հարմար է *տոգնուիլ, եթե սրանով հասկանանք տուգանուիլ, միջին ձայնավորի անկումով տուգընվել, ապա տույնըվել. իմաստները ծածկում են իրար. պետք է միայն ենթադրել ու>ո ձայնափոխությունը։

2

135. Բառասկզբի հ-ն դառնում է միշտ խ, ինչ. հա «այս»>խա, հիւանդ>խիվանդ, հին>խին, հինգ>խինգյ, ճիւսն>խուս (սեռ. խսան), հոգի>խոկյի, հովիւ>խովիվ, հաւանիւ>խավնել, հավ (թռչուն)>խաֆքյ, հատ>խատ, հատանիւ>խատնել, «սատկել», հարիւր>խարիբ, հարցանել>խաոցուցել, հարսանիք>խարսնիս, հերիւն>խիրուն ևն.

Տեղ տեղ հայ բարբառները ունեն բառասկզբում հ հավելվածը. Վանի բարբառը այս հավելվածն էլ դարձնում է խ, ինչ-

պէս ցույց են տալիս արեւոր > խալիվոր և ագանիւ>խայնել:

Հ>խ ձայնափոխութեան զարմանալի մի օրինակ է ներկայացնում հայ բառը: Ո՛չ միայն հայ դառնում է խայ, այլև նրա որոշյալ խայն ձևը դառնալով բառ օրինի իւլն, ստացել է «մարդ» բնդհանուր իմաստը. օր. «Խէն (մարդը) էկավ տուն, ասաց. Տօ՛ կնիկ, վաստկա որ վաստկա...» (Լալայան, Վասպուրական, 1912, էջ 188): Մովսրական իմաստը գտնում ենք օրինակ՝ Մոկաց Միրզայի առաջին տողերում. «Խէն ու տաճիկ խըտրաց զըմէն» (հայեր ու տաճիկներ բոլոր իրար հետ):

Ուրիշ բարբառներում էլ ասում են նաև հայ «նվ մարդ», էն հայը «այն մարդը» և այլն:

136. Այս կանոնի առթիվ առանձին նկատողութեան արժանի են երեք բառ. առաջինն է հիւս «ձյունադեղ», որ թեև գրաբարում ավանդված է այս ձևով, բայց ժե գարից ավանդված է նաև ուսի, ուսին ձևով (Յիշատ. 1445 թ. Դիւան Ժ, էջ 6). այս վերջին ձևի համեմատ են Վն. ուսի, Մկ. ուսը՝ Ոզմ. օւսէյ:

Երկրորդն է հալատալ, որ պահված է երեք ձևով էլ. ավատալ, հավատալ, խալատալ. օր. ավատալ էկավ. Հնմ հավատաւ. կխավատաւ. արմատն էլ կա հավատ>խավատ ձևերով:

Երրորդն է հակառակ, որ պահված է Ոզմ. հակառակ ձևով և «սատանա» նշանակութեամբ, նույն բառի կրճատ ձևն է հակառ «համառ՝ հակառակ մարդ», որից ոճով հակառ իյնալ «հակառակել, կռվել». համապատասխան ձևն է Մկ. խակառ, Վն. խակառ ինել (=հակառ ընկնել), որ Արմ. բո. հո. Դ. էջ 33 սխալմամբ գրել են հակառ. օր. խակառ մի՛նէ խն գի «հակառակ մի ընկնիր ինձ հետ»:

Հետաքրքրական է հեալ բայը, որ Վանում չեմ գտել. բայց գյուղերում կա և ունի խ նախաձայնը. օր. էմին. Ազգ. ժղ. հո. Բ, էջ 433. «Ձագեր, նեղացեր ին, լեզվըներ կախվեր, նդթըներ կտրեր էր, սրտըներ նվաղեր էր, շոք գտրկած անտեր գյառու պէս ընկյան խովքերի տակ, կը խվին» (=կհալին):

Գրականից կամ ուրիշ բարբառից փոխառյալ բառեր են հրամէ, հրամանք ի քաղաքավարական բառերը, որոնք նաև խրամէ, խրամանք ձևերն ունեն:

137. Հետաքրքրական է իմանալ թե ինչ են դառնում հ նախաձայնով սկսվող օտար բառերը Վանի բարբառում:

Գր. Մագիստրոսի վկայությունը հայտնի է, որ հ>խ ձայնափոխությունը գոյություն ունի իր օրով՝ ԺԱ դար և անշուշտ ավելի հին էլ էր (տես իմ Հայոց լեզվի պատմ. հտ. Բ, էջ 383):

Եթե այսօր մենք քննենք Վանի բարբառում գտնված թրք., պրս. և արաբ. բառերը, կտեսնենք հետևյալ պատկերը:

Արաբերենից փոխառյալ են՝

հոգ անել «ախորժիլ» <hazz
հոգըր «պատրաստ» <hazir
հուլ «վիճակ» <hāl
հուխ «իրավունք» <haqq
հոջի «մահտեսի» <hāji
համալ «բեռնակիր» <hammāl
հոյվան «անասուն» <hayvān
հէյրան «գմայլած» <hayrān
տշտրի «անառակ» <hašarī
տր «դեղահատ» <habb
խորում «ապօրինի» <harām
հուսլ «առաջ գալ» <hasl
հուսլի «վերջապես» <hasili
խասրաթ «կարոտ» <hasrat
ավուզ «ավազան» <havz
հոբտրոթ «տաքություն»,
ջերմ» <harārat
հուս «բանտ» <habs
խալալ «օրինական» <halāl
հուլտ «տակավիր» <hālā
հուլրոթ, ուլրոթ «անշուշտ»
<albatt

հալվա «հրուշակ» >halva
հավալա «փոխանցում»
<havāla
հուդիյո, ուդիյո «նվեր»
<hadiya
հուրիֆ «անարժեք մարդ»
<harif
խէքյիմ «բժիշկ» <hakīm

հիւքմ «վճիռ» <hukm
հիլո «խարդախություն» <hila
խինա «հինա» <hinā
խէսար, հէսար «հաշիվ» hisāb
հէսա, իսա «մաս, բաժին» <hissa
հիւջիւմ «հարձակում» <huǰum
հումա «տրիֆ» <humma

Պարսկերենից փոխառյալ են՝

հուվո «օդ» <havā
խավան «սանդ» (հավանդ) <hāvan
խավաս «փափագ» <havas
հոմ «թև... թև» <ham
համան «խսկունք» <hamān
հոմշտրի, ոմշտրի «հայրենա-
կից» <hamšahrī
հիլոքյար «խարդախ» <hilakār
հէչ «բնավ, ոչինչ» <hič
խունար «վարպետություն»
<hunar

Թուրքերենից փոխառյալ են՝

համամջի «բաղնիկան»
<hamamjē
ոմտրոթ «ծրաջան» <hamarat
հայդէ «օ՛ն, դէ՛հ» <haydi
հայդուդ «վիթխարի» <haydud
հարամլըդ «կանանոց»
<haramləq

հոֆթիտլըդ «շաբաթավարձ»	հոյբո, ոյբո «խուրջին»
<haftaləq	<heybe
հալվաջի «հրուշակ ծախող»	հիլալու, հիլալի «խարդախված»
<helvaǰə	<hileli

(Քաղեկ եմ իմ «թուրքերենի փոխ. բառեր» աշխատ.-ից 1902, էջ 206—216):

Արաբերենից փոխառյալ 32 բառերից վեցը խ-ով է, մյուսները հ-ով կամ առանց հ-ի. պարսկերենից փոխառյալ 9 բառերից 3-ը խ-ով է, վեցը հ-ով. թուրքերենից փոխառյալ բոլոր 9 բառերն էլ հ-ով են, իսկ չկա: Այս հարաբերությունը ցույց է տալիս, որ՝

ա) Վանի բարբառի հ>խ ձայնափոխությունը իրոք հին է և տեղի է ունեցած արաբների արշավանքից հետո և թուրքերի տիրապետությունից (ԺԱ դար) ավելի առաջ: Այս շրջանին են պատկանում այն փոխառությունները, որոնք ցույց են տալիս հ>խ ձայնափոխությունը.

բ) այս շրջանից հետո, այն է թուրքերի տիրապետության շրջանում են կատարվել այն բոլոր փոխառությունները, որոնք պահում են նախաձայն հ-ն: Այսպես են ոչ միայն զուտ թուրքերեն բառերը, այլև այն արաբերեն և պարսկերեն բառերը, որոնք թուրքերենի միջոցով անցած են Վանի բարբառին:

դ) այս վերջին կետին իրոք ապացույց են ծառայում այն բառերը, որոնք թեև պարսկերեն են, բայց բարդված են թուրքական օրենքներով: Օրինակ՝ պրս. հովա եթե լիներ խավա ձևով. անշուշտ կլիներ հին. բայց որովհետև ունի նախաձայն հ, ուստի նոր է, ինչպես ցույց են տալիս հովաթովդիլի «օգափոխություն», հովաթոնքի «հրթիռ», հովթուրդ «շաբաթավարձ» բառերը, որոնք թրքական կազմություն ունեն:

Արաբերենից փոխառյալ բառերից մի քանիսը ցույց տվին, որ բառասկզբում կարող է հ ձայնը կորչել: Ըստ այսմ ալաբ. hayvān դարձել է Վն. ոյվան «անասուն». այս ձևը գործածական է այժմ էլ ոյվրնի պես «անասունի նման» ասության մեջ, բայց սրանից է նաև փաղաքական ոյվրնէկ, որ գործածական է խեղճ ու անխոս երեխաներին որակելու համար: Նույնպես ունենք և ավանք բացազանչությունը, որ քրդ. havar «օգնություն» բառից է և գործածվում է ճիշտ այն ձևով ու իմաստով, ինչպես Պլ. ամա՛ն:

Բառասկզբում ընկել է իս բաղաձայնը նաև թրք. խաբուն «տիկին» բառից, որ դարձել է արուն (տատիկներին տրված պատվանուն):

138. Բառամիջում գտնված հ-ն նմանապես դառնում է իս, եղած օրինակներն են՝ խանձրահամ>խոնձրխամ, հացահան «ակիշ»>խացխան, հովահրել>խովխրել, շնորհաւոր>շնախաւոր, պահել>պախել, պահք, հյց. պահս>պախս, պահէզ «բանջարանոց»>պախէզ, պատուհան>պատխան, պատուհաս>պատուխաս, սանահայր>սանախէր, քահանա>քախանա, օրհնել>օխնել:

Հետաքրքրական օրինակ է Շողրտղի (Վանի արվարձանը), որ ծագում է Շահբաղի ձևից. այստեղ հ-ն դարձել է նախ իս, ապա հաջորդ թրթռուն բ-ի պատճառով դարձել է դ:

139. Բառավերջում գտնված հ-ն նույնպես դառնում է իս. եղած օրինակներն են՝ ահ «վախ»> ախ, ահահ> ախախ «արթուն», բահ>պոխ, գահ «ցեխ»>գյրոեխ «թարախ», դահ>տոխ, դէհ>դեխ, մահ>մախ:

Բառավերջի հ-ն ջնջվել է սկիհ>սրկի բառի մեջ, որ սահայն կրոնական լեզվից փոխառություն է:

Բնով վերջացած բառերը երկու ձևի փոփոխություն են ներկայացնում.—ջնջված է աշխարհ>աշխար և խոնարհ>խոնար բառերի վերջում. իսկ ճանապարհ>հոմբոխ և շնորհ>շնխք բառերի մեջ բ-ն սղված է և հ-ն դարձել է ըստ օրինի իս:

140. Այս բոլորից դուրս մնում է ուհան>ըոհոն բառը, որ պետք է համարել նոր փոխառություն. ըստ այսմ հ-ն մնում է անփոփոխ:

2

141. Բառասկզբում ձ-ն դառնում է ծ, ինչ. ձագ< ^{չո.} ձախ>ծոխ, ձայն>ծէն, ձավար>ծովոր, ձեռք>ծեռ, ձեռքյ, ձև>ծեվ, ձևել>ծիվել, ձէթ>ծէք, ձի>ծի, ձիւն>ծիւն, ձիւհոն>ծիւհո, ձիւրուկ>ծմրիկ, ձող>ծող, ձողիկ, ձոր>ծոր, ձու>ծիւ, ձուկն>ծիւկ:

142. Երկու բառ ունենք, որոնց մեջ բառասկզբի ձ-ն գլխունվում է գ բաղաձայնից առաջ. երկուսի մեջ էլ ձ-ն դառնում է ս

և հաջորդ գ ձայնն էլ վերածվում է կ-ի. քստ այսմ ձգել>իսկել, ձգտալ>սկըտալ:

143. Բառամիջում անկախ օրինակ չկա. ընդհանրապես ձ-ն գտնվում է ն ուղականից կամ ր-ից հետո: Առաջին դեպքում ձ-ն մնում է ձ. եղած օրինակներն են, անձկոտոր Վնպարտ, կոտրտովող>ունձկուտոր, անձրե>անձրեվ, գանձանակ>քանձանակ, խանձիլ>խոնձրել, խանձրահամ>խոնձրոխամ, թանձր>թանձր, խնձոր>խնձոր, պապանձիլ>պապրնձիվ:

144. Կադկանձել բայը, որ կազմված է կանձ արմատից՝ կրճատ կրկնությամբ, Վանի բարբառում ձևափոխվել և վեր է ածվել սովորական կրկնության. այն է *կանձկանձալ, սաստկահանը՝ *կանձկանձալ. ա-ի անկումով՝ կրնձկրնձալ, *կրնձկրնձալ. — առաջինը մնում է անփոփոխ, երկրորդը դարձել է կզմրզալ, որ նձ բաղաձայնից առաջ վերածվել է զ-ի: Բայց ինչո՞ւ ոչ ա:

145. Բառամիջում ր-ից հետո գտնված ձ-ն դառնում է ծ կամ ց. եթե նախորդ ր-ն մնում է անփոփոխ, ձ-ն դառնում է ծ. իսկ եթե ր-ն դառնում է ո, ձ-ն դառնում է ց: Եղած օրինակներն են՝ արձակել>անցկել, վարձք>վոռցք, բայց փորձել>փործել, փորձանք>փործանք, վարձել>վործել:

146. Բառավերջում անկախ է միայն օձ բառը, որ դառնում է օց. իսկ մնացյալ օրինակների մեջ ձ-ն գտնվում է ն-ից կամ ր-ից հետո: Առաջին դեպքում ձ-ն մնում է ձ. եղած օրինակներն են աղանձ>աղանձ, անձն>անձ Վիովի արգանդը», բրինձ>պրինձ, գինձ>կյինձ, խինձ>խինձ (բույսը), պղինձ>պղինձ, սինձ>սինձ (խոտը), տանձ>տանձ:

147. Երկրորդ դեպքում ձ-ն գտնվելով ր-ից հետո, ր-ն դառնում է ո և ձ-ն դառնում է ց: Այսպես են բարձ>պոռց, խուրձն>խուռց, որձ>վոռց:

148. Բառավերջում երկու օրինակ էս ունենք, որոնց մեջ ձ-ն հաջորդում է դ-ի. առաջինն է գաղձ>տոխց, ուր գտնում ենք ձ>ց, երկրորդն է մաղձ>մախս, ուր գտնում ենք ձ>ս:

149. Առանձին պետք է խոսել նախանձ և բարձր բառերի մասին: Առաջինը ժողովրդական ստուգաբանությամբ ձևափոխված դարձած է նեխած, երկրորդը՝ բարձր նախ դարձել է անշուշտ բարցըր, ապա երկու ր-երից առաջինը, տարանմանությամբ

վերածվելով ն-ի, ստացվել է *բանցրր>պանցրր, որից և բայը պանցրանալ: Երկուսի մեջ էլ ց-ն պիտի դառնար ն-ից հետո ձ, բայց այդպես չի եղել և նախկին ր-ի ազդեցությունը մնացել է:

Ղ

150. Բառասկզբում ղ-ով բառ չկա: Եղել է միայն լիար >ղիար, որ ապա ստացել է կիզր ձևը, որից հետևում է, թե բառասկզբում ղ>կ: Այս երևույթը կարող ենք հաստատել նաև հատուկ անուններով, որոնցից ունենք՝ Ղազար>Կաղար, Ղուկաս >Կուկազ, Ղամբար>Կամբար (բացառությու՜ն է միայն Ղևոնդ). և դարձյալ ց բաղաձայնով սկսվող օտար բառերով, ինչ. ցարսճ >կուռու՜ Քդահեկան», ցարի՜ >կարիբ «պանդուխտ», ցazel կաղու «տերև» և այլն:

151. Բառամիջում ղ-ն մնում է անփոփոխ՝ նախ՝ երկու ձայնավորի միջև. օր. աղաշանք>աղանճք, աղաւնի>յեղունիկ, աղիք>աղիք, աղիւս>օղիս, բաղարջ>պաղառն, դեղին>տեղին, հեղեղ>խղեղ, յղի>ըղի, տղայ>տըղա, պղպղակ>պօղօնակ և այլն:

152. Երկրորդ՝ մի բաղաձայնի և մի ձայնավորի միջև գտնված ժամանակ. ինչ. ստեպղին>տապղին «գաղար», ճընճ-ղուկ>ճընջղուկ, ճապաղիլ>ճապղել, ծիծաղիլ>ծծղալ, ծընծ-ղայ>ցընճղակ, կատաղիլ>կատղել և այլն:

153. Երրորդ՝ հաջորդական թրթռուն բաղաձայնի մոտ. ինչ. աղուէս>աղվէս, անկողին>գյօղվէք, բաղանիք>պաղնիս, հղնիկ >յեղնիկ, թողուլ>քօղնել, ժողովել>ժօղվել, սաղմոս>սաղմոս, ծաղր>ծաղր, մեղր>մեղր և այլն: (Ինչպես օրինակներից երե-վում է թրթռուն բաղաձայնները լինում են վ, մ, ն, ք):

154. Եթե ղ-ից հետո գալիս է խուլ բաղաձայն (պարզ խուլ կամ թավ) ղ-ն դառնում է խ. օրինակները հետևյալներն են. աղր>ախփ, աղրիւր>տխպիւր, աղջիկ>ախչիկ, աղքատ>ախ-քյատ, առողջ>առոխն, բողկ>պոխկ, գաղտ(իկ)>կյաղտիկ, գաղձ >տոխց, եղբայր>ախպէր, եղկ>յեխք, թաղկիլ>րախկիլ, թուղթ >րուխթ, խաղք>խախք (խալտառակ), խեղդել>խեխտել, խեղճ >խեխն, ճեղք>ճեխք, մաղձ>մախս, մեղք>մեխք, շաղգամ>շտխկյամ, ողջ>վոխչ, ողջոյն<վոխնում, ուղարկել>էօթէօխկել, պղտոր>բխտոր, քաղցր>քյախցր:

155. Գղթոր բառը գրված է թե դ-ով և թե խ-ով. այսպես գղթոր, գխթոր, գխտոր. սրանց համեմատ նաև բարբառները. և որովհետև բառիս ծագումը անհայտ է, անհայտ է նաև թե այդ ձևերից որն է ստույգ: Վանի բարբառը այս դեպքում ունի կյըխտօր (Մկ գյըխթուր, Ողմ. գյըխտուր), որոնք սակայն ոչինչ չեն պարզում:

156. Կան մի տասնյակ բառեր, որոնց մեջ դ ձայնը գտնվում է խուլ բաղաձայնից (հատկապես ճ-ից) առաջ, բայց չի վերածված խ-ի. Այսպես են՝ ծագիլ>ծաղկել (արևի), զղջալ>զղզնալ, խիղճ>խիղճ, խղճմտանք>խըղնմտանք, կաղճին>կաղճին, կեղծուր>կեղծավոր, նուաղիլ>նվաղկալ, շեղջ «դեղ»>շեղք, ուղա>ուղտ, (սեռ. քղտան), ճնճղուկ>սեռ. ննջըկան, պողովաւ>պողպաւ, տուղա (ծաղիկը)>տուղտ, տեղտ, քող>քյողքյ:

157. Բառավերջում գտնված դ-ն մնում է միշտ դ, ըստ որում գտնվում է միշտ ձայնավորից հետո (բացի աստղ բառից): Եղած օրինակներն են՝ աղ>աղ, անձեղ>անձեղ, առեղ>առեղ, ասեղն>ասեղ, ասող>ասող, բաղեղն>պտոնեղ, բղուղ>պղծօղ, գիւղ>կյեղ, գող>կյծղ, դեղ>տեղ, գող>տծղ, թաղ>թաղ, թեղ (դեղ)>թեղ իւղ>յեղ, խաղ>խաղ, խաղող>խավող, կակուղ>կակուղ, կաղ>կաղ, կանթեղ>կանթեղ, կող>կող, հեղեղ>խեղեղ, հող>խող, հօտաղ>խոտաղ ձող>ծծղ, ձուածեղ>ծվողեղ, ձաղ>նաղ, ճիւղ>նօղ, մաղ>մաղ, մանգաղ>մոնգյող, մատաղ>մատաղ, նեղ>նեղ, շաղ (ցող)>շաղ, շիւղ>շուղ, շող>շող «ցողք», պաղ>պաղ, պճեղն>պնեղ «կճղակ», պտուղ>պտուղ, քիղ>նեղ, վաղիւ>վող, տաղ>տաղ (երգ), տաշեղ>տաշեղ, աեղ(ի)>տեղ, ցօղ (ցօղուն)>ցօղ, փող>փող «սրինգ», քեղ (բույսը)>քեղ, օղ>օղ:

Իբրև բացառություն ունենք միայն երկու բառ, որոնք վերջածայն դ-ն դարձնում են խ. սրանք են բող (բույսը)>պէօղ կամ պէօխ և կնգուղ>կընգյուխ «վեղար»:

158. Երբ մի բառի երկու առարկեր վանկերում գտնվեն երկու դ, տարանմանություն օրենքով նրանցից առաջինը դառնում է ն, ու կամ վ. այսպես ունենք աղեղն>անեղ (սեռ. անդան լոր), որից նետվանեղ «նետ ու աղեղ», աղեղնակ>անանակ «ծիածան», բաղեղն>պտոնեղ, խաղող>խավող:

159. Դ ձայնի քննություն վերջին հետաքրքրական կետը

այն է, թե ի՞նչ չափով կարող է Վանի բարբառը նպաստել հյ. դ ձայնի թավացման հարցը պարզելուն:

Կասկածից դուրս է, որ հին հայերը գեա Ե դարում դ տառը կարգում էին լ (թանձր լ, լեզվի հեռուի մասով արտասանված):

Ե՞րբ այս լ (l) ձայնը դարձավ դ (ğ):

Այս մասին բնագարձակ խոսում եմ իմ Հայկականք 2, որ տես «Տեղեկագիր» (Հայկակ. ՍՍՌ Գիտ. ակադ.), հասարակ. գիտ., 1948, № 5:

160. Վանի բարբառը տալիս է մեկ մի քանի տվյալ այս հարցի մասին:

Վանի բարբառը ունի կրխա բառը, որ է «ոյումկա, օղու փոքրիկ բաժակ»: Նույն ձևը գիտեն նաև Ալաշկերտ, Երևան, Մոկս և Մուշ. ուրիշ տեղեր, ինչպես նաև գրական լեզվում ասվում է կրղայ: Մխիթար Հերացու «Ջերմանց մխիթարութեան» մեջ (գրված 1184 թ.), էջ 146 գրված է կրխայ, իսկ Ներսես Լամբրոնացու (1198 թ.) Լեոն Բ-ին գրած թղթում, էջ 241, գտնում ենք կրղայրեկեր: Բառը ծագում է ասոր. qədxā հոմանիշից, ուրեմն ԺԲ դարում արգեն դ-ն հնչվում էր ğ (իբր խ):

Վանի բարբառն ունի սալատրաֆա բառը (սրա մասին տես ստորև). այս բառը հյ. սաղամանդր բառի հետ նույնն է. դ և լ ձայների փոխանակությունը պիտի շփոթեցնեք մեզ, բայց այդպես չէ, որովհետև ն. Լամբրոնացին գործածել է նաև սալամանդրա ձևը (տես անդ):

Վանի բարբառն ունի մաղալ «փարախ» բառը, որի հետ նույնն են Մոկս, Ալաշկերտ, Մուշ մաղալ և Ղարաբաղ մակալ: Սա գրաբարի մակաղ, մակաղիլ բառն է, որ ավանդված է Ե դարից. Ծագում է ասոր. *mīkəlā հոմանիշից (տես Արմ. բո. Դ. 745): Ասորերեն k-ի դեմ վն. դ-ն շատ անհարմար և խանգարիչ է: Նույն բառը կա նաև Սվեգիա մոեգրդնից և Ղրբ. մկնդել «գառուն նման ապշած նայել», որոնք հավատարիմ շարունակությունն են հին հյ. մակաղիլ բառի: Ամեն ինչ պարզում է քրդ. meyel հոմանիշը. փոխառությունը կատարված է երկու անգամ. հնագույնը՝ ասորերենից (*mīkəlā > մակաղ) և նորագույնը՝ քրդերենից (meyel > վն. մաղալ և այլն):

Վանի բարբառն ունի մլել «մղել, վարել, քշել» բառը, որ գիտեն նաև Մուշ, Սալմաստ, Մոկս, Նոր-Բայազետ և այլն: Սա

հին հայերենի մղել բառն է լ=ղ փոխանակությամբ, ճիշտ ինչպես գրք. ունենք թոյլ—թողուլ, այլ, այլևայլ—աղաւաղել, յոյլ ժծույլ»—յուղալ «ծուլանալ», նշոյլ—նշող, փայլ—փողփողել և այլն: Երկու ձևերն էլ պահել են վանեցիները և մյուս հիշվածները, ճիշտ ինչպես պահել են աղի—աճալի, թո՛ղ—թուլանալ, իսկ մյուս բարբառները կորցրել են միել բայը, ինչպես կորցրել են նաև մղել բայը: (Պահում է միայն Պարտիզակը շրջված դմել ձևով): Վանի բարբառը ունի էլնել «լինել» բառը. սա հակասակ է Meillet-ի օրենքին, որի համաձայն հին հայերենում բաղաձայնից առաջ գտնվում է միշտ ղ: Անշուշտ էլնել ձևը եղանիլ բայից կրճատված չէ, որովհետև այս դեպքում պիտի ունենայինք էղնել, ինչպես գտնում ենք Կարնո բարբառում: Մնում է գնել լինել լայնից:

Ուրիշ դեպքեր էլ կան, երբ Վանի բարբառը ներկայացնում է բաղաձայնից առաջ լ: Սրանք են խոլրկտալ «խոժոռ աչքերով նայել», փէլքիլտալ «փայլփիւլ», քյէլքյ «քայլվածք», տալվ «տալ, ամուսնու քույրը», խալխալ «ապարանջան», և հատկապես հիշելու համար էլնել «եղանել», ալնի «անալի», պոլնիս «բանալի», ուլնիկ «ուլունք»: Այս բոլորը սակայն ուշ ձևացած բառեր են: Խալխալ բառը թեև զբաբարից էլ է ավանդված, բայց շատ ուշ. հիշատակված Ոսկիփ. և Վրդն. առկ. (փոխառյալ է պրս. և քրդ. xal-xāl «ստնապարանջան» բառից, որից նոր փոխառություն պիտի լինի նաև Վանի ձևը): Քյէլքյ և փէլքիլտալ կազմված են ք հոգնակերտ մասնիկով, որի կցումը լ-ով վերջացող որևէ բառի չի խանգարում օրենքը, խոլրկտալ առաջացել է սղմամբ՝ խոլրկտալ ձևից, որով նույնպես արգարանում է: Տալվ կազմված է ուշ ժամանակ, զանազանիւ. համար տալ գոյականը տալ բայից: Մնացյալ երեքը, ուր գտնում ենք լն ձայնախումբը, առաջացած են սղմամբ կամ տեղափոխությամբ, իսկ վերջինն էլ (ուլն) ն հոդով, որ նույնպես չի խանգարում օրենքը: Ըստ այսմ շատ հնարավոր է էլնել բայաձևը շրջված դնել լինել բայից և այն էլ ուշ ժամանակ, ինչպես են ալնի և պոլնիս, որով և բնավ չի խանգարվում ղ-ի ծագման ժամանակը:

161. Ամենից հետաքրքիրն է վանեցիների շտրառողուկ «գեղձ» բառը. Վանի բարբառում սաղոք հայերեն բառը չի օգտագործվում և նրա տեղ փոխ է առնված պրս. ālūča հոմանիշը (այս

մասին տես ստորև § 209): Այս ալուչա և վերի շտրտողով բառերը նույն ծագումն ունեն. առաջինը պրս. ālū «սալոր» բառի նվազականն է. Պրս. ālū բառի ծագումը անհայտ է. չունի Horn. հայտնի չէ նաև պահլավիկ ձևը. չգիտե Nyberg, Hilfsbuch des Pehlevi II. Ըստ օրինի ենթադրում եմ ālūk. և անա այս ālūk ձևն է, որ պահում է Վն. շտրտողովը: Նույն բառը գտնում ենք նաև Մեղրու բարբառում շտաղով «գեղձ» ձևով, որից էլ ըլտըղկաշիր «գեղձի չիր»: Նույնը պրս. ևս ասվում է šaft-ālū «գեղձ» և zard-ālū «դառնակորիզ ծիրան». երկուսի էլ բուն նշանակությունն է «գեղին սալոր», ինչպես որ հյ. դեղձ բառն էլ նշանակում է բուն «գեղին» (հմմտ. դեղձամ, դեղձանիկ):

ԺԱ. դարում, թուրքերի արշավանքով կտրվեց հայոց և պահլավների հարաբերությունը. ուստի շտրտաղով բառի փոխառությունը այս թվից առաջ է. բայց պահլավերենն էլ այս վերջին շրջանին այլևս չէր պահել բառավերջի կ—k ձայնը. ուստի փոխառությունը էլ ավելի հին է. այսպիսով հասնում ենք այն թվականին, երբ սլւ. լ-ն հյ. դ կարող էր դառնալ:

Ճ

162. Բառասկզբում ն-ն մնում է միշտ ն. ինչ. ճանաչել > նանչնալ, ճանապարհ > նոմբոխ, ճկոյթ > նկոթ, ճրագ > նրաքյ և այլն (մնացյալը տես բառացանկում):

Բացառություն է միայն նախարակ > չախրակ, որ թուրքերենի կամ քրդերենի ազդեցությամբ նախածայնը դարձրել է չ:

163. Բառամիջում ն-ն նույնպես մնում է ն. օրինակներն են՝ աճիլ > աճել, արճիճ > առնին, խղճատանք > խղմտանքյ, կոճակ > կօճակ, կոճակել > կօճկել, կրճատ > կնատ, կրճտել > կոճրտել, որոճալ > օրօճալ, վիճակ > վիճակ, պճեղն > պնեղ, ճօճք > ճօճիկ:

164. Բառամիջում ն-ն գտնվելով ն-ից հետո՝ դառնում է ջ. այսպես են ճնճղուկ > ճըճղուկ և պատինճան > պատըճոմ, կնճակ (լծի) > կնջոկ:

165. Բառավերջում ն-ն մնում է դարձյալ ն. եղած օրինակներն են՝ արճիճ > առնին, գաճ > կյոմ, լաճ «տղա» > լան, խղճ > խեխն, խիղճ > խիղն, խիճ > խին, կարիճ > կարին, կարճ > կառն,

կաւիճ>կավիճ, կոճ «գերան»>կոճ, պատիճ «կճեպ»>պատին, սոնիճ>սեվսունին.

166. Բառավերջում մ-ն գտնվելով ունգականից հետո՝ դառնում է ջ. այսպես են՝ եղիճ>յեղինջ, ճանճ>ճանջ, ճենճ>ճենջ, մանճ>մանջ, սարաղունճ>սարաղունջ.

Մ

167. Բառասկզբում մ-ն մնում է միշտ մ. շուրջ 80 օրինակներից հիշենք մի քանիսը. ինչ. մտանել>մտնել, մորմոքիլ>մէօրմըքյալ, մրջիւն>մոնեմ, մօրուք>մուրուս, մանգաղ>մոնգյող, մեք>մենքյ և այլն (մնացյալը տես բառացանկում):

168. Բառամիջում մ-ն մնում է միշտ մ. բազմաթիվ օրինակներից հիշում ենք մի քանիսը. ինչ. ամաչել>ամչնալ, ամառն>ամառ, արմաւ>տմբրով, արմուկն>արմունգյ, բազումք (բոյլք)>պոգիւմք, գերեզման>կյէրէզման, դմակ>տմոկ, թամբ>թամբյ, թումբ>թիւմ, իմանալ>իմնալ, իմել>իւմել, ծամել>ծամել, կամուրջ>կարմունջ և այլն.

169. Բառավերջում նույնպես մնում է մ. եղած բոլոր օրինակները հետեւյալներն են.

ապրշում>արպշում
ատամն>ատամ
բարեկամ>պորէկամ
բեմ>փէմ
գոմ>կյոմ
դդում>տտիւմ
դէմ>տէմ
երամ>էրամ
երդումն>էօրտիւմ
եմ>եմ
ժամ>ժոմ «հեկեղեցի»
խթում>խթում
ծամ>ծամ
ծոմ>ծոմ

կամն>կամ
համ>խամ
համեմ>խամեմ
հիմն>խիմ
հում>խում
մամ>մամիկ
մոմ>մոմ
շողգամ>շոխկյոմ
շամամ>շամամ
սեամ>շեմբյ
սերմն>սերմ
տրամ «ամուր, պինդ»>տրամ
ցասում>սասում

Մրջիւն բառը մրջիմն ձևի համաձայն դառնում է Վն. մոնեմ:

170. Այստեղ պիտի խոսենք միայն նախաձայն յ-ի մասին: Բառասկզբում յ-ն միշտ ջնջվում է. այսպես՝ յօտել>էօտել, յարգ>արգ, յաւանակ>ավանակ, յեսան>էսան, յիշոց>իշոնց, յխտուն>խտուն, յղի>ղի, յուզել>ուզել, յստակ>խտակ, յստակել>խտրել, յօնք>ունք, յօրանջել>օրոշկրալ:

Թուրքերենից փոխառյալ հնազույն բառերումն էլ նախաձայն յ-ն ջնջվում է. օր. yašmaq «լաջակ»>աշմաղ, yaɣlɔq «թաշկինակ»>ալնախ. իսկ նոր փոխառությունների մեջ մնում է:

171. Միավանկ յետ բառը իր նախաձայն յ-ն կորցնելուց հետո, դառնալով ետ, իբրև ե-ով սկսող միավանկ բառ, նորից ստացել է յ և դարձել յետ:

172. Գրականից փոխառյալ ձևեր են՝ յոյս>հույս, յորդորան «հորդ»>հորթորան: Իսկ յօրանալ>հէօնանալ ինչո՞ւ ունի հ:

ն

173. Բառասկզբում ն-ն մնում է միշտ ն. ինչ. ներքս>ներս, ներկել>նիրկել, նմանիլ>նմանել, նոր>նոր, նուշ>նուշ, նուռն>նուռ և այլն:

Միակ բացառությունն է նապաստակ բառը, որ նախաձայնը վերածելով լ-ի՝ դարձել է լապրատրակ կամ լապրզտրակ:

174. Բառամիջում ն-ն մնում է նույնպես ն. բազմաթիվ օրինակներից հիշենք այստեղ մի քանիսը. ինչ. ազանիլ>խայնել, ահանջ>ալանջ, անալի>ալնի, ազաւնի>յեղունիկ, անանուխ>անանուխ, անագան>տնկյուն, անցանել>ընցնել, ելանել>էլնել, զոքանչ>զէօքյանչ, իմանալ>իմնուլ, բրինձ>պրինձ և այլն:

175. Բառավերջի ն-ն մնում է նույնպես անփոփոխ. ինչ. քսան>կսան, անուն>անուն, ցորեան>ցորէն, ցօղուն>ցօղուն, տուն>տուն, քուն>քյուն և այլն:

176. Փոյականների ն վերջավորությունը, ինչպես շատ բառերումն, նույնպես և այստեղ ջնջված է. ինչ. ասեղն>ասեղ, ամառն>ամառ, ատամն>ատամ, ցասումն>սասում (սեռ. սասման), աղեղն>աղեղ (սեռ. անղան), սփն>ափ (գետի), բաղեղն>պոռեղ, բեռն>պեռ, գագաթն>կյոկյոթ, գառն>կյոռ, կաթն>

կաթ, հ/մն>խիմ (սեռ. խման), հ/ւսն>խոս (սեռ. խսան), դուռն
>առու, եզն>յեզ, երգումն>էօրախիմ, եզունգն>յեղունգյ, թոռն
թոռ, ոտն>վոտ և այլն:

Ուրիշ բարբառներում երբեմն բառավերջի այս ն-ի տեղ
գրվում է ք. Վանի բարբառում չկա այսպիսի երևույթ և այդ
կարգի բառերը մնում են լերկ, առանց ն-ի և ք-ի, այսպես են
եօթն>յօթ, ինն>ին, տասն>տաս: Ընդհակառակը դառն մնում
է ն հանգով (տոռն), թեև զառն դառնում է կյոռ: Այսպես է նաև
մասն>մասն (եկեղեցոյ), որ և մաս:

177. Բառավերջի ն-ն երբեմն էլ գառնում է մ. այսպես
ունենք անասուն>անասուն և անասում, ողջոյն>վոխնում: Եր-
կուսի մեջ էլ -ուն հանգը շփոթված է -ումն մասնիկի հետ (առա-
ջինը իբրև թե «առանց ասմունքի», երկրորդը իբրև թե «ող-
ջունում»):— Իսկ մրջին բառի մասին տես § 169:

178. Բառամիջում նկ, նգ ձայնախումբը բաղաձայնից ա-
ռաջ կանոնավոր կերպով գառնում է յ և ն, ոնգականն էլ կոր-
չում է: Եղած օրինակներն են անկանիլ>իյնել, ցնկնել>ցինել,
կանգնիլ>կայնել, թիկն տալ կամ թինկ տալ>թիյ տալ, գանգա-
տիլ>կյոյտել, բանկն «առասպել»>պայնա:

179. Բացի վերինից, ուրիշ կարգի բաղաձայնների հետ
նման սղումներ չեն կատարվում. ինչ. անցանիլ>ընցնել, ճա-
նաչել>ճանչրնալ և այլն: Բացառաբար ունենք միայն երընջ-
նակ>գ. էրընջակ, ք. էրթնոկ և յօրանջել>օրօշկըտալ (որ է
յօրանջկտալ):— Իսկ ընկոյզ և այլն բառերի մասին տես վերը:

180. Ն բաղաձայնը պատահելով շրթնային բաղաձայնի մոտ՝
դարձել է մ, ճանապարհ>ճոմբոխ բառի մեջ:

Բոլորովին անկանոն է դաւանում, որ դարձել է Վանի
բարբառում տովոնում կամ տովորում, ուր ն-ն թե ն է և թե ք:

Շ

181. Ամեն դիրքով էլ շ-ն մնում է շ. օր. բառասկզբում՝
շաբաթ>շոպոթ, շաղգամ>շոխկյոմ, շապիկ>շապիքյ, շա-
րեւ>շարել, շինել>շինել, շուն>շուն և այլն:

Բառամիջում՝

փոշի (ալյուրի)>փոշի, փշատ>փշատ, գիշեր>կյիշեր,
աշուն>աշուն, կաշի>կաշի և այլն:

Բառավերջում՝

նուշ>նուշ, փուշ>փուշ, ճաշ>ճաշ, ուրիշ>իւրիւշ, անոյշ>
անուշ, բաշ>բոշ, էշ>էշ, թուշ>թուշ և այլն:

182. Միայն շարժ բառն է, որի մեջ նախաձայնը վերջա-
ձայնին նմանվելով դարձել է ժոժ:

Շրջել բառի մեջ էլ շ նախաձայնը ճ-ի տարանմանությամբ
դարձել է ս, որով ստացվել է սոճել (բայց կա և շոճել):

Շունը, շեշել բառերը գոյությունն չունեն Վանի բարբառում:

9

183. Բառասկզբում շ-ն մնում է անփոփոխ. ինչ. չամիշ>
չամիշ, չոր>չոր, չափ>չոփ, չիր>չիր, չորս>չորս, շուան>շը-
վան և այլն:

184. Բառամիջում շ-ն նույնպես մնում է անփոփոխ. Եղած
օրինակներն են ամաշէշ>ամշէալ, աշք>աշք, կանչէշ>կանչէւ,
ճանաշէլ>ճանշընալ, ճշալ>ճշալ, ոչխար>վոչխար, չարչարել>
չորչըրել, փնչել>փնշալ, փշել>փշել:

Բացառությունն է միայն աղաշանք բառը, որի մեջ շ-ն
դառնալով ճ, ստացել է աղանձոք ձևը, հայտնի չէ ինչ պատ-
ճառով: Նմանապես խաշերկաք բառը տեղափոխությամբ խառնէ-
կաք ձևն ստանալով՝ շ-ն դարձել է ճ:

185. Այն օրինքը, որով ուրիշ բարբառներում շ-ն բաղա-
ձայնից առաջ դառնում է շ, ընդհանրապես չի պահվել Վանի
բարբառում: Այսպես ունենք այք և ոչ աշկ: Նույնպես ամշնալ
և ո՛չ լիե ամրշնալ: Ճանաշել բայը ստացել է ճանշընալ ձևը, որով
և խոստովել է ձայնափոխությունից (հմմտ. Պլ. ջաշնալ):

Միակ օրինակը, որ ունենք Վանի բարբառում, փոքրտալ
բառն է, որ բնականաբար առաջանում է փոնշտալ նախաձևից:

186. Բառավերջում շ-ն նույնպես մնում է անփոփոխ. եղած
օրինակներն են՝ զոքանշ>զէօքյանշ, ինչ>ինշ, խաշ>խաշ, կակաշ
>կակաշ, կանաշ>կանաշ, չանշ>չանշ, չամիշ>չամիշ, պինշ>
պինշ, պոշ>պոշ, փարշ>փոռշ:

Միակ բացառությունն է ոսկերիշ բառը, որ գործածվում է
Վանի բարբառում թե՛ վոսկրիշ և թե՛ վոսկրիճ ձևերով:

187. Ընդհանուր լեզվաբանություն համար մեծ արժեք ունի շոքեքշարքի բառը, որ Վանի բարբառում ստացել է՝ չէօրէօշպոթ, չէօրէօքըշպոթ, և քյէօրէօշպոթ, քյէօրէօքըշպոթ ձևերը:

Սրանց բացատրության համար հրկու փոքր նկատողություն ունեմ ՀԱ. 1905, էջ 254 և 1906, էջ 139, MSL 14, էջ 288, որոնց բովանդակությունը գնում եմ այստեղ:

MSL 13-րդ հատորում, էջ 243—5, հսլ. gāsī «սագ» բառի առթիվ խոսելով՝ Meillet հայազետը գտնում է մի նոր ձայնական օրենք, որի համեմատ բառասկզբի նախաձայն քմայինը փոխանակվում է կոկորդականով, եթե բառի մեջ կա որևիցե շչական ձայն: Այսպես լիտ. žasis ձևին համապատասխանում է հսլ. gāsī «սագ».— հսլ. dzvėzda «աստղ» ձևին=լեհ. gwiazda, լիտ. žvaigždė, հպրուս. swäigstan: Այս օրենքը ավելի լավ են հաստատում սեմական լեզուները: Հայտնի է, որ սեմական ընդհանուր ց ձայնը արաբական շատ բարբառներում դարձել է յ և հետո էլ չ: Այս ձայնափոխությունը պատահում է հատկապես մաղրիբյան բարբառներում: Բայց մարոքերենում, երբ բառը որևէ շչական ձայն է պարունակում, այս ձայնափոխությունը տեղի չի ունենում: Այսպես մարոքերեն ասվում է gūz «ընկույզ» փոխանակ յūz. նույնպես մարոքերեն gens «սեռ» փոխանակ յens և այլն: Հայերենին էլ ունի գեղծք բառը, որ այս ձայնական օրենքին հպատակվել է: Մեր լեզվում հնխ. gh ձայնը ե և ի ձայների մոտ դառնում է ջ. ինչ. ջեր, ջերմ, ջիղ կամ ջիլ. միակ բացառությունն է գեղծք, որի դեմ սպասելի էր *չեղծք: Բայց այսպիսի փոփոխություն տեղի չի ունեցել ձ ձայնի պատճառով:

Meillet-ի այս օրենքին ի հաստատություն ավելացնում ենք բարբառային տարօրինակ մի ձև, որի բացատրությունը տալ դժվար էր մինչև այժմ: Հայտնի է, որ ջրաղացք բառը նոր հայ բարբառներում ր ձայնից զրկվելով, դարձել է ջաղացք. և գրեթե այս ձևով մնում է բոլոր հայ բարբառներում. օր. ԹՓԼ. Ագլ. ջնդաց, Խրբ. ջաղարջ, ջաղարք (սեռ. ջախշի, բց. ջախշեն), Տիգ. շողորց, Զթ. նաղոյցք, ջաղորցք, ձձ. ջաղոյցք, Երև. Զդ. ջաղաց, Գոր. Շմ. նաղաց, Ախց. Կր. ջաղացք (հզ. ջաղչընէր), Հմձ. նաղացք (սեռ. նաղցուց), Մկ. Վն. ճողաց, Սվեդ. ջողուցք, Ալշ. ջաղաջ, Մշ. ջաղան, Ննխ. ջաղաչք, Մրդ. Սլմ. ճողոչ, Սեբ. ջաղաչգ, Սչ, ջէղացք, Դրբ. ճէղաց:

Բայց այս բոլորի դեմ Ասլանբեգի հնթաբարբառը հանում է քաղաշք ձևը (բաղաձայնով սկսող բառի մոտ քաղաշ*)։ Կարելի էր կարծել թե բառասկզբի ջ-ն, ձայնաշրջությամբ ջ՝ դառնալուց հետո, վերջաձայն ք-ի նմանողությամբ դարձել է ք։ Այժմ այս մեկնությունը սխալ է դուրս գալիս։ Այս բառը վերոհիշյալ օրենքին հնթարկվող գեղեցիկ օրինակներից մեկն է։ Պմային շ(=ջ) տարանմանությունը իր աստիճանի կոկորդալանին է վերածված՝ ազդեցությամբ բառամիջի շ ձայնի։

Նույն օրինակի վրա ավելացնում եմ Վանի բարբառի վերոհիշյալ չորս ձևերը, որոնցից առաջին երկուսը դեռ պահում են նախաձոր շ ձայնը, բայց մյուս երկուսը շ-ն վերածել են քյ-ի՝ վերոհիշյալ օրենքի համաձայն։ Այսպես է նաև շրջոնք «մի բանի հակառակ կողմը», որ դարձել է Վն. շրկյոնք. ասում են օր. շրկյոնք շիտակ «թարս ու շիտակ», բայաձև՝ շրկյոնքել «շրջել, շուռ տալ» (օր. «Քյար կշրքյոնքեմ կտնեմ վրէն», Լալայան, Վասպուրական, 1912, էջ 169)։

Պ

188. Բառասկզբում պ-ն մնում է անփոփոխ պ. այսպես է 50-ից ավելի օրինակների մեջ, որոնցից հիշում ենք մի քանիսը. — պանիր > պանիր, պայծառ > պոծառ, պառաւ > պառավ, պատ > պատ «որմ», պարտք > պառտք, պատկեր > պատկերք, պատրոյգ > պատրոյք և այլն, նույնիսկ պատինճան > պատընջոն։

189. Անկանոն կերպով նախաձայն պ-ի դեմ փ, բ ունեն պսակ > փսակ և պղտոր > փտոր բառերը. առաջինը սովորական է ուրիշ բարբառների մեջ էլ և առաջացել է հաջորդ ա-ի ազդեցությամբ, իսկ երկրորդը անբացատրելի է, որովհետև խուլ իս և տ բաղաձայնների մոտ հանում է թրթռուն բ։

190. Բառամիջումն էլ պ-ն մնում է պ. ինչ. ապուր > ապուր, ապրիլ (կեալ) > ապրել, ապրանք > ապրանք, ապարանջան > արպընձոն «ցախավելի վզի օղակը», շապիկ > շապիք, նապաստակ > լապրգտրակ, կապերտ > կարպետ, ճոպան «չուռան» > ճօպան, ճիպո (աչքի կեղտ) > ճպեռտք, ստեպլին «ղազար» > տապլին, տապակել > տապկել, կապոյտ > կապոտ, հպարտ > խպառտ, ապրշում > արպշում, գիպիլ, գպիլ > տէպնել և այլն։

191. Երբ պ-ն անմիջապես հաջորդի ոնգական մ ձայնին, նրա նման թրթռուն դառնալով, վերածվում է բ-ի. Սրա համար ունենք միայն մի օրինակ, որ է՝ ճանապարհ, որ սղմամբ *ճան-պարհ ձևն ստանալուց հետո, դարձել է ճոմբոխ (սեռականում ավելի կրճատ ճոմխի). Այսպես է նաև բառավերջում ամպ>ամբ: Վանի բարբառում չկա ուրիշ որևէ բառ, որի մեջ ոնգականը և պ-ն հաջորդին իրար:

192. Բառամիջում պ-ն դառնում ենք բ-ի վերածված նաև երկու ուրիշ բառի մեջ, որոնք են՝ ապուղայ> արուղա «փամ-փուղտ» և կուպը>կուբբ: Սրանց ձայնափոխությունը պատճառը հայտնի չէ:

193. Անսովոր է նաև սպիտակ բառի ձևափոխությունը՝ սփվտակ, որի մեջ պ-ն թե՛ շրջվել և թե՛ վ-ի է վերածվել:—Ան-սովոր է նաև ժպտալ>ծմտալ, բայց այս երևույթը նաև հնից է ավանդված:

194. Բառավերջում պ-ն ընդհանրապես մնում է պ. եղած օրինակները հետևյալներն են. կապ>կապ, կոպ>կոպ, կապապ>կուտապ, պապ>պապ, պապիկ, պարապ>պարապ, վիշապ>վի-շապ:

Անկանոն են ոսպն>վոսփ (նախորդ ա-ի պատճառով շնչեղ դարձած) և ոռպ>ռուր, որ ներկայացնում են նույն բառի հին տառադարձությունը:—Ամպ բառի վերաբերյալ աեն վերը:

2

195. Բառակզրում ջ-ն խլանալով՝ դառնում է ըստ օրինի ն. այսպես են ջրաղաց> ճողաց, ջարդել> ճորտել, ջեր> ճէր «պարզիա գիշեր», ջերիլ> ճէրել «օգը պարզելը», ջիղ> ճեղ, ջնոց> ճնջոց, ջոկ «առանձին»> ճէօկ, ջոջ «մեծ»> ճոձ, ջո-րի> ճորի, ջուր> ճիւր, ջորդան> ճօտքան, ճօտքան, ջըր-ցանել> ճրճրճել, նաև ջախջախել> ճնջրխել, որ առաջանում է *ջանջախել ձևից:

Բացառություն է միայն ջուխտ բառը, որ իր նախաձայնը անփոփոխ է պահել:

196. Բառամիջում էլ ջ-ն ընդհանուր կանոնով դառնում է ն. եղած օրինակներն են՝ առաջին> ռոճիճ, առաջև> ռոճեվ,

արջառ > տնոռ, զղջալ > զըղնալ, իջանել > էննել, կաղջին > կաղնին, հաջել > խանել, մրջիւն > մոնեմ, շրջել (շուռ տալ) > շոնել, սոնել, ողջոյն > վոխնում, ոջիլ > վոնիլ, նույնիսկ պըղ-պըջակ > պօղօնակ և պօղօնկել «պղպջալ», որ այդքան ձևափոխ-ված լինելով էլ դեռ պահել է ջ>ն:

197. Բառամիջուժ ջ-ն ոնգականից հետո մնում է թրթուռն ջ. այսպես են ապարանջան > արարնջոմն ճյախավելի վզի օ-ղակ», բանջար > պոնջոթ, երինջ > էրէնջիկ, խոնջան > խօնջոմն, խրինջալ > խրխրնջոլ, ունջկաթ > մունջկաթ, ջախջախել > ննջը-խել, ջնջոց > ննջոց, պատինճան > պատրնջոմն:

198. Բացառություն է միայն խնջել (քիթը մաքրել) > խնչել, որի մեջ ջ-ն, հակառակ կանոնի, դարձել է չ: Այս ձայ-նափոխությունը համարում եմ մի խումբ բնաձայն բառերի ազդեցությամբ, ինչպես հնչել, ջնչել, փնչել և այլն, որոնցից ոմանք կարող են նույնիսկ կորած կամ ջնջված լինել այժմ բարբառից:

199. Երբ ոնգականին հաջորդող ջ-ն գտնվի դարձյալ բա-ղաձայնից առաջ, ինչպես լավ են ցույց տալիս ուրիշ բարբառ-ներ, կտարրալուծվի իր մասերին. խուլ բաղաձայնից առաջ կդառնա շ, թրթուռն բաղաձայնից առաջ՝ ժ: Եղած օրինակները թեև շատ սակավ են, բայց հաստատ են: Այսպես երնջնակ (բույ-սը) > գ. էրբնջնակ, ք. էրթնթնակ, յօրանջել > օրոշկըտալ (այն է *յօ-րանջկտալ). իսկ ունջկաթ > մունջկաթ, որ պիտի տար *մունջկաթ, պահելով իր ստուգաբանական իմաստը՝ պահել է նաև իր նախ-նական ձևը:— Երկու օրինակ էլ ունենք այնպիսի դեպքի, երբ ջ-ն չի հաջորդում ոնգականի և գտնվում է միայն ոնգականից առաջ. այս է՝ իջանել > էննել, որ և էթնել, միջնակ > միթնէկ, միթնէյ, միննէկ:

200. Բառամիջուժ ղը ձայնախումբը ստանում է երեք տարբեր ձև. նախ ունենք ղջ > խն (ողջույն > վոխնում), որ ամե-նից բնական ձևն է. երկրորդն է ղջ > դն (զղջալ > զըղնալ, կաղ-ջին > կաղնին), որ համաձայն է հիմնական օրենքին (ջ > ն), թե-կուզ ն-ն գտնվի նախորդ թրթուռն ղ-ի մոտ. երրորդն է ղջ > խչ (աղջիկ > ախչիկ). ուրիշ օրինակ չունենք: Բայց համտ. նաև բա-ռավերջը:

201. Բառավերջում, ձայնավորից հետո ջ-ն ստանում է երկու ձև. ա) ջ>ն. այսպես են՝ ալոջ «ուլիկ»>ալոն, առաջ>առոն, գէջ «թաց»>կյէն.— բ) ջ>չ. այսպես են՝ աջ>աչ, մէջ>մէչ (սրա հետ նաև մէջք>մէչք, թեև սրա սեռականը լինում է մէնոց), ջոջ «մեծ»>նոչ:

202. Բառավերջում ռնգականից հետո ջ-ն մնում է ջ. եղած օրինակներն են ականջ>ականջ, կամուրջ>կարմունջ, մուռնջ>մունջ:

Բառավերջում ջ-ն բաղաձայնից հետո դառնում է ճ (բա-
ղարջ>պողոռն, ստերջ>ստեռն) կամ շ (արջ>առշ, վերջ>վերշ):

Բառավերջում դը-ը դառնում է խն (առողջ>առոխն), բայց նաև խշ (ողջ>վոխշ):

203. Անսովոր ձայնավորությունն է ցույց տալիս շեղջ (ցո-
րենի դեզ)>շեղքյ, որի մեջ գտնում ենք ջ>քյ! այս ձայնավո-
րությունը անշուշտ ձայնական չէ, ոչ մի ուրիշ բարբառում չկա
և շփոթված պետք է համարել հոգնակիի ք վերջավորության հետ:

Ռ

204. Բառակզբում ռ բաղաձայնի օրինակներն են ռեհան>
ընհոն և ռուպ>ըռուք. երկուսն էլ կրում են հայերենի սովորա-
կան ք հենարանը՝ ռ-ից առաջ:

205. Բառամիջում ռ-ն մնում է նույնպես միշտ անփոփոխ
ռ. բազմաթիվ օրինակներից հիշում ենք մի քանիսը.— քառա-
սուն>քյառսուն, պառաւ>պառավ, գոռալ>կյէռալ, կշռել>կշռել,
խաղնել>խառնել, կոռնկ>կոռնգյ, ուռի>ռուի, ռոնալ>վոռնալ,
առուոյտ>առվձտ, առաւօտուն>առատուն, դառնալ>տոռնալ,
պառակիլ>պառկել, վառեակ>վոռէկ, փոնգտալ>փորննյտալ,
բառնալ>պոռնալ, առաջին>տոռնին և այլն:

206. Բառավերջում ռ-ն նմանապես մնում է անփոփոխ. ինչ.
աթոռ>աթոռ, արջառ>ռնոռ, ամառն>ամառ, բեռն>պեռ,
բուռն>պուռ, բենո>պիպեռ, գառն>կյոռ, գուռն>տուռ, ա-
պուռ «ավար, կողոպուտ»>ապուռ «շատ էժան առնված բան,
թառ>քառ «հավի թառ», թուռ>քոռ, ժայռ>ծեռ քյաք և այլն:

Ռ-ի ձայնաստիճանը փոխված է միայն բուրվառ>պուրվար
և վարդավառ>վորտէվոր բառերի մեջ:

207. Զարմանալի բացատուծյուն է կազմում դեռ «տա-
կավին» բառը, որ Վանի բարբառում գարձել է տէլ (այսպես է
նաև Սալմաստ, իսկ Մկ. տալ), Ինչո՞ւ արդյոք փոխված է լ-ի և
որտեղի՞ց է առաջացել այս լ ձայնը, քանի որ մինչև անգամ
թե՛ն «պարկ» բառը մնում է անփոփոխ թե՛ն, Իմ կարծիքով դեռ
>տէլ ձայնափոխությունը բարեձևության (euphémisme) արդյունք
է (փխ. *տեռ) և այն լ վերջաձայնն էլ հոմանիշ թրք. hele ձևից է.
սովորական է Վանի բարբառում հայերեն և թուրքերեն բառերի
միասնական գործածությամբ ասել դեռ-հոլտ, որից դէլ-տլտ կամ
տէլ-տլտ. (հմմտ. Շմ. տէն-հոլտ, Այլ, դ'ըլտ)։

Ս

208. Բառակզգռում ա-ն մնում է ա. մոտ 70 օրինակներից
հիշում եմ հետևյալները. — սեաւ>սեվ, սարեակ>սարէկ, սան-
տըր>սանդր, սատակիլ>սատկել, սալլ>սէլ, սիրտ>սիռտ,
սիւն>սուն, սպիտակ>սիվտակ, ստերջ>ստեռն, սիրել>սիրելի,
սերկեիլ>սիկիվիլ, սիրկիվիլ և այլն։

209. Ունենք միայն մի բառ, ուր նախաձայն ա-ն
դառնում է շ. այդ է սեամ>շեմքյ (սեռ. շիման)։ Ուրիշ բար-
բառներում այս բառի հետ զուգընթաց է նաև սալոր բառը, որի
նախաձայնը նույնպես դառնում է շ (Յրև. շլօր)։ Բայց Վանի
բարբառում սալոր բառը բոլորովին ջնջված է՝ տեղի ապով
պրս. ālūḍa հոմանիշին։ Թե ինչո՞ւ Վանի նման հայաշատ ու
հայկական կենտրոնում ջնջվել է այսպիսի մի սովորական բառ,
որ մինչև անգամ պոլսահայ բարբառումն է պահված անփոփոխ
(Պլ. սալօր), ես բացատրում եմ հետևյալ ձևով։ Ինչպես շեմքյ բա-
ռի համեմատությունը ցույց տվեց, սալոր բառը Վանի բարբա-
ռում ջլոր ձևն ուներ։ Միևնույն ժամանակ Վանի բարբառում
կար և այժմ էլ կա շիլոր բառը, որ նշանակում է «կաղնու պը-
տուղը, գիտոր» կամ ըստ այլոց «սղանգ բույսը»։ Իրար չխան-
գարելու համար պահվեց շիլորը և ջնջվեց շլորը, որ փոխանակ-
վեց պրս. ալուշա հոմանիշով։

210. Բառամիջում ա-ն մնում է նույնպես անփոփոխ. բազ-
մաթիվ (60-ից ավելի) բառերից հիշում եմ մի քանիսը. — չե-
սան>չսան, յիսուն>իսուն, քառասուն>քյառսուն, խօսիլ>խու-

սել, հասանել>խասնել, ոսկր>ուսկոռ, ոսկի>վոսկի, պսակ>փր-
սակ, սիսեոն>սիսեո, սկեսրայր>կէսրէր, արտասուք>առտսուեք,
տեսանել>տիսնալ, փեսայ>փէսա և այլն:

211. Այս ընդհանուր կանոնից բացառություն են կազմում
երեք բառ, որոնք են.

ա) տեսիլք>տեզէլք, համարյա կրոնական իմաստով մի
բառ, որի արմատական ձևը (տեսանել>տիսնալ) անփոփոխ պա-
հում է իր և ձայնը. և հայտնի է, թե միայն այստեղ դար-
ձել է զ:

բ) նապաստակ>լապրստրակ, որ թեև ընդհանրապես այս
ձևով է, բայց հնչվում է նաև լապրգտրակ, ուր ա-ն անկանոն
կերպով դարձել է գ, նույնիսկ երկու խուլ բաղաձայնների (պ և
տ) միջև: Նման երևույթ տեսել էինք նաև լպրծիլ>լպտրալ
բայի միջև.

գ) հասկ>խաշկ, ուր ա-ն անկանոն կերպով դարձել է շ.
մինչդեռ հասկանալ>խասկնալ բայի մեջ նման երևույթ չկա:
Արդյոք պրս. xūša>խոշակ (պհլ. xōšāk) բառի ազդեցությա՞ն
պետք է վերագրել:

Միանալով տ-ի հետ տվել է ց՝ միայն արտասուք>առ-
ցուեք բառի մեջ, որ և կա առտսուեք ձևով:

212. Բառավերջում ա-ն նմանապես մնում է անփոփոխ.
ինչ. ամիս>ամիս, աղիւս>օղիս, աղուէս>աղվէս, ափսոս>ափսոս,
աքիս>աքյիս, բորբոս>պէօրպէօս, երես>իրես, թուխս>թուխս,
լոյս>լօս, խիւս>խուս, հիւսն>խուս, պատրոյս>պատրուս,
պէս>պէս, տասն>տաս, փոս>փոս և այլն:

213. Այստեղ էլ բացառություն են կազմում հետևյալ երեք
բառերը.

ա) Սաղմոս, որ գործածական է բարբառում թե սաղմոս և
թե սաղմոց ձևերով. վերջինը ձևավորվել է Գործոց, Ճաշոց, Մաշ-
տոց բառերի (բոլորն էլ եկեղեցական գրքեր) վերջաձայնի նմա-
նությամբ.

բ) կալամաս>կալամաստ, որի տ ձայնը նախորդ ա-ի
պատճառով է. նման հավելում ունեն ուրիշ բարբառներում կալ-
բաս>կալբաստ, մատրաս>մատրաստ «ներքնակ», պէս>պէստ,
էսպէս>էսպէստ, ոռւս>ռուստ, և այս բոլորից թերևս ամենա-
հինը Սաղամաս>Սալմաս>Սալմաստ գավառի անունը.

գ) փուլքս>փիւզ բառի մեջ ք-ն նախ ջնջվել է և ապա ա-ն դարձել է գ: Այս բառը ուրիշ որևէ բարբառում նման փոփոխու-թյուն չի կրել:

Վ

214. Բառասկզբում տառնց բացառության մնում է վ. ա ձայնավորի մոտ եղած օրինակները (գրեթե բոլորը) չիշել ենք ու-րիշ առթիվ (տես վերը), ավելացնում ենք այստեղ մի քանի ուրիշ կարգի օրինակներ էլ.— վերայ>վէրէն, վեց>վեց, վիւ>վիւզ, վիշապ>վիշապ (այլուր շատ տեղ դարձած ուշապ):

215. Բառամիջում և բառավերջում վ-ն գտնվում է կնիւմ ո ձայնավորից հետո և կամ վ նախաձայնով կազմված բարդ բառե-րի երկրորդ եզրի սկիզբը: Երկու դեպքումն էլ մնում է վ: Այս-պես են՝ բուրվառ>պուրվար, վարդավառ>վորաձվոր, բովել>պէօվել, գովել>կյէօվալ, ժողովել>ժօղվել, խոստովանիւ>խօստօ-վանել, խոովել>խոօվել, ծով>ծօվ, կով>կօվ, հով>խօվ, սով>սօվ, ով>վով, կողով>կօղօվ, հովիւ>խօվիվ, սովորիւ>սօվրել, հովահրել>խօվխրել:

216. Անսովոր ձայնափոխություն է ներկայացնում խո-րովոյ «խորոված» բառը, որ կարող ենք երևան հանել համա-պատասխան Մշ. խորովու ձևից: Վանի բարբառում այս բառը դարձել է խուրուղու, որից երևում է, որ վ-ն դարձել է դ:

217. Անսովոր ձայնափոխություն է ներկայացնում նաև պողովատ> Վն. պողպատ, որ սակայն ո՛չ թե նույն պողովատ ձևից է ծագում, այլ պ՛չլ. pōlāpat երկրորդական ձևից:

Տ

218. Բառասկզբում տ-ն մնում է տ. ինչ. տուն>տուն, տե-սանել>տիսնալ, տարի>տարի, տիկ>տիկ, տղայ>տղա, տասն >տաս, տորոն>տուրուն և այլն:

Միայն մի բառ կա, ուր նախաձայն տ-ն հետևելով իրանից հետո եկող ծ ձայնին, դարձել է ծ. այսպես է տարածել>ծրնձել «տարածել մի լուր», որի կրավորականն էլ լինում է ծրնձվել «լուրը տարածվել»:

219. Բառամիջում և բառավերջում տ-ն մնում է նույնպես տ. ինչ. հաւատալ>ավատալ, ատամն>ատամ, փետուր>փիտուր, խտոր>սխտոր, կապերտ>կարպետ, խարտեղ>խառտել, առաւօտուն>առատուն, առուոյտ>առվճտ, արտոյտ>արտուտիկ, յօտեղ>էօտել, հոտոտեղ>խօտօտալ, կապոյտ>կապոտ, կարկուտ>կարկուտ, յիտը>կիղը, խախուտ>խախուտ, բրուտ>պրիւտ և այլն:

220. Քիչ անգամ պատահում է, որ անկանոն կերպով տ-ն դառնա դ. այսպես են աւետարան>ավէդրան, բարտի>բորդի, յիտը>կիղը, որից և կըրանոց «լտրանոց»: Բոտոտ բառի մեջ բոլոր խօւերը թրթռուն դառանալով երկու տ-երն էլ վերածվել են դ (տես. § 81):

221. Ռեգականից հետո տ-ն դառնում է դ. այսպես են գտահել>կընդենել, սանտր>սանդր, սանտրել>սանդրել,—բայց տանտիկին բառը պահելով իր ստուգարանական ճշտությունը՝ հընչվում է տանտրկին, թեև կա նաև տանդրկին ձևով:

222. Հանդիպելով ու բաղաձայնի հետ, տս ձայնախումբը կարող է դառնալ ց, բայց կարող է նաև մնալ անփոփոխ. Սրահամար ունենք միայն մի օրինակ, այն է արտասուք, որ Վանի բարբառում հնչվում է թե առտսուքը և թե աոցուքը:

223. Տ ձայնը թավանալով դարձել է թ՝ սուտ>սութ, սուտասան>սութասան, խշտել>խշթել «միսը ասեղ խրել» բառերի մեջ: Առաջինը, որ գտնում ենք նաև Երևանի բարբառում, կարծեմ թե աղորթ «ուղիղ» բառի ազդեցությամբ է: Հաճախ երկու բառերը միասին են գործածվում. ինչ. սո՞ւտ է թե աղորթ.—սո՞ւտ է, դորթ է չգիտեմ և այլն:

224. Տք ձայնախումբը անորոշ կերպով հնչվում է թկ, տք. այսպես միտք>միթկ, պէտք>պէտք, պարտք>պառտք:

Բ

225. Այս բաղաձայնի փոփոխությունների մեջ ամենակարեւորն այն է, որ թրթռումները ուժեղացնելով դառնում է ո:

Ամեն դեպքում ր-ն չի դառնում ո, այլ որոշ պայմանների տակ և այն էլ զարմանալի կանոնավորությամբ:

Ահա թե ինչ կանոններ կարելի եղավ դուրս բերել հազարավոր բառերի ցուցակը կրկին ու կրկին կարդալով, մտղելով ու դասավորելով:

226. Բառամիջուկ, երկու ձայնավորի միջև գտնված պարագային ր-ն մնում է (չի դառնում ո), ինչ. ուրազ>ուրաքյ, շերեփ>շիրեփ, ոլորել>լօլօրել, որբևայրի>վոռպէօվերի և այլն, Բացառություն են կազմում արագիլ>առակյէլ, ջրյորդան>նօոթան (նօթան, նօլօտան) և յօրանալ>հէօռանուլ:

Սրանցից առաջինը զուտ բացառություն է և որևէ բացառություն չի վերցնում:

Երկրորդը իր ստուգաբանական ծագումը կորցրած, բոլոր բարբառների մեջ էլ շատ չարձարված և մինչև անգամ քրդերենի ու թուրքերենի մեջ փոխ առնված բառ է: Վանեցիների բարբառը ներկայացնում է այս բառի համար երեք ձև և կարծեմ թե ժողովրդական ստուգաբանությամբ ստացել է նօռ ձևը՝ հանելով նոր «կիսախոզոված» բառից:

Երրորդը (հէօռանուլ) նշանակում է «բույսը շատ աճելուց անպտուղ դառալ» (նաև մարդկանց համար է ասվում): Գտնվում է նաև ուրիշ բարբառներում (Ալաշկերտ, Երևան) և արմատական ձևն է հոռ Երև. Վն. «աճած, հղփացած»: Իմ Արմատական բառարանում կցել եմ յօրանալ բառին, որի հետ շատ համապատասխան է իմաստով: Բայց կարելի է մտածել նաև յոռի բառի մասին: Երկու դեպքումն էլ խանգարում է նախաձայն յ-ն, որ Վանի բարբառում միշտ ջնջվում է:

227. Բառավերջում, ձայնավորի հաջորդելու դեպքում ր-ն մնում է անփոփոխ (չի դառնում ո). ինչ. ալևոր>խալիվոր, ալիւր>ուլիւր, հարիւր>խարիւր, հազար>խազոր, փետուր>փիտուր և այլն:

Այս կանոնից բացառություն են կազմում թրթուր>թոթուր, կանկար>կանգյուռ, կոր>կոռ, վարագոյր>վորակյուռ, փրփուր>փոփուռ, քակոր>քյակոռ բառերը: (Այս վեց բառերից չորսը «կոռ» վերջավորությունն ունի. բայց դա պատահական է և օր. կոյր բառն էլ դառնում է Վն. կոր, սեռ. կուրո): Առաջինը շատ տեղ հնչվում է ո վերջաձայնով (Երև. քոթուռ, Ալշ., Սլմ. քոթուռ, Ողմ. քոթոռ, Ագլ., Մկ. քոթօռ): Երկրորդը (կանկար) երևի ազդված է կառ փշանուռից: Երրորդը (կոռ) կազմված է տարբեր-

լու համար Վն. կոր «կույր» բառից և հոմանիշն է կեռ բառի, որից էլ ազգված պետք է լինի: Վանեցիները զանազանում են կեռ, որ երկաթից է և կոռ, որ փայտից է. այս վերջինն էլ երկու տեսակ է լինում. ծեռաց կոռ, որ հովվի կեռագլուխ գավազանն է և չրվնի կոռ, որ չվանի ծայրին անցկացրած կեռ փայտն է՝ կապը մամուր պահելու համար:— Փրփուր բառը շատ տեղ ուռվ է հնչվում. ինչ. Երև., Ալշ., Մկ. փռփուռ, Ագլ. փրփոռ, Շմ. փռփրռ, Սլմ. փռփուռ, Մշ. փռպուռ: Քակոր բառն էլ հնչվում է Սլմ. քակոռ, Մրդ. քակոռ, Ղրբ. քնքուռ, Ղրդ. քնքուռներ: Մնում է միայն վարազոյր բառը, որի վերջածայնը չի արգարանում որևէ այլ բարբառով:

228. Բառավերջում, բաղաձայնի հաջորդելու դեպքում, նույնպես ր-ն չի դառնում ո, այլ մնում է անփոփոխ ր: Այսպես են եզր>յեզր, թանձր>թա՛նձր, լիտր>կիդր, ծաղր>ծաղր, ծանր>ծա՛նդր, ծոռնր>ծո՛ւնդր, անօսր>նօ՛սըր, քաղցր>քյախցըր, փուխր>փուխր, տալգր>տէքյր, կուպր>կուրք, մեղր>մէղր, սանտր>սանդր, սիմիւր>սըմընդր, բարձր>պա՛նցըր, և մինչև անգամ. թեթև>թեվըր: Բացառություն է միայն ոսկր, որ ա՛մեն տեղ էլ ձևափոխված է, իսկ Վն. դարձած է ուսկոռ:

229. Բառամիջում ր-ն պահվում կամ փոխվում է համաձայն հաջորդ բաղաձայնի: Ահա եղած օրինակները այբուբենի կարգով:

դ.— կա միայն մի օրինակ, որ է բարտի>բորդի:

զ.— վազել>վորզել:

բ.— 1. աւելորդ>ավիլօրթ, արթուն>որթիւն, բուրդ>պիրթ, երթալ>երթուլ, զուարթ>զվորթ, թարթել>թորթել, թարթափ>թորթոփ, լեարդ>լերթ, խարդախ>խարթախ, խորթ>խորթ, մարդ>մարթ, մորթել>մորթել, յարդ>որթ, յորդորան>հորթորան, որդն>վորթ, հորթ>վորթիկ, ուղղորդ>աղորթ, վարդ>վորթ,— 2. բարդ>պուրթ, բերդ>պեոթ, խրթին>խորթին, կորդ (հող)>կոորթ, շուրթն>շուրթ «թոնրի եզերք», ջրյորդան>նոթթան, նոթթան, փրթանիլ>փորթնել «ազատվել», քարթու>քյուրթու, քերթել>քյըրթել, քարաթոթոշ>քյուրթոթթօշ:

ժ.— վարժապետ>վորժոպետ:

խ.— խրխնջել>խրխնջուլ:

ծ.—1. արծաթ>առծար, արծիւ>առծիվ, գործ>կյծոծ, թրծել
>թոծել, խաւարծիլ>խավրոծիլ, կործել>կոռծել, կրծել>կոծել,
ործկաւ>վոռծկալ, պրծանիլ>պոռծնել.— 2. ածելի>արծրլի, վար-
ձել>վործել, փորձանք>փործանք, փորձել>փործել:

կ.— բարեկենդան>պտրկէնդոնք, բարկ>պտրկ. բարկանալ
>պտրկանալ, գիրկ>կյիրկ, գրկից>տրկէց, երկաթ>էրկաթ, եր-
կայն>էրկէն, երկանք>էրկանք, երկինք>էրկինք, երկիր>յէր-
կիր, երկու>էրկու, հերկ>խերկ, մարգարիտ>մարկյըրիտ, մերկ>
մերկ, ներկել>նիրկել, պարկ>պարկ, սերկէիլ>սիրկիվիլ.— այս
բոլորի գեմ ունենք և Վն. պառկել, որ ծագում է գրք. պառակիլ
ձևից (արմատը պառակ, որից երկպառակ. սխալ է գրել պարկիլ,
ինչպես անում են ոմանք):

ն.— արճիճ>առնին, բաղարջ>պողոռն, կարճ>կառն,
կրճաւ>կոնրաւ, մրջիւն>մոննմ, շրջել>շոնել, սոնել, ստերջ>
ստնոն.— և այսպիսի լավ օրինակների գեմ ջրցանել, որ պահե-
լով իջ ստուգաբանութլունը, մնում է ք չաղաձաւնով:

մ.— գորմանալ>գարմանալ, արմուկն>արմունգ, արար-
մունք>արմունք, գարման>դարման. մարմանդ>մարմանդ, մոր-
մոքիլ>մէթրմըքյալ, ողորմիլ>օղօրմել, սերմի>սերմ, կարմիր>
կարմիր:

շ.— գարշելի>կյոռշէլի:

չ.— արջ>առչ, փարչ>փոռչ:— Սրանց գեմ ունենք չար-
չարել>չորշըրել, որ կրկնութլան պատճառով է, և վերջ>վերշ,
որ գրականից է փոխառյալ:

պ.— ապարանջան>արպընջոն, բորբոքել>պէօրպընքել,
բորբոս>պէօրպէօս, բորբոսիլ>պէօրպսնել, դարբին>տորպին,
կապերտ>կարպետ, ուրբաթ>ուրպոթ, սրբել>սրպել, արբանեակ
որպնէկ, ապրշում>արպշում,— և սրանց գեմ էլ որբեայրի>
վոռպէօվէրի:

ս.— ներքս>ներս, չորս>շորս, պարսէտ>պարսետ, սրակել
>սրսընքել, սարսափիլ>սէրսփալ, սրսքփալ, սուրբ (կրկ.)>սէր-
սիփ «մաքուր»:— Սրանց գեմ ունենք երեսուն>յեռսուն, որ
կազմված է քառասուն բառի նմանողութլամբ և վերցրել է նը-
բանից ո ձայնը:

վ.— Ունենք կրավորական բաշերի մի անագին շարք, ո-
րոնց մեջ վից ատաջ գտնում ենք ք (օր. սիրուիլ>սիրվել, հա-

վասարուիլ>խափսրվել, գվո. սալատրվել «հարձակվելու պատ-
րաստվել»), սրանց վրա ավելացնենք նաև բուրվառ>պուրվար.
բացատրությունն է միայն շատրուան>շատրովան, որ և շտառո-
վան:

տ.—1. ամբարտաւան>ամպառտավան, աշակերտ > աշկեռտ,
արտ>առտ, արտասուք>առտսունք, գորտ>կյճոտ, գատարկ>
տոռտակ, խարտել>խառտել, խրտնել>խոտնել, ծիրա>ծեռտ,
հարաւ>խալառտ, ձգտաւ>սկըռտալ, մկրատել>մկըռտել, շերտ
շեռտ, շրտնուլ>շոտել «աչքը պաղել», պարտք>պառաք, պորտ
>պոռտ, սերտ>սեռտ, սերտել>սեռտել, սիրտ>սիրտ, ցրուել
(կրկ.)>ցվոռտել, ցուրտ>ցուռտ, քրտինք>քյրոտինք.— 2. ար-
դար>որտոր, գարգարանք>գորտորունք, բրդել>պրտել, երդիք
>էրտիս, երդումն>էորտիմ, ծառգարգար>ծառգորտոր, կարգալ
>կորտալ, հորդել>խորտել, մարդակ>մորտակ, որդի>վորտի,
ջարդել>ճորտել, ջրտուն>ճոտուն, վարգավառ>վորտէվոր,
վարգապեա>վորտապետ:

ց.— արձակել>առցկել, բարձ>պոռց, խորձն>խոռց, հար-
ցանել>խառցուցել, հանգոյց>խանգյոց, որձ>վոռց, ուրց>ուռց,
վարձք>վոռցք, դարձայ>տոռցա, բարձայ>պոռցի և նույնիսկ
կարացի>կառցա!

փ.— փրփուր>փոփուռ, մրափել>մոփել:

ք.— գիրք>կյիրք, նշխարք>նշխարք, քրքրել>քյրրքյը-
րել, պատկեր>պատկերք (կամ պատկերք):

230. Ամփոփելով վերոհիշյալ օրինակները, գտնում ենք, որ
բն մնում է անփոփոխ՝ դ, գ, ժ, խ, կ, մ, պ, ս, ք բաղաձայն-
ներից առաջ, և դառնում է ո՛՝ ծ, ճ, շ, չ, վ, ց, փ բաղաձայն-
ներից առաջ: Բաղաձայններից ոմանք չունեն օրինակ, որովհե-
տե Գործածական չեն Վանի բարբառում. այսպես են բ, գ, ձ, շ:
Ուրիշներ ունեն միայն մի օրինակ. ինչպես են դ, գ, ժ, խ, շ, փ:
Սրանցից ոմանք էլ կասկածելի են. այսպես շ (գարշելի), փ
(փրփուր), որոնք կարող են լինել սաստիկական կամ կրկնավոր:
Կասկածելի է թերևս վ-ն, որ հիմնում եմ երկու օրինակի վրա
(բուրվառ, շատրվան), մի կողմ թողնելով կրավորականների ա-
հագին բազմությունը: Մյուսների մեջ կան հետաքրքրական կե-
տեր: Օր. մրափել բայը ունի երկու ձև. մրափել և մոփել, որով
իմացվում է, որ բն դառնում է ո՛՝ փ-ից առաջ: Ահաաստատ է

ք, որի օրինակների մի մասը ունի ր, մի մասը ո: Հաստատուն են ծ, կ, ճ, մ, չ, պ, ս, ց: Սքանչելի է տ բաղաձայնը, որի օրինակներից 23 հատը ունի ո, 13 հատը՝ ր: Այն օրինակները, որոնց մեջ տ-ն բաղաձայնը առաջանում է գրաբարի տ-ից, պահանջում են ո (գորտ>կյծոտ), իսկ այն օրինակները, որոնց մեջ տ-ն առաջանում է գրաբարի դ-ից, պահանջում են ր (երդեք>էրտիս): Աճառյանի օրենքի մի այլ պատկերն է այս: Ո՞ւր կարելի է գտնել ձայնափոխությունների այս աստիճանի կանոնավորություն: Երկաթ>էրկաթ բառի մեջ ր-ն անփոփոխ մնում է, որովհետև կ-ի մոտ է: Բայց հենց որ տեղափոխություն է կրում խաչերկաթ>խառնէկաթ բառի մեջ, ր-ն դառնում է ո, որովհետև ընկավ ճ-ի մոտ:

Ջուր>ճիւր բառի մեջ ր-ն մնում է ր, բայց հենց որ բարզվեց դարցավ ջրտուն, ր ձայնն էլ վերածվեց ո (նոտուն), որովհետև տ-ի մոտ ընկավ: Յրուել բայը դարձել է ցվրել, բայց հենց որ ստանում է տ մասնիկը՝ դառնում է ցվտել: Մկրատ բառը պահում է իր ձևը անփոփոխ, բայց մկրատել բայը դառնում է վն. մկրտել: Սրանից տարբեր է մկրտել, որ իբրև կրոնական փոխառություն մնում է վն. մկրրտել ձևով: Այնուամենայնիվ իբրև բացառություն այս կանոնին՝ ունենք արտոյոտ>արտուտիկ և ճարտար>ճարտար:

231. Մասնավոր դեպքեր են՝

ա) բարձր>պա՛նցր, ուր առաջին ր-ն տարանմանություն դարձել է ճ. սրանից էլ բայը՝ պանցրանալ կամ պանցրնալ:

բ) կորիզ>կողիճձ, անսովոր ձև, որի մասին խոսել եմ Արմատական բառարանում կորիզ բառի տակ. և համեմատելով մի կողմից Ղրբ. կօ՛րըէզ, կօ՛րէնձ, Ոզմ. կողիճձ, Մկ. կուղիճձ, Ջղ. կղէզ, Ագլ. կղազ ձևերի և մյուս կողմից գոռզ>նբ. վն. կոուճձ բառի հետ, եզրակացնում եմ, որ հայերենի հնագույն ձևն էր կորիճձ, ապա ճձ>զ ձայնափոխությամբ դարձավ կորիզ (տե՛ս և ՀԱ. 1905, 346):

գ) սիրամարգ>սիճմախաֆք, որի մասին խոսել եմ Արմատական բառարանում, հտ. 2, էջ 247 և համեմատելով մի կողմից Մշ. սիմամարք, Ալշ. սիմամախաֆք, Բղ. սիմամոն խավք ձևվերի և մյուս կողմից զնդ. saēnō-məṛəṣō. պ՛հլ. sēnomurūk մայր ձևերի հետ, գտնում եմ, որ հին հայերեն ձևն է *սիճմարգ. Վա-

նի բարբառը դեռ պահել է բառի հին պատկերը, միայն որովհետև
զնդ. mæθæð > պրս. mæθ նշանակում է «թռչուն», հայերենումն
էլ դրված է — հաւք > — խաֆք.

դ) սերկեկի բառը ստանում է երեք ձև. ր-ն պահելով ան-
փոփոխ՝ սիրկիվիլ, անկմամբ՝ սիկիվիլ և երրորդ սիլկիվիլ, ուր
ր-ն նմանությամբ վերջաձայնի դարձել է լ:

3

232. Ամեն զեպքում էլ մնում է անփոփոխ ց. այսպես՝

Բառակզբում. ցախ > ցախ, ցած > ցածր, ցամաք > ցամաքյ,
ցանել > ցանել, ցաւ > ցավ, ցերեկ > ցերեկ, ցեց > ցեց, ցին > կոր-
ցընընէկ, ցրուել > ցվրել, ցից > ցից, ցնդիլ > ցնթել, ցնկնել > ցիմել,
ցորեան > ցորէն, ցուրտ > ցուռտ, ցողուն > ցող, ցողուն:

233. Բառամիջում. անցանել > ընցնել, երէցկին > իրիցկին,
զրուցել > զրիցել, լնուլ, կար. լցի > լցել, խեղացի > խէլացի, հար-
ցանել > խաղցուցել, հացի (ծառը) > խացի, քաղցր > քյաղցր, քա-
ցախ > քյացախ:

234. Բառավերջում նմանապես մնում է ց. եղած օրինակ-
ներն են՝ անթեղոց > անթրոց, առանց > առանց, բաց > պոց, բոց
> պոց, դրկից > տրկից, թաց > քաց (որից բացել «թրջել»), լաց
> լոց, խոց > խոց, խուց > խուց, ծոց > ծոց, կթոց > կթոց, կառուց
> կառուց, հանգոյց > խանգոյոց, հաց > խաց, հետ իրերաց > խրտ-
րոց, յիշոց > ուշուց, նշանց տալ > շանց տալ, ուրց > ուոց, ջրա-
ղաց > ճողաց, ջնջոց > ճնջոց, սղոց > սղոց, վեց > վեց, ցեց > ցեց,
ցից > ցից, փողոց > փուղոց, քշոց > խշոց:

Միմիայն գոց բառն է, որ բացառաբար դառնում է կոծ:

235. Այն օրերը որով ց-ն գտնվելով բաղաձայնից առաջ՝
դառնում է ս, Վանի բարբառում ունի միայն երեք օրինակ.
այն է հացահան > խասխան, որ և խացխան, լուացվիլ > լվուսվել
(որ և լվուցվել), քյընոց կյոխ «քնելու ժամանակ» ասվում է
սովորաբար քյընոս կյոխ: — Ըստից «այստեղից» մակբայ, որ և
լինում է բաղաձայնի մոտ՝ ըստիւ: Իսկ երէցկին բառը, որ ուրիշ
շատ տեղ դառնում է իրիսկին, Վանի բարբառում մնում է
իրիցկին: Նմանապես անցանել բառը, որ այլուր դառնում է
ասնիլ, բսնել, սյաստեղ մնում է ընցնել:

236. Յ-ն բառասկզբում դառնում է նմանողությամբ և՛ ցատկումն>սասում (սեռ. սասման) բառի մեջ, ընդհակառակը նախաձայնի նմանողությամբ դառնում է ճ՝ ջրցանել>ճրճրճել բառի մեջ:

Փ

237. Բառասկզբում փ-ն մնում է անփոփոխ փ. ինչ. փայտ>փէտ, փեսայ>փէսա, փետուր>փիտուր, փուշ>փուշ, փողոց>փուղոց «արտաքնոց», փող>փող «սրինգ», փուքս>փիւզ, փոխինդ>փոխինդ, փոխել>փոխել և այլն: Միայն փլի բայն է, որ տալիս է Վն. պլել: Սրա հետ կարելի է համեմատել Վն. պլիկ «փոքր դրամ», որ առաջանում է փլիկ (պրա. рил «փող, դրամ») ձևից: Սրանից հետևում է, որ Վանի բարբառում, բառասկզբի փ-ն՝ հաջորդական լ-ի մոտ դառնում է պ (հմմտ. նաև փլիւլլ>պլիւիլ, փլատալ>պլատալ): Ավելին տե՛ս Արմատական բառաշնչում պլիկ բառի տակ:

238. Բառասկզբում փ-ն երկրիմի է փորել բառի մեջ: Այս բառը գործածվում է երկու իմաստով. ա) հող փորել, որ փորել բառի հիմնական ու նախնական իմաստն է, և բ) փայտը փորել, որ ավելի «փորագրել» իմաստն ունի և բառի երկրորդական նշանակությունն է: Առաջին իմաստով փ-ն մնում է անփոփոխ (Վն. փորել), երկրորդ իմաստով փ-ն դառնում է պ (Վն. պորել):

239. Բառամիջում փ-ն մնում է դարձյալ փ. օրինակներն են՝ ափսոս>ափսոս, եփել>իփել, թափել>թոփել, թափօր>թափօր «եկեղեցական հանդես», լափել>լոփել, ծեփել>ծիփել, մրափել>մրափել, մոփել, շուշփայ>շուշփա, շփանալ>շփանալ, սարափիլ>սրսրփալ, տափակ>տափակ, փափուկ>փոփիւկ, փրփուր>փոփուր:

240. Բառամիջում փ ունենք նաև թօթափել>թախթիլ բառի մեջ. այստեղ սակայն ոչ թե փ բաղաձայնն է (թափթիլ), որ դարձել է խ, այլ թօթափել=թաթափել բայի և կիսաձայնը. ճիշտ այնպես, ինչպես եօթն = եաթն տալիս է օխտը:

241. Բառավերջում փ-ն նմանապես մնում է անփոփոխ փ. եղած օրինակներն են՝ ափ>ափ, ափն (գետի)>ափ, եփ,>յէփ, թարթափ>թոթթոփ «թարթիչ», թեփ>թեփ, թուփ>թիւփ, խուփն

խաւփ, խոփ>խոփ, ծափ>ծափ, ծեփ>ծեփ, կանեփ>կանափ, մրափ>մրափ, շերեփ>շիրեփ, չափ>չափ:

242. Նոր փոխառությամբ դափ «երաժշտական գործիքը» ստացել է դիֆ ձևը, այնպես որ փ>ֆ ձայնափոխությունը առերևույթ է միայն:

Ք

243. Բառակզրում ք-ն դառնում է քմային քյ. այս ձայնը շատ հստակ լսվում է ա, ք, ո, օ, ու ձայնավորներից առաջ, բայց ե, ի ձայնավորներից առաջ այնպես չի լսվում, թեև միշտ կա: Տալիս ենք մի քանի օրինակներ այս բոլորից. քաղաք>քյաղաքյ, քահանայ>քյախանայ, քաղցր>քյախցր, քար>քյար, քանի>քյոնի, քրտինք>քյրոտինքյ, քողք>քյօղքյ, քուն>քյուն, քենի>քյենի, քիթ>քյիթ և այլն:

244. Բառակզրում ք-ն փոփոխվում է հաջորդ ձայնավորի կամ բաղաձայնի համեմատ, հետևյալ ձևով:

Քանզ- նախադրության մեջ հաջորդական տ-ի մոտ դառնում է չ (քանզ>չոնձ). սակայն քանի>քյոնի բառի մեջ նույն փոփոխությունը դեռ չի կատարվել:

Հաջորդական ս և շ սուլող ձայներից առաջ դառնում է կ. այսպես են քսան>կսան, քսել>կսել, քշել>կշել: Ուրիշ օրինակ չկա:—Քսակ բառը ստանալով քյիսիկ ձևը, միջնորդ ձայնավորի պատճառով ազատ է մնացել նույն ձայնափոխությունից:

Քշոց եկեղեցական գործիքը, որ նախապես գործածվել է իբրև խկապես քշոց, սկիհի վրայից ճանճերը քշելու համար, հետագայում իր այս նպատակը կորցնելով և գործածվելով իբրև երաժշտական գործիք, չի կոչվել այլևս *կշոց, այլ խշոց! (խշխը-շացնելու գործիք):

Քիմք բառը դարձել է կմունգյ. օր. կմունգյ քոպլ «կատիկին թռավ (կերածը, խմածը)», կմունգյ էներ ի «կատիկը կախվել է»:

245. Բառամիջում, ձայնավորից (նաև ը ձայնավորից) առաջ ք-ն դառնում է քյ. եղած օրինակներն են՝ աղքատ>ախքատ, աքիս>աքյիս, բորբոքել>պէօրպնքել, զոքանչ>զէօքյանչ, թքանել>թքյել, կնքել>կրնքյել, կնքաւոր>քյավոր, կքիլ>կրքյել, մաքի>մաքյի, մորմոքիլ>մէօրմընքյալ, շաքար>շաքյոռ, չորեք-

շարթի>չէօթօքյըշպոթ, ցամաքիլ>ցամբյել, քրքրել>քյըրքյըրել,
բոյր>բյոն:

Բացառարար ունենք նաև զոքանչ>զէօշանչ, ուր ք-ն դար-
ձել է չ՝ ազդեցությամբ վերջաձայնի:

246. Բառամիջուժ, բաղաձայնից առաջ ք-ն դառնում է
հյ. սրա համար ունենք միայն երկու օրինակ. այն է աքլոր>
ահյլէօր, բայց կան նաև բազմաթիվ անկանոն հոգնակիներ, որ
տես § 270, նաև § 95. մնացյալ բոլոր դեպքերում, ինչպես տեսանք,
ք-ն գտնվում է կամ ձայնավորից առաջ և կամ ը ձայնավորով
բաժանվում է բաղաձայնից:

Միայն վ բաղաձայնից առաջ ք-ն չի փոխվում և չի դառնում
հյ. ինչ. յօնքեր>ընքյվեր: Բայց տես պայնպրհյվել. ավելի լավ է
պահյպրհյվել «պաշպչորել», որ պազ-պագանել բառի կրկնավորն է:

247. Բառավերջում ք-ն դառնում է քյ նախ այն դեպքում,
երբ գտնվում է անմիջապես ձայնավորից հետո. օրինակներն են՝
աղիք>աղիքյ, առիք>առիքյ, բուք>պիքյ, երեք>իրեքյ, թա-
նաք>թոմոքյ, թուք>թիքյ, թոք>թոքյ, հերիք>խէրիքյ, շուք
շիւքյ, տաք>տաքյ, ցամաք>ցամաքյ, քաղաք>քյաղաքյ, քաք>
քյոքյ:

248. Բառավերջի ք-ն դառնում է նույնպես քյ, երբ վեր-
ջավանկի ձայնավորի և ք-ի միջև կա միայն մի ոնգական (ն, մ).
եղած օրինակներն են՝ աղաչանք>աղանոքյ, անկողին>ցյօղ-
վէնքյ, ապրանք>ապրանքյ, արարմունք>արմունքյ, արտա-
սուք>առցունքյ, բազումք (բոյլք) պոզիւմքյ, երկանք>էրկանքյ,
երկինք>էրկինքյ, զարդարանք>զորտորտնքյ, թամբ>թամքյ,
ինքն>ինքյ, կնուք>կնունքյ, համարանք>խամբրանքյ, մեք>
մենքյ, յոնք>ունքյ, ընքյվեր, խղճմտանք>խըղմտանքյ, պատանք
>պատանքյ, սեամ>շենքյ, վանք>վոնքյ, փորձանք>փորձանքյ,
օրէնք>օրէնքյ:

Բացառություն է կազմում հրամանք>խրամանք ի, որ և
հրամանք ի. վերջինս ցույց է տալիս, որ բառը փոխառյալ է
ուրիշ բարբառից, այսպես նաև հրամէ:

249. Բառավերջի ք-ն դառնում է նմանապես քյ, եթե ձայ-
նավորից բաժանված է լ, ք, ո, խ, ֆ բաղաձայններով. եղած օրի-
նակներն են՝ գիրք>կյիրքյ, դժոխք>տժխքյ, խելք>խելքյ, կա-
շառք>կաշառքյ, հաւ>խավքյ, ձեռք>ձեռքյ, ձեղք>ճեխքյ, քօղ>

քյօղքյ, մեղք>մեխքյ, շնորհք>շնոխքյ, պատկեր>պատկերքյ,
տեսիւք>տէգէլքյ, փառք>փառքյ, քայլք>քյէլքյ, վայելք>
վէլքյ:

Բացառութիւն է միայն պատրիարք>պատրիրարք, որ նոր
փոխառութիւն է գրականից:

250. Իսկ եթէ վերջաձայն ք-ն բաժանված է ձայնավորից
դ, թ, տ, ծ, ց, ս, շ, չ բաղաձայններով, ք-ն մնում է անփոփոխ
(և չի դառնում քմային քյ): Այս դեպքում ք-ն կարող է հնչվել
իրևե կ: Եղած օրինակներն են՝ աղօթք>աղօթկ, աղօցկ, անդունդ
>անդունդք, անէծք>անէծք, աչք>աչք, արարմունք>էրուքք,
խօսք>խօսք, հրաշք>խրաշկ, ձիպո>նպետք, մէջք>մէշք, միտք
>միթկ, պարտք>պառտք, պէտք>պէտք, վարձք>վառցք, շարժք
>ժոժք, ժոժկ:

251. Անեզական բառերի ք վերջավորութիւնը մի քանի
տեղ փոխանակված է հայցականի ա-ով: Այսպես են բաղանիք>
պողնիս, բանալիք>պալնիս, բանկք>պայնս «առասպել», երգիք>
էրաիս, թաղիք>քաղիս, հարսանիք>խարսնիս, մօրութք>մուրուս,
չորք>չորս, պահք>պաիս, տանիք>տանիս, խափս տալ «խա-
բել», ոփս էթալ «մանկան չորեքթաթ տալը», փէլս տալ «փայլել»:—
Փութս բառի մեջ քս միանալով անսովոր կերպով տվել է փիլզ:

Երկու դեպքում էլ բառավերջի անեզական իք վերջավորու-
թիւնը շփոթված և վերածված է իկ փաղաքշականին. այսպես
են կայոիք «ատամներ»>կեոիկ և նաւակատիք, որ բառի առաջին
մասն էլ կորցնելով պարձել է կատիկ:

ՍՂՈՒՄ

252. Սղում ասելով հասկանում ենք ձայնավորների անկման
դեպքերը: Այսպիսի դեպքերի մասին խոսել ենք վերը՝ բազմա-
վանկ բառերի միջին ձայնավորի անկման առթիվ: Իսկ հոլով-
ման ժամանակ տեղի ունեցած սղման մասին խոսելու ենք ստորև:

Այստեղ հիշում ենք միայն ձայնավորների անկման մի
քանի անսովոր դեպքեր, որոնք են.

լակել>լակել, լկել

ծիծաղիլ>ծծղալ

շալակ>շլոկ

ծիճեռակ>ճճրոճէկ

հեղեղ>խղեղ

թրթեռնիկ>թթրոնէկ

հրամայեա՛ս > խրամէ
անօս ր > ցօ՛ւրք
պատուհան > պատխան

պուրակ > պրակ
պատինջան > պատընջոն
տանտիկին > տանդըկին

ԱՆԿՈՒՄ

253. Անկում կոչում ենք բաղաձայնների անկանոն կորուստը. այդ դեպքերը դասավորում ենք այստեղ ըստ կորած բաղաձայնի։
Բ.— երբ > յէփ, ջրաղաց > ճողաց, կրճատ > կնատ, կարժ > կաժ, դուրս > տիւս, գրսից > տասնց, օրհնել > օխնել, խարշել > խաշել, քարշել > քյաշել, արարմունք > արմուքյ (լրութք), երթալ > էրթալ, էթալ (այսպես նաև Երևանի բարբառում), սերկեիլ > սիկիվիլ, շնորհք > շնոխքյ, շնորհաւոր > շնախաւոր, սուրբ > սըփ, ճանապարհ > ճոմքոխ (սեռ. ճոմխի), արժել > աժել, արժան > էժոն, արջառ > առոռ, կարենամ > կանամ, կարցա (կառցա) = կացա, զարնել > զոննել, շարժ > ժոժ. — ր-ի անկման օրինակներ են բառավերջում պե < բեր, կե < կեր, իպե < երեր։

Բ-ի անկման զարմանալի օրինակ է ներկայացնում բերան > պէրան բառը, որ թեև այս վիճակում պահում է իր ք ձայնը, բայց հոլովվելիս սղված ձևերում կորցնում է. Այսպես՝

Պէնին իրիշկա (բերնին նայիք)։

Էրկու պէնէն սուր (երկու բերանից սուր, երկսայրի)։

Պէնէս խօսք էր փոթալ։

Գյոմ պէնից (պէնէն) չխանես։

Խանեց գյոմն ինոր պէնից։

Խորի պէնի վէրէն (ջրհորի բերնի վրա)։

Հ.— հավատալ > աւատալ, աշխարհ > աշխար, խոնարհ > խոնար, հիւս > ուսի, սկիհ > սկի։

Ս.— սկեսուր > կիսուր, սկեսրայր > կէսրէր, ստեպղին > տապղին, սպտուր > պտրտուր, սպաս > քօրվան պաս։

Տ.— աստված > ասպած, աստուածածին > ասվածածին, ասպարածին, հեշտարան > խէշտրան, խէշրան, նաև ճիպոն > ճպեոտք, սեռ. ճպըոքյի, մըտցընել, խատուցել ծապանել, գիտացի > կիցա ձևերի մեջ, որոնց մեջ տ-ն ընկած է. Զուխտ բառի մեջ տ-ն մնում է, բայց երբ ասում են ջջուխ սէվ տրորք տ-ն ընկնում է։

Մ.—բազումք (բուլլք) > պողիւմք, բայց նաև պողիւկ. օր. պողիւկն էլով «բուլլքը ծագեց»:

Ն.—նմանիւ > նմանել, մանել, նշան տալ > շանց տալ, ապաւէն + մեռ > ապավամեռ, էմէկէլ «մյուս» (փխ. էմէկէլ), բռնել > պռնել (օր. տէմ պռեց), մնալ > մնալ, կտր. մնացի, բայց գ. մացի, որին համապատասխան է գալիս Պոլսի բարբառով գնալ > կտր. գացի, գացիր, բայց երրորդ դեմքը գնաց:

Ք.—ներքս > ներս, ներսի, փուքս > փիւզ, չորեքշաբթի > չէօրէօշաբթ:

Խ.—խորիսիւ > խորիս:

Ռ.—առնել > առնել.

Կ, կն, նգ, նկ.—ծմակ > ծմո, թիկն տալ, թիկնել > թիյ տալ, թիմել, ցնկնել > ցիմել, անկանիւ > իյնել, գտնգատիւ > կյոյտել, բանկնս > պայնս «առաւակել», կնքաւոր > քյավոր, կանգնիւ > կայնել (սրանց մասին տես § 133), զարկանիւ > զոմնել. տես և § 134:

Ղ.—աղեղնակ > աճաճակ, ուղղորդ > աղորթ, թողուլ > քողմել, քօնել (օր. կթօնի, չթօնե, չեմ թօնե), իւղահալ > յէղախալ կամ յէխալ:

Ք կամ պ.—ճանապարհ > նոմբոխ, սեռ. նոմխի (գյուղերում կա պահված նոմբխի ձևը), թամբք > քամբք:

Դ.—հիւանդացայ > խիվընցա, խիվընձո ձևի մեջ դ-ն ընկել է բաղաձայնների խճողման պատճառով:

Ուժեղ կրճատման օրինակ է փողանդուռ բառը, որ հաճախական գործածությամբ դարձել է փօնաուռ «փողոցի գուռը»:

Սուրբ բառը հաճախական գործածության պատճառով այնքան մաշվել է, որ մնացել է միայն առաջին բաղաձայնը. օր. Սը Վարթան (Պանդուխտ վանքին, էջ 100):

Բառից բառ ևս լինում են կրճատման դեպքեր. օր. զոտ «իր. բան» բառի վերջաձայնը կրճատվելով նախադասության մեջ դառնում է զո. ինչ. ուր զո չեմ իտա (իրեն ոչինչ չեն տալիս). զո չկա «ոչինչ չկա». զո չեմ ուզե «ոչինչ չեմ ուզում»:

Կրճատման այլ օրինակներ են՝ խաթմամա (փխ. խաթունմամա), տարիքով մեծ տիկիներին տրված կոչական. պսմամա (փխ. պստիկ մամա) «սորաքույր»:

ն/լ.— անալի>ալնի,
բանալի>պոլնիս.

ն/կ.— ունկի>նուկի.
խ/ս.— խստոր>սխտոր.
ս/խ.— փսխել>փխսել.
լ/ռ.— խելոռկ>խելոլուկ
«հիմար».

լ/վ.— լուանալ, լվալ>վլալ.

վ/լ.— վալեկել>վէլել, լէվել.
ը/վ.— ցրուել>ցվրել.

թ/խ.— թթխմոր>թրթրմոր.
ճ/խ.— ճախին>խանին.
ղ/ր.— ուղարկել>էօրէօխել.
պ/ր.— ապարանջան>արպընջոն,
ապըշում>արպշում.

տ/գ.— տարգալ>կտէլ.

ը (փոխադրված առաջին վանկը). — դատարկ > տոտակ,
կամուրջ>կարմունջ, կապերտ>կարպետ, սեսուրը>սէրսիւփ, խա-
չերկաթ>խառնէկաթ, Հմմտ. նաև սպիտակ>սիվտակ, լարծ(տ)իլ>
լպգարալ:

ը-ի և վ-ի տեղափոխութեան հետաքրքիր օրինակ է աւերել և
ցրվել բայերից կազմված հանգավոր ավիր-ցվիր կամ արիվ-ցրիվ
տալ ոճը, որ է «ավերել ու ցրել»:

Ամբողջ բառի շրջման համար օրինակ ունենք գյուղական
բարբառով քօչ «ծունկ», հոգ. քօչվեր «ծնկներ», որի դեմ քաղաքն
ունի շէօքվեր. օր. Լալայան, Վասպուր. 1912, էջ 144—Ձին քօչվերն
իզարկ գլխտին:

ՀԱՎԵԼՈՒՄ

255. Առաջին հերթին պիտի հիշենք այն անեղական բառերը,
որոնք սովորական չեն բոլոր բարբառներին: Այսպես են՝ աթոռ>
աթոռք, անկողին>գյօղվէնք, բարեկենդաւ> պտրկէնդոնք,
սեամ>շնմք, պատկեր>պատկերք, թամբ>թամք (անցած
թամբք ձեից), կշիւ>կշեռք, հաւ>խաֆք, նշխար>նշխարք,
շնորհք>շնոխք, ճիպո>նպետք, քօղ>քյօղք:

Երկրորդ՝ իկ մասնիկով ձևացած բառերը. ինչ. աղաւնի>
յէղունիկ, արտոյտ>արտուտիկ, ոգնի>վոգնիկ, որթ, հորթ>վոր-
թիկ, երինջ>էրէնջիկ, այր>իրիկ, հայելի>խայլիկ, բիբ>պիպիկ,
երանի>էրանէկ, ճօճք>նօնիկ, մատանի>մատնիկ, ուլն, ուլունք

Նույնիկ, մարմար(իոն)՝ մորմորիկ, ոտն՝ սանիկ, պապ՝ պապիկ, մամ՝ մամիկ, մողէգ՝ մողոզիկ, կամ մասնիկի ձևը փոխած՝ քսակ՝ քիսիկ, մլուկ՝ մլիկ, մատուտակ՝ մատուտիկ, մժեղ՝ մժիկ, ծնծղայ՝ ցընծղակ, նաև ցիւն թռչունի անունից՝ կոր-ցընընէկ:

256. Ավելի քիչ պատահող ձևեր են՝

ն.— մեք՝ մենք, փոթ՝ փոնք, եղիճ՝ յեղինջ, կամուրջ՝ կարմունջ, գտանել՝ կընդենել, մած՝ մանջ, յիշոց՝ իշունց, ուշունց, մորմոքիլ՝ մէօրմըքյալ, բորրոքել՝ պէօրպընքյել, կրուկն՝ կրունգյ, սրսկել՝ սըրսընքյել, արտասուք՝ առտսունքյ, արմուկն՝ արմունգյ (նախ դարձած արմուկ), լի՝ իլին, սարադուճ՝ սարադունջ, տարածել՝ ծըրնծել (§ 124, 218)։

ր.— ցած՝ ցածր (նմանությամբ բարձր բառի), վազել՝ վտրզել, նապաստակ՝ լապըստրակ, հանգոց՝ խանգյոց (ը վերածված ո՛հ հաջորդ ց-ի պատճառով), պատրիարք՝ պատրիարք (նախասության օրէնքով), ածելի՝ արծըլի, լօշտակ՝ լօշտրակ, կրեայ՝ կըրըրա:— Իսկ խանձիլ՝ խոնձընլ բայի մեջ ոչ թէ ր-ն հավելում է, այլ այդ բայը կազմված է խանձիւ արմատից։

տ, դ.— շրէշ՝ շրէշտ, ճպիտ՝ ճպեոտք, կալամաս՝ կալամաստ, ծանր՝ ծանդըր, ծունր՝ ծո՛ւնդըր։

վ.— տալ՝ տալվ (զանազանելու համար տալ բայից, բայց գրվում է միայն ուղղականում), անկողին՝ գյօզվէնքյ։

մ.— ունջ «մուր» բառից կուզմված է մունջկաք։

բ.— արմաւ՝ տմբրտվ, համարել՝ խամբել, համարանք՝ խամբրանքյ։

հ.— այր (քարայր)՝ հէր, է՞ր՝ հէ՞ր, անթ, անութ՝ հիւնք, անթել՝ հըրնթել, օգն՝ էօքյ, հէօքյ, ամէն՝ հըմէն (որ և գըմէն)։— Արօր բառը դարձել է նախ հարօր, ապա խարօր։ Նույն հ հավելվածը գտնում ենք նաև ալեոր և ագանիլ բառերի վրա, բայց վերածված խ-ի (խալիվոր, խայնել)։ Սա նշան է որ հավելումը տեղի էր ունեցել ամբողջ հայության մեջ, երբ դեռ հ-ն չէր դարձել խ։

Կ ավելացել է իշխել բայի սկիզբը և անշուշտ սահմանական ներկայի կ մասնիկն է (հմտ. եռալ՝ Պլ. գէռալ)։

257. Ձայնավորներից իբր հավելում ունենք՝

ի.— լի՝ իլին, ձգել՝ իսկել, յստակ՝ իստակ, որից յստակել՝ իստրկել, շուար՝ շիվար, ցնկնել՝ ցիւնել։

ո.— ոսկը՝ ուսկոռ։

ա. — նօթի>անօթի.

օ. — թակ>օթակ:

Իսկ թիթեռնիկ բառը ուի հավելումով դարձել է բրոքրոնէկ, որով վերածվել է կրկնավորի: Միծեռնակ բառի մեջ նույնպիսի հավելում տեղի չի ունեցել և բառը մնում է ճնրոնէկ.

ԱՅՂԱԶՍՏՆԻ ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ

258. Առհասարակ կրկնության երևույթ չկա Վանի բարբառում: Եթե ուրիշ բարբառներում միջին ձայնավորի անկումով ստացվել են կրկնակ բաղաձայններ, Վանի բարբառը նրանց միջև մի ձայնավոր կամ զոնե մի ք գնելով խուսափել է: Այսպես ունենք փթթիլ>փրթրթել, օրօրել>ուրուրել, փաթաթել>փոթիւթել (=Պլ. փաթթել), սպտուր>պըտըտուր, ցին>կոր-ցընընէկ, կրեայ>կըրըրա: Հնից մնացած կրկնություններ են միայն Կգում>տըտիւմ, ժժան>ծըծոն, թթու>թըթիւ, ծծել>ծըծել, և նոր ձևացած՝ ծիծաղիլ>ծծղալ, ծիծեռնակ>նընըռնէկ, բոլորն էլ անջատված ք ձայնավորով:

Միմիայն ամեն բառը, որ իբրև սաստկական գրեթե ամեն տեղ դարձել է ամմէն, Վանի բարբառումն էլ թեև ընդհանրապես մնում է մի միակ մ-ով (ք. հըմէն, գ. զըմէն), բայց սաստկության ժամանակ դառնում է հըմմէն, զըմմէն:

Նմանապես ժոծ-ծեխ, որ երկու տարբեր բառերից կազմված կրկնական է, կրկնակ ժ-երից խուսափելու համար սղված և դարձած է ժո-ծեխ:

Ամբողջ բառացանկում ունենք միայն անագանիլ>ռեկյընեալ «ուշանալ» բայը, ուր հանդիպում ենք բաղաձայնների կրկնությունը:

259. Դեպքեր են լինում, երբ որոշ բաղաձայնով վերջացող մի բառ կցվում է նույն բաղաձայնով սկսվող մի մասնիկի հետ: Այսպիսով ստացվում է կրկնակ բաղաձայն: Վանի բարբառը խուսափում է դրանից՝ չստանալու համար կրկնակ բաղաձայնը: Այսպես՝ թվականներից 20, 30, 40, 50, 60 վերջանում են և բաղաձայնով. սրանց չափականը կազմվում է նոց մասնիկով և ուրիշ բարբառներում ունենք քսաննոց, էոսուննոց և այլն ձևերը: Վանի բարբառը ասում է կսանոց, յեոսունոց, քյաոսունոց, իսու-

նոց, վաթսունոց, որոնց մեջ մասնիկն է ոց և կրկնակ և վերաց-ված է:

Երբ և վերջացող մի ածականով հարկ լինի կազմել -նալ մասնիկով անվանական բայ, իսկույն ա հոգակապը գալիս է և ջնջում կրկնակ և բաղաձայնը. օր. հին>խին, որից հնանալ>խնանալ, և հչ թե խիննալ (հիննալ), ինչպես գտնում ենք կը ճյուղի ուրիշ բարբառներում:

Երբ և վերջացող մի բառ հոգնակի դառնա -ներ մասնիկով, ներ-ի տեղը կդրվի տեր և կրկնակ բաղաձայնը կվերանա: Նույնը նաև ը ձայնավորի միջոցով. օր. շուշան—հոգ. շուշայտեր, անուն—հոգ. անվրներ, անիկյտեր:

Հոլովման ժամանակ սղման միջոցով կարող են երկու բաղաձայն իրար մոտ ընկնել. ը ձայնավորը իսկույն հասնում է բաժանելու համար նրանք իրարից. օր. հոփի>խօփիվ, սեռ. խօփվու, բայց ավելի լավ՝ խօփվու:

Ավելորդ է ասել թե սաստկության համար դրված կրկնակ բաղաձայններ, որոնց պատահում ենք այլ բարբառներում, չկան այստեղ. օր. վազել—վազզել, քսան—քսսան և այլն, և այլն:

ԱՅԼԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

260. Վանի բարբառում բոլորովին այլափոխված բառերն են հետևյալները.

Սարգոստայն>սարանդէօստիկ, ուր ո՛չ միայն ունենք -իկ մասնիկի հավելումը, այլև բոլոր ձայնավորների և ն/տ բաղաձայնների տեղափոխությունը:

Ջրյորդան>նօոօրան, նօլօտրան, այնքան է ձևափոխված, որ անհնարին պիտի լինեի ճանաչել նախաձևը, եթե չլինեին բարբառային բազմազան ձևերը (սրանց թվումը տես Արմ. բառ.):

Հետ իրերաց>խտրոց, չափազանց շատ գործածված մի ձև լինելու պատճառով՝ իրար միացած, ձայնավորները սղված և մի բառի է վերածված:

Նաւակատիք>կատիկ. իրանականից փոխառյալ բառ է, որի մայր ձևը չի ավանդված. հայտնի է միայն բառի առաջին եզրը նաւա, որ է իրան. nava—ճնորք. Հայերենում այս բառը անհզական է և սեռ. լինում է նաւակատեաց, հյց. նաւակատիս. Վանի բարբառը դեն է գցել բառի առաջին եզրը, անհզականը դարձրել

է եզակի, հոգնակիի վերջավորութիւնը վերածելով իկ փաղաքշահանի:

Պղպջակ > պօղօնակ, բայր՝ պօղօնկել, օղօնկել, որոնց ընդարձակ բացատրութիւնը տես Արմ. բառ. Ե. 1085.

Սաղամանդր «մի տեսակ մողես, որ իբրեւ թե կրակի դիմանում է»։ գրված է նաև սալամանդրա (Լմբ. իմ.) և փոխառյալ է հուն. salamandra ձևից: Գրականութեան մեջ ստացել է առասպելական հատկութիւն: Թվում է թե սրա հետ նույն է Մկ. ստլոտրոնա, որ նշանակում է «խեչափառ»։ սրա հետ նույն է Վն. սալատրանա (տ-ով և ո՛չ դ), որ նշանակում է «սատանա, վարպետորդի, շատ ճարպիկ և խորամանկ»: Իմաստի զարգացման համար հմմտ. սատանա, որ Ազլ. Ազա. Դվ. Մրդ. Մլմ. նշանակում է «սարդ»: Նույնից է կազմված Վն. սալատրվել «հարձակման պատրաստվել»:

Միհչե > Վն. չում, չուր. սրանց կազմութեան մասին ընդարձակ խոսված է Արմ. բառ. Դ. 1042:

Հիմի, հիմիկ > Վն. մկա, որի մասին տես Արմ. բառ. Դ. 249:

Թեթե > Վն. քեվքըր, կազմված է նախ տեղափոխութեամբ և ապա ավելացնելով ր, որ առաջացել է ծանր > ծա՛նդը բառի նմանողութեամբ: Սակայն վերջինիս մեջ գրված է դ՝ նախորդ ռնգականի պատճառով. իսկ այստեղ մնում է ք, որովհետև չկա նախավոր ռնգական (տես § 24).

Լեղի բառը երկու ձև է ստացել Վանի բարբառում: Նախ՝ Լեղի գոյական է և ցույց է տալիս լեզապարկը կամ այնտեղից վազած հեղուկը (մաղձը). երկրորդ՝ ածական է և «դառն» ընդհանուր իմաստն ունի. Հայերեն գրական լեզուն այս երկուսը ձևով չի զանազանում: Վանի բարբառը տարբերելով այդ երկուսը իրարից, առաջինի համար պահում է լեղի ձևը, երկրորդի համար հնարել է լեղու, որի ու մասնիկը վերացրած պիտի լինի հյ. կծու, քրու, և մանավանդ թրք. աղու «դառն» հոմանիշից:

ՃԱՅՆԱԿԱՐԵՐԻ ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹՅՈՒՆ

261. Վանի բարբառում արդյոք կա ձայնավորների ներդաշնակութեան օրենքը:

Վանի բարբառը այնպիսիներից չէ, որ չափազանց ազդված են թուրքերենից. Բայց բարբառը կարող էր առանց թուրքերենի

ազդեցութեան ենթարկվելու էլ, ինքնաբերաբար ձևակերպել իր մեջ այդ օրենքը:

Կան մի խումբ բառեր, որոնք ցույց են տալիս մեզ այս երևույթը. օր. ազուգայ>ուկյիւկյո, փաթաթել>փոթիւթել, քարաթոթոշ>քյոոթթթօշ. երգումն>էօթիւմ, բայց կան ուրիշ բառեր էլ, որոնք չեն ենթարկվում այդպիսի օրենքի (օր. որբւայրի>վոպէօվերի, ծառաբար>ծառգոթոթր):

262. Ավելի մոտիկից քննելու համար հարցը, ես հավաքեցի երեք հատկանշական երևույթի վերաբերյալ բոլոր օրինակները:

ա) Այն բոլոր բառերը, որոնք ունեն իրենց մեջ իւ ձայնավորը և նրա հետ միասին ա կամ ո ձայնավորը. Բոլորի թիվն է 14 և բաժանվում են երկու խմբի.

ազուգայ>ուկյիւկյո

ալիւր>ուլիւր

աղբիւր>ուփալիւր

արթուն>ուրթիւն

բազուկ>պոզիւկ

բազումք>պոզիւմք

գարուն>կյոթիւն

փաթաթել>փոթիւթել

փափուկ>փոփիւկ

բարունակ>պոբիւնակ

գութան>գլիւքան

լուսնակ>լիւնակ

համբուրել>խամբիւրել

հանելուկ>խանելիւկ

14 բառից ինը ենթարկվում է ձայնավորների ներդաշնակութեան օրենքին, հինգը ոչ:

բ) Այն բոլոր բառերը, որոնք ունեն իրենց մեջ էօ և նրա հետ էլ ա կամ ո.

աքոռ>անյլէօր

բարե>պարեօվ

գողալ>տէօղալ

զոքանչ>զէօքանչ

մորմոքիւ>մէօրմըքյալ

յօրանալ>հէօոանալ

սարգոստայն>սարանդէօստիկ

գովել>կյէօվալ

քարաթոթոշ>քյոոթթթօշ

չորեքշաբթի>չէօթէօշպոթ

Բոլորի թիվն է 10, որից երեքը ենթարկվում է օրենքին, 7 ոչ:

գ) Կան երկու և ավելի վանկանի բառեր, որոնք բաղկացած են ամբողջ ա ձայնավորով (օր. ամպառապան), կամ ամբողջ

տ ձայնավորով (կորտով). սրանք մեր հարցի համար հակառակ կարծիք չեն տալիս. ես հավաքեցի այն բոլոր բաները, որոնք ունեն տարբեր տեսակի ա: Ահա դրանց ցուցակը.

աղաչանք > աղանձոց
անագանի > թնկյուննալ
ապարանջան > արպրնջոն
արժգովն > արեկյով
բաղարջ > պողառն
բառնալ > պողոնալ
բարեկամ > պորեկամ
բարկանալ > պորկանալ
բարունակ > պորինակ
դատաստան > տոտոստան

դատարկ > տոտոնակ
դառնալ > տոռնալ
դարման > դորման
խանձրահամ > խոնձրախամ
ծառզարգար > ծառզորտոր
շատրուան > շտոռովան
պատինջան > պատրնջոն
ջրաղաց > նողաց
սիրամարգ > սինոմախաֆք
վաստակ > վոստակ

21 բառ, որոնք ձայնավորների ներդաշնակության օրենքին հակառակ են:

263. Ձայնավորների նմանության մանր հետքեր են ներկայացնում հետևյալ բառերն էլ.

Գրիգոր > Կյէօրէօ
երդումն > էօրտիւմ

երես > իրես, սեռ. իրիսի
ոլորեկ > էօլէօրեկ

երեք > իրեք, սեռ. իրիքյի

Հետաքրքրական է կանկար բառը, որի հնագույն բարբառային ձևն է կանգյոռ, այժմ սովորական է դարձել կոնգյոռ: Ըստ Աճառյանի օրենքի բառի իսկական ձևն է առաջինը, որովհետև փ-ից հետո պահանջվում է ա. բայց երկրորդ վանկի ազդեցությամբ դարձել է ո: Այս հայացքով կարելի է այժմ բացատրել նաև կոնջրոկ և կորտով բառերի նախափանկի անկանոն տ ձայնը:

Ամենից ավելի ո կամ օ ձայնավորն է, որ հետևելով հաջորդ ու ձայնավորին, ինքն էլ վերածվում է ու-ի. օր. ամօթ > ամօթ բառից ամութութե՛ն, հօր որդի > խօր վորտի ձևից՝ խօրվորութե՛ն «հարազատություն», նօթի > անօթի (բայց և անութի), որից անութութե՛ն «քաղցից»: Այս մասին տես հատկապես § 320:

Իրաց այս վիճակում մենք առառավելն կարող ենք ապել ուրեմն, թե Վանի բարբառում սկսել է զործել ձայնավորների ներդաշնակության օրենքը, բայց իր վախճանին չի հասել:

264. Զայնավորների փոփոխությունը կարող ենք ամփոփել հետևյալ ձևով.

Ա ձայնավորը ստանում է երկու ձև. նախկին թրթռուն բաղաձայններից հետո դառնում է ա, իսկ խուլերից հետո մնում է ա. Երեք և ավելի վանկանի բառերի միջին ա-ն ջնջվում է:

Ե ձայնավորը միավանկ բառերի սկզբում դառնում է յե, բազմավանկ բառերի սկզբում՝ դ և ո բաղաձայններից առաջ նույնպես յե, իսկ ուրիշ բաղաձայններից առաջ դառնում է «է»:

Վերջավանկում շեշտյալ ե-ն լինում է երկբարբառային ե, միջին վանկերում դառնում է ե, է, ի (առանց որոշ կանոնի), իսկ բազմավանկ բառերի մեջադից ընկնում է:

Ի ընդհանրապես մնում է անփոփոխ:

Ո ձայնավորը միավանկ և երկավանկ բառերի սկզբում լինում է վո, բազմավանկ բառերի սկզբում օ, միջին վանկերում տատանվում է ո, օ, էօ ձևերի միջև, իսկ վերջավանկում մնում է երկբարբառային ո կամ ձ, քիչ անգամ էլ էօ:

Ու ձայնավորը մնում է ու կամ դառնում իւ (առանց որոշ կանոնի):

Նկատելի է բոլորի մեջ ե, է և ո, օ ձայների զանազանությունը, որ հատուկ է նաև Մշու բարբառին:

Երկբարբառները սովորական կարգով կա՛մ վերածվում են մի միակ ձայնավորի և կա՛մ ձայնավոր + բաղաձայն խմբերի:

Բաղաձայններից թրթռունները վերածվում են պարզ խուլի, քիչ անգամ մնում են թրթռուն, իսկ ուղղակից հետո կանոնավորապես մնում են թրթռուն: Պարզ խուլերը և թավերը մնում են անփոփոխ: Գ և ք ձայները քմայնանալով վերածվում են կյ, քյ. իսկ կ-ն բնավ չի դառնում քմային: Հ շունչը դառնում է միշտ իւ. իսկ դ բաղաձայնը բառասկզբում դառնում է կ:

Ռ շփականը ընդհանրապես մնում է անփոփոխ, իսկ ր-ն մի խումբ բաղաձայններից առաջ կանոնավոր կերպով դառնում է ո:

ՉԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

I. ՀՈԳՆԵԱԿԻՒ ԿԹԶՄՈՒԹՅՈՒՆԸ

265. Վանի բարբառում միավանկ բառերի հոգնակին կազմըվում է եր մասնիկով. ինչ.

հաց>խաց, խացեր	ափն>ափ, ափեր (գետի)
հող>խող, խողեր	հաւ>խավք, խավքեր
խոզ>խոզ, խոզեր	«թռչուններ»
լոյս>լոս, լոսեր	ծիւն>ծիւն, ծներ
ոսպն>վոսփ, վոսփեր	սիւն>սուն, սներ
ոյժ>վոժ, վոժեր	շուն>շուն, շներ
խաղ>խաղ, խաղեր	տուն>տուն, տներ
կոյ>կու, կույեր	տալ>տալվ, տալվեր
որձ>վոռց, վոռցեր	գայլ>կյէլ, կյէլեր
աղբ>ախփ, ախփեր	լու>լիւ, լվեր
արջ>առչ, առչեր	ձու>ծիւ, ծվեր
ափ>ափ, ափեր	

266. Այն բառերը՝ որ գրաբարում ունեն վերջաձայն և հանգը, հոգնակիում կարող են վերստանալ նույն հանգը. օր.

ափն «եզերք»>ափ, ափնիք, ափներ	գուռն>տուռ, տոներ
ալին(ջրի)>ակ, ակներ, ակնունք	մուկն>մուկ, մկներ
եզն>յեզ, յեզներ	հիւսն>խուս, խսներ
գառն>կյառ, կյառներ	նուռն>նուռ, նոներ
հարսն>խարս, խարսներ	մատն>մատ, մատներ

Նույնիսկ այլ կարգի բառեր կարող են այս ձևով հոգնակի կազմել, ինչ.

Թումբ>թիւմբ, սեռ. թմբոն, բց. թմբնից, թմբներ:

267. Միավանկ բառերի ծայրին կարող են երբեմն թե ք և թե -եր մասնիկները միասին երևալ. ինչ.

ձեռք>ձեռ, ձեռքյ, ձեռքեր ոտն>վոտ, վոտքեր կամ վոտկեր (չկան ձեռներ և ոտներ ձևերը)

Միավանկ աչք բառը ստացել է ը ձայնավորը, դարձել է երկավանկ և ըստ այսմ ստացել է հոգնակիի -ներ մասնիկը (աչկըներ): Բայց բարբառը զանազանում է աչկեր (տեսանելիք) և աչկըներ (պատի վրա դարակներ և այլն): Սրա նման ունենք ակընչկըներ «ականջներ», մատկեր, մատկըներ «մատներ», որոնց կը մասը կարծես թե գրաբարի ք հոգնակերտ մասնիկն է: Այս բանը հայտնի երևում է մէշկըներ բառից, որ նշանակում է «մէշերին, նրանց մէջ»:

268. Ամեն բազմավանկ բառ, որ վերջանում է բաղաձայնով (բացի ն-ից), հոգնակին կազմում է -ներ մասնիկով. ինչ.

լակոտ>լակոտ, լակոտներ	կաքաւ>կաքյավ, կաքյավներ,
կարիճ>կարիճ, կարիճներ	կաքյվներ
թագաւոր>թակավոր,	արև>արեվ, արիվներ
թակավորներ	եղբայր>ախպէր, ախպէրներ

269. Բաղաձայնը կարող է միանալ ներ մասնիկի հետ նաև վը մասնիկով. ինչ.

ամառն>ամառ, ամառվըներ կամ ամըռվըներ

ցերեկ>ցէրէկ, ցէրէյվըներ

Միավանկ լինելու պատճառով ծունկ բառը այս դեպքում գառնում է հոգ. ծըյվեր, ծիյվեր:

Այս պարագային, եթե բազմավանկ բառը վերջանում է կ բաղաձայնով և նրանից առաջ կա ձայնավոր, այդ կ-ն վերածվում է յ-ի. ինչ.

աղաւնի>յէղունիկ, յէղունիյներ

աղեղնակ «ծիածան»>անանակ, անանայներ

բարակ>պորոկ, պորոյներ

մատանի>մատնիկ, մատնիյներ

այր>իրիկ, իրիյներ

270. Բայց կարող է նաև ը ձայնավորով կապվել Յեր մաս-
նիկի հետ. ինչ. կոիկ «ազոավ», կոկրենք:

Այսպես է նաև, երբ բառը վերջանում է գյ. ինչ.

արմուկն > արմունգյ, արմըյներ

եղունգն > յեղունգյ, յեղըյներ

կրուկ > կրունգյ, կրըյներ

Եթե բազմավանկ բառը վերջանում է քյ բաղաձայնով,
այդ քյ դառնում է հյ. ինչ.

աղաչանք > աղաճոնքյ, աղաճոնհյներ

արտասուք > առտսուկքյ, առտսունհյներ

առիք > տռիքյ, տռիհյներ

բարեկենդան > պորկէնդոնքյ, պարկէնդըհյներ

271. Ամեն մի բազմավանկ բառ, որ վերջանում է ձայնավո-
րով կամ ն բաղաձայնով, հոգնակիում ստանում է -հյտեր մաս-
նիկը, որ առաջանում է *քտեր ձևից. օր.

գինի > կյինի, կյինիհյտեր

հոգի > խոկյի, խոկյիհյտեր

խախիզա «խարխնծի» — խարխզէհյտեր

խորովու > խուրուղու, խուրուղուհյտեր

գերեզման > կյէրէզման, կյէրէզմիհյտեր

մառան > մառան, մառանհյտեր

Բացառիկ ձևեր են՝

անկողին > գյօղվէնքյ, գյօղվէնհյտեր

ճանապարհ > ճոմբոխ, ճոմխիհյտեր

թոնիր > թօնէր, թօրվիհյտեր (նաև թօրվըյտանքյ)

Միավանկ բառերը բնականաբար իրենց հոգնակին կազմում
են առաջին (§ 265) ձևով.

ձայն > ծէն, ծէներ, ձի > ծի, ծիյեր, նույնիսկ ձու > ծիւ
բառը հոգնակիում լինում է խավիծվեր, բայց նաև խավիծիւքյ
և խավիծըվներ, խավըծվրներ.

Միակ բացառությունն է կազմում կիճ բառը, որի հոգնա-
կին լինում է կիհյտեր, կրհյտեր. այսպես նաև կիճ բառով
բարդված բառերը. ինչ.

տանտիկին > տանդըկին, տանդըկըհյտեր

տագերակին > տէկյէրկին, տէկյէրկըհյտեր

քեռակին > քեռկին, քէռկըհյտեր

(Այս վերջին կետի մասին տես և ստորև):

-հյտեր ձևի փոխարեն կա նաև -քյտեր ձևը. ինչ. պերբքյտեր «բերանները», թրք, դիւմբքյտեր «թշնամիներ».

Երբ միավանկ բառը բարդվելով կազմի բազմավանկ բառ, կենթարկվի վերի օրենքին. ինչ.

տնաշէն — տնաշէնհյտեր

ժամտուն — ժամտունհյտեր

272. Ա (տ) վերջացող բառերը հոգնակիում այս վերջավորությունը դարձնում են -էքյ, այն է գրբ. -այք>էքյ. օր.

կասկարայ>կասկարա,

բակլայ>բուլլո, բուլէքյ

կասկարէքյ

փեսայ>փէսա, փէսէքյ

կրեայ>կըրըրա, կըրըրէքյ

ազուգայ>տկյիւլլո,

սատանայ>սատանա, սատանէքյ

տկյիւլլէքյ

խախիզա «խարխնծի» —

ակոայ>ակոա, ակոէքյ

խախիզէքյ

շուշփայ>շուշփա, շուշփէքյ

Այսպես նաև օտար բառերը. ինչ.

շունգյո «ծնոտ» չունգյէքյ

մուշուրբա «ջրի մետաղե

փոշո «տոտրիկ, խաշ», փուշէքյ

բաժակ», մուշուրբէքյ

ալուշա «շլոր», ալուշէքյ

քյէօշո «անկյուն», քյէօշէքյ

փէնջորո «պատուհան»

ֆասուլյա «լոբի», ֆասուլլէքյ

փէնջորէքյ

կոա «խակ սեխ», կոէքյ

մախառնա «թելի կոճ»,

քյըռա «քարքարոտ», քյըռէքյ

մախառնէքյ

Այս բառերը կարող են նաև հոգնակի դառնալ ստանալով -էհյտեր մասնիկը, որ էք+տեր մասնիկների գումարն է. այսպիսով կունենանք եռյակ հոգնակի՝ էք+տի+եր:

Միայն տղայ>տղա բառն է, որ չունի *տղէհյտեր ձևը և չի նույնիսկ տղէքյ կամ տղէնք (վերջինը փաղաքշական տղէկ ձևից):

Հետաքրքրական է անկողին բառը իր տարօրինակ ձևափոխություններով: Այս բառը նախ զրկվելով իր նախավանկից (§ 29) դարձել է գյօղվէքյ, ստանալով «անկողինների ծալք» իմաստը. (պարզ անկողինը այժմ անշնորհք ձևով կոչվում է տեղ-ջիւլ («տեղի չուլ՝ փալաս»):

Այս գյօղվէքյ բառը ըստ կանոնի դառնում է հգ. գյօղվէհյտեր (§ 271). բայց ն-ի անկումով՝ նաև գյօղվէհյտեր. այս

դեպքում ենթարկվել է նաև հգ. գյօղվէք (օր. գյօղվէք հրմէն քալ-նիցին տարան շրջառ անկողինները թալանեցին տարին): Բայց գյօղվէք ձևը կազմվելուց հետո՝ կարծել են ընտանաբար, որ եզակին է գյօղվա, որ այժմ ավելի գործածական ձև է, քան գյօղվէքը:

273. Ի վերջացող բառերը իրենց հոգնակին կազմում են քյ մասնիկով, բայց կարող են նաև նույն քյ-ի վրա ավելացնել նաև տեր մասնիկը, որով ամբողջը դառնում է -հյտեր. օր.

ոսկի > վոսկի, վոսկիք,	ուռի > ուռի, ուռիք, ուռիհյտեր
վոսկիհյտեր	ջորի > ճորի, ճորիք, ճորիհյտեր
որդի > վորտի, վորտիք,	սոնի > սոնի, սոնիք, սոնիհյտեր
վորտիհյտեր	

Նաև օտար բառերից՝

խալի «գորգ», խալիք, խալիհյտեր
գյտմի «նավ», գյտմիք, գյտմիհյտեր

Ի վերջացող բառերը կարող են նաև ջնջել վերջածայն ի ձայնավորը և ավելացնել -ներ մասնիկը. այս դեպքում եթե վերջին բաղաձայնն է կ, դառնում է յ. ինչ. որբեայրի > վոռպէօ-վէրի, վոռպէօվէրներ, կիրակի > կիրակի, կիրայներ:

274. Ու կամ իւ ձայնավորով վերջացող բազմավանկ բառերը իրենց հոգնակին կազմում են քյ մասնիկով. բայց կարող են ստանալ նաև տեր կամ ներ մասնիկը, որի հետ կապվում են վը-ով. այսպես են՝

ածու > ածու, ածուք, ածվւներ, ածքւներ
առու > տառու, տառուք, տառվւներ
թթու > թթիւ, թթիւք, թքթվւներ
լեզու > լեզիւ, լեզիւք, լեզվւներ
կատու > կատու, կատուք, կատվւներ
կծու > կծուհյտեր, կծվւներ
քառթու > քյտռթու, քյտռթուք, քյտռթուհյտեր
բու > կոր-պիւ, կոր-պիւք, կոր-պիւհյտեր

275. Բացի այս կանոնավոր և սովորական ձևերից, Վանի քարբառը գիտե նաև մի խումբ ուրիշ հոգնակի մասնիկներ, որոնք գրաբարի կամ միջին հայերենի մնացորդներ են, ընդհանուր գործածութիւնն չունեն քարբառում, և նրանց հետևում են միայն սակավաթիվ բառեր: Այսպես են՝

-երէնքը.— սուրբ>սուրփ, սրփերէնք (այժմ արդեն անգործածական):

-էստար.— այգի>իկի, էկէստար, — սատանայ>սատանա, սատանէստար (թեւ կան նաեւ սատանէք և սատանէճտար կանոնավոր ձեերը):

-անքը.— ձի>ծի, ծիանք (որ և կրկին հոգնակի դառնալով լինում է ծիանճտեր), ջոջ>ճճճտնք (սովորական դարձված է՝ ճճճտնց խորտոր կա Վնավանդ խոսք է):

-վանքը.— էշ>էշ, իշվանք, — կտոր>կտոր, կտորվանք (սրանք լինում են նաեւ -վանճտեր), տէր>տէր, տիրվանք, նաեւ էնտեղվումք գյուղերում (ու ձայնավորով) Վայն տեղերը:

-ստանք, տանք.— տանիք>տանիս, տանըստանք, փողան փողոց— փողընտանք.— չէօլ—չէօլըստանք.— գոմէշ>գլէօմէշ, գլէօմըշտանք.— թոնիր>թօնէր, թօրվըտանք.— կնքաւոր>քյավոր, քյավորտանք.— քեռի>քեռի, քեռըստանք:

-րանք.— տեղի>տեղ, տեղրանք.— դեհ>դեհ «կողմ», դեխրանք.— դեղ>տեղ, տեղրանք «գեղորայք», — գիւղ>կյեղ, կյեղրանք «գյուղորայք», կող>կող, կողրանք. սրանք լինում են նաեւ տեղրանճտեր, տեղրանճներ, տեղերանք և այլն:

-տար.— գոմէշ>գլէօմէշ, կլէօմըշտար (գյուղերում). նաեւ ճոմխիճտար Վանապարհներ:

-վեր.— ջիղ>ճեղ, ճեղվեր.— յօնք>ունք, ընքվեր, ճանկ>ճանգ, ճայվեր, ծունկ>ծունգ, ծըլվեր, ծիլվեր, անութ>հիւնթ, հընթեր, հընթվեր, լինդ>լինդ, լընդվեր, ծիծ>ծիծ, ծծվեր, նույնիսկ թրք. ճօk բառից՝ շէօքվեր կամ շէօհվեր «ծնկներ», որի դեմ գյուղական բարբառում գտնում ենք շրջված ձևով քօշվեր «ծընկներ» (Լալայան, Վասպուր. 1912, 144) (ինչպես տեսնում ենք, այս բոլորը մարմնի մասեր են):

Ավերի անսովոր ձև է նճաղէքյտեկ «մեծ աղաներ», որի սեռականն էլ լինում է նճաղէքյտեկաց: Այստեղ հոգնակիի մասնիկն է (բացի -էք մասնիկից) նաեւ տեկ. նույնը գտնում ենք տղէկտեկաց գյուղական ձևի մեջ. Ուրիշ են տղէկնեկաց, տղէյնեկաց ձևերը, որոնց մեջ նեկ<*նեակ փաղաքական մասնիկ է:

276. Այն բոլոր բառերը, որոնք հղուման ժամանակ սղման են ենթարկվում, հոգնակիի մեջ էլ նույն սղման են ենթարկվում, ինչ.

աղիւս>օղիս, սեռ, օխսի, օխսըներ
 աշակերտ>աշկեռտ, աշկըռտներ
 աւել>ավել (ավլելու), ավլըներ, բայց և ավիլներ
 քացախ>քյացախ, քյացխըներ
 շաղգամ>շոխկյոմ, շոխկյոմներ
 շորտադուկ «դեղձ», շորտադկըներ
 քյոզոխիկ «բրդե կարճ շոր», քյոզոխիկըներ
 դէօշակ «ներքնակ», դէօշկըներ
 գրտնակ>կյըռտնակ, կյըռտընկներ
 ջրալաց>ճողաց, ճողչի, ճողչըներ, ճողցըներ
 աներ>աներ, անըրներ
 ամիս>ամիս, ամըսներ
 գիշեր>կիշեր, կիշըրներ
 աղեղն>անեղ, անըղներ

մարգարիտ>մարկյըրիտ, մարկյըրտներ

277. Սղումը կաթող է տեղի ունենալ երկու ձևով. սղված
 ձայնավորի, փոխարեն դրված ը ձայնավորը կարող է դրվել բա-
 ուի վերջածայն բաղաձայնից թե առաջ և թե վերջը. օր.

աղիւս>օղիս, օխսըներ, օղըսներ
 քացախ>քյացախ, քյացխըներ, քյացըխներ
 առիք>տռիքյ, տռիչներ, տռքյըներ
 տանիք>տանիս, տանսըներ, տանըսներ
 անուռ>անուռն, անվըներ
 մկրատ>մկրատ, մկըրտներ

278. Ըստ այսմ այն բառերը, որոնք վերջանում են -իկ,
 հոգնակիում սղման պատճառով ստանում են իյ կամ կը ձևը. ինչ.

բոպիկ>պէօպիկ, պէօպիյներ, պէօպկըներ
 ագռաւ>կռիկ, կռիյներ, կռկըներ
 աղաւնի>յէղունիկ, յէղունիյներ, յէղունկըներ

279. Սղման ժամանակ, երբ բառամիջի կյ կամ նգյ բաղա-
 ձայնի մօտ ընկնի՝ կդառնա նյ, յ. ինչ.

գագաթն>կյոկյոթ, կյոհյթըներ
 գանգատ>կյոնգյոտ, կյոյոյըներ (որ և կյոնգյըտներ).

280. Երբ սղման պատճառով մի քանի բաղաձայն խճող-
 վեն -ներ մասնիկից առաջ, հնչման հեշտության համար ներ-

մուծվում է մի ավելորդ ը. ինչ.

տգրուկ > տգրուկ, տգրկընեւ

անէծք > անէծք, անէծկըներ

ծմերուկ > ծմրիւկ, ծմրկըներ

281. Սղման զարմանալի մի ձև ներկայացնում են ն վերջացող բառերը, որոնք մեջնչ միայն ձայնավորը կրճատվում է, այլև ն բաղաձայնը ջնջվում է հոգնակիի մասնիկից առաջ. Այսպես՝

գետին > Լյէտին — Լյէտընյտանքյ

կարկատան > կարկըտան — կարկըտիհյտեր

ջրյորդան > ճօռօթան — ճօռօթիհյտեր

գիւղական > Լյեղական — Լյեղակիհյտեր

պատինճան > պատընջտն — պատընջընյտեր, պատընջիհյտեր
սապոն «օճառ» — սապոնյտեր

մըւջտն «բուստ» — մըւջընյտեր

անոււն > անուն — անուհյտեր, անընյտեր

աման > աման — ամընյտեր

բերան > պէրան, պէրընյտեր

qazan > կազան «կաթսա» — կազիհյտեր

2. ՀՈԼՈՎՆԵՐ

282. Կը ճյուղի բոլոր բարբառների նման՝ Վանի բարբառը ճանաչում է 6 հոլով, թե եզակի և թե հոգնակի, որոնք են՝ ուղղական, սեռական, տրական, հայցական, բայառական և գործիական: Ներգոյական հոլով չկա:

Սրանց գործածության մեջ պետք է նկատել, որ՝

1) ուղղականը գործ է ածվում նաև իբր կոչական.

2) հայցականը շնչավորների մեջ երբեմն նման է ուղղականին և երբեմն էլ տրականին. ինչ.

Շոււն կապի: Շան կապի:

Էտա խաւ մորթի: Էտա խաւուն մորթի:

Էտա լաճ տար: Էտա լաճոււն տար:

Էտա տղէն պէ մօ զի (կամ էտա տղին պէ մօ զի) Վայդ տղին բեր ինձ մօտ:

Յես շատ կուգեմ ինոր «ես նրան շատ եմ սիրում».

3) տրականը թե որոշյալ և թե անորոշ նույն է սեռականի հետ.

4) հայցականը գործ է ածվում նաև իրրև նախդրիվ հայցական. օր.

Սարկօն կնոց տունն «Սարգիսը գնաց տունն»:

Կյրզպօն կնոց ճողոց «Գասպարը գնաց ջաղաց»։ (Այս դեպքում կարելի է ասել նաև դեխ տուն, դեխ մողոց)։

Նաև իրրև ներգոյական հոլով. ինչ.

Հրմէն օր տուն կմնաս, տիւս չես իկյու։

Կիշեր չուր լիս իկյին քյընար.

5) բացառականի սովորական ձևը կազմվում է -ից վերջավորությամբ, որով Վանի բարբառը միանում է Երևանի բարբառին։ Սակայն կա նաև է, էն ձևով բացառական. ինչ. խավտէ (հավատից), մանվընէ, մողչէն (ջողացքից), վողվընէ, ուլընիէ (ուլունքից) և այլն։ Այսպիսի բացառականները գործածական են ավելի ոճերի մեջ. ինչ. խավտէ խանել «հավատքից հանել», կիրայնէ կիրակի «կիրակիից կիրակի», քյախքյէ քյաղաքյ, կյեղէ կյեղ, աշխրբէ աշխար, տնէ տուն, խօրէ մօրէ մէյ խատ էր լամ. էս օրվէ չուր էնօր. էն օրվէ չուր էսօր.

283. Բացառականի հետաքրքիր ձևերից մեկն էլ ա ձայնավորով հոլովմունքն է, որին ենթարկվում են միայն տեղանունները. օր.

Թավրէզա «Թավրիզից»,

Վոնո «Վանից»,

Խոյա «Խոյից»,

Մոկսա «Մոկսից»,

Սալմաստա «Սալմաստից»,

էկյէստարա «Այգեստանից»,

Ավրակա «Ավերակից»,

Իգրա չուր Վոն «Իգգիլիից մինչև Վան»,

Իգրա կուկյում «Իգգիլիից եմ գալիս»:

Սրանք գրաբարի հատուկ անունների հոլովման մնացորդներն են՝ նախորդից զրկված. ինչ. յԵրուսաղեմայ, ի Գանձակայ, ի Վանայ և այլն:

Վանի բարբառում ասվում է նաև Շողբտղու(ց) կուկյում, Ավանուց կուկյում և այլն:

284. Կոչական հոլովը մի քանի բառերի համար ունի առանձին ձևեր. սրանք են՝

մարէ՛ «ո՛վ մայր»,
 քիւրօ՛ «ո՛վ քույր»,
 բարօ՛ «ո՛վ պապ» (նաև բաբէօ՛),
 խարսմ «ո՛վ հարս»,
 խէրօ՛ «ո՛վ հայր»:

Օ վերջավորութիւնն ունի նաև մի խումբ հատուկ անուններ. ինչ. Անգրօ (Անգրեաս), Սարկօ (Սարգիս), Ղկօ Ճակոր, Կյըզպօ (Գասպար), Կյէօրէօ (Գրիգոր) և այլն:

Կարևոր է նկատել նաև այն, որ երբեմն երկու հարակից բառերից միայն վերջինն է ստանում հոլովական վերջավորութիւնը. օր. տղայ և աղջիկ > լաճվախչիկ, սեռ. լաճվախչկան:

Յ. ՀՈԼՈՎՈՒՄ

ԱՌԱՋԻՆ ՀՈԼՈՎՈՒՄ

285. Առաջին հոլովման վերջավորութիւններն են՝ սեռական և տրական ի, բացառական ից, գործիական օվ. — հոգնակիում (ինչ էլ լինի հոգնակիի մասնիկը՝ ներ, տար, տեր, վեր և այլն) սեռական, տրական և բացառական հանգում են աց, գործիական օվ. օր.

Ո. խաց	խացեր	անըղներ
Ս. Տ. խացի	խացերաց	անըղներաց
Բ. խացից	»	»
Գ. խացով	խացերով	անըղներով

Այլ օրինակ՝ կիհյտերաց «կանանց».

Հոգնակի բացառականը կարող է է՛լ ավելի երկարել մէճէն մասնիկով. ինչ. կտրիճներացմէնէն «կտրիճներից»,

պտրէյմիհյտերացմէնէն «բարեկամներից»,

փէսէհյտերացմէնէն «փեսաներից»,

քյավորկիհյտերացմէնէն «կնքամայրերից»,

տէկյէրկիհյտերացմէնէն «տաղերականանցից»:

Այս հոլովման են հետևում բարբառիս բառերի մեծագույն մասը. նույնիսկ այն բառերը՝ որ գրաբարից իբրև ժառանգութիւն ունեն հնաձև մի հոլովում, կարող են հոլովվել նաև այս ձևով: Այս կարգի բառերը նշանակել եմ ամեն մի հոլով-

ման մեջ փակագծով և նրանք նորից այստեղ հավաքելու կարիք չկա:

Նաև թուրքերենից փոխառյալ բառերը հետևում են այս հոլովման. ինչ. դիւշման «թշնամի»

հգ.

Ո. դիւշման	դիւշմընքյտեր
Ս. Տ. դիւշմնի	դիւշմընքյտերաց
Բ. դիւշմնից	»
Գ. դիւշմնով	դիւշմընքյտերով

286. Այս առաջին հոլովման համաձայն են հոլովվում նաև -ու վերջացող բառերը, որոնց պատկերն է՝

Ո. ածու	ածվըներ, ածըվներ
Ս. Տ. ածվի	ածվըներաց
Բ. ածվից	»
Գ. ածվով	ածվըներով

Այսպես նաև՝

կատու	>	կատու, կատվի
թթու	>	թթիւ, թթվի
խորովու	>	խուրուղու, խուրուղուցի
կոյ	>	կու, կույի, կույից
լու	>	լիւ, լվի
ձու	>	ծիւ, ծվի
կծու	>	կծու, կծվի
լեզու	>	լեզիւ, լեզվի

Այն բառերը, որոնք գրաբարում ունեն և հանգը, որ աշխարհաբարում կորած է, հոլովման մեջ կարող են երբեմն ստանալ այդ և հանգը, ինչ. մատն > մատ, սեռ. մատի, բց. մատնից, գրծ. մատով:

ԵՐԿՐՈՐԿ ՀՈԼՈՎՈՒՄ

287. Երկրորդ հոլովման վերջավորություններն են սեռական և տրական -ու, բացառական -ուց, գործիական -ով. հոգնակին նույն է առաջին հոլովման հետ. օրինակ՝

Ո. խալիվոր	խալիվորներ
Ս. Տ. խալիվրու	խալիվորներաց

Բ. խալիվըուց

խալիվորնեբաց

Գ. խալիվըօվ

խալիվորնեբօվ

Այսպէս են հորովում՝

ադուէս>ադվէս, ադվսու

այծ<էծ, էծու

անէծք>անէծք, անէծքու, անէծքի, անիծու

անձրև>անձրեվ, անձրվու

աստուած>աստված, աստըծու, աստըծուց (ասպած ձեւ չի հորով-
վում)

արագիլ>առակէլ, առակէլու

արև>արեւ, արիվու

արծիվ>առծիվ, առծվու (նաև առծվի)

արջ>առչ, առչու

արջառ>առառ, առառու (նաև առառի)

բադ>բոտ, բոտու (նաև բոտի)

գայլ>կէլ, կլէլու կամ կլիլու

գառն>կյոռ, կյոռու, կյոռան

գետ>կլետ, ք. կլետի, գ. կլիտու

գլուխ>կլըլէօխ, կլըլիու

գող>կյող, կյուղու

գոմէշ>գյէօմէշ, գյէօմշու, կյէօմշու

դև>դէվ, դիվու (նաև դէվի)

եպիսկոպոս>յեպիսկապոս, յեպիսկապոսու

էգ>էք, էքու, իքու «մատակ գոմեշ»

էշ>էշ, էշու, իշու

թագաւոր>թակավոր, թակավ(ու)րու

թուխս>թուխս, թիսու

ժամ>ժամ, ժամու

խեղճ>խեխճ, խեխճու (նաև խխճի)

խոզ>խոզ, խուզու

խուլ>խուլ, խլու (նաև խլի)

խստոր>սխտոր, սխտուրու (նաև սխտորի)

ծարաւ>ծարավ, ծարվու

ծով>ծօվ, ծօվու

ծուռ>ծուռ, ծոռու

կապոյտ>կապոտ, կապտու

կաքաւ>կաքյավ, կաքյիվ

կեղծաւոր > կեղծավոր, կեղծաւորու, կեղծավորու
 կէս > կէս, կիսու
 կողով > կօղով, կօղովու
 կոյր > կոր, կուրու
 կով > կօվ, կովու, կօվու
 կուզ > կուզ, կզու «սապատող»
 կռիւ > կռիվ, կըռվու
 կռունկ > կռունգ, կռնգ, կռնգու (նաև կռնգի)
 համ > խամ, խամու
 հայ > խայ, խայու
 հարսն > խարս, խարսու (նաև խարսի)
 հաւ > խավ, խավու
 հաւ «թռչուն» > խաֆք, խաֆքու
 հիւր > խուր, խրու
 հող > խող, խուղու (նաև խողի)
 հով > խօվ, խօվու
 հովիւ > խօվիվ, խօվիվու (նաև խօվի)
 հոտ > խոտ, խոտու, խոտու
 ձագ > ծոք, ծոքու
 ձի > ծի, ծիու
 ճգնաւոր > ճըյհնավոր, ճըյհնավորու
 մարդ > մարթ, մարթու
 մեղաւոր > մեղավոր, մեղավորու (նաև ~վորի)
 մշակ > մշակ, մշակու
 մուխ > մուխ, մխու
 նապաստակ > լապըստըրակ, լապըստըրկու, լապըտրկու
 շաղգամ > շոխկյոմ, շոխկյոմու
 շերեփ > շիրեփ, շիրփու (նաև շիրփի)
 շիւ > շիւ, շիւ
 սկերիչ > վոսկրիչ, վոսկրչու
 ուլ > ուլ, ուլու
 ուխտաւոր > ըթավոր, ըթավորու
 ուղտ > ուղտ, ըղտու (որ և ըղտան)
 պառաւ > պառավ, պառվու
 սեաւ > սեվ, սիվու
 սերկիւլ > սիրկիվիլ, սիրկիվիլու (նաև սիրկիվիլի)

սէր>սէր, սիրո (նաև սերի)
 սով>սով, սովու(նաև սովի)
 սուր>սուր, սրփու (նաև սրփի)
 տէր>տէր, տիրու (նաև տիրոյ)
 քած>քյած, քյածու (նաև քյածի)
 քացախ>քյացախ, քյացխու (նաև քյացխի)
 օձ>օց, օցու

288. Այս երկրորդ հոլովման համեմատ են հոլովվում հատկապես ի վերջացող բառերը, որոնց օրինակն է՝

Ո. իկյի	կյինի	կյինիհյտեր
Ս. Տ. իկյու	կյինու	կյինիհյտերաց
Բ. իկյուց	կյինուց	»
Գ. իկյով	կյինով	կյինիհյտերօվ

որբևայրի>վոռպէօվէրի, վոռպէօվէրու	ոսկի>վոսկի, վոսկու
նօթի>անօթի, անօթու	որդի>վորտի, վորտու, վոլրտու
բարի>պորի, պորու	(օր. մալին տէր, վոլրդուն
բարտի>բորդի, բորդու	խէր. առած)
գարի>կյորի, կյորու	ջորի>ճորի, ճիւրու, ճորու,
գերանդի>կյէրընդի, կյէրընդու	ճուրու
գերի>կյերի, կյերու	սամի>սամի, սամու
գինի>կյինի, կյինու	սկիհ>սկի, սկու
թեղի>թեղի, թեղու	սոնի>սոնի, սոնու
լեղի>լեղի, լեղու	ուռի>ուռի, ուռու
խելացի>խէլոցի, խէլոցու	քամի>քյամի, քյամու
խնամի>խնամի, խնամու	քենի>քյենի, քյենու (նաև
կաշի>կաշի, կաշու	քյենոյ)
հոգի>խոկյի, խուկյու	քեռի>քյեռի, քյեռու (քյեռանց)
մաքի>մաքյի, մաքյու	

289. Այս հոլովման համեմատ կարող են հոլովվել նաև -ու վերջացող բառերը, բայց ստանալով վ բաղաձայնը. օր.

Ո. Հ. կատու կատվըներ
Ս. Տ. կատվու կատվու
Բ. կատվուց կատվուց
Գ. կատվով կատվով

ԵՐՐՈՐԴ ՀՈՒՎՈՒՄ

290. Այս հոլովման վերջավորութուններն են սեռական-տրական -վան կամ -վա, բացառական -վընից, գործիական -վընով, Հոգնակին լինում է -ներ կամ -վըներ և հոլովում է կանոնավոր ձևով:

Ո. ամառ հգ. ամըռներ, ամըռվըներ
Ս. Տ. ամըռվան, ամըռվա, ամռան
Բ. ամըռվընից, ամըռվընէ
Գ. ամըռվընով

Այս հոլովման հետևում են ժամանակ ցույց տվող բառերը, որոնց ցանկը հետևյալն է.

ամիս > ամիս, ամսըվան (ամսու, ամսուց)
գիշեր > կիշեր, կիշերվա, կիշերվան, կիշրվան
եռանդ Շնախորդ օրը > յեռանդ, յեռանդվան, յեռընդվա, յեռընդվան Վի քանի օր առաջ. օր. յեռանդվան մարթն էկավ:

երեկոյ > իրիկուն, իրիկվան, իրիկվա, իրիյվա
երէկ > էրէկ, էրէկվա, էրէկվան, էրէյվա(ն)
զատիկ > զտտիկ, զտտկըվան (զտտկի)
կաղանդ > կաղանդ, կաղընդվա (կաղընդի)
կիրակէ > կիրակի, կիրայվան, կիրայվանից
հերոս > խէրու, խէրվան, խէրվա
(հերզնամ) > խէրզնամ, խէրզնամվոն Շհերուն, երկու տարի առաջ, խէրզնամվոն, բց. խէրզնամվոնից

ձմեռն > ծմեռ, ծմեռվան (ծմռան), ծմըռվա(ն)
շաբաթ > շտպոթ, շտպըթվա, շտպըթվա
ուրբաթ > ուրպոթ, ուրպըթվա(ն) (ուրպըթի)
պահք > պախս, պախսվա(ն), պախսավուր
վաղ > վող, վողվան, վողվա
տարի > տարի, տարվան, տարվա
ցերեկ > ցերէկ, ցերէյվա(ն)
օր > օր, օրվա, օրվան, ամուր

Այս հոլովման են պատկանում նաև տոնական օրերի անուններ. ինչ. գոտկըմնէ, ճահ պախսվնէ, խոմբորցըմնէ «համբարձման տոնից» և այլն:

Թուրքերենից վերցրած բառեր էլ կարող են հոլովվել այս ձևով. օր.

դոշ «նախ, առաջ», սեռ. դոշվան (ինչ. դոշվան քյաղաքյ «առաջվա քաղաքը»):

291. Այս հոլովման են պատկանում նաև երկու բառ՝

մահ>մախ, մախվան, մախվընէ! (հչ մախվընից), մախվընօվ, թոնիր>թօնէր, թօրվա(ն) (որ և թօնրի), թօրվընից.

Առաջինը գրաբարից ժառանգություն է և ամեն բարբառի մեջ էլ գոյություն ունի. Երկրորդը հատուկ է միայն Վանի բարբառին և այնքան անկանոն է, որ Վանի բարբառի օրենքներով էլ հնարավոր չէ բացատրել:

292. Վանի բարբառն ունի նաև առաւօտուն ձևից ծագած առատուն, առավտուն, առատման ձևերը. առաջին երկուսը հայոնապես սղված են առա[ւօ]տուն ձևից. իսկ վերջինը կարծում եմ, որ առա[ւօ]տվան ձևից է սղված և վ՝ ոնգականի հետ հարմարվելով դարձել է մ, ճիշտ ինչպես ունենք Պլ. մահման<մահուան:

ՉՈՐՐՈՐԴ ՀՈԼՈՎՈՒՄ

293. Ուրիշ շատ բարբառներում սովորական -ուքին -ուքեան հոլովումը, որ կոչում ենք չորրորդ հոլովում, ջնջված է Վանի բարբառում: Այս կարգի բառերը հետևում են առաջին հոլովման. օր. խաստութեն «հաստություն».

Ո. Հ. խաստութեն խաստութեններ

Ս. Տ. խաստութնի » աջ

Բ. խաստութնից, նէ » »

Գ. խաստութնօվ խաստութեններօվ

Այսպես նաև՝

խարսնութեն, խարսնութնի

ճահութեն, ճիւճիւթնի

կարմրութեն, կարմրութնէ, -նից

խոնութեն, -ութնի

տաքյութեն, -քյութնի, -քյութնից նաև թրք. բառով, ճիւր
քէօլիւթնէ կճապղի (առած)։

Բացառականը թէ -ութնից և թէ -ութնէ ձևով։

Գյուղերում գտնոււմ ենք նաև -թենի, -թենից, -թենօվ ձևով
հոլովում։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀՈՂՈՎՈՒՄ

294. Այս հոլովման վերջավորություններն են՝ սեռական-
տրական -ան, բացառական -անից կամ -նից, գործիական -նօվ։
Պէտք է բարբառներում այս հոլովման հետևող բառերի թիվը մեծ
չէ. բայց Վանի բարբառը ժառանգելով գրաբարի ն հոլովման
հետևող բաղմաթիվ բառեր, հարստացրել է նրանցով իր այս հո-
լովումը։ Իբր օրինակ առնոււմ ենք՝

Ո. ալ ալներ անձեղ անձրդներ

Ս. Տ. ալան ալներաց անձղան անձրդներաց

Բ. ալնից » անձղանից »

Գ. ալնօվ ալներօվ անձղնօվ անձրդներօվ

295. Սրանց հետևող բառերն են՝

աղաւնի > յէղունիկ, յէղունկան

աղեղն > անեղ, անղան

աղջիկ > ախչիկ, ախչկան

այր > իրիկ, իրկան, իրիյմուց, իրկօվ, իրիյմօվ

անկողին > գլէօղվէնք, գլօղվան կամ գլօղվէնքյի,

գլօղվընից, գլօղվընօվ

անուն > անուն, անվան, անունից, անունօվ, անվօվ

աշուն > աշուն, աշնան

ասեղն > ասեղ, ասղան կամ ասղի

աստղ > աստղ, աստղան կամ աստղի

ատամն > ատամ, ատամն (ատմի), ատմուց, ատմօվ

ափ (ձեռքի) > ափ, ափան

ափն (ջրի) > տփ, տփան

պեռն > պեռ, պեռան

քեռն > պիպեռ, պիպուան (պիպուի)

գագաթն > կյոկյոթ, կյոկյթի, կյոկյթան, կյոհթան

գառն > կյոռ, կյոռան (կյոռու)

ԳԱՐՈՒՆ > ԿՅՈՐԻՆ, ԿՅՈՐՆԱՆ, ԿՅՈՐՆՈՆ
 ԳՈՐԻՍ > ԿՅԺՈՍ, ԿՅԺՈՍԱՆ
 ԳՆՈՒՆ > ՍՈՒՆ, ՍՈՒՆ
 ԿՂՆ > յեզ, յեզուն, յեզնից, յեզնօվ
 ԿՂՈՒՆՔՆ > յեղունգյ, յեղնգյուն (յեղնգյի)
 ԿՐԿՈՒՄՆ > ԷՕՐՍԻՒՄ, ԷՕՐՍՈՒՄ
 ԹԻԹԵՆԻԿ > ԹՐՈԹՐՈՆԷԿ, ԹՐՈԹՐՈՆՐԿԱՆ
 ԹՈՒՆ > ԹՈՈ, ԹՈՈԱՆ
 ԹՈՒՄՐ > ԹԻՒՄՐ, ԹՄՐՈՆ, ԹՄՐԻց ԿԱՄ ԹՄՄՆԻց
 ԹՈՒՓ > ԹԻՒՓ, ԹՓՈՆ
 ԼՈՒԾ > ԼԻԾ, ԼԾՈՆ
 ԼՈՒՍՆԱԿ > ԼԻՒՍՆԱԿ, ԼԻՍՆՐԿԱՆ
 ԽՈՒՆԿ > ԽՈՒՆՔԵՅ, ԽՆՔԵՅՈՆ (ԽՐՆՔԵՅԻ)
 ԽՈՒՐՃՆ > ԽՈՒՐՑ, ԽՈՑԱՆ (ԽՐՐՑԻ)
 ԽՈՒՓՆ > ԽՈՒՓ, ԽՓԱՆ (ԽՓԻ)
 ԾԻԾԵՆԱԿ > ԾԻԾԵՆԱԿ, ԾԻԾՐՈՆՐԿԱՆ
 ԾԻՐՍ > ԾԵՍՍ, ԾՈՍՍԱՆ (ԾՈՍԻ)
 ԾՈՒՆԿ > ԾՈՒՆՔԵՅ, ԾՆՔԵՅՈՆ
 ԿԻՆ > ԿՆԻԿ, ԿՆՔԵՅՈՆ
 ԿԾԻԿ > ԿԾԻԿ, ԿԾԿԱՆ (ԿԾԿԻ)
 ԿՆՔՈՒՂ > ԿՆՔԵՅՈՒԽ, ԿՐՆՔԵՅՐԽԱՆ
 ԿՈՐԵԱԿ > ԿՈՐԵԿ, ԿՈՐԵԿԱՆ (ԿՈՐԵԿԻ)
 ԿՈՒՍՐ > ԿՈՒՐՐ, ԿՐՐԱՆ (ԿՐՐԻ)
 ԿՈՒՆ «ԿՈՆԱԿ» > ԿՈՒՆ, ԿՈԱՆ
 ԿՈՒԹ «ՆՈՂԻ ՆՈՐ ԳՈՒՂՃ», ԿՈՒԹԱՆ (ԿՈՒԹԻ)
 ԿՈՒԿ «ԱԳՈՒՄ», ԿՈԿԱՆ (ԿՈԿԻ)
 ԿՈՃԻԿ «ԱՃԱՍ, ХРАМ», ԿՐՈՃԿԱՆ
 ԿՐՈՒԿ(Ն) > ԿՐՈՒՆՔԵՅ, ԿՐՐՆՔԵՅՈՆ
 ՆԱՅԵԼԻ > ԽԱՅԼԻԿ, ԽՈՅԼԿԱՆ
 ՆԻՄՆ > ԽԻՄ, ԽՈՄԱՆ
 ՆԻՒՍՆ > ԽՈՒՍ, ԽՍԱՆ
 ԺՄԵՆՆ > ԺՄԵՆ, ԺՄՈԱՆ (ԺՄՐՈՎԱՆ)
 ԺՈՒԿՆ > ԾԻԿԿ, ԾԿԱՆ
 ԶՆՃՂՈՒԿ > ԶՐՆՋՂՈՒԿ, ԶՆՋՐՂԿԱՆ
 ՄԱՍՈՒՐ > ՄԱՍՈՒՐ, ՄԱՍՐՈՆ (ՄԱՍՈՒՐԻ)
 ՄԱՍՏԱՆԻ > ՄԱՍՏՆԻԿ, ՄԱՍՏՐՆԿԱՆ (ՄԱՍՏՐՆԿԻ)

մութն > մութ, մթան
 մուկն > մուկ, մկան
 մսուր > մսուր, մսրան (մսրի)
 մրջիւն > մռճեմ, մըռճման
 նետ և աղեղն > նետվանեղ, նետվանդան (նետվանեղի)
 տագերակին > տէկյէրկին, տէկյէրկընգյոս
 նուռն > նուռ, նռան
 ողնի > վողնիկ, վողընկան, վողնըկան
 որթ, հորթ > վորթիկ, վորթկան
 ուլունք > ուլնիկ, ուլնըկան
 ուղեղ (պիւի) > ուղեղ, ուղղան
 » (ոսկրի) > ուղող, ըղըղան
 ուղտ > ուղտ, ըղտան (ըլտոռ)
 պճեղն > պճեղ, պրճղան
 պորտ > պոռտ, պոռտան
 սարեակ > սարէկ, սարէկան
 սեամ > շեմքյ, շիման (շեմքյի, շիմքյան, շիմքյից), շեմքյից,
 շեմքյով)
 սիսեոն > սիսեռ, սիսոան
 վառեակ > վտռէկ, վտռէկան, վտռկի
 տիկ > տիկ, տկան (տկի)
 ցին > կոր-ցընընէկ, կոր-ցընընկան
 փուքս > փիւզ, փպան (նաև փզի, փուզի)
 փրփրեմ > փառփառ, փառփրոան

ՎԵՅՅԵՐՈՐԳ ԶՈՒՌՎՈՒՄ

296. Վեցերորդ հոլովման մեջ սեռական-տրական հոլովա-
 ձևը կազմվում է ուղղականի շեշտյալ ձայնավորը դարձնելով օ,
 իսկ բացառական և գործիական հոլովները կազմվում են սեռ-
 տր. հոլովաձևի վրա ավելացնելով -օրից, -օրմով մասնիկներով:
 Հոգնակին սովորական ձևով է.

Ո. ախպէր	խէր	մէր
Ս. Տ. ախպօր	խօր	մօր
Բ. ախպօրից	խօրից	մօրից
Գ. ախպօրմով	խօրով	մօրով

Այսպես են հոլովվում նաև՝
 սանահայր>սանախէր, սանախօր
 սանամայր>սանամէր, սանամօր
 քաւորամայր>քյավորմէր, քյավորմօր
 տիրամայր>տիրամէր, տիրամօր
 աստվածամայր>աստվածամէր, -ամօր

ՅՈԹՆԵՐՈՐԿ ՀՈԼՈՎՈՒՄ

297. Այս հոլովման վերջավորութիւններն են սեռական-տրական -ոչ, բացառական -ոչից, գործիական -ոչմօվ. հոգնակին սովորական ձևով է:

Ո. քյօր	քյօրեր
Ս. Տ. քյիւրոչ	քյօրերաց
Բ. քյիւրոչից	»
Գ. քյիւրոչմօվ	քյօրերօվ

Այսպես են հոլովվում ազգականութիւն ցույց տվող հետևյալ բառերը.

աներ>աներ, անիրոչ, անիրոչից, անիրօվ!
 քնկեր>ինքյեր, ինքյրոչ
 սկեսուր>կիսուր, կիսրոչ
 կնքաւոր>քյավոր, քյավորոչ
 տայգր>տէքր, տէքրոչ (նաև տէկյէր), տէքրոչից
 (տէկյրից), տէքրոչմօվ (տէկյէր մօտէն)
 տանտիկին>տանգըկին, տանգըկնոչ
 տէր>տէր, տիրոչ (նաև տիրու), տիրոչից (նաև տիրուց),
 տիրոչմօվ
 տալ>տալվ, տալոչ\ տալոչից, տալոչմօվ
 քենի>քյենի, քյենոչ (նաև քյենու)
 Կա նաև բարեկամ>պորէկամ, սեռ. պորէկմոչ, պորէյմոչ

ԳՐԱՅԱՐԱՁԵՎ ՀՈԼՈՎՈՒՄ

298. Տեղ տեղ վանի բարբառը պահել է գրաբարաձև մի հոլովում, որ հաճախ գործ է ածում բարբառային նոր ձևի հետ զուգընթաց: Սրանք են այբուբենական կարգով՝

այլ>էլ «օտար մարդ», սեռ. էլոց. ոմանք այս բառը կար-
ծում են գրբ. այլ, այլոց ձեռք. բայց ես վախենում եմ,
որ թրք. էլ «օտար» բառից լինի. հմմտ. պոլսահայ բար-
բառով՝ էլերուն ձեռքը ինկանք (օտարների). և Պոլսի
բարբառը չգիտե այ>է ձայնափոխությունը:

անուն>անուն, անվան

աչք>աչք, աչիչ

ասեղն>ասեղ, ասղան (որ և ասղի)

ատամն>ատամ, ատման (որ և ատմի)

երկինք>երկինքյ, էրկնուց (որ և էրկընքյի)

խելք>խելքյ, խելոց (որ և խելքյի)

խօսք>խօսք, խօսաց

հիմն>խիմ, խման, բցո. խմնէ<ի հիմանէ

ձեռն>ծեռ, ծեռաց

ձիւն>ծիւն, ծուն, ծնից, ծնօվ

մեղք>մեխքյ, մեղաց (որ և մեխքյի)

մէջք>մէջք, մէճոց, (որ և մէջքի)

միտք>միթկ, մտաց. օր. մէչ ուր մտաց կասի

շուն>շուն, շան, շնից, շնօվ

ոտն, ոտք>վոտ, վոտաց (որ և վոտի)

սիւն>սուն, սան, սնից, սնօվ

տայգր>տէքյր, տէկյեր, տէկյէր

տեղի>տեղ, տեղաց

տուն>տուն, տան, տնից, տնօվ. տարօրինակ սեռ. ձե-
ռնի՝ ժամառու «ժամատուն». այսպես՝ էն ժամտու
անուն էլ գրին Մարութայ պոնցր Աստուածածին
(Լալայան, Վասպուր. 1912, էջ 49),

վանք>վոնքյ, վոնից (որ և վոնքյի)

քուն>քյուն, որից քյընոց կյոխ (իմա քյնոց կյոխ «քնե-
լու ժամանակ»)

օր>օր, ավուր (որ և օրվա, օրվան)

299. Նկատելի է, որ այս ձևերից նրանք, որ գրաբարի ան-
եղականն են ներկայացնում, ընդհանրապես միաժամանակ սե-
ռական, տրական և բացառական են. օր. աչիչ, յերկնուց, խելոց,
մեղաց, մէնոց, վոտաց: Սրանք ունենում են նաև սովորական

ձևով սեռ.-տր. ինչ. էրկընթյի, խելքյի, մեխքյի և այլն: Միաժա-
մանակ ասվում է վոտ, սեռ. վոտի, վոտաց, բյո. վոտից, վո-
տաց, սեռ. ծեռաց, բյո. ծեռնից, Բայց գործիականը երբեք չի լի-
նում գրաբարաձև, այլ նոր ձևով. այսպես՝ աչքով, էրկընթյով,
խելքյով, ծեռնով, մեխքյով, մէշքով, վոտով, վոտնով:

-անքյ ձևով հոգնակին լինում է սեռ. բյո. -անց, օր.
տեղերանքյ, սեռ. բյո. տեղերանց, գրծ. տեղերով, տեղերանքյով:

Ուրիշ գեպքերում հոգնակիի -նք ձևը իր հոլովներով սո-
վորական է. ինչ. տէր>տէր, տիրվանքյ, տիրվանքյնեբաց, թե>
թեվ, թիվքեր, թիվքյերաց:

300. Անսովոր ձևի հոլովում են ներկայացնում -իկ վեր-
ջացող մի քանի բառեր, որոնց օրինակն է՝

Ո. պապիկ

Ս. պապկէ

Բ. պապկից

Գ. պապկով

Սրան նման են նաև մամիկ և կատիկ «նավակատիք»:
Կատիկէ ձևը թե՛ սեռական է և թե՛ բացառական:

Այսպես են հոլովվում նաև -իկ վերջացող անձնանուն-
ները. ինչ. Շողիկ>Շողիկ, Օղիկ, Նազիկ>Նազիկ, սեռ. Շողկէ,
Օղկէ, Նազկէ. օր. Օղկէ խէր «Օղիկի հայրը», Շողկէ մօտ կնոս
«Շողիկի մօտ գնաց», Նազկէ գլխով «Նազիկ լիճը» (իբր օրինակ է
առնվում ջրի մեծ պաշարի):

-իկ վերջացող մականուններից ունենք քաչալիկ «ճաղատ»,
որ նույնպես այս հոլովման է հետևում. ինչ. քաչլիկէ կյրլէօխ
«ճաղատի գլուխը», որ և շուշլիկէ:

Նկատելի է, որ այս բոլորը անձ են ցույց տալիս՝ բացի
կատիկ բառից:

Գրաբարում այսպիսի հոլովում չկա. բայց միջին և ավելի
ուշ ժամանակի հայերենում գտնում ենք սեռ. -է ձևը, միայն
-ի վերջացող անունների համար. օր. Նուրսի, սեռ.-տր. Նուրս-
քէ, Նուսի, սեռ. Նուսքէ, Զոհի, սեռ. Զոհէ (1270 թ.). տես Հա-
յոց անձնանունների բառարան, հա. Գ. էջ 98, 111: Բայց ավելի

լավ է Նուշիկ սնվան սեռ. Նուշկէն ձևը 1601 թ. (Ձեռ. Վասպու-
րականի, էջ 798, անդ՝ էջ 92), Շողիկ,— սեռ. Շօխկէն 1688 թ.
(Ձեռ. Վասպ. 1020), պապիկ (իբր հասարակ անուն), սեռ. պապ-
կէն 1476 թ. (Ձեռ. Վասպ. 480):

4. ՍՂՈՒՄ

301. Հոլովման մեջ սղման երևույթը շատ սովորական է
Վանի բարբառում: Սղում են ոչ միայն ի և ու ձայնավորնե-
րը, այլ և ա, տ և այլն: Մի ընդհանուր կանոն սղման համար՝
հնարավոր չէ տալ. բայց նկատելի է հետևյալ մասնավոր
դեպքը:

Միավանկ բառերի մեջ ա և տ ձայները բնավ չեն սըղ-
վում. ինչ.

բարձր > պանցր, պանցրի	մազ > մազ, մազի
ճանկ > ճանգյ, ճանգյի	մաղձ > մախս, մախսի և այլն:
ճանճ > ճանջ, ճանջի	

Բացառություներ է միայն տակ, որ լինում է սեռ. տկի: Սրա-
նից էլ անթատակ > ընթիտակ, սեռ. ընթիտկի:

302. Այն միավանկ բառերը, որոնց միջին ձայնավորն է
ն, հոլովման մեջ չեն սղում այս ձայնը. ինչ.

թել > թել, թելի	դեղ > տեղ, տեղի
ծեփ > ծեփ, ծեփի	շեղջ > շեղքյ, շեղքյի
խելք > խելքյ, խելքյի	ջիղ > ճեղ, ճեղի
եզր > յեզր, յեզրի	սերմն > սերմ, սերմի
կեր > կեր «կերակուր», կերի	մեղր > մեղր, մեղրի և այլն:

Կան մի քանի բառեր, որոնց մեջ ն ձայնավորը սղվում
կամ վերածվում է ի. սրանք են՝

ներքս > ներս, նիրսի	թև > թեվ, թիվի, թիվեր, թեվեր
վեր > վեր, վիրի, վիրվի	ծիրա > ծեռտ, ծոտի
սեամ > շեմքյ, շեմքյի, շիման	խեղճ > խեխճ, խըխճի, խեխճու

տուղտ բառը ստանում է երկու ձև՝ տուղտ և տեղտ. սեռա-
կանն է տղտի, որ առաջին ձևից է:

Գետ>կյետ բառը ըստ սովորականին լինում է սեռ. կյետի,
բայց կա նաև գեղջուկ կյիտու ձևը:

303. Այն միավանկ բառերը, որոնց միջին ձայնավորն է
օ (էօ) կամ ո, հոլովման ժամանակ չեն սղում նույն ձայնա-
վորը. ինչ.

խոտ>խոտ, խոտի

խոց>խոց, խոցի

խոփ>խոփ, խոփի

ծոց>ծոց, ծոցի

կոշտ>կոշտ, կոշտի

կոպ>կոպ, կոպի

ծոմ>ծոմ, ծոմի

կոճ>կոճ, կոճի

կոթ>կոթ, կոթի

խօսք>խօսք, խօսքի

եօթն>յօթ, յօթի

գայռ>քյօռ «ցեխ», քյօռի

մօտ>մօտ, մօտի

յօտ>էօտ, էօտի

տօն>տօն, տօնի

ճիւղ>ճօղ, ճօղի

քօղ>քյօղքյ, քյօղքյի

օղ>օղ, օղի

304. Այն միավանկ բառերը, որոնց միջին ձայնավորն է հ,
հոլովման ժամանակ պահում են այս ձայնը. ինչ.

բողկ>պոխկ, պոխկի

բոյթ (մատ)>պոթ, պոթի

բոյն>պոն, պոնի

բոց>պոց, պոցի

գոգ>կյոքյ, կյոքյի

գոլ>կյոլ, կյոլի

գոզ>կյոզ, կյոզի

գոյն>կյոն, կյոնի

գործ>կյոծ, կյոծի

գորտ>կյոռտ, կյոռտի,

կյոռտան

ընկոյզ>գոզ, գոզի

թոք>թոքյ, թոքյի

լոբ>լոբ, լոբի

ջոջ>ճոջ, ճոջի

ծոր>ծոբ, ծոբի

305. Այն միավանկ բառերը, որոնց միջին ձայնավորն է
ի, հոլովման ժամանակ սղում են այդ ձայնավորը և դարձնում
ը. ինչ.

գին>կյին, կյընի

գինդ>կյինդ, կյընդի

թիզ>թիզ, թզի

հիմն>խիմ, լուման, գրծ. լումնով (օր. լումնով ավեր

«ի հիմանց աւերեալ»).

հին>խին, խնի
 հինգ>խինգյ, խընգյի
 կիր>կիր, կրի
 գիրկ>կիրկ, կըըրկի
 քիթ>քյիթ, քյըթի և այլն, և այլն:

Մինչև անգամ ինն>ին, ըննի և ինչ>ինչ, ընչի, ինչի, թեև սրանց ի ձայնավորը բառասկզբումն է:

306. Այն միավանկ բառերը, որոնց միջին ձայնավորն է ու, հոլովման ժամանակ սղում են այդ ձայնավորը և դարձնում ւ. ինչ.

խուրձն>խուռց, խոցի, խոցան	ծունկ>ծունգյ, ծընգյտն
խունկ>խունգյ, խնգյի, խըն- գյտն	ծուռ>ծուռ, ծուռ կուռն>կուռ, կուան
խուփն>խուփ, խփի, խփան	կուպր>կուբր, կըբան
թուր>թուր, թրի	կուշտ>կուշտ, կշտի
թուշ>թուշ, թշի	յօնք>ունքյ, ընքյի
թուղթ>թուխթ, թըխթի	սունկ>սունգյ, սընգյի
դուռն>տուռ, տուան	ուռպ>ըռբ, ըռբի և այլն:

Միայն ութ, ուլ և ուխտ բառերն են, որոնց ու ձայնավորը գտնվելով բառասկզբում՝ չեն ենթարկվում սղման և լինում են սեռ. ութի, ուլու, ուխտի:

307. Այն միավանկ բառերը, որոնց միջին ձայնավորն է իւ, հոլովման ժամանակ սղում են այն, ըստ որում ծագած է գրաբարի ու ձայնից: Այսպես են՝

բուք>պիւքյ, պքյի	թուք>թիւքյ, թքյի
գունդ>կյիւնդ, կյընդի	ձուկն>ծիւկ, ծկան
տուր>տիւր, տրի	փուք>փիւք, փքի, փուքի
ջուր>ճիւր, ճրի	փուքս>փիւզ, փզի, փուզի (նաև փզան)
թուզ>թիւզ, թզի	
թութ>թիւթ, թթի	

Այս ձևով է նույնիսկ դափ բառը, որ քրդերենից նոր փոխառությամբ դարձել դիւֆ և սեռականում սղմամբ լինում է դֆի:

308. Այն միավանկ բառերը, որոնց միջին ձայնավորն է է, երկու կարգի են բաժանվում: Նրանք, որոնց մեջ է ձայնա-

վորը առաջանում է նախկին այ երկրորդաօրից, հոլովման ժամանակ ստանում են է ձայնը: Այսպես՝

լայն>լէն, լէնի	քայլք>քէլքի, քէլքի
ծայր>ծէր, ծէրի	ձայն>ծէն, ծէնի
սայլ>սէլ, սէլի	տայգր>տէքրի, տէկքեր
փայտ>փէտ, փէտի	գայլ>կյէլ, կյէլու

Իսկ այն բառերը, որոնց է ձայնավորը ծագում է գրաբարի է ձայնից, ումանք գրաբարի նման է-ն դարձնում են ի, իսկ մյուսները պահում են անփոփոխ: Այսպես են՝

տէր>տէր, տիրոջ	կէս>կէս, կիսու
սէր>սէր, սիրու	էգ>էքի, իքյու (նաև՝ էքյու)
պէս>պէս, պիսու	էշ>էշ, իշու

Իսկ մյուսները՝

մէջ>մէշ, մէշի	ձէթ>ձէթ, ձէթի
մէջք>մէշք, մէշքի, մէճոց	դէզ>տէզ, տէզի
պէտք>պէտք, պէտքի	դէշ>կյէշ, կյէշի
սէզ>սէզ, սէզի	

Այս բոլորից դուրս են մնում՝

խէժ>խիժ, խժի	դէ>դէվ, դէվի, դիվու
միակ>մէկ, մէկի, մէկու	

Գայլ>կյէլ բառը լինում է կյիլու, կյիլուց, կյիլօվ կամ առանց փոխվելու կյէլու, կյէլուց, հգ. կյէլեթ և այլն:

309. Այն երկավանկ բառերը, որոնց վերջավանկի ձայնավորն է ա կամ ո, հոլովման ժամանակ, անկախ հոլովման տեսակից, կորցնում են այդ ձայնավորը և կամ վերածում ը-ի, ինչ.

արծաթ>առծաթ, առծըթի
աշխարհ(ք)>աշխար, աշխըրի
երկաթ>էրկաթ, էրկըթի
բաղարջ>պողառճ, պողըռճի
խիզար>խիզոր, խիզրի
թակ (թոխմախ)>օթակ, օթկի

թիակ>թիյակ, թիյկի! (որով ձեացել է հայերենի մեջ
անսովոր իյ ձայնախումբը)

զոքանչ>զէօքյանչ, զէօքյընչի

ծարաւ>ծարավ, ծարվու

չուան>չըվան, չըվնի

կաղանդ>կաղանդ, կաղընդվա, կաղընդի

կաքաւ>կաքյավ, կաքյվու

Նույնիսկ օտար բառերը կարող են ենթարկվել սղման
օրենքին. ինչ.

գիլազ «կենաս» — սեռ. գիլզի

insān «մարդ» > իսան, սեռ. իսնի

310. Սղման օրենքը ընդհանուր է բոլոր տեսակի սովորա-
կան (կամ շատ գործածական) բառերին. բայց քիչ գործածվող
բառերը, մանավանդ ածականները, ազատ են մնում սղման
օրենքից. այսպես՝

գազան>կյոզոն, կյոզոնի կտակ>կտակ, կտակի

դրախտ>տրոխտ, տրոխտի գդակ>կտոկ, կտոկի

հպարտ>խպառտ, խպառտի խորան>խորան, խորանի

խոնարհ>խոնար, խոնարի բորակ>պորոկ, պորոկի

վեղար>վէղար, վէղարի երազ>էրազ, էրազի

կարագ>կարաքյ, կարաքյի ցամաք>ցամաքյ, ցամաքյի

կրճատ>կճատ, կճատի քսան>կսան, կսանի

փշատ>փշատ, փշատի կրակ>կրակ, կրակի

խրատ>խրատ, խրատի հազար>խոզոր, խոզորի են:

Կան բառեր էլ, որոնք երկու ձևի մեջ էլ տատանվում են.
ինչ.

դմակ>տմոկ, տմոկի կամ տըմկի

շամամ>շամամ, շամամի կամ շամմի

311. Այսպիսի սղման ժամանակ լինում են դեպքեր, երբ
բաղաձայնների կուտակման պատճառով, նաև այդ բաղաձայնը
սղվում կամ փոխվում է. ինչ.

ճակատ>ճակատ, ճայտի

պակաս>պակաս, պայսի

ճանապարհ>ճամբոխ, ճամխի
ջաղացք>ճողոց, ճողչի, ճողչից, ճողչով, ճողջով
քաղաք>քյաղաքյ, քյախքյի, քյախքյով
գազաթն>կյոկյոթ, կյոհթան, կյոյթի

Սակայն այսպիսի դեպքերում Վանի բարբառը բաղաձայնների մեծ ձևափոխություններ չգիտի: Օրինակ՝ կոճակ>կօճակ, սղմամբ լինում է կօճկի, բայց այս ճկ հանդիպման մեջ ճկ չի դառնում ժկ: Ինչպես որ նույնիսկ բայը կոճակել>կօճկել մնում է անփոփոխ և չի դառնում կօժկել (ինչպես լինում է, օրինակ՝ Պոլսի բարբառում):

312. Երեք և ավելի վանկանի բառերի մեջ, երբ վերջավանկի ձայնավորն է ա կամ ո, հոլովման ժամանակ մասամբ սղվում կամ ը-ի է վերածվում, մասամբ էլ անփոփոխ է մնում:

Վանի բարբառում արդեն բազմավանկ բառերի թիվը մեծ չէ: միջին ձայնավորի անկումով բոլոր եռավանկ բառերը դարձած են երկավանկ (ինչ. հարսանիք>խարսնիս, բանալիք>պուլ-նիս և այլն): Վերի կանոնին ենթարկվում են միայն 28 բառ, որոնցից 12 հատը սղում է ձայնավորը, մնացյալը պահում է: Սղումը գտնում ենք հետևյալ բառերի մեջ.

աւետարան>աւէտրան, աւէտրենի,
բարեկէսնդան>պորկէնդոնքյ, սեռ. պորկէնդոքյի (մինչև իսկ ն ընկած)

գերեզման>կյէրէզման, կյէրէզմընի
դատաստան>տոտոստան, տոտոստընի
երնջնակ>էրըժնոկ, էրըժնըկի
խարազան>խորէզոն, խորէզնի
ծառզարգար>ծառզորտոր, ծառզորտրի
կարկատան>կարկըտան կարկըտնի
կորնգան>կորընգյոն, կորընգյընի
հրեշտակ>խրիշտակ, խրիշտըկի
նապաստակ>լապըզտըրակ, լապըզտըրկու
շատրուան>շատրուվան, շատրուվընի
շինական>շինական, շինայնի (որ է *շինակնի, ուր կ վե-
րածված է յ՝ հաջորդ բաղաձայնի մոտ (§ 133)
պատինճան>պատընջոն, պատընջընի

Առանց սզման են մնում հետեյալ բառերը.

աղաչանք	աղաճոնք, -ի	խոնդատ	խըռընդատ, -ի
աղեղնակ	անանակ, -ի	մանուշակ	մանուշակ, -ի
անառակ	անառակ, -ի	պատարագ	պատարաք, -ի
անասուն	անասուն, -ի	պատուհաս	պատուխաս, -ի
աւազան	աւազան, -ի	ջրյորդան	ճոռօթան, -ի
արեգակն	արեկյոկ, -ի	սարկաւագ	սարկավաք, -ի
բարունակ	պորիւնակ, -ի	օրինակ	օրինակ, -ի
զարդարանք	զորդորունք, -ի		

313. Երբ ըստավերջում կա ա կամ ո ձայնավորը, հոլովման ժամանակ ջնջվում է Այսպիս են՝

բակլայ > բոյլո, բոյլի, բոյլից, բոյլով
խարխնծիկ > խախիզո, խախիզի, խարխիզի
կասկարայ > կասկարա, կասկարի
կթղայ > կթխա, կթխի
կրեայ > կրբո, կրբի
շուշփայ > շուշփա, շուշփի
սատանայ > սատանա, սատանի
տղայ > տղա, տղի, տղու, տղից, տղուց
փեւայ > փէսա, փէսի
քահանայ > քյախանա, քյախանի

Նույնիսկ անկողին բառը, որ գյօղվէնք «ծալք» ձեն ստանալուց հետո՝ դարձել է գյօղվա (տես § 272), այս կանոնի համեմատ հոլովվում է ա-ի կորուստով՝ գյօղվի, գյօղվից, գյօղվով:

314. Այն երկավանկ և եռավանկ բառերը (չորս վանկով բառեր չկան), որոնք վերջավանկում ունեն ե կամ է ձայնավորը, հոլովման ժամանակ, անկախ հոլովան տեսակից, մեծագույն մասամբ կորցնում են այդ ձայնավորը. օր.

ասեզն	ասեզ, ասզան, ասզի	տաշեզ	տաշեզ, տաշզի
անձրե	անձրեվ, անձրվու	ցորեան	ցորէն, ցորնի

Մի մասը դարձնում է ի. ինչ.

աներ	աներ, անիրոշ	աւել (ավլելու)	ավել, ավիլի
արե	արեվ, արիվու		կամ ավլի
երես	իրես, իրիսի	երեք	իրեք, իրիքի

Մի մասն էլ պահում է ձայնավորը, ինչ.

աշակերտ	աշկեոտ, աշկեոտի	դդա	կտէլ, կտէլի
անէծք	անէծք, անէծքի,	շրէշ	շրէշտ, շրէշտի
	անէծքու	սարեակ	սարէկ, սարէկան
դիշեր	կիշեր, կիշերվա(ն)	սկեսրայր	կէսրէր, կէսրէրի
կորեակ	կորեկ, կորեկան	տեսիլք	տեգէլք, տեգէլքի
գմբեթ	քյումբէթ, քյումբէթի		

315. Ձկրկնելով այն օրինակները, որոնք հոլովման ցուցակներում կամ վերևում հիշված են արդեն, ստորև մեջ ենք բերում մնացյալ այս կարգի բառերը, այբուբենական կարգով.

անդրանիկ	տնդրտնէկ, տնկի	ձուածեղ	ծվողեղ, ծվողղի
արբանեակ	տրպնէկ, տրպընկի	ճիպո	ճպեոտք, ճպըք, յի
բաղեղն	պոռեղ, պոռիղու	պատկեր	պատկերք, պատ-
գոհ	գյըռեխ, գյըռխի		կըրք, յի
դրկից	տրկէց, տրկցի	պարսէտ	պարսետ, պարսը-
երկայն	էրկէն, էրկընի		տի, -սետի
ծոթրին	ծէթրէն, ծէթրէնի	սիսեոն	սիսետ, սիսետի
ծիծեռնակ	ճճըռնեկ, ճճըռնըկի	ստերջ	ստետճ, ստըճի, ստեճի
կանթեղ	կանթեղ, կանթղի	վարդապետ	վրտրտպետ, վրտ-
կապերտ	կարպետ, կարպտի		տոպտի
կլայեկ	կլայեկ, կլայկի	վարժապետ	վրժտպետ, վրժ-
կշիռ	կշեռք, կշըք, յի		ժոպտի
համեմ	խամեմ, խամմի	քցիմ	քյիժեփ, քյիժեփի
հեղեղ	խղեղ, խղըղի		

Ինչպես տեսնում ենք, օրինակների մի մասը ուղղակի զրաբարի շարունակությունն է (օր. ասեղ, ասղան), մի մասը կազմված է զրաբարի սղման հին օրենքին համաձայն (օր. տըրկէց, տրկցի), մյուսները ձևավորված են Վանի բարբառի սղման օրենքների համաձայն (կապերտ, կարպտի), իսկ ամենից ավելի «բարոստ» բառերը չեն ենթարկվում սղման օրենքին (շրէշտ — շրէշտի, տեգէլք — տեգէլքի, փխ. գրբ. տեսլեան):

316. Ինչպես միավանկ, նույնպես և այն բոլոր բազմավանկ բառերը, որոնք իրենց վերջավանկում ունեն ի, հոլովման ժամանակ, առանց բացառության սղում են այդ ձայնավորը կամ վերածում ը-ի:

Շատ բազմաթիվ օրինակներից հիշենք նախ հայերենի սովորական բառերը. ինչ.

անիծ>անիծ, անծի

աղիս>օղիս, օղսի

բլիթ>պլիթ, պլթի

դարբին>տորպին, տորպնի

խաւարծի>խավըծիլ, խավըծլի

շապիկ>շապիք, շապկի (կ վերականգնված)

ստեպղին>տապղին, տապղընի

ոսկերիչ>վոսկրիչ, վոսկրչու

բ) Այն բառերը, որ Վանի բարբառը կազմել է իր կողմից ավելացնելով -իկ փաղաքշական մասնիկը. ինչ.

մատանի>մատնիկ, մատընկան

հայելի>խայլիկ, խայլկան

այր>իրիկ, իրկան

աղաւնի>յէղունիկ, յէղունկան

սարդոստայն>սարանդէօստիկ, սարանդէօստկի

մժեղ>մժիկ, մժկի

մլուկ>մլիկ, մլի

կռիկ «ազոավ», կըռկի, կոկան

գ) Գրաբարի անեզական բառերը, որ իբրև եզակի վերցնելով և պահելով ք վերջավորութիւնը՝ հոլովվում են սովորական ձևով. ինչ.

աղիք>աղիք, աղքյի

առիք>առիք, առքյի

քիրտն, քրտինք>քըռտիք, քըռտըքյի

դ) Նույն կարգի բառերի հայցականը, որ նույնպես իբրև եզակի է վերցրած և հոլովվում է սովորական ձևով. ինչ.

բաղանիք>պողնիս, պողնսի

թաղիք>թաղիս, թաղսի

բանալի>պտլնիս, պտլնսի

հարսանիք>խարսնիս, խարսնսի

երգիք>էրտիս, էրտսի

տանիք>տանիս, տանսի

Յ17. Ինչպես միավանկ, նույնպես և բազմավանկ բառերի վերջավանկի ո, ճ կամ օ ձայնավորը չի սղվում հոլովման մեջ. ինչ.

խնձոր>խնձոր, խնձորի

ալևոր>խալիվոր, խալիվորի, -րու

խաղող>խավող, խավողի

խստոր>սխտոր, սխտորի

դամոն>տոմոն, տոմոնի

կթոց>կթոց, կթոցի

ջնջոց>ճնջահ, ճնջահի ամօթ>ամօթ, ամօթի
 կարոս>կարօս, կարօսի արօր>արօր, խարօր, արօրի
 աղօթք>աղօթկ, աղօթկի թափօր>թափօր, թափօրի ևն,
 աղօս>ակոս, ակոսի

Ունենք միայն 7 բառ, որոնք չեն ենթարկվում այս օրենքին և իրենց շեշտյալ ձայնավորը սղում են: Այս բառերն են՝

կապոյտ>կապոտ Շլեզակ՝, կապտի, կապտու
 կորկոտ>կուրկոտ, կուրկրտի
 կողով>կօղօվ, կօղվու, կօղվի
 ճկոյթ>ճկոթ, ճկթի
 ոսկր>ուսկոռ, ուսկուի
 ուղեղ>ուղող, ըղըղան
 փողոց>փուղոց «Ճեմիշ», փուղցի

318. Գանք այժմ այն բազմամանկ բառերին, որոնց վերջավանկի ձայնավորն է ու, իւ կամ էօ:

Սրանցից առաջինը ընդհանրապես սղվում է. օր.

արիւն>արուն, արնի
 արմուկն>արմունգյ, արմընգյի
 արտասուք>առտսունքյ, առտսընքյի
 կամուրջ>կարմունջ, կարմընջի
 կարկուտ>կարկուտ, կարկըտի
 կռունկ>կռունգյ, կըընգյու
 կրուկ>կրունգյ, կըընգյուն
 հերիւն>խիրուն, խիրնի
 մածուն>մածուն, մածնի
 տզրուկ>տզրուկ, տզըըկի
 պոյտն, պուտուկ>պուտուկ, պուտկի
 պատրոյգ>պատրուքյ, պատըքյի

Բացառաբար սղումից ազատ են մնում մի քանի բառայն է՝

թրթուր>թոթուռ, թոթուռի
 խախուտ>խախուտ, խախուտի
 կակուղ>կակուղ, կակուղի
 կնունք>կնունքյ, կնունքյի

մօրուս > մուրուս, մուրուսի
 յիշոց > իշունց, իշունցի (ուշունց)
 յիսուն > իսուն, իսունի
 ողջոյն > վոխճում, վոխճումի
 պատրոյս > պատրուս, պատրուսի
 վարագոյր > վորտկոյուռ, վորտկոյուրի
 տորոն > տուրուն, տուրունի

319. Իւ ձայնավորն էլ միշտ սղվում է. այսպես են՝

ալիւր > ալիւր, ալրի	դդում > տալւմ, տամի
աղբիւր > ախպիւր, ախպըրի	երդումն > էօրտիւմ, էօրտման
քաղուկ (բույսը) > պողիւկ,	ձմերուկ > ծմբիւկ, ծմբրկի
պողկի	փափուկ > փոփիւկ, փոփկի

Բացառաբար առանց սղման են մնում՝

հանելուկ > խանելիւկ, խանելիւկի
 ուրիշ > իւրիւշ, իւրիւշու

Քսկ էօ ձայնավորի համար ունենք երեք օրինակ, որոնք են՝

աքլոր > ահյէօր, ահյէօրի
 քարաթոթոշ > քյտոթոթէօշ, քյտոթոթէօշի
 գլուխ > կյըլէօխ, կյըլխու

Առաջին երկուսի մեջ էօ չի սղված, որովհետեւ ծագում է ո ձայնավորից, երրորդում սղված է, որովհետեւ ծագում է ու ձայնավորից:

320. Հոլովման ժամանակ բառի ձայնավորի փոփոխութեան հետաքրքրական մի երևույթն էլ այն է որ՝ եզակի ուղղականի ո ձայնավորը սեռականում ու հոլովման մեջ դառնում է ու կամ իւ. Ձայնավորների նմանութեան օրէնքն է այս, որի մասին խոսել ենք վերը § 263: Եղած օրինակներն են՝

խոզ > խոզ, խուզու, խուզուց, խոզով, խոզեր
 հոդ > խոդ, խուզու
 հոգի > խոկյի, խուկյու
 թոյլ > թհլ, թիւիւ, թէօլով, թէօլեր
 լոյս > լհս, լիւսիւ, լէօսով, լէօսեր
 շորի > ճորի, ճիւրու, ճորու
 ջոջ > ճհչ, ճիւճիւ, ճիւշիւ, ճէօջով

կոյր>կոր, կուրու

գող>կյող, կյուղու, կյուղուց, կյողով, կյողեր

թագաւոր>թաքավոր, թաքավուրու, ~վուրուց, ~վրով

խստոր>սխտոր, սխտորու, սխտուրու

կեղծաւոր>կէղծավոր, կէղծավուրու

[կն]քաւոր>քյավոր, քյավուրոշ

մեղաւոր>մեղավոր, մեղավուրու

ուխտաւոր>ըխթավոր, ըխթավուրու

քոյր>քոր, քիւրոշ

Ինչպէս տեսնում ենք, ու ձայնավորը դառնում է միշտ (բացի մի դեպքից) ու, իսկ ճ դառնում է միշտ իւ:

Ձայնավորը փոխվում է այն ժամանակ, երբ հոլովական վերջավորութիւնն էլ ունի ու. այսպէս. օր.

թաքավոր, թաքավուրու, թաքավուրուց, բայց թաքավրով.

գոմէշ>գյէօմէշ, գյիւմշու, գյիւմշուց, բայց գյէօմշով, գյէօմէշներ.

Այսպիսի ձայնափոխութեան լավ օրինակ է բոց>պոց, որից ստանում ենք սեռ. պիւցիւ, բցո. պիւցիւց, գրծ. պէօցով:

Նման ձայնափոխութիւն կրում են հոլովման մեջ՝

երես>իրես, սեռ. իրիսի երեք>իրեք, սեռ. իրիքի

որոնք ցույց են տալիս ձայնավորների նմանողութեան վերոհիշյալ օրէնքը:

Սրանց նման է այր>իրիկ, սեռ. իրկան.

321. Այժմ երբ մի ընդհանուր հայացք գցենք մի կողմից հոլովման, մյուս կողմից հոգնակիի կազմութեան և երրորդ կողմից այս երկուսի մեջ գործադրված սղման օրէնքների վրա, կտեսնենք թե՛ սրբան անկանոն է Վանի բարբառում հոլովումը, ինչպիսի խառնակ անցման շրջան է ապրում նա, և որքան իմաստուն են գտնվել մեր երկու գրական լեզուների առաջին հեղինակները, որոնք կարողացել են լեզու կառուցել շատ ավելի պարզ ու կանոնավոր հիմքերի վրա:

5. ՀՈՒ

322. Անորոշ հոգն է մ, որ այս ձևի տակ դրվում է ձայնավորով հանգող բառերի ծայրին, իսկ բաղաձայնով հանգող բառերի ծայրին դառնում է ըմ. օր.

ծիմ առի «մի ձի առի»

խացըմ տուր Վժի հաց տուր»:

Երբ հաջորդ բառը սկսի ձայնավորով, անորոշ հոգն է դարձյալ մ. ինչ. մարթ մ'էկավ:

Երբ գոյականը վերջանա և բաղաձայնով, այս և-ն՝ հաջորդական մ' անորոշ հոգի մոտ ջնջվում է. օր.

պոմ չասաց «ոչինչ չասաց»

պոմ ասա խեմ Վժի բան ասա տեսնեմ»

տում ունեմ «տուն մը ունիմ»

շում էկավ մօ ձիյ Վժի շում եկավ ինձ մոտ»

տամ մէջ սում կա, շատ խորոտ ի

պէրամ էրկու ասիցի, չլսով

ըսկուն ծիւ մ' էկավ վոր «այնպիսի մի ձիւն եկավ որ»

Նուշնիսկ հոգնակի բառերից հետո կարելի է դնել անորոշ հոգը. ինչ.

պոներ մ' ասաց՝ չխասկըցա.

ըսկուն տներ մ' ի շինե վոր (այնպիսի տներ է շինել ռը)

կերեր մ' կերանք վոր (այնպիսի կերակուրներ կերանք ո՞ր):

Երկրորդ օրինակում մ' հանդիպելով հետագաս ի («է») էական բային՝ ստացել է մի ձևը, որ սակայն պետք է վերլուծել մ' ի.

Կարելի է գոյականից առաջ դնել նաև մէկ կամ մէյ. առաջինը ընդհանրապես ձայնավորով սկսվող բառերից առաջ, իսկ երկրորդը՝ բաղաձայնով սկսվող բառերից առաջ: Վերջին դեպքումն էլ կարելի է դնել նաև մէկ. օր.

մէկ խաց տուր կամ մէյ խաց տուր

մէկ աթոռ պե Վժի աթոռ բեր»:

Անորոշի գաղափարը զորացնելու համար կարելի է նաև դնել մէյ խա, որ է «մեկ հատ». ինչ. մէյ խա մարթ էկավ:

Բայց առանց որևէ նշանի էլ գոյականը կարող է համարվել անորոշ. ինչ.

խաց կուտեմ. մարթ մ' էկավ կամ մարթ էկավ (ինչ որ մարթ եկավ):

323. Որոշիչ հոգն է ձայնավորով վերջացող բառերի համար և ինչ. խոկյիւն խասավ պէրան,

Բաղաձայնով վերջացող բառերը ոչ և են ստանում, ոչ էլ Ը՝ Վանի բարբառը նշանավոր է ք հոգի գործածության թերացմամբ. շատ անգամ տեսնում ենք թե ինչպես՝ նույնիսկ ամենից ավելի կրթված վանեցին չի կարողանում ընտելանալ հայերենի ք հոգի գործածության. և ասում է օրինակի համար՝ «այս մարդու այն կին կովեցան իրար հետ. մեր տուն մեծ է. Վանա քաղաք գեղեցիկ է» և այլն. կամ բնիկ բարբառով՝ «Ի՛նչ խամեղ ի Շուրը համեղ է»։ Ըստ այսմ «Ի՛նչ նշանակում է թե Շուրը» և թե Շուրը»։ Բայց սա չի նշանակում թե Վանի բարբառը այս դեպքում չի գիտակցում բառի որոշյալ թե անորոշ լինելը։ Որովհետև եթե այդ գիտակցությունը չլիներ, նախ՝ ձայնավորով հանգող բառերն էլ չպիտի ունենային և, երկրորդ՝ միևնույն այդ բաղաձայնահանգ բառի սեռականը կամ տրականը ստանում է որոշիչ հոգ (խացին ծեռ մի՛ տա), որովհետև բառը այս պարագային արդեն ձայնավորով է վերջանում, և երրորդ՝ նույն բառը կստանա և, եթե ընկնի ձայնավորով սկսվող բառի մոտ. օր. ասում ենք «Ինոր խէր, մէր մեռան»։ այստեղ խէր և մէր չունեն որոշիչ հոգ. բայց այնուամենայնիվ որոշյալ են, որովհետև և որոշիչ հոգերը իսկույն երևան կգան, երբ ասենք՝

Ինոր խէրն էլ, մէրն էլ, ախպէրն էլ քյոնն էլ մեռան կնացին. կամ՝

Յես քյո խէ՞րն եմ, մէ՞րն եմ, պտրէկա՞մն եմ...։

Եթե վանեցին գիտակցում է թե բառը որոշյալ է, ուրեմն ինչո՞ւ չի դնում ք վերջավորությունը։ Որովհետև Վանի բարբառը ընդունակ չէ բառավերջում արտասանելու ք ձայնավորը։ Այս հատկությամբ նա նմանվում է հին գրաբարին, որ բառերի ծայրին ք չգիտե։ Այսպես է նաև գրական ֆրանսերենը, որ նույնպես անընդունակ է բառավերջում արտասանելու ք ձայնավորը, թեև ոտանավորի մեջ, ինչպես նաև գյուղական արտասանության մեջ՝ դեռ այդ ք ձայնավորը կա (ինչ. la rose լա րոզ=լա րոզը)։

Վանի բարբառը նաև բառասկզբում չունի ք, տես այս մասին վերը § 29.

Մանր. 1.— Բաղաձայնով վերջացող որոշյալ մի բառ եթե գտնվի ձայնավորով սկսող մի բառից առաջ, կարող է ստանալ և որոշիչ հոգը. ինչ. մազն էրկէն ի։

Մանր. 2.— Եթե բառը վերջանա կ, քյ բաղաձայններով,
և որոշիչ հոգից առաջ կ-ն դառնում է յ, իսկ քյ-ն դառնում է
նյ. ինչ.

Կրայն (կրակն) ուր պողըռճի տայ կուզի.

Ճարպիյ մույն (մուկն) չորս վռտնով կինի ակնառ.

Ծիւյն (ձուկն) առանց փուշ չէլնե.

Ճրահյն (ճրագն) ուր տայ լիս չի տա:

324. Ըստ այսմ թե անորոշ և թե որոշյալ գոյականը, եթե
վերջանում է բաղաձայնով, միևնույն ձևն ունի նախադասու-
թյան մեջ. օր.

մարք էկավ, նշանակում է թե «մի մարդ եկավ» և թե
«մարդը եկավ». վանեցին սրանց տարբերությունը հասկանում
է շեշտից. այսպես՝

մա՛րք էկավ, նշանակում է «մի մարդ եկավ, որևէ մարդ
եկավ», իսկ՝

մարք էկա՛վ, նշանակում է «այն մարդը՝ որի մասին խո-
սում էինք, եկավ»:

Զարմանալի է սակայն այն, որ երբեմն և և ը հոգերը
միասին են գրվում մի գոյականի վրա:

Ահա այսպիսի օրինակներ, որ քաղում եմ Շերենցի Վանա
սազից (հտ. Ա).

եջ 38. Իմ հարոշ մեռնեմ, բոյնը չինար ի:

եջ 45. Ախչիկ կուկյէր կալէնը խեռ,

Կը զնգյզընգյէր շուշէնը խեռ:

եջ 46. Իմ ծոցի կութինը թուջ էր (թրք. qutə տուփ):

եջ 81. Սարէկ պոց, կատուներ խան:

եջ 140. Իմ խէրանց տանսէնը խեռ տանսէ խիծեւ ի:

եջ 109. Առատունը էլնի էրթա ուր պտնին:

եջ 109. Տղէնը տան կյիրիկ:

եջ 110. Պուրուզունը քսքսկնա իրիցավ:

եջ 111. Պստի աղէնը կխնթրվի մօրից:

եջ 111. Թուր կքյոշի որ պառվունը կտոր կտոր անի:

եջ 112. Լալէնը (Լալան) մեղրի մոմից մէյ խատ կարիճ կշինի:

եջ 113. Նախըչինը շատ կէրթա կուկյո:

եջ 121. Աղէկ ծինը ուր յեմ կավեցուցի:

Մի քանի օրինակ էլ Լալայանի «Վասպուրական» գրքից (Ա պրակ),

էջ 60. Յարէնը (վերքը)։

էջ 78. Լէզունը ևն.

էջ 52. Չէ, պօռաց էն դեխէն արնաթաթախ տիրացունը։

էջ » էն սաղ մնացած տիրացունը։

էջ » Տէս, տիրացունը ինչի՞ իկեր ի։

325. Անձնանունները ստանում են որոշիչ հոգ (հակառակ գրաբարի). օր.

Պկօն էկավ, Մառտօն կնաց։

Իսկ տեղանունները որոշիչ հոգ չեն ստանում. ինչ.

Ղվրտկի մոտ ի Շողրտղու։

Պէրկրի պստիյ քյաղաքյ ի։

Ղրտղի՞ ի մօտ թէ Պէրկրի։

Սխէյա՞ ի զաա էկջէաաաաա թէ՞ Սաբաա։

6. ԱՄԱԿԱՆԻ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ

326. Բաղդատական ածական կազմելու ամենահասարակ ձևն է համեմատելի առարկան դնել րացառական հոլովով. օր.

Բորդին ուռից պանցր ի.

«Բարտին ուռենուց բարձր է»։

Կարելի է նաև համեմատելի առարկայի վրա դնել վէր «վրա» կամ չոնձ «քան ղ» բառերը. օր.

Բորդին վէր ուռին պանցր ի.

Բորդին չոնձ ուռին պանցր ի.

էն չոնձ զի ճո՛չ ի

«Նա քան զիս մեծ է»։

327. Բաղդատականը սաստկացնելու համար կարելի է նաև ավելացնել նրա վրա կամ ռվիլի «ավելի, առավել» բառը և կամ դիա բառը, որ թրք. daha «ավելի, էլ, դեռ» ձևից է սղված. օր.

էսա տուն ենա տնից ռվիլի (դհա) պանցր ի, դհա աղէկ ի։

328. Բաղդատական աստիճանի թուլացման համար կա երկու միջոց. առաջինն է գոյն > կյանք բառը, որ իբրև մասնիկ միանում է գուլյն ցույց տվող մի քանի ածականների վրա. այն է՝

կարմրակյան	«կարմրագուլյն»	բօզակյան	«գորշագուլյն. թրք. boz բառից»
սիվաբլակյան	«սպիտակագուլյն»		
կապուտակյան	«կապտագուլյն»	կանչակյան	«կանաչագուլյն»
պղնձակյան	«պղնձագուլյն»	ամբակյան	«կապտագուլյն»
թունքակյան	«թանաքի գուլ- խողակյան	«հողագուլյն»	
	նով, մանիշակագուլյն»	մամուկյան	«մամուռի գուլ- նով»

Երկրորդն է նմուշ «նշան, կերպարանք, օրինակ», որ իբրև մասնիկ կցվում է բազմաթիվ ածականների վրա. օր.

կարմրանումուշ	«կարմրավուն»	ճոճանումուշ	«մեծավուն»
սևանումուշ	«սևավուն»	պըստկանումուշ	«փոքրավուն»
տեղնանումուշ	«դեղնավուն»	խաստանումուշ	«հաստավուն»
սիվտկանումուշ	«սպիտակավուն»	էրկնանումուշ	«երկարավուն»
կանչանումուշ	«կանաչավուն»	կառճանումուշ	«կարճավուն»
կապոտանումուշ	«հապաավուն»	պարտկանումուշ	«բարակավուն»
բօզանումուշ	«գորշագուլյն»		

(թրք. boz «գորշ» բառից)

Բայց նույն մասնիկը կարելի է դնել նաև գոյականների վրա, որոնք այս դեպքում ածականաբար են առնված. այսպես՝

պղնձանումուշ	«պղնձանման»	խողանումուշ	«հողանման գուլ- նով»
էրկըթանումուշ	«երկաթանման»		
քյարանումուշ	«քարանման»	մոխրանումուշ	«մոխրանման»
մարթանումուշ	«մարդանման»	կավանումուշ	«կավանման»
ճրանումուշ	«քիչ ջրալի»		

329. Գերադրական կազմելու համար ածականին կցում ենք հոմն (<թրք. e'n ամենա-) մասնիկը և կամ հըմմէնից (գյուղերում՝ զըմմէնից) բառը. ինչ. հոմն պանցըր «ամենաբարձր», հըմմէնից (զըմմէնից) պանցըր «ամենքից բարձր»:

Գերադրականի այն ձևը, որ գտնվում է զանազան բարբառոսներում (շիփ-շիտակ, լեփ-լեցուն և այլն) գործածական չէ Վանի բարբառում:

7. ԹՎԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ

330. Բացարձակ թվականները հետևյալներն են.

1 մէկ, 2 էրկու, 3 իրեք, 4 չորս, 5 խինգ, 6 վեց, 7 յօթ, 8 ութ, 9 ին, 10 տաս, 20 կասն, 30 յեոսուն, 40 քյաոսուն, 50 իսուն, 60 վաթսուն, 70 յեթմիշ, 80 սոնյասոն, 90 դօխսան, 100 խարիր, 1000 խաղտր, իսկ փիյուր (բյուր) որոշ թիվ չէ, այլ նշանակում է «շատ, չափազանց շատ» (70, 80, 90 փոխառյալ են թուրքերէնից):

331. Տասնյակների միացումը միավորների հետ կատարվում է հետևյալ ձևով. 1) տասն թվականը կրճատմամբ ստանում է տքսնը՝ ձևը, երբ հաջորդ միավորը սկսվում է բաղաձայնով. 2) դառնում է տքս՝ երկու և երեք թվականների մոտ, որոնց հետ միանում է վ շաղկապով. 3) ստանում է տքսն՝ ձևը՝ ձայնավորով սկսվող 8 և 9 (նաև 7) թվականների մոտ, որոնց հետ միանում է էվ շաղկապով: Ըստ այսմ 11—19 թվականները ունեն հետևյալ ձևը.

11 տքսնըմէկ	16 տքսնըվեց
12 տքսվէրկու	17 տքսնըյօթ, տքսնէվյօթ
13 տքսվիրեք	18 տքսնէվութ
14 տքսնըչորս	19 տքսնէվին
15 տքսնըխինգ	

Մնացյալ բոլոր թվականները կցվում են առանց որևէ միացման կապի. ինչ. 21 կասն մէկ, 35 յեոսուն խինգ, 46 քյաոսուն վեց, 47 քյաոսուն յօթ, 59 իսուն ին, 102 խարիր էրկու, 103 խարիր իրեք, 108 խարիր ութ, 109 խարիր ին, 1019 խաղտր տքսնէվին, 1259 խաղտր էրկու խարիր իսուն ին:

332. Բացարձակ թվականները կարող են նաև առանձին գործածվել, և այն ժամանակ հղովվում են հետևյալ ձևով.

1 մէկ, մէկու, մէկուց, մէկով. (անձի համար թեև առում են մէկում տո՛ւ «որևէ մեկին տո՛ւր», բայց ժամի համար ասվում է՝ սրճոթ մէկին կուկյոմ. բացառականն է մէկուց, չկա մէկից).

2 էրկուս, էրկըսի, էրկըսից, էրկըսով

3 իրեք, իրիքի, իրիքից, իրիքյով

4 չորս, չորսի, չորսից, չորսով

5 խինգ, խընգի, խընգից, խընգյով

- 6 վեց, վեցի, վեցից, վեցով
 7 յօթ, յօթի, յօթից, յօթով
 8 ութ, ութի, ութից, ութով
 9 ին, ինի, ինից, ինով
 10 տաս, տասնի, տասնից, տասնով
 20 կսան, կսանի, կսանից, կսանով
 30 երեսուն > յեռսուն, յեռսունի
 40 քյառսուն, քյառսունի, -նից, -նով

Ինչպես տեսնում ենք, հակառակ ուրիշ բարբառների, թվականները հոգ չեն ստանում: Որոշիչ հոդը գալիս է նախ տրականի վերջում (չորսին, խընգյին, ինին, կսանին, քյառսունին) և երկորդ՝ երբ թվականը դրված է էլ շաղկապի մոտ. ինչ. մէյն էլ, էրկուսն էլ, իրեհյն էլ, չորսն էլ, խիյն էլ, ութն էլ, ին էլ և այլն: Այս բոլորի մեջ նկատելի է, որ 1) մէկ բառի վերջածայնը և բաղաձայնի մոտ վերածված է յ. 2) իրեք բառի վերածայն քյ ըստ օրենքի վերածված է հյ հաջորդ բաղաձայնի մոտ. 3) նմանապես խիւնց բառի վերջածայնը դարձել է պարզապես յ. իսկ 4) ին թվականը չի ստացել և որոշիչ հոդը՝ խոսսափելու համար և բաղաձայնի պատահական կրկնությունից:

Գրաբարից մնացած ձևեր են՝ խազոր խազորաց կամ խազոր խազորոց և փիւր փիւրոց:

333. Դասական թվական չկա Վանի բարբառում. թրք. բիրիւնջի «առաջին» բառը գործածվում է «առաջնակարգ, գերազանց» իմաստով. իսկ իքիւնջի կամ երկուքիւնջի, իւշիւնջի կամ իրեքյիւնջի և այլն խառն ձևեր, որ գտնում ենք այլ բարբառներում, չեն գործածվում Վանի բարբառում:

334. Բաշխական թվականները կազմվում են երկու ձևով, -ական մասնիկով կամ պարզ կրկնությամբ:

Առաջին ձևով ունենք՝ մէկական, էրկուական, իրեքական, չորսական, խընգական, վեցական, յօթական, ութական, ինական, տասական և այլն:

Երկրորդ ձևով ունենք՝ մէյմէկ, էրկու էրկու, իրեք իրեք, չորս չորս, խիյ խիւնգ և այլն:

Առաջին ձևի բաշխականները սովորական չեն. ավելի լավ են համարվում կրկնական ձևերը:

335. Զափական թվականներն են՝ մէյնոց, էրկըսնոց, իրիհյնոց, չորանոց, խիյնոց, վեցնոց յօթնոց, ութնոց, ինոց, տասնոց, կսանոց, խարըրնոց, խտզտրնոց և այլն:

Ց. ՄԻՋԱԿ ԱՆՈՒՆՆԵՐ

336. Հըմէն, հըմէնի (կամ հըմէնու), հըմէնին, հըմէնից, հըմէնով (գյուղերում՝ զըմէն և այլն):

Բիւթիւն (<թրք bitün) «ամբողջ, բոլոր», բիւթիւնից և այլն:

Հըմէն մէկ, հըմէն մէկին, հըմէն մէկից, հըմէն մէկով և այլն:

Մէկէլ (որ և է՛մէկէլ, այսինքն է՛նմէկէլ) «մյուսը», մէկէլին, մէկէլից, մէկէլով, մէկէլներ, մէկէլներաց, մէկէլներով:

Քյտնի մ', քյտնիհյտեր, քյտնիհյտերաց, քյտնիհյտերով:

Ինչ, ընչի, ընչին, ընչից, ընչով, ինչեր, ինչերաց, ինչերով. նաև ինչի, ինչից, ինչով. կրկնությամբ ինչ-վի՛նչ, այն է «ինչ ու ինչ». օր. ինչ-վի՛նչ եմ պի՛րե:

Ո. վով	վովեր
Ս. Տ. վիւր (<զրբ. հյր)	վովերաց
Հ. վիւր	»
Բ. վիւրնից, վիւրմից	»
Գ. վիւրնով, վիւրմով	վովերով

(Օր. ասվում է վիւր կյիւրքյ վիւր տվիւր «որի գիրքը համ տը-վիւր»):

Ո. վոր	վուրոնքյ
Ս. վուրու	վուրոնց
Տ. վուրուն	»
Հ. վոր	վուրոնքյ
Բ. վուրուց, վուրմից, վուրմից	վուրոնցից, վուրունց- մից (կամ վուրոնցմից)
Գ. վուրնով, վուրմով	վուրոնցմով

Վճիռ մէկ, վճիռ մէկուն, վճիռ մէկուց, վճիռ մէկով:
 Վոչ մէկ, վոչ մէկուն, վոչ մէկուց, վոչ մէկով:
 Շատեր, շատերաց, շատերով (շատեր կնաջին էկան):
 Իւրիւշ «այլ ոք»:

Իրոր, իրորու, իրորուց, իրորով:

Մէյմէկու, մէյմէկուց, մէյմէկով, կամ՝ մէմէկու, մէմէկուց, մէմէկով:

Պնդոր-խորդոր «շատերը»:

ՀնուԹյան հետաքրքրական մնացորդ է ունը > ոմն բառը, որ գտնուում ենք մի հին տաղի մեջ.

Ոմը զանի բուրկարին, ոմը զանի քյամանչէն,

Ոմը աւի խաղ, ոմը տաղ, վո՞վ կմնա սաղ:

Շերենց, Վանա սաղ, Ա. 71

9. ԳԵՐԱՆՈՒՆԵՐ

337. Անձնական գերանուններն են՝

Ա. գեմք

Ո.	յես	մինք
Ս.	իմ	մեր
Տ. Հ.	ձի, ձիկ, զիկ, զի	մե
Բ.	ձիզնից, զիզնից, զիզմից, ձիզմէ	մեզնից
Գ.	ձիզնով, զիզնով	մեզնով

Ծան.—Ձի, ձիկ ձեք առաջացել է ինձի, բնձի ձեից՝ նախա-վանկի անկումով (տես § 29). դրա համար էլ դեռ մնում է ձ բաղաձայնը և չի դարձել ծ: Բաղաձայնից առաջ դառնում է ձիյ. օր. մօ ձիյ կաբիւլ ի «ինձ համար ընդունելի է»: Կա նաև բց. ձիյնից «ինձանից» ձեք. օր. ի՞նչ կուգես ձիյնից (Մանանա, էջ 182):

Հետաքրքրական ձև է մէնէս, որ նշանակում է «ինձնից», ուս-տի=գրք. յինէն, Պլ. ինէ: Պահված է մի հին առածի մեջ. էլե մէնէս, կուտա վէրէս (ինձնից է դուրս եկել, ինձ բան է սովորեցնում): Այստեղ մէն, մէնէ բացառականի մասնիկն է. վերջահար ա-ն առա-

ջին դեմքի ստացական հոդն է. իսկ արմատը չկա. երևի պիտի լինի իմ կամ ին(ն), որ ջնջվել է:

Գյուղական ձևերն են բց. զըսնից «ինձնից», ձինէ, ձկնէ «ինձանից»:

Բ դեմք

Ո.	տիւ	տիւքյ
Ս.	քյո	ծեր
Տ. Հ.	քյե	ծե
Բ.	քյեզնից	ծեզնից, ծեզնէ, ծեզմից
Գ.	քյեզնօլ	ծեզնօլ

Ման.— Ուշադրության պետք է առնել ծեզնից, ծեզնօլ ձևերը, որոնք Ա. դեմքի գերանվան ձիզնից, ձիզնօլ ձևերից շատ քիչ են տարբերվում:

Երրորդ դեմքը վերցնում է ցուցականից: Բայց անկախ է՝

Ո.	զինքյ	ուրանքյ, ուրենքյ
Ս.	ուր	ուրանց, ուրենց
Տ.	ուր	ուրանց, ուրենց
Հ.	ուր	ուրանց, ուրենց
Բ.	ուրմից	ուրանցից, ուրենցից
Գ.	ուրմօլ	ուրանցմօլ, ուրենցմօլ

Գեղջկական ձևն է ուրմէնէն «լրանից»:

Դերանվանական ձևերն են՝ զիզի, ձիյծի «ինքս ինձ» (օր. ձիյծի ըսկնտ կասի կգարմանի), քյեքյե «քեզուքեզ» (օր. քյեքյե ինչ խոբոր կուտա «ինչ ես ասում քեզ ու քեզ»): Ո. զինքյ-զինքյ կամ ուրնուր (օր. ուրնուր ինգյով, ուրնուր կլորվավ, ուրնուր խոբոր կուտա «ինքնիրան խոսում է»), Հ. զինքյուր, զինքյնուր (օր. զինքյուր սպանեց «ինքն իրեն սպանեց», Բ. զինքյնուրմից, Գ. զինքյնուրմօլ.— Ուրնուր չի հոլովվում: Գեղջկական ձև է բխօ, որ պրս. bexod ձևից է կրճատված. օր. ես բխօ «ես ինքս». ես բխօ չըմ կիտէ (Հալալյան, Վասպուրական, 146):

Ուրանքյ, ուրենքյ կարող են ստանալ նաև որոշիչ հոդ և այդ դեպքում քյ կարող է դառնալ հյ. ինչ. ուրենքյն կամ ուրենիյն են քալե.

338. Յուդական փերանուններն են՝

Ո. Հ. էս, էսա	էտ, էտա	էն, էնա
Ս. Տ. խոոր	խոոր	ինոր
Բ. խոորմից,	խոորմից	ինորմից, ինորմէն
խոորից	խոորից	ինորից
Դ. խոորմով	խոորմով	ինորմով, ինորով
խոորով		

Բց. լինում է նաև ստուց «սրանից», գյուղական ձևերն են՝ ըստից «սրանից», էնդից «նրանից», որից նախաձևանկի կրճատումով դիւց. բց. գ. էդատուց «գրանից», գ. էդադուցէն կամ էտատիւցէն. հյց. զէնիկ գ. «գնա», էնորմից գ., ընորմից գ. «նրանից»:

Բացառականի հետաքրքրական ձև է դիւց «նրանից», որ գալիս է նախաձոր ընդիւց ձևից, ըն նախամասնիկի սովորական կրճատումով

Հոգնակի

Ո. Հ. խոնքյ	խոոնքյ	ինոնքյ
Ս. Տ. խոնց	խոոնց	ինոնց
Բ. խոնցից	խոոնցից	ինոնցից
Դ. խոոնցմով	խոոնցմով	ինոնցմով
խոոնցով	խոոնցով	ինոնցով

Գեղջկական ձևեր են էսրան, էնրան «սրան, նրան». օր. կալան, Վասպուրական, 1912, էջ 242. Լան ծաղիկ առեց, նոզմ էսրան իտու, նոզմ էնրան:

Կան նաև էսիկ, էտիկ, էնիկ ձևերը, բայց սրանք անհոլով են: Բաղաձայնից առաջ լինում են խոնյ, իտոնյ, ինոնյ, էսիյ, էտիյ, էնիյ:

339. Ստացական ածականներն են՝ իմ, քյո, մեր, ծեր, ուր, ուրանց կամ ուրենց, ինոր, ինոնց:

Գյուղական բարբառում գործածական է նաև քում «քո»: Սրանք ստանում են իրենցից հետո որևէ գոյական, որ կարող է հոլովվել, իսկ ածականը մնում է անհոլով. ինչ.

մեր աչք, քյո ճամխի, մեր սիռտ, քյո սիրուց, իմ սիռտ, ինոր ցավեր, քյո սէր, մեր սիրու խօսք, մեր սէր, մեր խէր, ծեր մար-

քուց, իմ ծոքքեր, իմ կարիք, ուր նստիւնքներ, մեր տուն, մեր ծեռնէն, ինոր տուն ավիրի և այլն:

340. Ստացական ածականի փոխարեն գոյականը կարող է ստանալ ստացական հոգ. այն է առաջին դեմքի համար ս, երկրորդ դեմքի համար տ, երրորդ դեմքի համար ենթագրաբար ն, իսկ հոգնակիները համար էլ երկամ են: Այսպէս՝

Ա դեմք.—տունս (իմ տունը), խէրս (իմ հայրը), խացս (իմ հացը), ճողս (իմ ճուղը). ուրիշ բարբառներում սրանք հնչվում են երկամանկ տունըս, խէրըս, խացըս, ճողըս և այլն. բայց Վանի բարբառը այդպիսի բան չգիտե և միամանկ, առանց ր ձայնավորի հնչում է տունս (tuns), խէրս (xers), խացս (xacs) և այլն:

Բ դեմք.—տունտ (քո տունը), խէրտ (քո հայրը), խացտ (քո հացը), ճողտ (քո ճուղը), նախորդների նման, սրանք էլ հնչվում են ոչ թե երկամանկ տունըտ և այլն, այլ միամանկ տունտ (tunt), խէրտ (xert), խացտ (xact) և այլն:

Գ դեմք.—Որովհետեւ Վանի բարբառը անընդունակ է բառավերջում հնչելու ր, ուստի բաղաձայնով վերջացող գոյականները չեն ստանում ր. միայն ձայնավորով վերջացող գոյականներն են որ ստանում են ն. ինչ. ծիճ, լիւն, կյիճիճ, խոկյիճ և այլն: Եթե պատահի, որ գոյականին հաջորդող բառը ձայնավորով սկսի, բաղաձայնով վերջացող գոյականի ծայրին էլ կարող է երևան գալ ն ստացական հոգը, պայմանավ որ գոյականը ն բաղաձայնով վերջացած չլինի (կրկին ն-երից խուսափելու համար). օր.

Ինոր տուն ավիրի. տներն ավիրավ:

Հոգնակի.—Միշտ ունի երեք իմաստ. օր.

տներս (իմ տները, մեր տունը, մեր տները).

տներտ (քո տները, ձեր տունը, ձեր տները).

տներն (նրա տները, նրանց տունը, նրանց տները).

ճողերս (իմ ճուղերը, մեր ճուղը, մեր ճուղերը).

աչկրներս (իմ աչքերը, մեր աչքը, մեր աչքերը).

ակընչկըներս (իմ ականջները, մեր ականջը, մեր

ականջները).

մատկըներս (իմ մատները, մեր մատը, մեր մատները):

Այս բոլորի մեջ վերջավորությունները հնչվում են միահար, առանց ը ձայնավորի ներմուծման (ners, nert, nern):

Բայց Վանի բարբառը կարող է այս դեպքում, բաղաձայն-ները խճողումը մեղմելու համար ստացական հոգի վրա դնել ի թարմատարը. ինչ.

իրիսսի սիվցեր ի «երեսս սևացել է»,
 պերանսի քեղոռքվեր ի «բերանս քերթվել է»,
 ինգյով խտեվսի «բնկավ ետևս»,
 ախպէրսի կապիցի ծառի տակ:

341. Վանի բարբառը չի սիրում միաժամանակ գոյականի վրա դնել թե ստացական ածական և թե ստացական հոգ: Այսպես տունս կամ իմ տուն, բայց ո՛չ իմ տունս, տունտ կամ քյո տուն, բայց ո՛չ քյո տունտ, խացերս կամ իմ խացեր, բայց ո՛չ իմ խացերս: Սրա պատճառն այն է, որ նա մտածում է ո՛չ թե պոս-սեցիների նման (իմ տունս), այլ երևանցիների նման (իմ տունը), և որովհետև Վանի բարբառում չկա վերջաձայն ը, ուստի մնում է իմ տուն:

Ման.— Թեև շատ հազվագյուտ, բայց անսովոր չէ Վանի բարբառում նաև այն երևույթը, որով ստացական հոգը դառնում է խնդիր. օր. քարկիկըս չտաս «ինձ չթողնես» (Շերենց, Վանա սազ, Բ. 52):— Այս երևույթը, ինչպես հայտնի է, ավելի տարածված է պարսկահայերի բարբառներում:

342. Գոյականները ստացական հոգ ստանալուց հետո կարող են միասին հոլովվել. օր. խաց «հաց» բառից՝

Եզակի

Ո. Հ.	խացս	խացտ	խաց
Ս. Տ.	խացիս	խացիտ	խացին
Բ.	խացիցս	խացիցտ	խացից
Գ.	խացովս	խացովտ	խացով

Հոգնակի

Ո. Հ.	խացերս	խացերտ	խացեր
Ս. Տ.	խացերացս	խացերացտ	խացերաց
Բ.	»	»	»
Գ.	խացերովս	խացերովտ	խացերով

343. Ստացական թժականները կարող են գործածվել անկախ կամ առանձին, և դառնում են ստացական դերանուն, այս դեպքում ստանում են դիմորոշ հոդ և կարող են հղումվել.

Ո. Հ.	իմուն	իմս	իմն	իմոնքյ	
Ս. Տ.	իմունի	իմուս	իմուն	իմոնքյի	իմոնց
Բ.	իմունից	իմուցս	իմուց	իմոնքյից	իմոնցից
Գ.	իմունով	իմովս	իմով	իմոնքյով	իմոնցով

Ո. Հ.	քյումուն ¹ քյոմուն	քյոն ²	քյոն	քյոնոնքյ
Ս. Տ.	քյումունի քյոմունի	քյոնիտ	քյոնի	քյոնոնց
Բ.	քյումունից քյոմունից	քյոնիցտ	քյոնից	քյոնոնցից
Գ.	քյումունով քյոմունով	քյոնովտ	քյոնով	քյոնոնցով

Ո. Հ.	մերուն	մերոնքյ	
Ս. Տ.	մերունի	մերոնքյի	մերոնց
Բ.	մերունից	մերոնքյից	մերոնցից
Գ.	մերունով	մերոնքյով	մերոնցով

Ո. Հ.	ծերուն	ծերոնքյ	
Ս. Տ.	ծերունի	ծերոնքյի	ծերոնց
Բ.	ծերունից	ծերոնքյից	ծերոնցից
Գ.	ծերունով	ծերոնքյով	ծերոնցով

Ո. Հ.	մերոնյներ	մերունյտեր
Ս. Տ.	մերոնյներաց	մերունյտերաց
Բ.	»	»
Գ.	մերոնյներով	մերունյտերով

¹ Քաղաքում ասվում է կյումուն և այլն, գյուղերում կյումուն:

² Բուն ձեռ ոլիտի լինելը կյոնն, բայց որովհետև կրկնակ բաղաձայնի հանդիպումը հանդուրժելի չէ բարբառիս (§ 259), ուստի դարձել է կյոն:

Ո. Հ. ծերոնյներ	ծերունյտեր
Ս. Տ. ծերոնյներաց	ծերունյտերաց
Բ. »	»
Գ. ծերոնյներով	ծերունյտերով

Ո. Հ. իմոնյներ	իմոնյտեր
Ս. Տ. իմոնյներաց	իմոնյտերաց
Բ. »	»
Գ. իմոնյներով	իմոնյտերով

որ և իմոնքներ, իմոնյներս, իմոնքս, իմոնքյս, իմոնքյներաց, իմոնյներաց և այլն, և այլն:

Ո. Հ. քյոնոնյներ	քյոնոնյտեր
Ս. Տ. քյոնոնյներաց	քյոնոնյտերաց
Բ. »	»
Գ. քյոնոնյներով	քյոնոնյտերով

344. Հարաբերական դերանունն է վոր, որ կարող է թե ուղղական և թե հոլովված ձևով գործածվել. ինչ.

էն ծաղկրներ, վոր տիւ սարից պիտի իր, յես էլ տիսա:
 էն տներ վոր տիւ շինի իր, հրմէն պլոն (բոլորն էլ փլան):
 էն մարթ, վորտու տուն վոր տիւ խուտաղ իր, մեոեր ի:
 էն մարթ, վորուց տիւ կպատոիր, խիվրնցեր ի (հիվանդացել է):
 Այս բոլորը կարելի է նաև դերբայով կազմել. ինչ.

Քյո շինած տներ հրմէն պլոն:

Սարից պիրած քյո ծաղկրներ յես էլ տիսա:

10. ԱՍԵ

345. Լծորդություններ.

Հին հայերենի երեք լծորդությունները (ել, իլ, ալ) և նրանց փրկորդ տիպարները (անել, անիլ, անալ) Վանի բարբառում կրում են հետևյալ ձևափոխությունները.

Ա լծորդություն

ներկ.

անկ.

եմ > եմ	եմք > ենք	էի > ի	էաք > ինք
ես > ես	էք > էք	էիր > իր	էիք > իք
է > ի	են > են	էր > էր	էին > ին

կար.

եցի > իցի

եցեր > իցիր

եաց > եց

եցաք > իցինք

եցէք > իցիք

եցին > իցին

Բ լծորդություն

ներկ.

իմ > եմ իմք > ենք

իս > ես իք > էք

ի > ի ին > են

անկ.

էի > ի էաք > ինք

էիր > իր էիք > իք

էր > էր էին > ին

կար.

եցայ > ա

եցար > ար

եցաւ > ավ

եցաք > անք

եցայք > արք

եցան > ան

Գ լծորդություն

ներկ.

ամ > ամ ամ ք > անքյ
 աս > աս այ ք > աքյ
 այ > ա ան > ան

անկ.

այի > ի այա ք > ինքյ
 այի ր > ի ր այի ք > իքյ
 այր > էր ային > ին

կտր.

ացի > աց ի
 ացեր > աց ի ր
 աց > աց աք > աց ինքյ
 աց է ք > աց ի քյ
 աց ի ն > աց ի ն

Ա լծորդու թյան երկրորդ տիպարը

ներկ.

անեմ > նեմ անեմ ք > նեմքյ
 անես > նես անէ ք > նէքյ
 անէ > ն ի անեն > նեն

անկ.

անէի > ն ի անէա ք > նինքյ
 անէի ր > ն ի ր անէի ք > նիքյ
 անէր > ն է ր անէին > նին

կտր.

ի > ա աք > անքյ
 եր > ա ր էք > աքյ
 — > ա վ ին > ան

Բ լծորդության երկրորդ տիպարը՝

ներկ.	անկ.	կար.
անիմ>նեմ	անէի>նի	այ>ա
անիս>նես	անէիր>նիր	ար>ար
անի>նի	անէր>նէր	աւ>ավ
անիմք>նենք	անէաք>նինք	աք>անք
անիք>նէք	անէիք>նիք	այք>աք
անին>նեն	անէին>նին	ան>ան

Գ լծորդության երկրորդ տիպարը (անորոշն է նալ կամ ~անալ՝ միջին աւն ջնջելով կամ պահելով)՝

ներկ.	անկ.	կտր.
անամ>անամ	անայի>անի	ացայ>ացա
անաս>անաս	անայիր>անիր	ացար>ացար
անայ>անա	անայր>անէր	ացաւ>ացավ
անամք>անանք	անայաք>անինք	ացաք>ացանք
անայք>անաք	անայիք>անիք	ացայք>ացաք
անան>անան	անային>անին	ացան>ացան

Այս համեմատական աղյուսակից տեսնում ենք, որ բայերի խոնարհումը մեծ ձևափոխություններ չի ներկայացնում Վանի բարբառում. Եղածները գլխավորապես ձայնական են: Նկատելի է, որ Ա լծորդության ներկա ժամանակի ե ձայնավորը մնում է. նույնպես և է. միայն եզ. գ դեմքում է՝ն դառնում է ի: Անցյալ ժամանակներում է և այ ձայները ուր որ ձայնավորի պատահեն՝ ջնջվում են. ինչ. կուզէի>կուզի, կհապաի>կխազի:

346. Ըստ այսմ Վանի բարբառը ունի երեք լծորդություն և երեք սնգային տիպար, որոնց խոնարհման համար օրինակ կառնենք հետևյալ բայերը.

Ա լծ.	ուզել	էճնել
Բ լծ.	սօլլել	խայնել
Գ լծ.	խաղալ	խաստանալ

Այս բաժանումը ըստ զրաբարի է. Վանի բարբառը իրապես պահել է միայն Ա լծորդության առաջին տիպարը (կտր. ուզիցի), Գ լծորդության առաջին և երկրորդ տիպարները (կտր. խաղացի, խաստացա), իսկ մնացյալը (այն է Ա լծորդության երկրորդ տիպարը և Բ լծորդության առաջին և երկրորդ տիպար-

ները) խառնվել և ձուլվել են մեկի մեջ, իբր տիպար ընդունելով Բ լծորդության երկրորդ տիպարը (կտր. խալկյա), Այսպիսով Վանի բարբառը պահել է միայն գրաբարի 4 տիպարները, այն է Ա լծ. ա տիպար, Բ լծ. բ տիպար և Գ լծ. ա և բ տիպար:

Երկրորդ լծորդության ա տիպարի ջնջումով Վանի բարբառը Երևանի բարբառի նման զրկվել է միջին հայերենի և պոստահայ բարբառի (ինչպես և արևմտյան գրականի) այն հատկությունից, որով կարելի է լինում զանազանել ներգործական բայը չեզոքից, առաջինը դնելով ել վերջավորությամբ, երկրորդը՝ իլ. օր. մարել «հանգցնել», մարիլ «հանգիլ» (ինքնին), (Ուրիշ բազմաթիվ օրինակներ տե՛ս Քնն. Պոլս. բարբ. § 375): Սակայն Վանի բարբառումն էլ կան մի քանի նման բայեր. ինչ.

Պատառել > պատռել, կտր. պատռիցի (ներգործական) և պատռա (չեզոք) «ճաթեցա, ճաքեցա», որ և կրավորականի ձևով պատռվա:

Փլչիլ > պլել, կտր. պլիցի (ներգործական) «փուլ ածեցի, քանդեցի», պլա (չեզոք) «փուլ եկա». առաջինը Ա լծ. ա տիպարով, երկրորդը՝ Բ լծ. ա տիպարով: Այժմ շփոթության տուաջը առնելու համար առաջին դեպքում ասում են անցողական բայով՝ պլըցուցի:

Հալիլ > խալել, կտր. խալիցի (ներգործական) և խալա «հալվեցի» (չեզոք):

347. Ա ԼԾՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Ստոր. ներկ.	Ստոր. անց.	Սահմ. կտր.
ուզեմ	ուզի	ուզիցի
ուզես	ուզիր	ուզիրիր
ուզի	ուզէր	ուզեց
ուզենք	ուզինք	ուզիցինք
ուզէք	ուզիք	ուզիցիք
ուզեն	ուզին	ուզիցին
չրամ.	Դերբ.	
ուզի	ուզել, ուզող	
մուզե	ուզած	
ուզէք	ուզիր, ուզեր, ուզե	
մէք ուզե	ուզելու	

Գյուղական բարբառում կտր. եզ ա դեմքի -իցի վերջավոր-
 բռնության փոխարեն գտնում ենք -իցիմ, որ կազմված է ներկայի
 նմանությամբ: Այսպես, օր. իփիցիմ, ուզիցիմ և այլն: Նույնը
 գտնում ենք նաև մյուս լծորդությունների և անկանոն բայերի
 մեջ. ինչ. առեցիմ, տվիմ կամ տվեցիմ, պոցիմ, նստամ, լոցիմ:

Այս խոնարհման տակ են գնում՝

ածել>ածել (հավի), ածիցի	թքանել>թքել, թքիցի
աղօթել>աղօթել, աղօթիցի	ժողովել>ժողվել, ժողվիցի
այրել>իրիցել, իրիցիցի	լակել>լակել, լիել, լակիցի, լիցի
անիծել>անիծել, անիծիցի	լափել>լոփել, լոփիցի
ապսպարել>ապըսպրել, ապըս-	լծել>լծել, լծիցի
	պրիցի լնուլ>լցել, լցիցի
արձակել>առց/կել, առց/կիցի	խարել>խապել, խապիցի
աւերել>ավիրել, ավիրիցի	խայթել>խեթել, խեթիցի
բաժանել>պոժնել, պոժնիցի	խանձել>խոնձրել, խոնձրիցի
բամբասել>պամբասել, պամ-	խառնել>խառնել, խառնիցի
	բասիցի խարշել>խաշել, խաշիցի
բաշխել>պոշխել, պոշիցի	խարտել>խառտել, խառտիցի
բռվել>պէօվել, պէօվիցի	խեղզել>խեխտել, խեխտիցի
բռնել>պոննել, պոնիցի	խլել>խլել, խլիցի
բրդել>պրտել, պրտիցի	խնայել>խնայել, խնայիցի
գզել>կյըզել, կյըզիցի	խնջել>խնչել, խնչիցի
գլորել>կլորել, կլորիցի	խփել>խփել «փակել», խփիցի
դեղել>տեղել, տեղիցի	խօսիլ>խոսսել, խոսսիցի, (աք-
էփել>իփել, իփիցի	լորի)
զենուլ>զինել, զինիցի	ծալել>ծալել, ծալիցի
զրուցել>զըիւցել, կտր. զըիւ-	ծախել>ծախել, ծախիցի
	ցիցի և վերջին վանկի
	սղմամբ զըիւցի
թաթախել>թաթխել, թաթ-	ծամել>ծամել, ծամիցի
	ծեփել>ծիփել, ծիփիցի
	խիցի ծծել>ծծել, ծծիցի
թանալ>թացել, թացիցի	կախել>կախել, կախիցի
թափել>թոփել>թոփիցի	կանչել>կանչել, կանչիցի
թխել>թխել, թխիցի	կապել>կապել, կապիցի
թրծել>թոծել, թոծիցի	կարել (կար)>կարել, կարիցի

կարկատել>կարկըտնել, կար-
կըտնիցի
կթել>կթել, կթիցի
կծել>կծել, կծիցի
կնքել>կնքել, կնքիցի
կշռել>կշռել, կշռիցի
կոխել>կոխել, կոխիցի
կոճակել>կոճակել, կոճակիցի
կործել>կործել (շուռ տալ),
կործիցի

կտուել>կտվել, կտվիցի
կտրել>կտրել, կտրիցի
կրել>կրել, կրիցի
կրծել>կոծել, կոծիցի
խալել>խալել, խալիցի
խամարել>խամբրել, խամբրիցի
խանել>խանել, խանիցի
խաջել>խաճել, խաճիցի
խինել>խինել, խինիցի
հորել>խորել, խորիցի «թաղել»
հորդել>խորտել, խորտիցի
ձգել>խսկել, խսկիցի
ճարել>ճարել, ճարիցի
մանել>մանել, մանիցի
մաշել>մաշել, մաշիցի
[յ]ուզել>ուզել, ուզիցի
յօտել>էօտել, էօտիցի
շաղաղել>շաղաղել, շաղաղիցի
շարել>շարել, շարիցի
շինել>շինել, շինիցի
շրջել>սոճել, սոճիցի
ոլորել>էօլէօրել, էօլէօրիցի
ողողել>օղօղել, օղօղիցի
ուղարկել>էօրէօխկել, էօրէօխ-
կիցի
չարչարել>չորչորել, չորչորիցի

պագատնել>պաքել, պաքիցի
պահել>պախել, պախիցի
պսակել>փսակել, փսակիցի
ջարդել>ճորտել, ճորտիցի
սպանանել>ըսպտնել, ըսպտնիցի
սրբել>սրպել, սրպիցի
սրսկել>սրսրկել, սրսրկիցի
վազել>վոզել, վոզիցի
վայելել>վայելել, վէլել, լէվել,
-իցի

վառել>վոռել, վոռիցի
վարել>վորել, վորիցի
վարձել>վործել, վործիցի
տաղել>գողել, գողիցի
տաշել>տաշել, տաշիցի
տապակել>տապկել, տապկիցի
տնկել>տնգել, տնգիցի
տփել>տփել, տփիցի «ծեծել»
ցանել>ցանել, ցանիցի
ցնկնել>ցիննել, ցինիցի
ցրուել>ցվրել, ցվրիցի
փաթաթել>փոթիւթել, փո-
թիւթիցի

փակել>փոկել, փոկիցի
փարատել>փարատել, փարա-
տիցի

փշրել>փշրել, փշրիցի
փոխել>փոխել, փոխիցի
փորել>փորել, փորիցի
» >պորել, պորիցի
փչել>փչել, փչիցի
փռել>փռել, փռիցի
փախել>փխսել, փխսիցի
քակել>քյակել, քյակիցի
քաղել>քյաղել, քյաղիցի
քամել>քյամել, քյամիցի

Քայլել>քելել, քելիցի	Քսել>կսել, կսիցի
Քանդել>քյանդել, քյանդիցի	Քրքրել>քյլլքրքրել, քյլլքրքրել
Քարշել>քյոշել, քյոշիցի	
Քերթել>քյըրթել, քյըրթիցի	օծել>օծել, օծիցի
Քորել>քյորել, քյորիցի	օրհնել>օխնել, օխնիցի
Քշել>կշել, կշիցի	օրօրել>ուրուրել, ուրուրիցի

348. Ա ԼԾՈՐԴՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՏԻՊԱՐ

Ստոր. ներկ.	Ստոր. անկ.	Սահմ. կալ.
էճնեմ	էճնի	էճո
էճնես	էճնիր	էճոր
էճնի	էճնէր	էճով
էճնենք	էճնինք	էճոնք
էճնէք	էճնիք	էճոք
էճնեն	էճնին	էճոն

Հրամ.

Դերբ.

էճի	էճնել
մէճնե, մի էճնե	էճնօղ
էճէք	էճեր
մէք էճնե, մէճնէք	էճոծ
	էճնէլու

Ինչպես Պոլսի բարբառում, նույնպես և այստեղ չափազանց կրճատված է այս տիպարին պատկանող բայերի թիվը։ Ունենք միայն՝

անցանել>ընցնել, ընցա
դտանել>կընդնել, կընդոտ, կընդոմ
ելանել>էլնել, էլոտ, հրմ. էլի
մտանել>մտնել, մտա
իջանել>էճնել, էճո

Ստոր. ներկ.	Ստոր. անկ.	Սահմ. կտր.
սովրեմ	սովրի	սովրա
սովրես	սովրիլ	սովրար
սովրի	սովրէլ	սովրավ
սովրենքյ	սովրինքյ	սովրանքյ
սովրէքյ	սովրիքյ	սովրաքյ
սովրեն	սովրին	սովրան

Հրամ.

Դերբ.

սովրի	սովրել
մը սովրես	սովրող
սովրէքյ	սովրած, սովրեր
մէքյ սովրես	սովրէլու

Այս լծորդության համեմատ են խոնարհվում հետևյալ բա-
յերը.

դադարիլ > տտարել, տտարա
բորբոսիլ > պէօրպսնել, պէօրպսնա
բուսանիլ > պիւսնել, պիւսել (թեև բնապես պատկանում է
Բ լծ. Բ տիպարին, բայց կտր. բուսա ձևից անցել է ա տիպա-
րին և եղել է պիւսել):

խոստովանիլ > խօստովանել, կտր. խօստովանա կամ խօստօ-
վանիցի:

խաւարիլ > խավարել, խավարա
թառամիլ > թօմըռել, թօմըռա
թմբրիլ > թմբրել, թմբրո
խրտնուլ > խռտնել, խռտնա
ծաղկիլ > ծաղկել, ծաղկա
ծարաւիլ > ծարավել, ծարավա կամ ծարվըցա
հաւանիլ > խավնել, խավնա
մոլորիլ > մէօլըրել, մէօլըրո
մրսիլ > մսել, մսա
ճապաղիլ > ճապղել, -ղավ, (թանաքը ծրիլ)

նեխիլ > նեխել, նեխա
 նստիլ > նստել, նստա
 պառակիլ > պառկել, պառկա
 սատակիլ > սատկել, սատկա
 սկիլ > սկել, սկա (ջրի տակ սուզվել)
 վաստակիլ > վոստ/կել, վոստկա
 տափակիլ > տափկել, տափկա
 ցնդիլ > ցընթել, ցընթա
 փտիլ > փտել, փտա
 քրտնիլ > քըլոտնել, քըլոտնա
 ծլիլ > ծլել, ծլա
 կակազել > կակըզել, կակըզա (իբրև թե բայը լինելու կակազիլ)
 կանգնիլ > կայնել, կայնա
 կատաղիլ > կատղել, կատղա
 խմիլ > խմել, կտր. խմա, խմար, խմավ (իբր. թե բայը լինելու խմիլ).

Այստեղ է պատկանում նաև հնուիթյան մի գեղեցիկ մնացորդը. զախախորել, որ գրաբարի զարհուրիլ բայն է, բայց կազմված պարզ ահ (առանց ր-ի) արմատից, և խոհարհվում է այսպես.

Ստոր. ներկ.— զախախորեմ, զախախորես, զախախորի...

Կտր.— զախախորա, զախախորար, զախախորավ...

Բայց Վանի բարբառը այս դեպքում ավելի առաջ է գնում. նա պահել է բայի նախավոր ձևը՝ առանց զ սաստկականի՝ ախախորել (ախախորա, կախախորեմ...), մինչդեռ գրաբարը կորցրել է նախավոր *արհուրիլ ձևը և գիտե միայն նրա գոյականը՝ արհաւիբբ:

350. Բ ԼՇՈՐԴՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՏԻՊԱՐԸ

Ստոր. ներկ.	Ստոր. անկ.	Սահմ. կտր.
խայնեմ	խայնի	խակյա
խայնես	խայնիր	խակյար
խայնի	խայնէր	խակյավ
խայնենք	խայնիրք	խակյանք
խայնէք	խայնիք	խակյաք
խայնեն	խայնին	խակյան

Հրամ.

Դերբ.

խակյի

խայնել

մի խայնե

խակյած

խակյէք

խակյիր, ~եր

մէք խայնե

խայնող

Այս լծորդության հետևող բայերի թիվը շատ քիչ է. այն է՝

հասանիլ > խասնել, խասա (գրաբարում երկու լծորդում~
թյամբ էլ կա՝ հասանեմ և հասանիմ):

մեռանիլ > մեռնել, մեռա

ծնանիլ > ծնել, ծնա

պրծանիլ > պրծնել, պրծա

հեծանիլ > խէզնել, խէծա

տնկանիլ > ինել, ինգլո

Այստեղ են վերաբերում նաև գրաբարի ~չիլ վերջավորող
բայերը, որոնք զրկվում են իրենց չ մասնիկից. ինչ.

փախչիլ > փախնել, փախա

ուռչիլ > ուռնել, ուռա

դիպչիլ > տիպնել, տիպա

թռչիլ > թռնել, թռա

խրտչիլ > խոտնել, խոտնա (այս վերջինը պահելով իր և
ձայնը կատարյալում, ավելի պատկանում է Բ լծ. ա տիպարին):

351. Գ ԼՍՈՐԴՈՒԹՅԱՆ ա ՏԻՊԱՐ

Ստոր ներկ.

Ստոր. անց.

Սահմ. կտր.

խաղամ

խաղի

խաղացի

խաղաս

խաղիր

խաղացիր

խաղա

խաղէր

խաղաց

խաղանք

խաղինք

խաղացինք

խաղաք

խաղիք

խաղացիք

խաղան

խաղին

խաղացին

Հրամ.

Դերք.

խաղահ
խաղացէք
մի խաղա
մէք խաղա
(մէհ խաղա)

խաղալ
խաղացած, -ցիր
խաղացօղ
խաղալու

Ման. 1.— Միջին ձայնավորի կրճատմամբ կարելի է ասել նաև կտր. խաղցի (խախցի), խաղցիր և այլն, հրմ. խաղցէք, դերք. խաղցած, աղցած և այլն:

Ման. 2.— Գ լծորդության ստոր. անց. նույնանում է Ա լծորդության ստոր. անց. ձևի հետ, բայց տարբեր ճանապարհներով:

Այս լծորդության հետևող բայերն են՝

աղալ>աղալ, աղցի

արածել>արածալ, արածացի (թե ներգործական ճարածել, արածացնել) և թե չեզոք ճարածիլ իմաստով)

գովել>կյէօվուլ, կյէօվացի

դողալ>տէօղալ, տէօղացի

եռալ>յեռալ, յեռացի

երևիլ>էրէվալ, էրէվացի

զզուիլ>զզվուլ, զզվացի

լողալ>լօղալ, լօղացի

լուանալ>լվուլ, վլուլ, վլուցի, վլուցի

խղճալ>խխճալ, խխճացի

խշխշալ>խշխշալ, խշխշաց (ծառը)

ծիծաղիլ>ծծղալ, ծծղացի

կաղկանձել>կընձկընձալ, կընձկընձացի

» >կզմզտալ, կզմզտացի

կարդալ>կուրտուլ, կուրտացի

կսկծալ>կսկծալ, կսկծացի

հաղալ>խողուլ, խողացի

հաւատալ>խավատալ, խավատացի, ավատալ, ավատացի

հոտոտել>խօտօտալ, խօտօտացի

ձգտալ>սկըռտալ, սկըռտացի

ճչալ>ճչուլ, ճչուցի

մնալ > մնալ, մնացի
 յօրանջեի > օրօշկըտալ, օրօշկըտացի
 նուալ > նվալ, նվացի
 ողորմիլ > օղօրմալ, օղօրմացի
 ոռնալ > վոռնալ, վոռնացի
 ործկալ > վոռծկալ, վոռծկացի
 սարսափիլ > սէրսփալ, սէրսփացի
 սողալ > սօղալ, սօղացի
 ցաւիլ > ցափալ, ցափացի
 փոնգտալ > փոլնհյտալ, փոլնհյտացի
 » > փոլշտալ, փոլշտացի
 փայլիլ > փէլքյկըտալ, փէլքյկըտացի

352. Գ ԼՍՈՐԴՈՒԹՅԱՆ Բ ՏԻՊԱՐ

Ստոր. ներկ.	Ստոր. անց.	Սահ. կտր.
խաստանամ	խաստանի	խաստացա
խաստանաս	խաստանիր	խաստացար
խաստանա	խաստանէր	խաստացավ
խաստանանքյ	խաստանինքյ	խաստացանքյ
խաստանաքյ	խաստանիքյ	խաստացաքյ
խաստանան	խաստանին	խաստացան
Հրամ.	Դերբ.	
խաստացի	խաստանալ	
խաստացէքյ	խաստացօղ	
մի խաստանա	խաստացիր, -եր	
մէքյ խաստանա		

Սրա համեմատ են խոնարհվում հետեյալ բայերը.

ամաչեի > ամչ/նալ, ամչ/ցա
 բառնալ > պոռնալ, պոռցա
 բարկանալ > պոլկանալ, պոլկացա
 բարձրանալ > պանցրանալ, պանցրացա
 գիտել, գիտենալ > կիտնալ, կիտցա, կիցա

դառնալ>տոռնալ, տոռցա
 իմանալ>իմնուլ, իմցո
 լողանալ>լօխկնալ, լօխկըցա
 կարկենալ>կանալ, կառցա, կացա
 հանգստանալ>խանգըստանալ, խանգըստացա
 հասկանալ>խասկնալ, խասկըցա
 հիւանդանալ>խիվընդնուլ, խիվընցա, ~ձո
 ճանաչել>ճանչընալ, ճանչըցա
 մոռանալ>մոռնալ, մոռցա
 նեղանալ>նեղանալ, նեղացա
 շփանալ>շփանալ, շփացա
 վախենալ>վտխէնալ, վտխէցա

353. ԼՄՈՐԴՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Պոլսահայ բարբառի քննության մեջ (§ 355) խոսել ենք արդեն այն սլաշմանների մասին, որոնց համեմատ կատարվում են լծորդության փոփոխության դեպքերը բարբառում։ Ավելորդ համարելով կրկնել դրանք այստեղ, հավաքում եմ այն դեպքերը, երբ հին հայերենի ծանոթ մի լծորդություն փոխում է իր դիրքը Վանի բարբառում։

ամաչել>ամչ/նալ	թքանել>թքքել
այրել>իրիցել	լիզանել, լիզուլ>լիզել
անագանիլ>տնկյըննալ	լնուլ>լցել
անկանել>ինել	լինիլ>էլնել
առնուլ>առնել	լուռնալ>լվտլ, վլտլ
արածել>արածալ	լպրծիլ>լպզտրալ
բորբոսիլ>պէօրպսնել	խմել>խմել, կտր. խմա
բուսանիլ>պիւսել	խրխնջել>խրխնջուլ
գիտել>կիտնալ	ծիծաղիլ>ծծղալ
գովել>կյէօվուլ	ծնանիլ>ծնել
երևիլ>էրէվալ	կակազել>կակըզել, կտր. կակըզա
զենուլ>զինել	կաղկանձել>կընձկընձալ
զզուիլ>զըզվուլ	կորչիլ>կուրիսել
թանալ>թացել	հանգչիլ>խանգչել
թողուլ>թօղնել	հարցանել>խաոցուցել

հոտոտեի > խոտոտալ
ճանաչեի > ճանչընալ
մուրանալ > մուրալ
մորմոքիլ > մէօրմընքյալ
յօրանջեի > օրօշկըտալ
նուաղիլ > նվաղկտալ
շրանուլ > շոտեի
ողորմիլ > օղօրմալ
ուռնուլ, ուռչիլ > ուռեիլ

սլագանեի > սլաքյիլ
սլշնուլ > սլշալ
սարսափիլ > սրսփալ
սպանանեի > սպանեի
տեսանեի > տիսնալ
փախչիլ > փախնեի
փլանիլ > պլեի
օծանեի > օծեի

Բայերից ուժանք տատանվում են երկու լծորդության վրա. օր.

ապրիլ > ապրեի, կտր. ապրիցի, ապրա (առաջինը Ա լծ. ա տիպար, երկրորդը Բ լծ. ա տիպար):

Այս ձևափոխության պատճառն այն է, որ նույն երկու լծորդությունների ներկան, անկատարը և հրամայականը միևնույն լինելով, կատարյալն էլ նույնացել է:

ծարավիլ > ծարավեի, ծարվընալ, կտր. ծարավա, ծարվըցա. խոստովանիլ > խօստովանեի, կտր. խօստովանա, խօստովանիցի (առաջինը Բ լծ. ա տիպար, երկրորդը Ա լծ. ա տիպար):

քնեի > քընեի, կտր. քընիցի, քընա (առաջինը Ա լծ. ա տիպարով, երկրորդը Բ լծ. ա տիպարով, իբր թե բայը լինեք քնիլ):

կաթիլ > կաթեի (կայլակեի), կտր. կաթիցի, կաթա (առաջինը Ա լծ. ա տիպար, երկրորդը Բ լծ. ա տիպար):

Կան բայեր, որոնք ավանդաբար պահում են գրաբարի խոնարհման այսինչ ձևը և միևնույն ժամանակ ունեն նոր բարբառային ձևը. օր.

թողուլ > քողմեի, կտր. քողի, քողիցի (առաջինը գրաբարի Դ լծ. ա տիպարի կատարյալն է, իսկ երկրորդը՝ նոր բարբառով Ա լծ. ա տիպարից, իբրև քողել):

լնուլ > ւցեի, կտր. ւցի, ւցիցի (առաջինը գրբ. լնուլ՝ Դ լծ. երկրորդ ձևից, երկրորդը նոր բարբառային ւցել ձևից):

բերեի > պիրեի, կտր. եզ. գ դեմքը լինում է իպե (գրբ. եբեր ձևից) և պիրեց՝ նոր ձև.

Այստեղ պետք է հիշել հատկապես գրաբարի մի կարևոր մնացորդը, այն է միավանկ բայաձևերի և նախահավելածը, որ Վանի բարբառում պահվում է ի ձևով՝ կատարյալի եզ. գ. դեմքի մեջ: Այսպես՝

հանել>խանել, իխան<հհան
զարկանել>զարնել, իզոր<հհար, *եզար
բառնալ, որից երարձ>իպուոց
բերել>պիրել, իպե<երեր
բանալ>պոնուլ, իպոց<երաց
թողուլ>թողնել, իթօղ<եթող
լալ>լուլ, իլոց<ելաց
լնուլ>լցել, իլց<ելից

Նույնիսկ գրաբարի մեջ չգործածվող մի բայից, նույն ոճով՝
թալել «գցել», իթուլ, օր. իթուլ թօնէրն իրիցեց «գցեց թո-
նիրն ու այրեց»:

Այս հավելումը կլինի միայն բաղաձայնով սկսվող և միա-
վանկ բայերի վրա:

Հին լեզվում գործածական է եղել նաև գրաբարյան էառ
«առավ» ձևը, որով մնում է մի առած.

Վոչ էառ, վոչ խավնեցավ:

354. ԶԱՐՑՈՒՂԻ ԲԱՅԵՐ

Ա լծորդության ա տիպարի մեջ բերել և ասել բայերը, իսկ
բ տիպարի մեջ առնել և զարնել բայերը կատարյալի, հրամայա-
կանի և դերբայների մեջ մասամբ պահում են հին զարտուղի
ձևերը և մասամբ էլ ստեղծել են նոր կանոնավոր ձևեր:

Կատարյալ

պիրի	ասի	առի	զորկի
պիրիր	ասիր	առիր	զորկիր
պիրեց, իպե	ասաց	առեց	իզոր
պիրինքյ	ասինքյ	առինքյ	զորկինքյ
պիրիքյ	ասիքյ	առիքյ	զորկիքյ
պիրին	ասին	առին	զորկին

կանոնավորած ձևով՝

պիբիցի	ասիցի	առիցի	զորկիցի
պիբիցիր	ասիցիր	առիցիր	զորկիցիր
պիբեց	ասաց	առեց	զորկեց
պիբիցինքյ	ասիցինքյ	առիցինքյ	զորկիցինքյ
պիբիցիքյ	ասիցիքյ	առիցիքյ	զորկիցիքյ
պիբիցին	ասիցին	առիցին	զորկիցին

Հրամ.

պե	ասա	առ, առա	զոր
պիրէքյ	ասէքյ	առէքյ	զորկէքյ

Դերք.

պիրած	ասած	առած	զորկած
պիրիր	ասիր	առիր	զորկիր
պիրօղ	ասօղ	առնօղ	զորկօղ
պիրէլիքյ	ասէլիքյ	առնէլիքյ	զորկէլիքյ
պիրէլու	ասէլու	առնէլու	զորկէլու

բանալ>պտնալ, տեսանել>տիսնալ, դիպիլ>տիպնել, անկա-
նիլ>իմնել նույն ժամանակներում ստանում են հետևյալ ձևերը.

Կատարյալ

պոցի	տիսա	տիպա	ինգյո
պոցիր	տիսար	տիպար	ինգյոր
իպոց	տիսավ	տիպավ	ինգյով
պոցինքյ	տիսանքյ	տիպանքյ	ինգյոնքյ
պոցիքյ	տիսաքյ	տիպաքյ	ինգյոքյ
պոցին	տիսան	տիպան	ինգյոն

որ և՛

պոցիցի, պոցիցիր, պոցեց, պոցիցինքյ, պոցիցիքյ, պոցիցին.

Հրամ.

պոց	տես, տե՛	տիպի	ինգյի
պոցէքյ	տիսէքյ	տիպէքյ	ինգյէքյ

Դերբ.

պոցած	տիսած	տիպած	ինգյոծ
պոցիւր	տիսիւր	տիպիւր	ինգյիւր
պոցօղ	տիսնօղ	տիպնօղ	ինօղ
—	տիսնէլիքյ	տիպնէլիքյ	ինէլիքյ
պոնտլու	տիսնէլու	տիպնէլու	ինէլու
	տիսնալու		

355. ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԵՐ

1. առնել > աճել

Ներկ. — անեմ, անես, անի, անենքյ, անէքյ, անեն
Անկ. — անի, անիւր, անէր, անինքյ, անիքյ, անին
Գոր. — արի, արիւր, արաց, արինքյ, արիքյ, արին
արիցի, արիցիւր, արիցինքյ, արիցիքյ, արիցին
Հրամ. — արա, արէքյ
Դերբ. — անօղ, արած, արիւր, անէլիքյ, անէլու

2. գալ > կյալ

Ներկ. — կյոմ, կյոս, կյո, կյոնքյ, կյոքյ, կյոն
Անկ. — կյի, կյիւր, կյէր, կյինքյ, կյիքյ, կյին
Գոր. — էկա, էկար, էկավ, էկանքյ, էկաքյ, էկան
Հրամ. — արե, իկէքյ
Դերբ. — կյոցօղ, կյոցած, իկեր (իկե), կյուիքյ, կյուլու

3. դնել > տնել

Ներկ. — տնեմ, տնես, տնի, տնենքյ, տնէքյ, տնեն
Անկ. — տնի, տնիւր, տնէր, տնինքյ, տնիքյ, տնին
Գոր. — տրի, տրիւր, տրեց, տրինքյ, տրիքյ, տրին
տրիցի, տրիցիւր, իտիւր, տրիցինքյ, տրիցիքյ, տրիցին
Հրամ. — տիւր, տրէքյ
Դերբ. — տնօղ, տրած, տրեր, տնէլիքյ, տնէլու

4. երթալ > էրթալ

Ներկ. — էրթոմ, էրթոս, էրթո, էրթոնքյ, էրթոքյ, էրթոն
Անկ. — էրթի, էրթիւր, էրթէր, էրթինքյ, էրթիքյ, էրթին

Կտր.— կնոցի (գ. կյոցի), կնոցիւր, կընոց, կնոցինք, կնոցիք, կնոցին
կնոցին

Հրամ.— կնո, կնոցէք

Դերբ.— կնոցօղ, կնոցած կամ էրթացած, էրթալիք, էրթալու

5. ւալ > լալ

Ներկ.— լոմ, լոս, լո, լոնք, լոք, լոն

Անկ.— լի, լիւր, լէր, լինք, լիք, լին

Կտր.— լոցի, լոցիւր, իւոց, լոցինք, լոցիք, լոցին

Հրամ.— լոց, լոցէք

Դերբ.— լոցօղ, լոցած, լոցիւր, լալու

6. լինել > էլնել

Ներկ.— էլնեմ, էլնես, էլնի, էլնենք, էլնէք, էլնին

Անկ.— էլնի, էլնիւր, էլնէր, էլնինք, էլնիք, էլնին

Կտր.— էլո, էլուր, էլով, էլունք, էլոք, էլուն

Հրամ.— էլի, էլէք

Դերբ.— էլնօղ, էլած, էլիւր, էլնէլու

7. ուտել > ուտել

Ներկ.— ուտեմ, ուտես, ուտի, ուտենք, ուտէք, ուտին

Անկ.— ուտի, ուտիւր, ուտէր, ուտինք, ուտիք, ուտին

Կտր.— կէրա, կէրար, կէրավ, կէրանք, կէրաք, կէրան

Հրամ.— կե, կիրէք

Դերբ.— կիրօղ (ուտօղ), կիրած (ուտած), կիրիւր, ուտելիք, ուտէլու

8. տալ > տալ

Ներկ.— տամ, տաս, տա, տանք, տաք, տան

Անկ.— տի, տիւր, տէր, տինք, տիք, տին

Կտր.— տվի (տվիցի), տվիւր (տվիցիւր), տվեց = իտուր կամ իտու, տվինք (տվիցինք), տվիք (տվիցիք), տվին (տվիցին)

Հրամ.— տու (տուր), տվէք

Դերբ.— տվօղ, տված, տվիւր, տալիք, տալու

Գյուղական ձև է իտամ փխ. տամ. օր. մոխիրտ իտամ
վոսկերչուն:

9. տանիլ > տանել

Ներկ.— տանեմ, տանես, տանի, տանենք, տանէք, տանեն
Անկ.— տանի, տանիր, տանէր, տանինք, տանիք, տանին
Կտր.— տարա, տարար, տարավ, տարանք, տարաք, տարան
Հրամ.— տար, տարէք
Դերբ.— տանող, տարած, տարիր, տանելիք, տանելու

356. ՊԱԿԱՍԱՎՈՐ ԲԱՅԵՐ

1. եմ > յեմ

Ներկ.— յեմ, յես, ի, յենք, էք, յեն
Անկ.— ի, իր, էր, ինք, իք, ին

Մնացյալը լրանում է լինել > էլնել բայից.

Ման.— Ինչպես տեսնում ենք, էական բայի ներկ. եզ. գ դեմքը նույն է անկատարի եզ. ա դեմքի հետ։ Այս նմանությունը շփոթություն չի պատճառում Վանի բարբառին, ուր բայերի սովորական խոնարհման մեջ էլ ներկ. եզ. գ դեմքը և անկ. եզ. ա դեմքը նույն ձևն ունեն։

էական բայի եզ. գ դեմքը, որ գրաբարում է ձևն ունի, այսպես էլ պահված է շատ բարբառներում։ Երևանի և այլ մի քանի բարբառներ դարձրել են ա, որի ծագումը ինձ հայտնի չէ։ Վանը, Մարաղայի, Խոյի և այլ հարակից բարբառների հետ վերածել է ի ձևին։ Սրա ծագումը ըստ իս պետք է բացատրել հետևյալ ձևով։

Ա և Բ լծորդության ներկ. եզ. գ դեմքը դարձել է ի. ուտեմ ուտես, ուտի, կուտեմ, կուտես, կուտի և այլն։ էական բայը անընթեղով իր հարակից ածականի հետ, ընդունել են իրը բայ և խոնարհել են բայի նման ի վերջավորությունը։

Այսպես՝

ուտեմ,	ուտես,	ուտի։
խայ եմ,	խայ ես,	խայ ի։

2. կամ > կամ

Ներկ.— կամ, կաս, կա, կանք, կաք, կան
Անկ.— կի, կիր, կէր, կինք, կիք, կին

3. ունիմ > ունեմ

Ներկ.— ունեմ, ունես, ունի, ունենք, ունէք, ունեն
Անկ.— ունի, ունիր, ունէր, ունինք, ունիրք, ունին
Մնացյալը լրանում է ունենալ բայից՝

4. գիտեմ > կիտեմ

Ներկ.— կիտեմ, կիտես, կիտի, կիտենք, կիտէք, կիտեն
Անկ.— կիտի, կիտիր, կիտէր, կիտինք, կիտիրք, կիտին
Կտր.— կիցա, կիցար, կիցավ, կիցանք, կիցաք, կիցան
Հրամ.— կիցի, կիցէք
Դերբ.— կիցօղ, կիցած, կիտնալու, կիտնալիք, կիցիր

Պակասավոր բայերի շարքը պիտի գնենք նաև գրբ. հայիմ
«տեսնեմ» բայը, որ Վանի բարբառում պահպանված է միմիայն եր-
կու ձևով՝ խեմ «հայիմ, տեսնեմ» և խեմք «հայինք, տեսնենք»:
Մրանք գործածված են մակբայի նման և բոլորովին կորցրել են
իրենց բայական արժեքը: Այսպես՝

պե խեմ «բեր տեսնեմ»

պե խեմք «բեր տեսնենք»

ասա խեմ «ասա տեսնեմ»

ասա մէյ խեմ «ասա մի տեսնեմ»

մէխա պե խեմ «մի (հատ) բեր տեսնեմ»

մէխա ասա խեմ «մի (հատ) ասա տեսնեմ»

մ'խեմ գյուղերում «մի տեսնեմ, տեսնեմ մի»

Անիծական ձև է՝

վորտու իրես շխես «որ դու երես շտեսնես»

Դյուղական ձև է կխի «կնայի» (որ է կհայի):

Պակասավոր բայերից հետո կարելի էր հիշել նաև անդեմ բա-
յերը, որոնց մեջ գեղեցիկ օրինակ է կնէրի «եղանակը՝ օրը պար-
զում լավանում է» (գրբ. ջեր «լավ՝ պայծառ օր» բառից):

ԲԱՐԴ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

Սահմ. ներկա

357. Սահմանական ներկան կազմվում է ստոր. ներկայի
վրա դնելով կը կամ կ մասնիկը. առաջինը բաղաձայնով սկսվող

բայերի առաջ, երկրորդը՝ ձայնավորով: Միավանկ (գամ, տամ, լամ) բայերի մոտ դրվում է կու. օր.

կիսաստանամ	կուզեմ	կու	կյոմ
կիսաստանաս	կուզես	կու	կյոս
կիսաստանա	կուզի	կու	կյո
կիսաստանանքյ	կուզենքյ	կու	կյոնքյ
կիսաստանաքյ	կուզէքյ	կու	կյոքյ
կիսաստանան	կուզեն	կու	կյոն

Սահմ. ներկան նաև ապառնիի արժեք ունի, իսկ շարունակական ներկան, որ գտնվում ենք Սեբաստիայից մինչև Ռոստոթո, գոյություն չունի Վանի բարբառում:

Սահմ. անց. անկատար

358. Կազմվում է նույնպես կը կամ կ մասնիկով, ճիշտ նախորդին համապատասխան ձևով. միավանկ բայերի մոտ տրվում է կու:

կիսատանի	կուզի	կու	կյի
կիսատանիւր	կուզիւր	կու	կյիւր
կիսատանէր	կուզէր	կու	կյէր
կիսատանինքյ	կուզինքյ	կու	կյինքյ
կիսատանիքյ	կուզիքյ	կու	կյիքյ
կիսատանին	կուզին	կու	կյին

Շարունակականի անկատար ձևը գոյություն չունի Վանի բարբառում:

Պարզ ապառնի

359. Կազմվում է ստոր. ներկայի վրա դնելով պիտի մասնիկը, որ միշտ նախադաս է, ոչ կարող է դրվել հետադաս, ոչ էլ կարող է սղվել կամ կրճատվել (պիտ, պի և այլն):

Ահա սիրել, երթալ և զալ բայերի ապառնիի պատկերը.

պիտի սիրեմ	պիտի էրթում	պիտի կյոմ
պիտի սիրես	պիտի էրթոս	պիտի կյոս
պիտի սիրի	պիտի էրթո	պիտի կյո
պիտի սիրենքյ	պիտի էրթոնքյ	պիտի կյոնքյ
պիտի սիրէքյ	պիտի էրթոքյ	պիտի կյոքյ
պիտի սիրեն	պիտի էրթոն	պիտի կյոն

Մի քանի ապառնի իրար հտեից շարված դեպքում կարելի

է պիտի մասնիկը չկրկնել. ինչ. պիտի էրբում, տիսնամ, խավենմ առնեմ, պիբեմ տամ քյե:

Գյուղականն ձե է տը, որ Մուկաց ենթաբարբառի առանձնահատկությունն է. օր. թօ կյտ խեմ ինչ տը անի ձիկ:

Անցյալ ապառնի

360. Կազմվում է ստոր. անցյալի վրա դնելով պիտի մասնիկը, որ միշտ նախադաս է լինում, ոչ կարող է հետագաս լինել, ոչ էլ սղվել կամ կրճատվել (պիտ, պի, աի և այլն).

Ահա սիրել, երթալ և գալ բայերի անցյալ ապառնիի պատկերը.

պիտի սիրի	պիտի էրթի	պիտի կյի
պիտի սիրիր	պիտի էրթիր	պիտի կյիր
պիտի սիրէր	պիտի էրթէր	պիտի կյէր
պիտի սիրինքյ	պիտի էրթինքյ	պիտի կյինքյ
պիտի սիրիքյ	պիտի էրթիքյ	պիտի կյիքյ
պիտի սիրին	պիտի էրթին	պիտի կյին

Մի քանի անցյալ ապառնի իրար ետևից շարված դեպքում կարելի է պիտի մասնիկը չկրկնել. ինչ. պիտի էրթի տիսնի խավեն առնի պիրի տի քյե:

Հրամայական Բ ձև

361. Հրամայականի պարզ ձևը գործածական է միայն եղ. և հոգնակի բ դեմքի համար. իսկ ա և բ դեմքերը, ինչպես և անցյալը կազմելու համար գործածվում է բարդ ձևը, որ կազմվում է թող մասնիկով:

Ահա սիրել, երթալ և գալ բայերի բարդ հրամայականի ներկան և անցյալը.

ն ե ր կ ա

թող սիրեմ	թող էրթում	թող կյում
թող սիրի	թող էրթոմ	թող կյոմ
թող սիրենքյ	թող էրթոնքյ	թող կյոնքյ
թող սիրեն	թող էրթոն	թող կյոն

անցյալ

թող սիրի	թող էրթի	թող կյի
թող սիրիւր	թող էրթիւր	թող կյիւր
թող սիրէր	թող էրթէր	թող կյէր
թող սիրինքյ	թող էրթինքյ	թող կյինքյ
թող սիրիքյ	թող էրթիքյ	թող կյիքյ
թող սիրին	թող էրթին	թող կյին

Կարելի է կրճատել այս քող մասնիկը (քօ), բայց կարելի չէ հետադաս գործածել: Կրկնության դեպքում կարելի է միայն մի անգամ գնել քող մասնիկը, իսկ իմաստի սաստկության համար կարելի է գնել տլո ($\leq$ թրք. hele) կամ մէ հաւ և կամ երկուսը միասին. ինչ.

թող մէ հաւ էրթոտ տիսնա.

թող տլո էրթոտ տիսնա.

թող տլո մէ հաւ էրթոտ տիսնա.

թօ ուտի. թօ կյո խեմ քնչ տը անի ձիկ:

ԲԱՂԱԴՐՅԱԼ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

362. Պոլսի բարբառի քննության մեջ § 367 դրել եմ 38 քաղաղրյալ ձև, որոնք կազմված են անցյալ և ապառնի գերբայ- ների և էական բայի հարադրությամբ: Վանի բարբառը այս կող- մից այնքան հարուստ չէ. նա չգիտե ոչ միայն շարունակական ձևը (կոր), ոչ միայն պայմանական եղանակը (եղեր), այլև նույն- իսկ հարակատարի և գերակատարի սիրած եմ, սիրած էի ձևերը, այլ միայն սիրեր եմ, սիրեր էի: -ած գերբայական ձևով կարելի է ասել միայն՝

տիսած կամ	տիսած կի
տիսած կաս	տիսած կիր
տիսած կա	տիսած կէր
տիսած կանքյ	տիսած կինքյ
տիսած կաքյ	տիսած կիքյ
տիսած կան	տիսած կին

(սրանք համապատասխանում են Երև. տեսած կամ, տեսած կայի=Պլ. տեսած ունիմ, տեսած ունեի ձևերին).

363. - ԿՈՒՆ ԳԵՐՐԱՅՈՒՎ ԿԱԶՄՎԱԾ ԿԱՆ ՈՒՐԻՉ ԲԱՊԱԴՐՅԱԼ ձԻՆԵՐ,
ՈՐՈՆՑ ԿԱՐԳ ԾԱՆԿԸ ԽԱԼԻՍ ԵՆՔ ՍՈՐԻՆ, ԱՌԱՆՃԻՆ ՀԻՉԵԼՈՎ ՀԱՐԱ-
ԿԱՍԱՐԻ և ԳԵՐԱԿԱՍԱՐԻ ՍՈՎՈՐԱԿԱՆ ձԻՆԵՐ:

ՀԱՐԱԿԱՍԱՐ ԱԿԱՌՆԻ.— ԽԻՍԱԾ ԿԻՄԻ ԷԼՆԵՄ

ԳԵՐԱԿԱՍԱՐ ԱԿԱՌՆԻ.— ԽԻՍԱԾ ԿԻՄԻ ԷԼՆԻ

ՊԱՐԽԱՎՈՐԱԿԱՆ ՆԵՐԿԱ.— ԽԻՍՆԷԼՈՒ յԵՄ

ՊԱՐԽԱՎՈՐԱԿԱՆ ԱՆԿ.— ԽԻՍՆԷԼՈՒ Ի

ՊԱՐԽԱՎՈՐԱԿԱՆ ԿՈՐ.— ԽԻՍՆԷԼՈՒ ԷԼՈՒ

ՊԱՐԽԱՎՈՐԱԿԱՆ ԱԿԱՌ.— ԽԻՍՆԷԼՈՒ ԿԻՄԻ ԷԼՆԵՄ

ՊԱՐԽԱՎՈՐԱԿԱՆ ԱԿԱՌ. ԱՆԿ.— ԽԻՍՆԷԼՈՒ ԿԻՄԻ ԷԼՆԻ

ՊԱՄԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԿԱՍԱՐ.— ԽԻՍԱԾ ԿԷԼՆԵՄ

ՊԱՄԱՆԱԿԱՆ ԳԵՐԱԿԱՍԱՐ.— ԽԻՍԱԾ ԿԷԼՆԻ

ՊԱՄԱՆԱԿԱՆ ԱԿԱՌՆԻ ԱՆՈՐՈՉ.— ԽԻՍՆԷԼՈՒ ԿԷԼՆԵՄ

ՊԱՄԱՆԱԿԱՆ ԱՆԿ. ԱԿԱՌ. ԱՆՈՐՈՉ.— ԽԻՍՆԷԼՈՒ ԿԷԼՆԻ

ՍՈՐԱԴԱՍԱԿԱՆ

ՀԱՐԱԿԱՍԱՐ.— ԽԻՍԱԾ ԷԼՆԵՄ...

ԳԵՐԱԿԱՍԱՐ.— ԽԻՍԱԾ ԷԼՆԻ...

ԱԿԱՌՆԻ.— ԽԻՍՆԷԼՈՒ ԷԼՆԵՄ...

ԱՆԿԱՍԱՐ ԱԿԱՌՆԻ.— ԽԻՍՆԷԼՈՒ ԷԼՆԻ...

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

ԿԱՍԱՐՅԱԼ.— ԽԻՍԱԾ ԷԼԻ...

ՀԱՐԱԿԱՍԱՐ.— ԽԻՍԱԾ ԹՕՂ ԷԼՆԵՄ...

ԳԵՐԱԿԱՍԱՐ.— ԽԻՍԱԾ ԹՕՂ ԷԼՆԻ...

ԱԿԱՌՆԻ.— ԽԻՍՆԷԼՈՒ ԷԼԻ...

ԳԵՐՐԱՅ

ՀԱՐԱԿԱՍԱՐ.— ԽԻՍԱԾ ԷԼՆԵԼ

ԱԿԱՌՆԻ ԱՆՈՐՈՉ.— ԽԻՍՆԵԼՈՒ ԷԼՆԵԼ

364. ՀԱՐԱԿԱՍԱՐ

ԿԱԶՄՎՈՒՄ Է ԱՆՑՅԱԼ ԳԵՐՐԱՅԸ ԿԵԵԼՈՎ ԷՊԻԿԱՆ �ԱՅԻ ՆԵՐԿԱ
ԺԱՄԱՆԱԿԻ ՀԵՄ. ՆԿԱՄԵԼԻ Է ՈՐ ԳԵՐՐԱՅԸ ԲՈՂՈՐ ՂԵՄՔԵՐՈՒՄ ՎԵՐ-

ջափորվում է իր, միայն եզակի երբորդ դեմքում (ուր որ էա-
կան բայը դառնում է ի), ֆնում է իլ նախնական եր ձևով. ինչ.

ուզիր եմ	խաստացիր եմ
ուզիր ես	խաստացիր ես
ուզեր ի	խաստացեր ի
ուզիր ենք	խաստացիր ենք
ուզիր էք	խաստացիր էք
ուզիր են	խաստացիր են

Գ լծորդության ք տիպարի մեջ միջին ա-ն կարող է ընկնել
և այն ժամանակ կստանանք, օրինակ՝ այսպիսի ձև.

աղյիր եմ	աղցիր ենք
աղցիր ես	աղցիր էք
աղցեր ի	աղցիր են

365. Գերակատար

Կազմվում է անցյալ դերբայը կցելով էական բայի անկատար
ժամանակի հետ. նկատելի է որ դերբայը գերակատարում ոչ մի
փոփոխություն չի կրում (հակառակ հարակատարի) և սկզբից
մինչև վերջ ֆնում է իր (ցիր) ձևով. օր.

ուզիր ի	խաստացիր ի
» իլ	» իլ
» էր	» էր
» ինք	» ինք
» իք	» իք
» ին	» ին

Համեմատությունից երևում է, որ հարակատարում եզ. գ
դեմքի մեջ փոփոխությունը նրա համար է, որ երկու համանուն
ձևերը տարբերվեն իրարից. այսպես ուզիր ի «ուզեցել էի» և
ուզեր ի «ուզեցել է»:

ԱՆՅՈՂԱԿԱՆ ԲԱՅ

366. Բուն անցողական բայերը երկու ձև ունեն՝ կարճ և եր-
կար. կարճ ձևը կազմվում է ուցել վերջավորությունից, երկար ձևը

ցուցել վերջավորությամբ Սովորականը -ցուցել ձևն է, որից տա-
լիս ենք ահա մի խումբ օրինակներ.

անցուցանել >	ընցուցել	մեացնել >	մեացուցել
բարձրացնել >	պանքըրցուցել	ործկացնել >	վործկացուցել
բռնեցնել >	պոնքուցել	պառաւացնել >	պառվըցուցել
բանացնել >	պոնցուցել	ուռեցնել >	ուռուցուցել
լացացնել >	լոցուցել	սիւրեցնել >	սիւրիցուցել
լողացնել >	լօխկըցուցել	վազեցնել >	վազկըցուցել
ծիծաղեցնել >	ծրծղացուցել	վախեցնել >	վախցուցել
	> ծըծղկըտացուցել		
կարմրացնել >	կարմըրցուցել	քայլեցնել >	քյէլըցուցել
կոկեցնել >	կոկըցուցել	փլուզանել >	պլըցուցել
կորցնել >	կուրխցուցել	քրտնեցնել >	քյըռաընցուցել
հալեցնել >	խալըցուցել	քնեցնել >	քյընըցուցել
հասկացնել >	խասկըցուցել		

Սրանց կարգն է անցել նաև հարցանել > խառցուցել.

367. Իբր օրինակ տալիս ենք խասկըցուցել բայի խոնարհումը.

Ստոր. ներկ.	Ստոր. անց.	Կտր.
խասկըցուցեմ	խասկըցուցի	խասկըցուցի
խասկըցուցես	խասկըցուցիր	խասկըցուցիր
խասկըցուցի	խասկըցուցէր	խասկըցուց
խասկըցուցե՞նք	խասկըցուցի՞նք	խասկըցուցի՞նք
խասկըցուցէ՞ք	խասկըցուցի՞ք	խասկըցուցի՞ք
խասկըցուցեն	խասկըցուցին	խասկըցուցին

Հրամ.

Դերբ.

խասկըցու	խասկըցուցել
խասկըցուցէ՞ք	խասկըցուցած, -ցիր
մը խասկըցուցե	խասկըցուցող
մէք խասկըցուցե	խասկըցուցէլու

Արգելականում շեշտը (հակառակ ուրիշ բարբառների) դըր-
վում է ոչ թե մի արգելական մակբայի վրա, այլ բայի առաջին
վանկի վրա. ինչ.

մը խասկըցուցե
մը վա՛զկըցուցե
մը ծը՛ծղացուցե

368. Կարճ ձևով անցողականները ավելի քիչ են. ահա մի քանի օրինակ՝

խատուցել «սպանել», կտր. խատուցի
քյընուցել (=քյընըցուցել)
մէռուցել (=մեռցուցել)
խակյիւցել «հագցնել»
թռուցել «թռցնել»
փոթուցել «պոկել, փրցնել»

Մանր.— Նկատելի է որ երբեմն ուցել ձևի տեղ գտնուած ենք-իւցել, ինչ. խակյիւցել, կտր. խակյիւցի, լոցիւցել, կտր. լոցիւցի և այլն, Գյուղական ձև է փախցում, խարցում փխ. փախցուցեմ, խարցուցեմ և այլն:

ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԲԱՅ

369. Կրավորական բայերը կազմվում են վել վերջավորու-թյամբ և խոնարհվում են Բ լծ. ա տիպարի ձևով. օր.

Ստոր. ներկ.	Ստոր. անց.	Սահմ. կտր.
ողտովեմ	ողտովի	ողտովա
ողտովես	ողտովիր	ողտովար
ողտովի	ողտովէր	ողտովավ
ողտովենք	ողտովինք	ողտովանք
ողտովէք	ողտովիք	ողտովաք
ողտովեն	ողտովին	ողտովան

Հրամ.	Դերբ.
ողտովի՛	ողտովե՛լ
մ ողտովե՛	ողտովօղ
ողտովէ՛ք	ողտոված
մեք ողտովե՛	ողտովեր
	ողտովէլու

Ման.— Երբ բայարմատը վերջանում է կ բաղաձայնով, կրավորականի վ ձայնի մոտ դառնում է յ. օր. փակե՛լ > փոկե՛լ, փոյվե՛լ, քակե՛լ > քյակե՛լ, քյայվե՛լ, պսակե՛լ > փսակե՛լ, փսայվե՛լ և այլն:

370. Երևանի բարբառի նման՝ Վանի բարբառի մեջ էլ կրավորական ձևի բայը կարող է փոխանակել հին հայերենի Բ լծորդության շեղուքի ձևը. օր.

մոլորիլ > մէօլլրիլ, մէօլլրվիլ,

կտր. մէօլլրա, մէօլլրվա

պատառիլ > պատռել, պատռվիլ,

կտր. պատռա, պատռվա

գանգատիլ > կտր. կյոնդյլտվա, կյոնգյլտվար, կյոնգյլտվալ... և կյոյտավ «գանգատվեց», որ սակայն չի խոնարհվում:

371. Կրավորական բայերը գործ են ածվում նաև իբրեւ՝

ա) Կարողական բայ. ինչ.

էրթուլ — էրթոցվիլ «կարելի լինել երթալ». օր. ստեղծվ կէրթոցվի՞ «այս տեղով կարելի՞ է երթալ, ճամբա կա».

կյուլ — կյոցվիլ «գալը կարելի լինել». օր. ստեղծվ կու կյոցվի՞ «այս տեղով կարելի՞ է գալ».

էլնել — էլնըվիլ «բարձրանալը կարելի լինել».

տալ — տըրվիլ «կարելի լինել տալ». էրկու կուտուշ կը տըրվի՞ «կարելի՞ է միթե երկու զրուշ տալ».

էննել — էննըվիլ «կարելի լինել իջնել»:

բ) Փոխադարձ բայ. ինչ.

ծեծել — ծիծկըվիլ «իբար ծծել»

տըփել — տըփվել «նույն նշ.»

կյըրկել — կյըրկըվիլ «իբար գրկել»

պաքյել — պաքյվիլ «իբար համբուրել»

փոթիւթել — փոթիւթվիլ «իբար փաթաթվել»

գ) Անդրադարձ կամ կրավորակերպ շեղուք բայ. ինչ.

խայնել — խայնըվիլ «ինքը իր շորերը հագնել»

խանել — խանվիլ «ինքը իր շորերը հանել»

սանդրել — սանդըրվիլ «ինքը իր մազերը սանրել»

լվալ — լվոցվիլ, լվասվիլ «ինքը իրեն լվալ»:

ԲԱՅԱՍԱԿԱՆ ԲԱՅ

372. Բայերի բացասականը կազմելու համար սովորաբար գրականի սկիզբը դնում ենք չ. այսպես են ստորագասական ներկան և անկատարը, կատարյալը և գերբայները: Տալիս ենք մի

օրինակ բաղաձայնով և մի օրինակ ձայնավորով սկսվող բայերից: (Բացասական մասնիկն է միշտ չ և չի կարող դառնալ չի՞ ինչ. չըլսեմ, ո՛չ թե չիլսեմ):

Ստոր. ներկ.	Ստոր. անց.	Սահմ. կար.
չլսեմ	չլսի	չլսո
չլսես	չլսիր	չլսոր
չլսի	չլսէր	չլսով
չլսե՞նք	չլսինք	չլսո՞նք
չլսէ՞ք	չլսի՞ք	չլսո՞ք
չլսեն	չլսին	չլսոն
չուզեմ	չուզի	չուզիցի
չուզես	չուզիր	չուզիցիր
չուզի	չուզէր	չուզեց
չուզե՞նք	չուզինք	չուզիցինք
չուզէ՞ք	չուզի՞ք	չուզիցի՞ք
չուզեն	չուզին	չուզիցին

Դերբայներ

չլսել	չուզել
չլսող	չուզող
չլսած	չուզած
չլսելու	չուզելու

373. Սահմանական ներկան և անկատարը կազմելու հաւ մար վերցնում ենք բայի անորոշը, կտրում ծայրից լ ձայնը և խոնարհում էական բայի ներկայի և անկատարի հետ: Այսպես՝

Ներկ.

չեմ լսե	չեմ ուզե
չես լսե	չես ուզե
չի լսե, չը՛լսե ¹	չուզե, չի ուզե
չենք լսե	չենք ուզե
չէք լսե	չէք ուզե
չեն լսե	չեն ուզե

¹ Ինչպես տեսնում ենք, չ բացասականը կարող է ստանալ թե չի և թե չք ձևը. նույնիսկ ձայնավորի մոտ կարող է մնալ չի:

Անկատար

չի լսե	չի ուզե
չիր լսե	չիր ուզե
չէր լսե	չէր ուզե
չինքյ լսե	չինքյ ուզե
չիքյ լսե	չիքյ ուզե
չին լսե	չին ուզե

374. Նույն ձևով կազմվում են նաև հարակատարն ու գերակատարը. այնպես որ շեմ լսե նշանակում է թե «չեմ լսում» և թե «չեմ լսել», ինչպես որ շի լսե նշանակում է «չէի լսում» և «չէի լսել»։ Այս երկուսը իրարից զանազանել անհնարին է։ Պոլսի բարբառումն էլ շեմ լսէր թե ներկա է և թե հարակատար, ինչպես որ շէի լսէր թե անկատար է և թե գերակատար. բայց Պոլսի բարբառում գոնե կարելի է ասել շեմ լսած (հարակատար) և շէի լսած (գերակատար), իսկ Վանի բարբառում շի գործածվում ոչ լսած շեմ, լսած շի, ոչ էլ շեմ լսած, շի լսած։ Կարելի է ասել միայն լսած չկամ, լսած չկի, որոնք կարող են բռնել հարակատարի և գերակատարի տեղը։

375. Միայն Գ ընդդռնված թյան բայերն են, որ զանազանում են ներկան ու անկատարը հարակատարից և գերակատարից։ Ահա սրանց շարքը.

Ներկ.	Հարակատար
չեմ խաղա	չեմ խաղցե
չես խաղա	չես խաղցե
չի (չը) խաղա	չի (չը) խաղցե
չենքյ խաղա	չենքյ խաղցե
չէքյ խաղա	չէքյ խաղցե
չեն խաղա	չեն խաղցե

Անկ.	Գերակատար
չի խաղե	չի խաղցե
չիր խաղե	չիր խաղցե
չէր խաղե	չէր խաղցե
չինքյ խաղե	չինքյ խաղցե
չիքյ խաղե	չիքյ խաղցե
չին խաղե	չին խաղցե

Ման.— Անկատարի կազմութեան մեջ բայական ալ վերջա-
վորութիւնը ինչպէս այստեղ, նուայնպէս և միավանկ բայերի
ծայրին (§ 377) դառնում է ե, մի զարմանալի ձայնական երե-
վոյթ, որ ինձ անբացատրելի մնաց:

376. Միավանկ տալ, լալ, զալ բայերը սահմ. ներկայի
կազմութեան ժամանակ ստանում են ի նախդիրը. այսպէս՝

չեմ ի տա	չեմ ի լո	չեմ ի կյո
չես ի տա	չես ի լո	չես ի կյո
չի (ի) տա	չի (ի) լո	չի (ի) կյո
չենք ի տա	չենք ի լո	չենք ի կյո
չեք ի տա	չեք ի լո	չեք ի կյո
չեն ի տա	չեն ի լո	չեն ի կյո

377. Սահմ. անկատարի մեջ այս նույն բայերը ունենում
են երկու ձև. կամ ստանում են այն ի նախդիրը և կամ ոչ. բայց
բայի վերջի ա ձայնը դարձնում են ե, որի մասին տես § 375:
Ըստ այսմ՝

չի տե	չի լե	չի կյե
չիր տե	չիր լե	չիր կյե
չէր տե	չէր լե	չէր կյե
չինք տե	չինք լե	չինք կյե
չիք տե	չիք լե	չիք կյե
չին տե	չին լե	չին կյե

կամ՝

չի ի տե	չի ի լե	չի ի կյե
չիր ի տե	չիր ի լե	չիր ի կյե
չէր ի տե	չէր ի լե	չէր ի կյե
չինք ի տե	չինք ի լե	չինք ի կյե
չիք ի տե	չիք ի լե	չիք ի կյե
չին ի տե	չին ի լե	չին ի կյե

378. Ապառնին և անցյալ ապառնին կազմվում են չ մաս-
նիկը դնելով բայի վրա, հետևյալ ձևով.

պիտի չլսեմ	պիտի չլսի
պիտի չլսես	պիտի չլսիր
պիտի չլսի	պիտի չլսէր

պիտի չլսենք	պիտի չլսինք
պիտի չլսէք	պիտի չլսիք
պիտի չլսեն	պիտի չլսին
պիտի չիկյում	պիտի չի կյի
պիտի չիկյոս	պիտի չի կյիր
պիտի չիկյո	պիտի չի կյել
պիտի չիկյոնք	պիտի չի կյինք
պիտի չիկյոք	պիտի չի կյիք
պիտի չիկյոն	պիտի չի կյին

Ման. 1.— Սովորութիւնն չէ բացասական մասնիկը դնել պիտի ձևի վրա (չպիտի լսեմ և այլն):

Ման. 2.— Բազմավանկ բայերի բացասականը թեև չ (չը) ձևն ունի, բայց միավանկ բայերի բացասականը լինում է չի: Այս ձևը կազմված է ոչ թե չը դարձնելով չի, այլ միավանկ բայերի ի նախդիրն է որ միանում է չ բացասականին. այսպես՝

պիտի չ—իկյում,	պիտի չ—իկյի
պիտի չ—իտամ,	պիտի չ—իտի
պիտի չ—իլում,	պիտի չ—իլի

379. Արգելականը կազմվում է «մի» մակբայով, որ վանի բարբառում ստանում է մի կամ մը ձևը, իսկ ձայնավորի մոտ սղմամբ դառնում է մ: Հոգնակիում լինում է միշտ մէք, որ բաղաձայնի մոտ կարող է դառնալ մէնյ. օր.

մի՛ լսե, մը լը՛սե,
մի՛ պիրե, մը պի՛րե կամ մի՛ պե, մը՛ պե,
մ՛անսե, մ՛ուտե, մ՛ա՛նե, մ՛իյնե, մ՛ա՛մչընա, մ՛ա՛ղա,
մէք լսե, մէք ամե, մէք պիրե, մէք աղա, մէք իյմե,
մէնյ խաղա, մէնյ խայնե:

ՀԱՃԱԽԱԿԱՆ ԲԱՅԵՐ

380. Կազմվում են ո, տ, ոտ մասնիկներով, որոնք ներմուծվում են արմատի և բայական վերջավորութեան մեջ՝ Այսպես՝

Թումբուրեւ (թոռոմեւ բայից)	բյակըռտեւ	կովըտաւ, կովըտեւ
շտկըռտեւ	ճանդըռթեւ	լիզվըռտվեւ
ծաղըռտեւ	պատըռտվեւ	բյոշկըռտեւ

380-տ. Հին հայերենը շատ հարուստ էր կրկնավոր բայերով: Վանի բարբառը մասամբ պահում է այդ բայերը, բայց շատ անգամ էլ նոր կրկնավորներ է հնարել, որոնց մի մասը պարզապես ձայնեքց ցույց տալու համար, մյուս մասը գործողություն կրկնությունը ցույց տալու համար. օր.

դեղնալ «քթի տակից երգել»

նողմըղվել «արշալույսի ժամանակ արևի լույսի ճառագայթելը»

խոռմըռալ «խեթ խեթ նայել, աչքը վրան ուրերել»

նովոալ «թռչունի ճովողել, նոր կոշիկի ձայնը»

շխշխկացնել

լխլխկացնել (ջուրը ամանի մեջ շարժելով)

խնդխնդացնել (շարունակ ծիծաղացնել)

ծնծնալ «ջուրը ծորիլ, կաթկթիլ»

գյրլգյրլալ «ջրի կալկաշել»

նոնոալ «բարձրաձայն ծիծաղել»

կոկոալ (ագռավի, կոունկի ձայն)

նլվլալ (թռչունի ձայն)

կվկվալ (հավի, կաքավի ձայն)

կաթկթել (ջրի ևն կաթիլ կաթիլ վազելը)

գդգդալ (բարակ քամու կամ հեղասահ ջրի ձայնը). որից
գդգդուն ած.

կծալ կծվծալ (խառնիճաղանճ ձայներ հանել). կան և սրանց
դոյականները, ինչ. կծրկտոց (հրացանի ձայներ), վծրկտոց (ճըվ-
ճըվոց, ադմուկ) և այլն:

Երբ արմատը ունի -նգ հանգը, կրկնություն ժամանակ, առաջին եզրում դառնում է ըստ օրինի յ. ինչ.

գըյգընգյալ (գնդգնդալ)

տըյտընգյալ (էշի վրա նստած մարդու շարժվելը)

վըյվընգյացնել (վնգվնգացնել)

ծայծըյվել (ծակծկվել)

Բայերի սաստկական ձևերը կազմվում են մի բաղաձայնի հավելումով. ինչ. պահել—պախկվել,...

Բայերի համար կա նաև մի ուրիշ տեսակ կրկնություն, որ սակայն սովորական չէ. ինչ. խասնէխաս կեղծի «հասնելու վրա կլինի»:

Չենք խոսում կրկնության այն երևույթի վրա, որ սովորական է մեր բոլոր բարբառներում. ինչ. խաց-մաց, տուն-մուն, ճիր-միր, արալ-մարալ և այլն:

Տարբեր բաղաձայններով կրկնության օրինակներ են այս բարբառում՝ հում > խում-լում, աման-չաման, սուս-փուս, ուրախ-չուրախ, անուշ-չանուշ (օր. անուշ-չանուշ կերեր («կերակուրներ») եմ իփե):

Կամ ձայնավորի ներքին փոփոխություն՝ ձայն > ծէն-ծիւն, ծէն-ծիւ (ն ձայնը հապավված):

ԹՈՒՐՔԵՐԵՆԻՑ ՓՈՒԱՌՅԱԼ ԲԱՅԵՐ

381. Թուրքերենից փոխառյալ բայերը երկու կարգի են բաժանվում.

ա) Նրանք որ կազմված են որևէ թուրքական արմատով, շատ հաճախ թրք. դերբայական -միշ ձևով և հյ. որևէ օժանդակ բայով. ընդհանրապես անել՝ եթե բայը ներգործական է և կամ էլնել «լինել»՝ եթե բայը չեզոք կամ կրավորական է. ինչ.

բայրվիշ էլնել «խելքը թոցնել»

քմախ անել «ադահել»

խաբաք անել «լուր տալ, իմացնել»

խավասալմիշ էլնել «փափազիլ»

ճիւքյա կտրել «վճիռ տալ»

մայիլ էլնել «հիանալ, սքանչանալ»

սուս անել «լուել»

փոյդա անել «հնարել, ճարել» (պրս. paydā)

փառլամիշ էլով «փայլեց»

փարալամիշ անել } «պատառոտել, հոշտել, գիշատել»

փառչալամիշ անել }

փէօզմիշ անել «փչացնել, ոչնչացնել»

քիֆիւր անել «հայհոյել»

Այս բոլորի մեջ խոնարհման ժամանակ խոնարհվում է միայն հայերեն օժանդակ բայը և թուրքերեն բառը մնում է միշտ անփոփոխ:

բ) Նրանք որ կազմված են թուրքական արմատից, բայց հայերեն բայական վերջավորությամբ: Սրանք թվով շատ ավելի քիչ են, քան նախորդները և խոնարհվում են սովորական հայերեն բայերի նման. օր.

բաշլայել «սկսել»

բորէմբորանալ «հավասարվել»

բորիւշել «հաշտվել»

բորիւշցիւցել «հաշտեցնել»

բէշորել «խնամել, հոգ տանել» (հատկապես այգին)

թալանել «կողոպտել»

թալնըվել «կողոպտվել»

խլըսել «վերջանալ»

խոջել «ծախսել»

խուրդել «փող մանրել»

կաշխել «ձին թիմարել քերիչով», որ և գ. խաշխել

կիմիշել «խնայել»

ջնոտել «բարկանալ» (արաբ. յիոո գեւ, սատանա բառից)

հոգրըվել «պատրաստվել»

մէօհըել «կնիքով կնքել»

մուռտըռել, մուռտըլել «կեղտոտել, ապականել»

նխշել «նկարագրել» (արաբ. naqš «զարդանկար» բառից)

շարխօշմալ, սարխօշմալ «հարբել»

շէօշել «չոքել, ծռնր դնել»

ջոյնվել «կորչել գնալ», հրմ. ջոյնվի՝ «կորի գնա՛»

սապոնել «օձառել»

սոխկըտել «հաշմանդամ դարձնել» (արաբ. saqa՛ հաշման-

սիլախվորվել «զինվել»

դամ)

II. ԴԵՐՔԱՆԵ

382. Անորոշ դերբայը կարող է իբրև գոյական գործածվել և հոլովվել՝ երկրորդ հոլովման համաձայն, հետևյալ ձևով.

Ո. Հ. խայնել

էրթուլ

Ս. Տ. խայնէլու

էրթուլու

Բ. խայնէլուց

էրթուլուց

Գ. խայնէլով

էրթուլով

Ո. Հ. խայնեւնեւր	էրթուլներ
Ս. Տ. խայնեւնեւրայ	էրթուլներայ
Բ.	»
Գ.	»
խայնեւնեւրօլ	էրթուլներօլ

Ինչպէս տեսնում ենք, անորոշի -ել վերջավորութիւնը որ շեշտի տակ է ձևն ունի, հոլովման մեջ շեշտը կորցնելով դառնում է է:

Գեղջկական բարբառին է հատուկ սեռ. -տր. -լիւ ձևը. ինչ. ապրելիւ, պախկվելիւ, սքարվելիւ, վաստկելիւ և այլն, բցռ. ապրելիւց, պախկվելիւց, մէռնելիւց և այլն:

383. Իբրև մակբայ գործածելու ժամանակ ուրիշ բարբառների -լէն ձևը ընդունված չէ Վանի բարբառում, այլ նրա փոխարեն կա միայն գրծ. -լօվ. ինչ.

շուն խանէլօվ կէթռ.

կյէլ վոռնալօվ կվոգի.

նիւր խշխշալօվ կվոգի:

Սակայն ունենք նաև լուլէլէն «լալով»:

384. Ժամանակ ցույց տալու համար անորոշ գերբայը ստանում է երկու ձև.

ա) Գործածվում է կյոխ բառը սեռական հոլովով. ինչ.

էրթուլու կյոխ «երթալու միջոցին»

ասէլու կյոխ «ասելու ժամանակ»

նստէլու կյոխ «նստելիս»

խայնէլու կյոխ «երբ հագնում է»:

Մանր.—(Այս կյոխ բառը փոխառյալ է պրս. gāh «ժամանակ» բառից. նկատելու արժանի կետն այն է, որ պրս. ց դարձել է այստեղ կյ (KY). Ուստի նախ պետք է ստուգել թե ի՞նչ էր պրս. բառի հին ձևը: Horn, § 889 թեև տալիս է պրս. gāh «տեղ, գահ» բառի ծագումը (= հ. պրս. gāθu, զնդ. gātu, պհլ. gās), բայց չի խոսում բնավ այս gāh «ժամանակ» բառի մասին: Ըստ իս շատ պարզ է բառիս ծագումը, որին թերևս մոտեցել, բայց չեն անդրադարձել իրանագետները: Պրս. gāh «ժամանակ» ծագում է սանս. gāthā, զնդ. gāθā «երգ, շարական, օրհներգ» բառից: Սրանք տալիս են պհլ. gās, որ նշանակում էր նախ «Գաթա-յի հինգ օրհներգները», երկրորդ «fravartīn (Հրոտից) ամսվա հինգ

օրերը, երբ կարողում էին այն հինգ օրհներգները» (այդ հինգ օրերը համապատասխանում են մեր հայկական տոմարի Աւելետցի 5 օրերին). և երրորդ՝ «զրադաշտական կրոնի տարեկան վեց մեծ տոները»: Այստեղից ն. պրս. gāh նշանակեց նախ «աղոթքի ժամանակը, Gebetzeit» (տես այս բոլորը Nyberg, Hilfsbuch des Pehlevi, II, Uppsala 1931, էջ 79. իսկ Horn, էջ 278, գիտե միայն gās «երգ»։ ապա «աղոթքի ժամանակ» մասնավոր գաղափարից անցավ «ժամանակ» ընդհանուր գաղափարին: Nyberg թեև գիտե նոր պրս. gāh «աղոթքի ժամանակ» բառը, բայց Գեորգ Դպիրը չունի այդպիսի բառ. նա գիտե միայն, gāhanbār և սրա հոգնակին gāhanbarhā «վեց ժամանակք ստեղծութեան աշխարհի»։— «ժամանակ» գաղափարի այսպիսի բացահայտումն լավ օրինակ են նաև հյ. ժամ, որ թե՛ սովորական ժամանակն է և թե «եկեղեցի», այսինքն «աղոթքի ժամ»։ Նույնպես ատեն, որ արեմտահայոց մոտ նշանակում է սովորական «ժամանակ», բայց ծագում է հին ատեն բառից, ուրեմն «ատյանում նիստ գումարելու ժամանակը»։ Այսպիսով հաստատվում է ուրեմն, որ պրս. gāh «ժամանակ» բառի նախաձայնը հնապես էլ ց էր և հետևաբար Վանի բարբառում ց դարձել է կյ։ Սա նույն այն օրենքն է, որով հյ. գ Վանի բարբառում դառնում է կյ։ Սրա համար է որ նրան հաջորդող ա ձայնավորն էլ դարձել է ո, ըստ Աճառյանի օրենքի։ Բայց սրանից հետևում է նաև այն, որ Վն. կյոխ բառի փոխառությունը բավական հին է և կարող է իբրև կովան ծառայել որոշելու նախ ո ձայնավորի գոյացման, երկրորդ գ > կյ ձայնափոխության և երրորդ հ > խ ձայնափոխության ժամանակը)։

բ) Գործածվում է պէս բառը նույնպես սեռական-տրական հոլովածևով, որի վրա կարելի է ավելացնել նաև և հոգը։ Այս ձևը ցույց է տալիս անմիջական ժամանակը (հենց որ)։ օր.

յես տի'սնալու պէս՝ ճանչրցա.
կո'րառլու պէս՝ խասկրցավ.
ասէլու պէս՝ էլով վեր.
տի տի'սնալուն պէս գոք.
յես լսէլուն պէս էկա:

Ինչպես տեսնում ենք, դերբայի առաջին վանկը շեշտ է ստանում, և և հոգը կարող է գրվել բոլոր դեմքերի վրա, մինչ-

դեռ այլուր, օր. Պոլսի բարբառում, դեմքի համեմատ կարելի է ասել միայն՝ «ես տեսնալուս, դու տեսնալուտ, ան տեսնալուն պէս»:

դ) Ո՛չ անմիջական, այլ սովորական ժամանակ ցույց տալու համար գրվում է թրք. *iken* > իքյան «միջոցին» մակբայական մասնիկը՝ անորոշ դերբայի ուղ.-հյց. հոլովի վրա. օր.

ասել իքյան «ասելու միջոցին»

տիսնալ իքյան «տեսնելու միջոցին»

լսել իքյան «լսելու միջոցին»

պիրել իքյան «բերելու միջոցին»

կորտուլ իքյան «կարդալու միջոցին»

Սրանց հետ հմմտ. ստորև (§ 385 բ).

385. Անցյալ դերբայը երկու ձև ունի մյուս բարբառներում. ած և ել(եթ). այսպես է նաև Վանի բարբառը. Բայց Վանի բարբառը շատ է սահմանափակել -ած դերբայի գործածությունը: Նախ չի գործածում -ած դերբայը հարակատարի և գերակատարի մեջ (սիրած եմ, սիրած էի) (§ 362), ինչպես և սրանց բացասականի մեջ (չեմ լսած, չէի լսած, լսած չեմ, լսած չէի), (§ 373): Այս բոլոր դեպքերում գործածվում է -եթ ձևի դերբայը

Երկրորդ՝ չեզոք և կրավորական բայերի համար իբրև դերբայական մասնիկ գործածում է *նչ թե* -ած, այլ -ուկ մասնիկը. ինչ.

ավիրուկ «ավերված»

պոնուկ «բռնված»

մաշուկ «մաշված»

քյակուկ «քակված, քանդված»

քյըտընուկ «քրտնած»

փորուկ «փորված, պղծված»

(հող)

պորուկ «փորագրված»

իփուկ «եփված»

խալուկ «հալված»

կոտրուկ «կոտրած»

իկյուկ «եկած, թթված (խմորը)»

օյսնուկ «օրհնված»

օծուկ «օծված»

խատուկ «սատկած»

կոկուկ «կոկած»

տարուկ «տարված»

փտուկ «փտած»

մոլուկ «հարդախառն ցեխով ծեփած»

լցուկ «լցված»

Բաղաձայնից առաջ այս կ-ն դառնում է յ.՝ ինչ. կախույ
տեղէն ճկախված տեղից», լցույ փոռչ:

Այս ձևը միջին հայերենում հնարված էր հատկապես կրա-
վորական իմաստի համար, ուստի առանց վ մասնիկի: Իսկ Վա-
նի բարբառում կրավորական բայերն էլ իրենց վ մասնիկով
կազմում են այսպիսի դերբայներ. ինչ.

ալիրվուկ «ավերված»

փռվուկ «փռված»

կյբրվուկ «գրված»

փորվուկ «փորված»

պորվուկ «փորագրված»

քյայվուկ «քակված, քանդված»

տրվուկ «տրված»

-ած ձևով դերբայը գործածվում է՝

ա) իբրև զուտ ածական. ինչ.

իմ խմած ճիւր.

իմ կիրած խաց.

խակյած խալըվներս (իմ).

խակյած սոյերս (իմ).

կիրած խացերս (մեր).

կիրած խացս խաբամ արաց վէր կյրլխուս.

բ) միանալով թրք. իքյան (iken, գվռ. ikān) մասնիկի հետ,
տալիս է միջոցին, այն ժամանակ որ, հենց որ» նշանակու-
թյունը (հմմտ. § 384 գ). օր.

ասած իքյան «հենց որ ասաց»

տխած իքյան «երբ տեսավ»

պիրած իքյան «բերած միջոցին»

լսած իքյան «լսած ժամանակ»

վոզած իքյան «երբ որ վազում էր»

Սրա սաստկական ձևն է պէս բառի հարադրությամբ կազմը-
ված ձևը, որի հետ հմմտ. § 384 բ. օր.

տի՛սածին պէս «անմիջապես որ տեսավ»

կի՛րածին պէս

կո՛րտոցածին պէս

Սաստկության համար շեշտը դրվում է միշտ առաջին վանկի վրա՝ ճիշտ ինչպես թուրքերենում, որից թարգմանված է այս ձևը. օր. a'ldəyə gibi «առածին պես, անմիջապես որ առավ», gəldiyi gibi «եկածին պես, հենց որ եկավ»:

դ) Նույն դերբայը բացասական ձևով՝ միացած բացառականի թրք. դոն (den, dan) մասնիկի հետ՝ տալիս է «դեռ այդ բանը չեղած, կամ չեղած տեղից, չեղած ժամանակ» նշանակությունը. օր.

յեղ չխալածդոն մը՝ պոնցուցե.

չէլածդոն (չեղած տեղը, չեղած ժամանակ, երբ չկա).

չասածդոն «դեռ չասած».

չկիրածդոն «դեռ չկերած»

չտիսածդոն «դեռ չտեսած»

չշուրցուցածդոն «դեռ չշորացրած».

դ) -ած դերբայը իբրև դերբայ գործածվում է միայն էլնել «լինել» և կամ, կայի բայերի հետ՝ հետևյալ ձևով.

տիսած պիտի էլնեմ

տիսած պիտի էլնի

տիսած կէլնեմ

տիսած կէլնի

տիսած կամ, տիսած կի

Այս ձևերի մասին խոսել ենք §§ 362 և 363:

386. -ած ձևով դերբայը երբեմն ստանում է նաև -ոծ ձևը. Աճառյանի օրենքի համաձայն դա պատահում է միայն այն դեպքում, երբ -ած մասնիկին անմիջապես նախորդող բաղաձայնը նախկին թրթռունից է առաջացած կամ հենց թրթռուն է: Ահա մի խումբ օրինակներ՝

իջնել > էճնել, էճոծ

անկանիլ > ինել, ինգյոծ

լինել > էլնել, էլոծ

գտանել > կընդնել, կընդոծ

387. -եր ձևով դերբայը ավելի շատ գործածական է վանի բարբառում իբրև զուտ դերբայ և ոչ իբրև ածական: Նա ստանում է երեք ձև. -իր, -եր և ե:

Ամենից շատ գործածական է -իր ձևը: Այս ձևը գտնում ենք գերակատարի բոլոր վեց եզրերում և հարակատարի հինգ եզրերում (եզ. ա և բ դեմքի և հոգն. երեք դեմքերը). տարբեր է միայն եզակի գ դեմքը, որի մեջ դերբայը վերջանում է -եր (ուզեր ի): Այս մասին մենք վերը կարծիք հայտնեցինք, որ այդ տարբերացումը իմաստի զանազանություն պատճառով է. այսպես ուզիր ի «ուզեցեղ էի» և ուզեր ի «ուզեցեղ է» (§ 365):

Երբորդ ձևը -ե վերջավորությունը՝ գործածվում է միայն այն դեպքում, երբ դերբայը ընկնում է վերջում: Այդ լինում է՝
ա) այն ժամանակ, երբ բայը բացասական է. ինչ. չեմ լսե
«չեմ լսում կամ չեմ լսել», չի լսե «չէի լսում կամ չէի լսել».

բ) այն դեպքում, երբ շեշտված մի բառ առաջ է անցնում. ինչ.

լսիր եմ — բայց՝ յես եմ լսե
իկիր ես — » է՛րէկ ես իկե

Երբ նկատի առնենք այն, որ ուրիշ դեպքերում էլ, երբ բառի ել=եր հանգը գտնվում է առանձին, նույնպես զրկվում է բ վերջաձայնից (օր. հրամ. կե, պե, մ՛ուզե, մէքյ ուզե, մի՛ խայնե, մէքյ խայնե), կարող ենք հետևցնել թե ք-ի անկումը հաջորդ ձայնավոր հենարանի պակասություն պատճառով է:

388. Ապառնի դերբայն էլ ունի երկու ձև. -ելիքյ (-ալիքյ), էլու (ալու). Ինչպես որ -ած դերբայը վանի բարբառում իբրև գուտ դերբայ չի գործածվում, այլ ավելի ածական է, նմանապես -ելիքյ դերբայը իբրև գուտ դերբայ չի գործածվում: Նա ավելի գոյական է և նշանակում է «այդպիսի բան» և կարող է փոխանակվել համանիշ մի գոյականով. օր.

առնելիքյ «դրամական պահանջ»

տալիքյ «պարտք»

ասելիքյ «խոսք, պատասխան»:

Այս բոլորը գործածվում են նախադասության մեջ որևէ բայի հետ. օր. առնելիքյտ (առնելիհյտ) առի՞ք. ասելիքյ ունեմ. տալիքյտ (տալիհյտ) ընչի՞ չես իտա:

Սովորությունն չէ ուրեմն ասել էական բայով՝

առնելիք եմ, տալիք ես, ասելիք էր. այլ միայն առնելու յեմ, տալու յես, ասելու էր և այլն:

Նկատելի է որ այս բոլորի մեջ ե ձայնավորը անշեշտ լինելու պատճառով դարձել է է:

389. Ապառնի գերբայների մեջ առանձնապես նկատելու արժանի է «վառելիք» բառը, որ Վանի բարբառում ստացել է նաև վոռելիս ձևը, որ ավելի սովորական է:

վոռելիս ունէ՞ք

վոռելիս խըլքսավ (վերջացավ)

Այս բառի ծագումը ընկ. Մելիքսեթ Տեր-Ղազարյանը շատ ճիշտ կերպով դրավ «վառելիք» բառի հայցականից, ճիշտ ինչպես ունենք Վանի բարբառում քաղիս «թաղիք», էրաիս «երդիք», պողնիս «բաղանիք», խարսնիս «հարսանիք», տանիս «տանիք» և հատկապես պոլնիս «բանալիք»: Այս կարգի ուրիշ բառ չկա Վանի բարբառում: Բայց արդյոք կարելի չէ՞ որևէ հեռավոր գյուղում գտնել մի քանի ուրիշ ապառնի գերբայներ՝ Վիս վերջավորությամբ:

Հայտնի է որ ում ճյուղի մեջ Վիս ձևի գերբայները (ասելիս, ուտելիս, բերելիս, գնալիս) առաջանում են հին հայերենի Վիք գերբայի նախդրիվ հայցական ձևից (ի լալիս էր>լալիս էր): Բայց ոչ մի բարբառում չկա Վիս ձևով գերբայ՝ գոյականի վերածված: Վանի բարբառի այս միակ օրինակը թանկագին մնացորդ է և գեղեցիկ ապացույց բացատրելու համար նույն բայական ձևի ծագումը, եթե մանավանդ երևան դան իր անհայտ մնացած ընկերները:

12. ՆԱԽԱԳԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

390. առանց>առանց. օր. առանց քյե.

առաջ>առաջ. օր. քյեզնից տոռն.

առաջեաւ>տոռնել, տոռնվուց, տոռնվից, քյո տոռնել ժբռ առաջ.

բոլոր (շուրջ)>պիւթր. օր. քյո պիւթր.

դեհ>դեխ ճկողմ, դեպի. օր. դեխ տուն, դեխ ճողոց.

դեխ քյե. դեխ Վոռ.

դէմ>տէմ. օր. ինքր տէմ. մեր տէմ.

զատ>զատ բրացի. օր. քյեզնից զատ.

ինչպէս>ի՞նչիս.

կուշտ > կուշտ «կողքին».
գյուղերում. օր. խնչ ակնչկան գողքին».

համար > խամար «վասն».
օր. քյե խամար. հոմխի խամար.

հետ > խետ. օր. խետ մե, մե խետ, խե մե, խե ձի, խա ձի (գյուղերում կրճատամար՝ խզի «իւնձ հետ», խքե «քեզ հետ»).

մէջ > մէշ. օր. մէշ մե = մեր մէշ, մէշ քյաղաքյ = քյախքյի մէշ. մըշ շոպթ իօր, մըշ կիրակին «շաբաթ օրվա և կիրակիի միջև».
մըշ ձի, մըշ քյե «իմ և քո միջև».

մինչև > շում, շուր (չիւմ, չիւր). շում տուն, շում կիշեր.

մօտ > մօտ. օր. մօտ տուն, մօ տուն, մօ քյե, մօ մե. մօ էն մարք.
մօ ձիյ կաքիւ ի «իւնձ մոտ ընդունելի է». տար մօ խէր «հոր մոտ տար». իպե մօ մէր «մոր մոտ բերեց».

պէս > պէս, օր. ձի պէս.

ջոկ > ճէօկ «բացի».
օր. ձեզնից ճէօկ.

վերայ > վէր, վէրէն. օր. վէր քյե. քյո վէրէն. վէր մե «մեր վրա»,
վէր ձիյվերաց «ծնկների վրա».

տակ > տակ օր. քյո տակ.

քան > շոնձ. օր. շոնձ քյե. շոնձ լևոն. գյուղական ձևն է քրնց,
օր. քրնց ավագ ծովու. նաև շոնցյ. օր. նման ի շոնցյ զօմի շոն «լայլաղի շան նման խոշոր է». շոնցյ զի ճճն ի «քան զիս մեծ է». արագ խոսակցության ժամանակ. շոյ. ինչ. շոյ ձի «քան զիս».

Թուրքերենի ազդեցությամբ, ինչպես ուրիշ բարբառներում, նույնպես և Վանում, նախադրությունները հորովվում են. օր. վիրի օդէն, վիրվի օդէն, վիրին օդէն, վիրին տանիս, վիրվու խացեր վիրու («երեսի հացերը վերցրու»). վիրվէտ «վրայիցդ», ռոնրվքյեր «նրանց առջև», տէմքյրներ «նրանց գիմացը», իտրվքյեր «եաները», վերիհյտեր «վրաները», մէշլրներաց «մէջներից», խետքեր գյուղերում «նրանց հետ», տայվեր «նրանց տակը», մօտվեր «մոտները».

Նախդիրները ջնջված են Վանի բարբառում. հատկապես չկա զ նախդիրը, որ Մշու և Տիգրանակերտի բարբառների մեջ դեռ կենդանի և գործածական է: Բայց Վանը գիտե ի նախդիրը, որ պահել է զանազան ասությանց մեջ. ինչ. ավելն ի ձեռ «ավելը ձեռքին»: Գյուղական ասությանց մեջ կարելի է գտնել նաև զ

նախգրի հետքեր. ինչ. թող զէս, թո՛ղ զէսա «բացի սրանից»
զէնիկ «պայն».

ԹՈՒՐՔԵՐԵՆ ՆԱԽԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կոյրի «բացի». օր. զիզնից կոյրի «բացի ինձնից», քյեզնից
կոյրի «քեզնից բացի».

Մկ. զաթի «հայտնապէս, անշուշտ». օր.

Թէ մարկյրիտ առեց. զաթի ախշիկ ի.

Թէ շառեց, զաթի լան ի (Շերենց, Ա. 103).

Բիլտ «առանց». օր. բիլտ քե մալն ի՞նչ անեմ «առանց քեզ
հարստությունն ի՞նչ անեմ», բիլտ ձի «առանց ինձ»:

13. ՄԱԿԱՍՏՆԵՐ

391. Ահա, ահաւասիկ>համ, ահանչ, հանչ, հառառչ, ահանչ
գյէօ, հոնցօ՞, գյօ, գյըսկօ, գյէօխա, գյօհաւ, գյէօհա, գյէօհանչ.

ղպէօվ «պատճառով, շնորհիվ, համար».

Այսպէս, այդպէս, այնպէս>էսպէս, էսապէս, ըսկուն (իմա՞
այս գուն), ըսկում (գյուղերում ըսկօն), ըսկընտ, ըսնտ, ըսնա,
ըսըսկընտ, էսասկընտ, էսըսկընտ, էտասկընտ, էտըսկընտ, էտըսկը-
նտ, տըսնտ, էնըսկընտ, ընըսկընտ.

Այդքան—ըտըսկընէմ, այսքան—ըսկընէմ. օր. ըսկընէմ օր ի
«այսքան օր է».

Առաւօտուն>առավտուն, առատուն, առավտման, առատման
առավտմէ «առավոտմանից» (գյուղերում առավտմեց):

Առաւել>տվել.

Ավորչէ «բացի դրանից».

Դադտ, գադտուկ>կյտխտիկ, կյտդտիկ. օր. քյեզնից կյտխ-
տիկ.

Գիշերանց>գյուղերում կյիշըրնեց.

Դեռ>տել.

Դիր>տիր «անգամ», որից կազմված են՝ էսատրիս, ըստրիս
(գյուղերում ըսատրբիւս, ըստրբիւս, ըստրուս) «այս անգամ»,
էնատրիս, էնտրիս «այն անգամ» (զարմանալի է որ վերջում
ունեն ս՝ ա դեմքի ստացական հոգը, մինչդեռ գ դեմք է), բայց

և էնտրին. — իտին տրին «ի վերջո». Ի-ի անկումով՝ տիմէլ «մեկ էլ, մի անգամ ևս».

Դիւց գյուղերում «ո՛րտեղից». օր. դի՛ւց կու կյոս «որտեղից ևս գալիս». Ըստ իս ծագում է «ի՛նչ տեղից» բառից՝ ուժեղ կրճատմամբ. ջնջվել է ամբողջապէս ինչ բառը, բայց միայն նրանից մնացել է ն ոնգականի ազդեցությունը տեղ բառի տ-ի վրա և վերածել է դ-ի (տե՛ս տակը տեղ բառը). — սրա հետ հմմտ. ըստուց, ըստիւց «այս տեղից», ուր նույնպէս կրճատված է տեղ բառի դ բաղաձայնը, բայց նախաձայն տ-ն մնում է անփոփոխ՝ նախորդ ա-ի պատճառով. օր. ըստիւց չիւմ Վոմ «այստեղից մինչև Վան». — բաղաձայնից առաջ ց-ն կարող է դառնալ ս (§ 235), որով ստանում ենք ըստիւս. օր. ըստիւս չիւմ Վոմ: Կարելի է նաև գործածել ժամանակի համար. օր. ըստիւս մէյ շտպոք. ըստիւս էրկու տարի. ըստիւս յեաք «այսուհետև». գեղջուկ բարբառով կա էնտուց «այն տեղից»:

Դուրս>տիւս, տքսանց.

Նոանդ «նախորդ օրը»>յեռանդ. օր. յեռանդ օր իպե «նախորդ օրը բերեց».

Նրբ>յեփ.

Նրէկ>էրէկ.

Չատ>զատ «հեռու». օր. քյեզնից զատ. որից զատանց կամ զատամանց «հեռվից».

Էլ>էլ «այլևս», էլմէլ «դարձյալ».

Էր>նէ՛ր «ինչո՞ւ».

Ինչ բառը գործածվում է «փոխանակ» իմաստով՝ իբրև մակբայ, օր. ինչ իփելու տապկիր «փոխանակ եփելու, տապակելի».

Ինչիս «ի՞նչպէս»<ի՞նչ ցեղ.

Իսկ>իսկի, սկի «բնավ».

Կանուխ>կանուխ «առավոտուն». օր. կանուխ արե «վաղը առավոտ արի».

Կեսօրնովետ գյուղերում «հենց կեսօրին» (Լալայան, Վասպուրական, 1912, էջ 75):

Հա>խա «այո՛».

Հետ>խետ, որ նախադրություն է. բայց ունի նաև մակ-

բայական գործածութիւն «միաժամանակ թե... թե...» իմաստով.
օր. խետ կուտի, խետ կգրուցի, խետ կու լո, խետ կծծղա,— որից
խտրոց «միասին» (< հետ իրերաց) և խետխետուն «խսկուշն,
նուշահետայն», խե կշտին «քովը» (օր. խե կշտին նստեր ի).

Հիմա(կ) > մկա.

Հի՛ւ հի՛ւ (բացազանչական ձևով) «բնավ, իսկի». օր. հի՛ւ
հի՛ւ պոն շերեա.

Հերիք > խերիքյ.

Հերու > խէրու ժանցյալ տարի», խէրզնոմ «նախորդ տարին».
օր. խէրու չէ, խէրզնոմ էր.

Ղորթվան «/րոք». ղորթվան խավու ծիւ ի.

Մէկէց մեկ «հանկարծ».

Մէկտեղ, մէյտեղ «միասին».

Մի > մի', մը', մ', մէքյ (սրանք արգելական մակբայներն են,
որոնց գործածութեան մասին տես § 379.— Սրանցից տարբեր է
մի՞, որ թրք. մի? հարցական մասնիկն է և ուրիշ բարբառներում
ընդհանուր գործածական է բոլոր հարցական բայերի հետ Իսկ
Վանի բարբառում այս մի՞ հարցականը՝ իբրև զարմացական,
ընդունում են միայն մի քանի բայեր. ինչ. առի՞ր մի, կերա՞ր մի,
տիսա՞ր մի).

Մի անորոշ հոգն էլ կրճատ մ' ձևով գործածվում է ածականը
մակբայ դարձնելու համար, ինչ.

խօրօտ մ' կերակրի «մի լավ կերակրեցի»

կայիմ մ' կապեց «մի ուժեղ կերպով կապեց»

աղէյ մ' կերավ «մի լավ կերավ»

սէրսուփ մ' լվոց «շատ մաքուր լվաց»

շոտ մ' վազեց տուն

Միալար > մէյլոր «առանց դադարի». օր. մէյլոր կքօռա. մէյ-
լոր կընոցին:

Մինակ > մէնակ.

Մինչև > չում (չիւմ, չիւք). օր. չում Վոն. չում քյընոս(ց) կյոխ
«մինչև քնելու ժամանակը».

Եետ > յետ. օր. յետ մնաց.— իտին տրին «ի վերջո» (< յե-
տին դրին).

Ներքս>ներս, որից նիրսաց «ներսից».—իմն «դեպի ներս».
օր. մտնել իմն. սներ իմն «ներսում սյուներ».

Նոր>նոր «մի քիչ առաջ». օր. նոր էկա.

Շատունց «շատոնց».

Շոյո>շոտ «առավոտը կանուխ».—շոտ քէ շոտ, շոտ-քէ-շոտ
«շատ շուտ, իսկույն», շոտունց, շոտունցմէ «վաղուց».

Ուր>Մկ. հուր (Վն. դուր<ընդ ուր (§ 29). վուրտից «ուր-
տեղից», գյուղերում ուստ «ուստի, սրտեղից».

Չափ.—որից տնչոնքյ, տնչում «այնչափ». օր. տնչոնքյ լոցի,
արտսուներյս արուն կտրավ, տնչում տնչում համբախտ իրիշկացի
վոր աշկերս շլվավ (Շերենց, Վանա սազ, Բ. 94).

Ձիւ գյուղերում «ճշմարիտ որ, չէ՞ որ, ապա թե ոչ». օր.
չիւ չըմ կյիտն. նաև չէ չիւ կամ չիւմ.

Վաղիւ>վող «էգուց».

Վայր, ի վայր մակբայը չի գործածվում Վանի բարբառում.
նրա փոխարեն ասվում է ցածր կամ տակ. օր. տանսից ինգյով
տակ. էնով ցածր. ինգյով ցածր. վիրվանց էնո տակ:

Վեր, ի վեր>վեր, վիրանց, վիրվանց «վերևից». օր. վիրանց
(կամ վիրվանց) էնո տակ.

Տակ>տակ, տկանց, տակմանց «տակից».

Տեղ>տեղ, որից էստեղ, ըստեղ, էտստեղ, էտտեղ, էնատեղ,
էնտեղ.—տեղոցտեղ «տեղնիտեղոք, մանրամասն». օր. տեղոցտեղ
պատմեց.—տենըստեղ, տեղըստեղ «տեղնուտեղը, նույնհետայն».
օր. տեղըստեղ կիյնի կյէտին կմեոնի.—տեղքէտեղ «իսկույն, հենց
տեղում»—կորցնելով վերջաձայն դ-ն՝ մնում է տ. այսպիսով ձե-
վանում են վուրտից «ուրտեղից», ըստտ «այստեղ». օր. արե ըստտ.
նախորդ ն-ի ազդեցությամբ տ-ն դառնում է դ, որից դո «այն-
տեղ». օր. դո նըստըցուցին. որ և դոմն. օր. մտեր ի դոմն «մտեղ
է այնտեղ». բց. դիւց (իմա՝ ընդիւց) «այնտեղից». դրնոմն «հա-
այնտեղ»: Տեն և վերը դիւց.

Քանի>քյոնի.

Քիչ>քիչ, քիչըմ.

Մակբայական ձևեր են նաև ամօրու, անուրուց, տխու կամ
տխուց «վախից», ծարվու, կարօտու, ուրախու, խուտու «հոտից»,
ի հոտոյ», զատու «հեռվից» (օր. զատու եմ իկե) և նմաններ,
որոնք գրաբարից մնացած հոլովական ձևեր են:

Կան և մակբայակերտ մասնիկներ. ինչ.

-ուր.—խիմուր, խմուր «հին ժամանակից», տղակուր, տղեկուր «փոքր տղա ժամանակից», մօրուր, մօրուց, մօրնոք «մորից ծնված ժամանակից» և այլն.

անց, -մանց.—կայնըմանց «կանգնած», սղորթմունց «խոք», մօտանց, գատանց, գատամանց «հեռվից», տըսանց կամ տսանց «դրսից», տկանց «տակից», նիրսանց «ներսից», վիրվանց «վերելից», իրիսանց «երեսից», յեզրանց «եզրից», ռոնըվանց, իտիվանց և այլն: Կյողտկանց «գաղտնաբար» (=կեղտանց գյուղերում, Լալայան, Վասպուրական, 1912, էջ 50):

ԹՈՒՐԶԵՐԵՆ ՄԱԿՐԱՅՆԵՐ

ղլբեժլ «խկուլն, անմիջապես».

Ախրր «վերջապես».

Անջախ «հազիվ», կրկնությամբ՝ անջախ անջախ «հազիվ հազ».

Բոզի «երբեմն, մերթ».

Բուլքյի, (կամ հայերենն թէ շաղկապի հետ) բուլքյի թէ «թերևս, գուցե».

Բոբէ «գոնե».

Բոբէմբոբ «հավասար».

Բոբի գյուղերում «այսքան ժամանակից ի վեր». օր. քյոխօր մեռնելից բոբի «բո հոր մեռնելուց ի վեր».

Բիրդոն «հանկարծ, իսկույն».

Դայիմ «միշտ».

Դոյմո «հազիվ թե, դժվարավ». օր. դոյմո գտնվի (թրք. deyme «հազիվ թե», որ պոլսահայ բարբառով էլ ասվում է դէյմէ հալով չը՝ գղնըվիր «հեշտությամբ չի գտնվիլ=դժվար կգտնվի»):

Դոշ «նախ և առաջ». օր. դոշ նոշ կասի «նախ մեծն է առում». դոշին ասի «սկզբում ասացի». դոշվան քյադաքյ «նախկին քաղաքը».

Դէօրլմ «մի պահ, մի ժամանակ», դէօրէդէօր «պահ առ պահ», դէօրիս «այս անգամ, հետո, այժմ». սեռ. դէօրըսվան (բուրն էլ ծագում են արար. devr «շրջան» բառից).

Դուզ «ուղիղ, ուղղակի».

Դրէդրէ «կամաց կամաց», օր. դրէդրէ կերթաս.

Դօղրի ռուղղակի»։ օր. դօղրի կերթոմն մօտ.

Զաթի արդեն».

Զոյի թերևս».

Թաղաղումն ճնորից».

Թայլա առն աթմ»։ այս ձևը գտնուում եմ Հալայան, Վասպուր. 1912, էջ 185 (տպ. 197). Տիւ բայլա մե քող էրթանքյ մեր տներ.

Խալիս թրուրուլին»։ օր. խալիս զիկ մոոցեր ի.

Կոնդոթ > արաբ. qadar «չափ» բառն է, որից կազմված են էսկոնդոթ, էսակոնդոթ «այսչափ», էտակոնդոթ «այդչափ», էնկոնդոթ, էնակոնդոթ «այնչափ», ինչկոնդոթ «որչափ».

Հալա, ոլոմ և հյ. հոմանիշի հետ միասին (ն)ոլոմ-տէլ «դեռ, տակավին»։ օր. հոլոմ-տէլ շի իկն։ Գեղջկական ձև է էլէ, էլէ տէլ.

Հոլբոթ թի հարկե».

Համան թիսկույն».

Հէշ թրնավ»։ օր. հէշ շի քյընէ.

Մոգյոթ, մոնգյոթ «միթե», մոյոթ քյի թիբր թե»։ Սրանից կազմված ձև է մորմասն (գյուղերում մամասն) «մինչդեռ, դու մի՛ ասի, գուրս է գալիս, մոգյոթ մի՛ ասե».

Միւքիւն «կարելի, հնարավոր», եւ՞ միւքիւն «ճնշպես կարելի է, անկարելի».

Յարաթ «արդյոք» (արաբ. ya-rabb! «ող աստված» ձևից).

Նո... եո... «ոչ... ոչ...»։ օր. եո յես, եո տիւ. քյե եո խէր կէր, եո մէր «դու ոչ հայր ունեիր, ոչ մայր», եո կա վոր ուտեմ, եո կա որ խմեմ.

Նոգյոստան «հանկարծ».

Նոկաֆըլ «անակնկալ կերպով».

Նայմո՞ լազըմ «ինձ ինչ, ինչքա է պետք».

Ջէօթօվ «գովարավ, ճորով, հազիվ» (ծագում է արաբ.

javr, jevr «բռնություն» բառից).

Ջիփ-շիփ գյուղերում թրուրուլին»։ օր. ջիփ-շիփ զիկ մոոցեր ի.

Սայից «շնորհիվ».

Սոնքյի «կարծես, իբր թե, այսինքն», սոնքյի թէ թիբր թե».

Սրավարդի գյուղերում «հերթով, շարքով».

Սօն-սօն «վերջապես».

Սօրա «հետո».

Վարձասըլ «վերջապես».

Տեփ «անգամ» (արմատ առանձին անգործածական, որ փոխ է առնված արար. def'a «անգամ» բառից). արանից են՝ ըստեփ գյուղերում, ըստեփուն գյուղերում (ս-ի պատճառով Վ դարձած տ) «այս անգամ, հետո».

Քյազալիքյ «նմանապես». հատկապես ասվում է էն քյազալիքյ. օր. Պոդպտէ սօլերն էլի էն քյազալիքյ. Ջզմէքն էլ էն քյազալիքյ (Լալայան, Վասպուրական, Ա պրակ, Թիֆլիս 1912, էջ 57, 58).— արար kazalik հոմանիշ բառն է, որ հատուկ է թուրք պաշտոնական լեզվին, չի գործածվում ժողովրդական լեզվի մեջ և զարմանալի է, որ մտել է Վանի գեղջկական բարբառի մեջ:

Առանձին ուշադրության արժանի են թուրքերեն երկու ներգոյական հոլովով ձևեր, որոնք Վանի բարբառում գործածական են իբրև պարզ մակբայ: Սրանք են սօնսօնդա «ամենավերջը» և դունյադա «ամենին» (բուն նշ. աշխարհում). օր.

Կուտեն, խմեն, կուրախնան, սօնսօնդա կը խաոցուցեն. Դօր կերթուս (Լալայան, Վասպուրական, 1912, էջ 227).

Հօդի (սենյակի) պատեր կանաչ կարմրով նխշված որ գունիադա սկուն պան չկա (անդ. 209).

Նախադրության նման մակբայն էլ կարող է հոլովվել, ինչմկա «հիմակ», սեռ. մկավան, բց. մկավընէ, մկավնէ.— գէօրիս «այս անգամ, հետո», սեռ. դէօրըսվան «այժմվա»...

Կրկնական ձևով մակբայներ են՝ խէվիխէվ «հե ի հե, հեալով»: Նման կրկնական, բայց թուրքերենից փոխառյալ մակբայներ են՝

Քյրփըռ-քյրփըռ (կեռա ջուրը).

Փառըլփառըլ (կցալա լույսը).

Պոչ-պոչ (համբուրել):

14. ՇՅՂԿԱՊՆԵՐ

Դգյոռ, ոգյոռ քյի, հոգյոռ քյի «եթե, թե որ».

Այլ>էլ.

Թէ>թէ.— հարցական թէ՞ նշանակում է «չէ՞ որ». օր. թէ՞ տիւ կասիր արե՞ «չէ՞ որ դու ասում էիր արի՞».

Համա «բայց», նաև ամա, աման.

Վոր սկուն ի «ուրեմն, եթե այդպես է».

Դէյի «իբր». օր. տիւ էլ մարթ դէյի պոն կասես.

Ինչի որ «որովհետև».

Քյանի վոր «քանի որ, զի».

...իստ «եթե». օր. թէ վոր էկավ իստ. չկա իստ «եթե չկա».

էլո իստ «ուրեմն», նո իստ «ինչ որ է», որից թարգմանաբար՝
ի՞նչ իստ «ինչ և իցե».

Ապա «հապա». ապա յես ի՞նչ անեմ, ապա տիւ չիր վո՞վ էր.

Ապա թէ չէ «ապա թե ոչ».

Ձիւնքյի «որովհետև», գյուղերում քունչի, շիւմքյի.

Վոր «որ». օր. ասա վոր. Չ. հարցական բայերից հետո, ինչ.
էկա՞վ վոր. տիսա՞վ վոր. որ>վոր շարկապի հետաքրքրական մի
գործածությունն է կրկնված բայի հետ «անշուշտ, անտարակույս,
հաստատօրէն» իմաստով. օր.

Պառավ տարավ իմ ախշիկը վոր տարավ.

Կրնոց մատնիկ վոր կրնոց.

Ձի ուզե վոր չի ուզե.

Տար վոր տար (անպատճառ տանիս).

Հոմ... հոմ «թե... թե». հոմ էստ, հոմ էնա.

Այս իմաստով կա նաև մա. ինչ. անզօր խաշին մա խունգյ
ես ծխե մա փթիր (առած).

Յո «կամ». օր. յո յես, յո տիւ. յո խաց, յո ճիւր, որ և
յան, և կրկնությամբ յան... յան «կամ... կամ». օր. յան քյե,
յան ձի.

Ինոն «և». խաց ինտն ճիւր. յես ինտն տիւ.

և կամ ու շարկապը (Մկ. ը, Ոզմ. ու) ջնջված է՝ փոխանակ-
վելով թրք. ինոն ձևով. բայց մնում է դեռ մի քանի կապակ-
ցությունների մեջ. ինչ. քյթրվախպէր «քոյր և եղբայր», նեա-
վանեդ «հետ ու աղեղ», մէրվախիկ «մայր ու աղջիկ», աչքվի-
րես «աչք ու երես», պատվոռիքյ «տուն մաքրել սրբելը», խաշ-
վավէդրան, քյախցըր վ անուշ, լան վ ախշիկ «տղա և աղջիկ»,
իմշվրիեշ «ինչ և ինչ», միսվարուն «միս և արյուն», պէվարի
«բեր ու արի»: Ինչպես տեսնում ենք, այս բոլորի մեջ և շար-
կապը գտնվում է միշտ ձայնավորով սկսվող բառի մոտ: Նույն

երևույթը գտնում ենք նաև Պոլսում, ուր սակայն ունենք հարվուդըդա «հայր և որդի», ուր շաղկապը ստացել է ու ձևը. կամ միայն ք ձևով. ինչ. խեբրեյեր «հայրն ու մայրը», սաբբմոչան «սաթ ու մարջան».

Ֆաղաթ (արար. faqat) «բայց, սակայն».

15. ՉԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բացի սովորական բացազանչություններից, որոնք ամեն լեզվի ու բարբառի սովորական են (ախ, վախ, տհ, հա՛յ զիդի հա, օհ, օխ, օխէ՛ր, վա՛յ, քի՛ւ), կան նաև՝

ա) ամբողջական բառեր, ինչ. ափսոս, էրաճէկ «երանի՛», պտրէօվ «բարև», մեղա՛յ ասծու, թրք. բոյլա, բոյլո բլի «երանի՛ թե», բլոշկէ «երանի՛ թե», քրդ. խոզէ՛ «երանի՛ թե», մուշ «լուռ, սո՛ւս», որ ենթադրում եմ պրս. xāmüš «լուռ», բառից է. նախապես ձայնարկություն է եղել. ապա բառ. ինչ. սո՛ւս. տես լալալան, Վասպուրական, 202. քյա կնիկ, մուշ կաց:

Հո՛ւյդէ, հո՛ւյդո «օ՛հ, դե՛հ», ավա՛ր (թրք. havar «օգնություն» բառից. զարմանք ցույց տալու համար, ափսոսանք արտահայտելու համար, կամ վտանգի ընկերին):

բ) մարդ կամ կենդանի կանչելու ձայներ.

Տօ՛, ծօ՛ (թե մարդոց և թե կանանց համար).

Քյա (կանանց, բայց նաև մարդոց համար).

Ճո՛ւ հո՛ւ (հավ կանչելու).

Կուճո՛ւ կուճո՛ւ (շուն կանչելու).

Փշի՛ փշի՛ (կատու կանչելու).

Փշօ՛ փշօ՛ (նույնպես).

Փս՛ փս՛ (նույնպես).

Քուռի՛ քուռի՛ (քուռակ կանչելու).

Քշո՛ւ քշո՛ւ (ձի, էջ կանչելու).

Կդի՛ կդի՛ (այծ, ոչխար կանչելու).

դ) կենդանիներ վանելու ձայն.

Քշա՛ քշա՛ (հավ վանելու).

Օշտ (շուն վանելու).

Փշտա՝ }
 Փն՝ւջտ } (կատու վանելու).
 Փշ՝տ }

Չո՛ւ (ձի, էջ քշելու).

Հո՛շ (ձին, էջը առաջ վարելու).

Չո՛շ (ձին, էջը կանգնեցնելու).

Էնէ էնէ (այժ, ոչխար քշելու).

Հո՛ հո՛ (կով, տավար քշելու)

Քո՛ւ (թռչուն քշելու):

16. ԱՍՐԴԻ ԱՍՈՇԵՐ

Հին հայերենից ժառանգած կամ ուրիշ բարբառների մեջ էլ սովորական բառերից դուրս, Վանի բարբառը ունի իրեն սեփական նորակազմ բարդ բառեր: Տալիս ենք այստեղ մի փոքր ցանկ այս բառերից.

ղլրտուն (ջաղացքի մասերից մեկն է).

Արընձով (արյան ծով).

Արընխում (արյունարբու).

Աձաման (այն ամանը, որի մեջ հավը ձու է ածուժ).

Բոխտակոճվել (իր բախտի վրա լաց լինել).

Պհնավեր (բույնը ավերված).

Բէրատեղ (ուր ոչխարներն են կթում).

Պհնկալ (ձվի բնակալը).

Տոռնարուն (անհամակրելի անձ)

Էօրէօսպոց (balcon)

Թըխքըմորաման (մեջը թթիմուր դնելու աման).

Թանխուս (փոխինդի փոշուց կազմած շաղախ).

Ժամզոթրկոց (երեկոյին ժամի կոչնակը զարնելու ժամանակը).

Յէղախալ կամ յէխալ (յուղ հալելու աման).

Խօրվորտի (հարազատ).

Խացխան (հացահան, Ղրբ. ծհան, ակիշ, որով թոնրից հաց են հանում).

Խավխուսոց (հավախոս).

Խէրախոտ «հոր հոտն ունեցող» (հայրանման), ածական
որ տրվում է հորեղբոր (խէրախոտ խօթօխալէր)։

Խէրամեո (հայրդ մեռնի)։

Թուլխավատ (թուլահավատ)։

Խելքյամաղ (ուշագնաց)։

Կալատեղ (կալ անելու տեղը)։

Ճրաքլկպոց (երեկոյին ճրագ վառելու ժամանակը)։

Մէշքակուտոր (մեջքը կտորած)։ օր. մէշքակուտոր էլու (չափ-
չարանքից)։

Մէրամեո (մայրդ մեռնելու)։

Նորափորիկ (կնոջ անդրանիկ ծնունդը)։

Շնխոտ (շնահոտ, շան հոտ, վատ հոտ)։

Շնխէր (շնահայր, որի հայրը շուն է)։

Ուսքափախուկ (դպրոցից կամ գործից փախչող, դասալիք)։

Պոզկալ (ջրամանի կտուցի բերանակալ)։

Սրտագալար (որի սիրտն է գալարված)։

Փոխարար (որ բաժբալի հետ թէլ է փոխում)։

Յորնակյճնել (ցորենի պես գեղին գուլն ստանալ)։

Ըոբաման (ոտրի՝ դռնաբի աման)։

Քյախցրարուն (համակընչի անձ)։

Քյճրամեո (քույրդ մեռնելու)։

Չենք հիշում նրաման (ջրաման), քյացխաման, ճոտուն,
(ջաղացքի ջրտուն), տնավեր (տունն ավերված), խառնէկաթ
(թոնրի խաշերկաթ), արընախոտ, արտաաընքյախոտ, կարօտա-
մաշ, աղօթրնախոտ (լուսադեմին)։

Բարդություններ կարելի է կազմել նաև օտար բառե-
րով. ինչ.

Սեվաղիղտր «սեհագեմ» (պրս. dīdār «գեմք» բառից)

Թազտունեզյ «նորատունկ» (պրս. թրք. tāza «նոր, թարմ»
բառից)։

Իզկուրուս «հետքը կորցրած» (թրք. iz «հետք» բառից)։

Վանի բարբառը երբեմն երևան է հանում երեք բառով
բարդություն, ինչ որ սովորական չէ հայերենում։ Վերևում հի-
շեցինք թխմորաման բառը. ավելի լավ օրինակներ են ժուռու-
մուռամեո կամ ժուռկուռոպամեո «վաղահաս մեռնել», չորքնաման
«չորթան դնելու աման», արընքախամեո (անեծքի մեջ են
ասում)։

17. ՄԱՍՆԻԿՆԵՐ

-անակ.—պրս. *āne*— ուզանական «սիրելի»։ օր. ծեր ուզանական քյօրն ի «ձեր սիրելի քույրն է»։—*կազմված է ուզել բայից, որ Վն. ստացել է նաև «սիրելի» իմաստը. ինչ. յես շատ կուզեմ ինոր «ես շատ եմ սիրում նրան»։ խայանական «հայրենի, հայկական»։*

-նոց>*գոգնոց*>կյիւնոց, կյիւննոց.

-ուոր.— տոռցվոր «գեշ, տգեղ աղջիկ», սելվոր (*սայլապան*), քյավոր, տէօխցվոր «ջերմոտ, գողացնող», սիլախվորվել «զինվել».

-ման— յեուման «եռացող (ջուր)», քոուման գյուղերում «թառամած».

-օշիկ. — կարմրօշիկ.

-ուրբն.— շլսուրբն տրեց վէր ուր (*շլսելուն տրար*).

-ուն.— շրէշտուն «շրեշ քսած», սամորուն «թամբած».

-իքք.— օխնիքք «օրհնանք, օրհնութիւն» (օխնել բայից).

-նոց.— կամփնոց (*կանեփի արտ*), կասբնոց (*մսավաճառանոց*), արեմտոց (*մայրամուտի ժամանակը*).

Ն Մ ՈՒՇ Ն Ե Ր

1

էսա քյոնի տարի ի կուկյո ու կընցնի. էսա քյոնի տարի ի մեր աչք քյո ճոմխի վերէն կը խալի. էսա քյոնի տարի ի մեր սիրտ քյե խամար կը մաշի. էսա քյոնի տարի ի քյո սիրուց կը մնանք կարօտ. Էհ, վո՞վ իմ յարալու սիրտ պիտէր չիւմ քյո մօտ, վոր պտնիր տիսնիր ինոր ցավեր ինտն յարէքյ: Ահ, չտնձ հմէն կսկծավոր յես եմ՝ վիրավոր, չտնձ հըմէն խոօված յես եմ տրօրված, իրիցած ու մըկած:

Թօղ կյոռիւն կյո, յերկիր, սարեր ու տոշտեր կանաչ, կարմիր ու նարընջի զորտըրի. ամի, յես թնչ անեմ ինոնքյ, յես մնացի անտէր ու կյէրի, յես մնացի վոռպէօվէրի:

Թօղ ամըռվան պտուղներ խասնեն, միւղղներաց պէս շարվեն ու կաթիւկ անեն վէր կանաչ խոտին, լղմոր լղմոր լըղպորվեն, յես թնչ անեմ ինոնքյ, կարօտ մնացինքյ. տիւ պիտես խամ տաս ինոնց ու խոտ տաս, հոմ ինոնց, հոմ ձիկ:

Թօղ խօջէն ժօղվի առծաթն ու վոսկին, ակն պատվական, միւղտֆորներ տնկյին, չտնձ Վտնտ ծօվ լցուցի, չտնձ աշխըրքիս սարեր պտօթի, թեղի ու սեխի, ինոնքյ հըմէն առանց սիրու, առանց սրտի ընչիւ խամար ի. ան, առանց քյե աստըվորիս մալ յես թնչ անեմ: Ախ, թէ յես քյե խամար մեռած եմ, էլմ՝ կասեմ, աշխըրքիս մալ յես թնչ անեմ:

Մենքյ ծեռ տվինքյ ծեռաց, ուխտ արինքյ խդրոց, որ խըդրոց ապրինքյ, խդրոց մեռնինքյ, քյո սէր տվիր, իմ սիրտն առիր ու մեր սիրու խօսք լսեց երկինքյ, լսեց յերկիր. մենքյ ուխտ արինքյ, ու մէյմէկու վերէն խոկյի կու տինքյ. ան, ճօղակոոր էլով մեր յէղունիկ սէր. ու քյէօքյախան էլով մեր սիրտ,

տիւ կարիւր կնոցիր ու ինգյուր օտար յերկիր ու զատ մնացիր. տիւ քըլուտինքյ կը թողիւս, յես առտսունքյ. տիւ մէօլըրած ես, յես տոտրած, օրս աստըվորս կնոց, էլ զո չմնաց: Էնկոնդոր կանչեմ, սարեր լոցուցեմ, յես առանց քյե սէրն ի՞նչ անեմ, սիրտն ի՞նչ անեմ, ուխտն ի՞նչ անեմ, կիյանքյն ի՞նչ անեմ:

Քյո ջխտակ տյվընիկ ծոքյեր կուց կուց առտսունքյ կը թողեն, կուլտն ու կասեն. «Մեր խէրն ինչի՞ շիրե, դէպէ մարէ, ապա յե՞փ պիտի կյա»: Զի կը խառցուցեն, սիրտս կը դողեն. էլ ինոնց խապելու մասֆար չմնաց. ասքն ու պտրէկամ, տիւր տրկեց, ձի խառցմունքյ կանեն. «Ճեր մարթուց ի՞նչ խտրոր կա. յե՞փ պիտի կյա. էլ խէրիքյ չէլով կարիբութնի մէջ մնա». էլ խոկյիս էլով շատերաց սութ խապելուց. յես ծեռնէ կնոցի: Տիւր տրկեց, ասքն ու խնամին յես ի՞նչ անեմ առանց իմ ծէթկիյ ծոքյերաց աղին. յես ի՞նչ անեմ վորտին, առանց իմ նազէլի կարիբին. աշխար ձի մութ ի, վո՞վ կիրիշկա վէր լաճերաց, կարիբիս մեռնեմ ուր ճոմխընեցայ:

Մեր տուն-տեղ մեր ծեռնէն էլով. օտար խաֆքյու պէս մնացինքյ վէր չոր խըլի. վո՞վ պիտի մեր նեղութեն տիսնա, մե օգորմա. խեխն ու անտէր մնացինքյ. քյեղնից տվել մարթ չու-նենքյ. ի՞նչ կասես. սաղ սաղ մեռնե՞նքյ:

Խէրտ ու մէրտ խալիվորցիքի են. յես ինոնց Կորդ չեմ կա-նա քյոշե. յես քյե քիչ կյըրիցի, տիւ շատ իմցի. շոտ թօղ արե. էլ խէրիքյ ի. խէրիքյ ի տոռն տոտէքյ, տոռտայ նստէքյ. իսկի չէ՝ տարին քյտնի մ' կուռուշ փորտ ճամխէքյ. մենքյ էրթոնքյ մուրանքյ, պիրենքյ քյո տըղէյնե՞ր պախենքյ. էլ չենքյ կանա անե. ինչ վոր արինքյ՝ են էլ խէրիքյ ի:

Տեր-Սարգսյանց, Պանդուխտ վանցին,
էջ 52-55.

Ուղղեց և գիտական ուղղադրության վերածեց
Մեխքսեթ Տեր-Ղազարյան

2

Կնոցի Մայրամ դուգուշի մօտ. ասիցի. «Քյե մեռնեմ, Մայ-րամ դուգու, քյե շատ կիւնթրեմ. մէյ կտոր կուտ տան ձի»:

Մայրամ դուգուն ձիկ ասաց.

— Քյե մեռնեմ, ի՞մ ախչիկ. կընտ ֆոռ. սօրս կուկյոս, կուտամ:

Կնտցի ֆռացի էկա, էլըմ տըտամու կուտ չափեց ձիկ, էլո՞
վէր վիրին կագին, տըտում իսկիցի մէջ պոկին: Էճո, էկա պոկ,
մոտ Մայրամ գուգուցին:

Տիսա Մայրամ գուգուն ըռկեր ի. ձիկ վիրուց ասաց.

—Քյո սեվ կապուկ, կապոտ կապուկ, էսա կոնդոր տտիւմ՝
սորբը տտմի կտին արիցիր շներաց փմյ. ումուտամեռ. քյո
քողղի խամար մարթ կիսկես մէջ կրակին. չէս ամչնա. էտա կոն-
դոր ճո՛ղ ախիկ ես. քյո մարթու էրթուլու կյոխ ի. քյո թայեր
յօթ ճիժ կպախեն. ապա սրտամեռ. տիւ տտմի կոնու կօղղես:

Ծովիկ Միսթարյան
(ծն. 1929 թ. Երևան)

3

ԿԻԿՈՅԻ ՔՅԱՐՈՋԸ

Ականջ արէքյ իմ խօսքերաց,
Քյարոզ կուտամ յեռ առչերաց.
Տօ տիւքյ անտաշ կոշտ շինական,
Խէրիքյ չէլով ֆաքյ անպոն:
Մէխա իրիշկացէքյ ծեր քօլօզներ,
Կը նմանեն սարի սրուխ ծէրեր,
Ապա էտա քյոզոխկըներ,
Ծե արիր են մէյմէկ դէվեր:

Չոււմ իրիկուն կը ճենջոտաքյ,
Կուկյոքյ մէջ մոխրին փալ կուտաքյ,
Տօ տիւքյ մոնգյոր Էշ էքյ տոռցե,
Թէ՞ Աստված ծե մարթ ի ստեղծե,
Ծեր շապկըներ թէ շուն ծամի,
Քյառսուն տարի սիրտ կխառնի.
Վոնտ գյոմու մունտոռ յեքյոն
Չունձ էն խազոր կադ աղէկ ի:
Թէ փըռթնի քյիւրթըմ կյո ծեր տուն,
Ղոճեվ կէլնէքյ թէօլընգյի շուն.
Հէջ չէքյ ասե՛ թե մենքյ չէլնենքյ,
Սեւ օր կուկյո բնոնց կյըլիուն:
Առտից կը խանէքյ սոսուռ ցորէն,
Ծեր կիրածն ի տարէկան խաց.

Յորէն կուտի վտնո խօջէն,
 Տիւք էլ իսկի չէք խանե ծէն:
 Շներ կուտեն ծեր անուշ կաթ,
 Ծեր կիրածն ի անյեղ գլէօրէօմազո:
 Է՛հ ինչիս էլնի բողի էլ թան,
 Բողի պինթան, բողի շորթան:
 Էն պախս օրն էլ խոտ, անխամ վոշ,
 Ինոր խամար ծեր կաֆէն ի տոռտակ ու բօշ:
 Թէ փըռթնի խատնի կըռտան,
 Կը լըփըռտէք չտնձ կյեղի շան,
 Ղլո շատ պտն պիտի ասի,
 Ամա իմ ջան կյիսի կուզի:
 Քյավոր աղէն քիչըմ էլ թէզ ի,
 Վտխէնամ կյո բեղերս վրոզի:
 Գրի առավ
 Մանվել Կափլանյան
 (Նույնի մի այլ տարբերակը տես Շերենց, Վանա սաղ,
 հտ. Բ, Թիֆլիս 1899, էջ 73—75):

4

ՎՈՆԸՑԻ ՊԱՌՎԸՆԵՐԱՅ ԿՈՒՎ

Խուռիկ խաթիւն նստիր էր խօվ ծառի տակ, կարկըտան կանէր. մէկ էլ տխրավ էն դեխէն վոտպէօպիկ, յազմէն պոց, ծամեր ճըճոն, ծեռքեր վեր, իրիսներ խաշփըռթուկ՝ Կատիկ՝ խաթիւն էկավ կայնավ պանցըր ծէնով ծկըլթալով կըչկըչաց:

—Քյո Խուռիկ խաթիւն, տիւ ճըճկո՞ր ես թէ՞ քյոն ես. քյո կնիկ, ապա տիւ չըտխամիր վոր ծեր էն անտէր, չօգէ ցոան, տոխ կօվ էկավ մտավ մեր ճրուկ ածուն խրեղէն կյինձ ինտն կարօս կոխըռճեց, խե չամուռն խառկրտեց, տափասղաղ արաց, տոռցավ տոճըկէլօվ փախավ մտավ ծեր քյարօվ-քյարատակ խորորէն:

—Ավամր, պերանտ կոտրի, լեզիւտ լալկիլի, Կատիկ խաթիւն, լոմերտ թոփիլի, չանէտ թիւլնո, տիւ էլ մեռնես խե քյո կյինձ-կարօսին, քյո ումոռտամեռ, մէկ պուռ կար-կանչի խամար տիւ ինչի՞ կառդիր ես, փըռփըռտոր ես, կը վընգյոս, մարթ կը ծըվըռթես, ավամր, սեմ կապեմ:

—Տիւ էլ մեռնես, քո տոխ կօվն էլ վերէտ, լէյթի՛, լոքոյթոյ, ամէնքի, լակաշ պերանտ փոկի: Մլտ տիւ քո քոտլովէր պերան փոկի, վոր էլո՝ ծամերտ վէր կըլխուտ կը կըրգեմ, քե շանսատակ կանեմ: Ավար, սեվ կապեմ, էսա կնիկ կատղե՞ր ի, ծոե՞ր ի, տոպոթորե՞ր ի, ի՞նչ էլեր ի: Քոյ, ինչի՞ ըսկընտ կը բօռաս, անըսպեա:

—Ծէնտ կտրի՛, օռօսպի, էրկու կսան տաս տարէկան, տոխ, փէկուտ ախչիկ իր, մնացիր իր խօրտ տուն, տախտ կավիլիւր, խմոր կը կոծիր, քե տանօղ չկէր. օղորմի խողշաչենց խէրօյի խուկյուն, վոր ինոր ծուռ-քուռ, շիւ ինտն շողկոտ տղէն էկավ քե առեց. քո մէր քո դորդից մեռավ:

—Շուռն էլնես, տիւ քո տոխ ախչկան դորդն արա, վոր առնօղ չկա. տես ինչ էր, վոր Ղոնկօվի խմբօն էլ ինոր չառեց, գուռնաչի Գյոլնօյի տղէն, Անիգյոն, խըթխըթ, պաշօլ փոփոգյէօզի Սիմոն, ճապալէզի Մկօն, Դնդընչօյի Մանգօն, Պիտօն, Վոնգօն, Լօրէզի Ապրօն, կյօղ Մէլօն, կոճա Տովօն, Կորէծենց Ավօն հըմէն էլ ախչկատ փոնթ-փինա տրին, չխավնան, չառին. մկա նստեր ի տուն, չախրակ կը մանի, թոթ կը լցի, չուր իրիկուն կտխպի օռօսպու ծէնով խաղ կը կանչի: Տիրամօր յարէն ինի վերէտ, քըրքըրվես, պեյպիյվես, քոլխօդ պերանտ պապընձվի:

—Քոյ կնիկ, քո ասածն ի՞նչ ի, վոր տիւ աշխար յերկիր խառնիր ես իրոր: Էն կյինձ ինտն կարօս չուտես բոլքի, չօռ ինտն ղէհիր-զոմբորտ ուտես, խօրս խոցն ուտես, լեղի ճիւր խմես, բոլքի Կոյպրէլ խրիշտակի թուր վէր կըլխուտ էլնի, իտին թուշակին տրօտն չէլնես, շան պէս կըզմըզտաս, կչէլու պէս վոռնաս: Օրն էն օր էլնի, վոր մոմուռ յարէն ինի վերէտ, խատնես, փէտանաս, լէշտ տանեն՝ անժոմ անպատարաք խոռճըրկեն, գչէօնտդոր էլնես:

—Մեղայ Աստծու, խոկյիտ սատանի պոթին էլնի, կնիկ. ավար, սե կապեմ, էսա կնիկ կատղեր ի, տոպոթորեր ի, ծոեր ի. ծնու կնիկ, ասածտ ի՞նչի ի:

—Ծուռ տիւ յես, ծուռ քո կատղուկ կօվն ի:

—Իմ կօլ վոր ծուռ էլնի՝ կաթ չի տա, ինոր տված կաթ, մածուն, գչէօրէօմազտ շատ ես լիկ, տլտ ժոթիկ էլ ես շինե:

—Քո գչէօրէօմազտ կապոտ ճիւր ի:

— Խօ փութով չես առե, լօռ-լօռ տարիր ես, պըքսվիր ես շուն-
շունգյըլներացտ խետ:

— Պէրանտ վորտնի, Ականուց յարէն ինի քյո տայվիրեմ...
տիւ էն ես, վոր ջահէլ կյոխտ մարթուս հո աչկօվ կանիր...

— Տիւ էլ մեռնես, քյո թաղքայվուտ մարթն էլ վէրէտ, էն
խորոմ, թոթխար, մամուխիկ, կակուղտատա մարթըտ, վոր կի-
շեր-ցէրէկ Զողդի Լալօյի պէս կան կու կյո: Կնո՞ մարթուտ ասա
թօղ կյո մեր կօվու կույեր ժողվի, փթիր շինի, շլիի տանի Ղրո-
րուց մէյգան ծախի, յո էրթտ մտնի Սապունջոնց ծիթխաց տոռնա
մօղիկ, էրթտ Բարուշի փոգյոխ սրպի: Դէ առ քյե, կերմր, կըշ-
տացմր. շունս էլնես, տալովոր կոճէլ:

— Տիւ էլ կնո մարթուտ խրատ տուր, վոր չուր իրիկուն
Աջօյի մէյխանի տոճեմ թէօլընգյի շան պէս կան կու կյո, շար-
խօշ Ղիօյի խետ կոիվ կանի, խասկցմր, ախքայտ-խըպառտ չո՛ւն:

— Քյո կնիկ, խէրիքյ ի... չանէտ թիւլցտվ, դէ ջոյնում էլի
կնո, ավմր, սեմ կապեմ, էսա առնակային շուն ապրուկըվեր ի
վոտկերս՝ էլ պըռծնում չունի: Կնո՞, կնո, Գյոլհօյի սիրա-
կան...

— Թիւ քյո իրիսին, յօթ մարթու տէր, շան ցինած...

— Կնո՞, մէկ մօրէ, էրկու խօրէ, կնո. կրունգյըտ էսա դեխ,
թիւ... էրթուտ էլնի, կյուտ չէլնի, լակաշ լոքյոթո, սեմ սիրտ:
Ավմր, սեմ կապեմ, էսա կնիկ էլեր ի կեռթէ ծամոն՝ լավոստվեր
ի ճեղվերս: Ումուտամեռ, տիւ ախչիկ կյոխտ, գ'ոգյէօշ, ճաշ պե-
րանտ պաղուկ զտտ իր, տես թնչ իր, վոր Կյոռտօյի ճկոան
Մուխսին էլ քյե չառեց: Քյոյամամ... էսա թնչ պոն էր, քիչ մնաց
վոր սօլի թակ խանի ձիկ տփի: Արե՛, արե՛, ձիկ կե:

— Վոր խասա, էրկու մատկերս կը թալեմ պերանտ կը ճղեմ.
խերիքյ ի ձիկ կատըղցուցես հա...:

— Իմ կօվու ջուխտ կուտըշներ մտնեն՝ ջուխտ աչկերացտ
պսպեղ խանեն, խըժխըժո յարէն ինի վէրէտ. սիվտայ ճիււր պըռնի
աչկերտ, վոր տիւ էն անլեզու հոյվան կօվու խամար՝ խոկյիտ տը-
ժոխքյի պոժին արիր, պառտապան ֆնաս, կէծէլ կրակօվ վոռվես,
կրբէ կարասն ինես, վոր խոկյիս վոռիցիր: Անըսպե՛ռ, անըս-
կյոմ, շնխէր, դէ կնո կաց. թիւ, թիւ, թիւ...

Ուռիկ խաթիւն իրեքյ տիր էլ թքեց, էրկու ծեռնօվ ճիտ
խանեց, կարկըտնի բէօխչէն ժողվեց, կնոց տուն, անթրոց առեց,

ինգյով վէր էն հոյովան կովու ջանին, աղեյ նղրեց, տփեց, կա-
տիկ խաթիւնի փռոխք կովուց առեց՝ սիրտ խովցավ:

Գրտ. ուղղագրության վերածեց
Մելիքսեթ Տեր-Ղազարյան

5

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳ

Մեր տան իտե՛վ առտ կորընգյուն,
Ծեր տան իտե՛վ առտ կորընգյուն,
Ծիյանք ինե կը խըրխընջուն.
Խորտր տարէք տէկյէրկընգյուն,
Թօղ ծեռ զտնի վէր ուր ծնգյուն,
Թօղ պտըղտվի ծեռաց մըռջուն.
Ամէն մըռջուն չունձ պատընջուն.
Վազէլէ՛ր, Զույօ, վազէլէ՛ր.
Քյո տարօղի տունն ավիրէր:

Գրի առավ
Մելիքսեթ Տեր-Ղազարյան

6

ՅԱՆՑԱՌ ՊԱՌԱՎ

Կէլնի չէլնե, մէյ խատ ցանցառ պառավ կէլնի: Էսա պա-
ռավ հո դիւին կը տնի ուր լաճուն, կասի ձիկ մարդու տու:
Կիշեր ցէրէկ ծէն կիսկի կյըլէօխ՝ մարթ կուզի. Խեղճ լաճու ճար
վոր կը կտրվի, մօր կը տնի կօղով, կը տանի տիմացի սարի
կյըլէօխ կը տնի, կասի. «Մարէ, տիւ ըստեղ կաց, չու՛մ յես էր-
թում քե մարթ պիրեմ»: Մօր կը թօղնի սարի կյըլէօխ կէրթո:

Ծիւն-ծմեռ, վոչ մարթ կա, ոչ մտգոթ: Էսա ցանցառ պա-
ռավ կյտիւ-կյտիւ կէլնի կօղվի մէշ կը կայնի, ծեռ կը տնի ուր
ճայտին, կիրիշկա, կը տտռնա՝ ուրն ուր կասի.

—Ա՛խ չէկավ Կոզոր, չիպե խորտր. զոյի չէլով պուխնը
բողոռ: Ա՛խ ի՛նչ անեմ, վա՛խ ի՛նչ անեմ: Նո էկավ խունգյն
խինէն, նո էկավ կանաչ ճիւպէն. չէկավ Կոզոր, չիպե խորտր:

Շատ կիրիշկա թէ քիչ, մէկ էլ կտիսնա վոր տիմոցից քյո-
նի խատ լիս կէրէվա. կիմնո թէ փէսէն ի կուկյո. կուրախանա,
կէլնի մէկ առտվորով, կը կայնի կողվի մէշ, ալնախ կը խանի ջէ-
բից, կը պոնի ծեռ, կը բաշլայի խաղալ, խաղ կանչել:

—Գյօ էկավ Կոզոր, իպէ խորոր. զոյի էլով պուխնը բոզոռ:
էկան էկան ճրայներով, մոմերով էկան: Հոմ էկավ խուսնգյն խի-
նէն, հոմ էկավ կանաչ ճիւպէն: Չէկան չէկան, վոր էկան ճրաքյ-
ներով մոմերով էկան: Քյե մեռնեմ, Կոզոր, քյե խատնեմ, Կո-
զոր:

Տիւ մի ասե էտա ճրայներ անութի կյէլերաց պըսպըղուն
աչքերն են: Կյէլեր խոտ կառնեն, կուկյոն կը կընդենն խեղճ պառ-
վուն: Կը թափեն վէրէն, վորն վոտից, վորն խորվուց, վորն էլ
իւրիսից: Խեղճ պառավ կիմնո թէ ուր փէսացուն ի, վոր շատ ի
կարօցե. ուր կը սիրի: Կը թոնի, կը թըռվըռա կողվի պիւլիթի,
կասի:

—Ավաւր, քյո սեվ կապեմ, շատ սէր սէր ինքյ տիսե, քյե
պէս առակ չինքյ տիսե. Ավաւր, սեվ կապեմ, շատ պաքյ ինքյ
տիսե, քյե պէս առակ չինքյ տիսե...

էն կոնդոր պառավ կը թըռնի, կը ճըվճըվո, չուս կը խը-
լըսնի:

Վ. Պարտիզպանյան

7

ՎԱՆԵՑՈՑ ՊԱՐԵՐԳԸ

(Ժողովրդական)

Տօ լաօ (կրկնել ամեն մի տողից հետո).

Մեկ օր մենք ժողովանքյ կյոցինքյ մէկ
տեղ ուրախութեն.

Մեզնից մէկ վիրուց ասաց՝ իկէքյ չանենքյ
ողէկութեն.

էլենքյ իկին գյէօնդ ըմ պոնենքյ

գյէօնդ ըմ խաղանքյ խետ մեր քէֆին,

Կարմիր կյինին խետ ուր մոզին թօղ ֆոֆոա
մէշ գյէօվընդին,

Անուշ ի մեր խուրուղուն, քյախցր ի կյինին
քյախցր ի մոզէն,

Յերկրի կանանչ կանանչ խոտեր թող կօխկոտվեն
տայ մեր վոտին,
Վտրոկյու պէտ պէտ քյարեր թող զըմփզըմփան
խետ մեր ծէնին,
Յերկնուց անուշ ծէտ պէտ աստղեր
թող ճլվլան վէր մեր կյըլխուն,
էն լուսին, պանցրիկ լուսին թող փլփլա
վէր մեր խմփին:

Գրի առավ՝ Կայծոռիկ,
Հրտր. Բյուրակն, 1898 թ. էջ 558
(Մի քիչ բարեփոխելով վերածեցինք
գիտական ուղղագրության)

8

ՄՈՒՐԹՈՒԼԱ ԲԵՓ

Տըսնըմէկ տարեկան ի. վտրժտանից էկա տուն, խաց կէրա,
կնոցի չարշին՝ խօրս դիւքյան:

Խասա, տիսա խօրս, ուր տրիւց թորդի Ջաքորի Սարկյսի
դիւհնի օրթէն կյէտին ինգյուկ էր մէյ խատ առծըթից ճճ ազ-
լըդ, ծէրն էլ քյորբոր:

Վիրուցի, իրիշկացի, տվի խօրս:

Խէրս վիրուց, իրիշկաց, ասաց.

— Բալամ, Սարկյիս աղի մօտ էրկու քյիւրթ էկան, շըլվար
տվիցին կարել. նո՛ր կնոցին. ինոնց կէլնի. ա՛ռ, շոտ խասի, տուր
ինոնց:

Առի, վոզիցի, խասա, ժոճըվներ կտրիցի, տվի ինոնց:

Ինոնցից մէկ, վոր տվիլի ճճ էր, իրիշկաց վէր ուր փորին
փոթիւթիւկ շալի մէշ, իրիշկաց ուր ինգյորոշ աշիշ մէշ, քյըրթէ-
րէն խորբոր տվին մէյ մէկէլու խետ, ազլըզ վիրուցին, զիկ էլ
կյըրկիցին, պիրին խօրս կուշտ:

Խէրս մե տիսավ, ծծղաց:

Ճճ քյիւրթ զիկ իտիր կյէտին, խօրս թոմտոնդէ մ' թուկց,
մէյմէկէլու խետ մէյտոր քյըրթէրէն խորբոր տվին, ծծղացին,
զիկ էլըմ կյըրկեց, պաքյեց, ուզեց, կնոցին:

Ընցավ մէկ ամիս, քիւրթ մ' էկավ մեր տուն, մէյ նամայ
պիրեց, խետն էլ էրկու ճնշ բէօխշտ, մէկու մէջ Գյոթմիյան չա-
միչ, մէկէլին էլ Շոմգիրանա թիւթիւն:

Խէրս էլ ուր գեխէն իտոր տիմոց իտու(ր) էրկու խատ սըր-
մա փոշի, պիրօղին էլ մէյ խատ չուռ քյոզտխիկ:

Ըտըսկընտ չում մեր փախնէլու օր մեր ինտն ճնշ քյըրթու
տան մէջ պորեյմութեն անխախտ մընաց:

Ճնշ քյիւրթ Մուրթուլա բէյն էր:

Մանվէլ Կափլանյան

1948 թ. փետրվ. 22

9

ՍԱԽՈՅԻ ԵՐԳԸ

— Քյո սեվ սեվավոր մարէ,
Քյո տիւ սոտամեռ մարէ,
Ինչի՞ իմ տուն ավիրիցիր,
Իմ կտրիճ զիզնից խանիցիր:

— Քյո տիւ սեվ սեվավոր ախշիկ,
Քյո տիւ սոտապատառ ախշիկ,
Ինչի՞ քյո տուն ավիրիցիր,
Քյո կտրիճ քյեզնից խանիցիր:
Արե քե տամ Վոնտ խօջին.
Քյե տնի նըխշուն էօդէն.
Տայտ փռի բէօզ խալիչէն.
Ղուճեվտ պոնտ ջոֆոր բէօխշէն:

— Քյո սեվ սեվավոր մարէ,
Քյո տիւ սոտամեռ մարէ,
Յես ի՞նչ կանեմ Վոնտ իօջէն
Բէօզ խալիչէն, ջոֆոր բէօխշէն,
Խոզոր խօջո կուրբան կանեմ
Իմ Սախօյին ծակ քօլօղին,
Վոտաց չարխին, չարխի չըվին,

Թոթի թելին, քլընուկ փոյխին,
 Փոյխի կշտի նախրափէտին.
 Առատուն Սախօն էլնի կայնի,
 Նախրափէտ ուր ձեռն առնի,
 Հօ հօ յեզներ, բուլթ իզիկեր,
 Չունգյուլ էծեր, քօլիկ վորթկներ,
 Սախօն էլնի սարեր կան կյո,
 Սախօն էճնի ծոթեր կան կյո,
 Սախօն նստի տխպըրներաց,
 Քօլօզ տնգյի վէր քյարերաց.
 Սախօն քյաղի մէկիկ փնջիկ,
 Քօլզի պիւլնր բիթուն շարի,
 Իրիկուն մթնի, Սախօն տուն կյո.
 Բուլթի իմ աշկերաց քյուն կյո:

1948 թ. փետր. 27

Անգիր արածից գրի առաւ
 Սոֆիկ Աճառյան

Նույն երգը տպւած է Բյուրական հանգեսում (1898 թ. էջ 183), բայց չունի սրա գեղեցկությունը և բնականությունը:

10

ԼՕՆԴՕՆ ՈՒ ԿԱԿՕՆ

- Պորի լիս, Լօնդօն:
- Ասծու պորին, միճնէկ Կակօ:
- Ի՞նչ կա յերկիր, ի՞նչ չկա:
- Սկի, սիւտայ սիւլցեր ի,
 Ծաղիկ, ծաղկունք յ պուղտիւր են:
- Է՛լ ի՞նչ կա յերկիր:
- Տղա, ապա չես ասե, քյո խէր մեռեր ի:
- Տղա, էն ի՞նչիս թե մեռեր ի:
- Ապա ուռաւ էլուվ բորդուն:
 Պորոյցաւ էլուվ թուզի.
- Խատ մ' թօղեց, աշկեր չուեց,
 Վոտկեր փուեց:
- Է՛ւ պատարաք յ արթք:

- Ապա չարի՞նք:
- Ի՞նչ խփիցիք:
- Նվիկ, նվուկ, նվնվուկ, փշփշտուկ, խավըռծիլ:
- Ապա Վո՞վ էկավ կէրավ:
- Շաբթաչ, շաբմէր, շաբկնիկ,
Բիթուն բիլո թոփոն կէրան:
- Է՛, Աստված խոկոյին լիսսավորի:
Է՛, Է՛լ ինչ կա յերկիր:
- Տղա, ապա չե՞ս ասե, քչե փսակիցինք:
- Ապա էն թնչխ փսակիցիք, յես էնա յերկիր, կնիկ էնա
յերկիր, էն թնչխ փսակիցիք:
- Խակոյուցինք խփիցինք, մախաթ զորկիցինք դէօշ, ինչխ
դմբը առծաթ էլնի, տարանք վեր խօնջնին փսակիցինք պի-
րինք:
- Է՛, Աստված շնախավոր անի:
Տղա, Էլ ինչ կա յերկիր:
- Աչկտ լոս, լաճ մ'էլ էլուվ:
- Տղա յես էնա յերկիր, կնիկ էնա յերկիր. լաճ վո՞րտե-
ղից էլուվ:
- Խակոյուցինք խփիցինք, ըռէսի տղի խետ խեծկըռտ-
վըցուցինք, լաճ մէլուվ:
- Է՛, Աստված ուղուրօվ անի:
Աղեկ էլնի, կյըզրար էլնի, շըկըտար էլնի, բուզըրգյան
չէլնի, դորդ բուլո էլնի:

Նույն

11

ԱԼԷՔՍԱՆՈՍ

Կէլնի-չէլնե մէյ մարթ-կնիկ. ինոնց մէյխատ տղա կէլնի, անուն Ալէքսանոս, էտա տղի խամար շատ կուրախանան, յօթ օր, յօթ կիշեր ծնունթ կանեն: Էտա տղին կպախեն փոկ էօդի մէջ, մարթու չեն թօղնե ինոր մօտ, ինոր տիսնա, ինոր խետ խո-րոր տա: Ալէքսանոս կը պէտանա, կճճոնո, կտոռնա յօթ տա-րէկան: Ինոր կուտան վորժտուուն, վոր կորտուլ-կյըրել սօվրի, մարթ տոռնա: Տղին վորժտուուն տարօղ-պիրօղ ուրենց մշակն էր, վոր տղին պոն չէլնի, սուլումթ էրթու-կյո: Ըտըսկնտ պա-խիցին շախիցին չուր ճճոցավ, տոռցավ տըսնըվեց տարէկան:

Վոր ճճճոցով, խէր-մէր շատ ուրախցան, աղին նշան տրին, փսակիցին, յօթ օր՝ յօթ կիշեր խարսնիս արին: Խարսի անուռն Անտնէ էր: Խարս ինտն փէսին կփովեն յօթ տոնօվ ներս: Տղէն չէր ուզի փսայվի, կընգյտն կը քյընըցուցի, զինքյ աղօթք կանի չուժ կնիկ խորանթր կը քյընի. զինքյ կէլնի, յավաշ տոններ կը պոցի, կյողտիկ կը փախնի տնից: Վէր ճոմխին խալիվոր մ՝ ոսստ կուկյո: Ալէքսանոս շատ կխնթրի, ողորճոյ կանի վոր ուրենց խալըվներ փոխեն: Խալիվորու խալըվներ կխաշնի, կտոռնա պապիկ, խալիվորու կօռն էլ կպոնի ծեռ, կէրթո օտար աշխար: Ուր խէր-մէր որ կիմնտն, կուլտն կաղօթեն, ժոմ պատարաքյ կանեն, ախքյըտներաց օղորմութեն կուտան, վոր Աստված տճօղի ուրենց աղին կնդնեն: Համա ինչկանդոր կչորչըրվեն, պոն չէլնե:

Ալէքսանոս յօթ տարի կարիքութեն կը քյոշի, յօթ տարին վոր կընցընի, ախքյըտի խալով կխաշնի, խալիվորու կօռ կը պոնի ծեռ, մուրոս կը թօղնի, կուկյո ուրենց տուռն: Կուկյո կխասնի խօր տուն, տուռ կալփի: Մէր կասի խարսին.—«Քյո տես վճվ ի տուռ կալփի:»

Խարս կը վոզի դելս տուռ, կը խաոցուցի.

— Էտա վճվ ի:

Տղէն կասի.

— Ալէքսանոսն եմ, ծեր վորտին, յօթ տարի կարիքութեն կնոցի, մկա տոոցի եմ, իկիր եմ տուռն:

Խարս կիրիշկա, կտիսնա մէյ խալիվոր, ախքյըտի ճոթ խալըվներով, կվոզի, կխարոշ խոբոր կուտա:

Կխուր կասի.

— Վա՛յ իմ աչկեր կուրանա. չէլնի իմ Ալէքսանոսն ի. իմ էրազ կը կատարվի:

Կէլնի տուռ կպոնտ, կասի.

— Տիւ վճվ ես:

Տղէն կասի.

— Ալէքսանոսն եմ, ծեր վորտին:

Մէր կասի.

— Քյո ծէն իմ Ալէքսանոսի ծէն ի. քյո աչկեր ինոր կնըմանի. համա քյո նմուշ ինոր նմուշ չի:

Խոբոր կը տանեն խօր: Խէր կուկյո, աղին կը տիսնա, կասի.

— Վա՛յ իմ Ալէքսանոս:

Կիսասնի, տղին կը կյըրկի, կը պաքյի, Ալէքսանոսն էլ կասի,

— Յեա Ալէքսանոսն եմ, ծեր վորտին, յօթ տարի կնոցիր ի ծեր տնից, տոռցիր եմ պապիկ. իմ խօր անուռն Մարկյոր ի, իմ մօր անուռն Մարկյըրիա. իմ կնոջտ անուռն կույս Անանէ. յեա ծեր վորտին եմ:

Խէր-մէր կուրախնան. Ալէքսանոսին ախքըտներաց խեռ ներս կառնեն. համա չին ավատա, վոր ուրենց տղէն ի Կուզեն ինոր աղէյ պախեն շախեն, ախքըտներ բոխլնան, ինոր պոթին կխեն, ուսկըրներ ինոր կյըլխուն կը զտնեն: Ութ օր ըսկուն կը մնա, կը խիվընդնա: Թուխթ մագիդ կուզի, ուր կյըլխու կյոցած մէյ-մէկ կը կյըրի, թուխթ կը ծալի, կը տնի ուր ափան մէջ, կաղօթի Ասծուն, կը մեռնի:

Անանէն կեր կը պիրի, կը տիոնա վոր Ալէքսանոս մեռեր ի: Կէթո, ծնօղներաց խորտր կուտա. կուկյուն, կիրիշկան վոր աղորթ մեռեր ի. Թուխտն էլ կյըրե արե մէջ ուր ափան. համա վով կուկյո, ծեռ կուտա վոր ծեռ պտնա, ծեռ չպոցվե, չում կույս Անանէն կէրթո, ծեռ կուտա ծեռաց, ծեռ կը պոցվի: Թուխտ կը խանեն, կը պտնան, կը կտրտան, կը տիսնան աղորթ վոր ուրենց տղէն ի: Կուլտն կը սըքյան ուրենց վուրտուն, համա պտն պտնից ընցիր էր:

Տղի ջոնդուկ կը տանեն կը տնեն ժոմ, պատարաքյ կտնեն, առքյով-փառքյով կը թաղեն ուրենց վուրտուն:

29 փետր. 1948 թ.

Երևան

Պատմեց Աղավնի Շիրակյան

Դրի տոալ գոցենա Մերոբ Պողոսյան

12

ՔԱՌՅԱԿՆԵՐ

(Ժողովրդական)

Կյինու պոզիկ. արաղի փոռչ,

Առնեմ նստեմ փէսիս տառճ.

Լի՛ց տու(ր), խմեմ, զէօջանչ խաթիւն,

Թէ՞ տիւ կասիր՝ յեփ կյոս մեր տուն,

Մեղր, շոքյոր, գոգի կըթիւն.

Ապա յես ի՞նչիս ուտեմ՝ անժուռ թթիւն.
Կըտոր մ' սըխտոր տո՛ւր վէր կըլլսուն,

* * *

Շէն կէնէր («կենար») իմ խէրանց տուն,
Կար-կանաչ, խոզոր պորին.
Քյոմբոխ անեմ իմ կէսրանց տուն,
Շօր-միս, թթիւ կյինին:

* * *

Օղորմի անիշատակ պառվուն,
Կնոց նստավ յօթ ճոմխի օրթէն
Քյար քյաղեց, ավազ մաղեց,
Չուզեց ուր առքյավութեն,
Մեխքյերաց թօղութեն,
Ուզեց թախքյուկ ծամերաց ինուն
Քառնուկ կաժերաց իստկութեն:
(Ասվում է թելի խճճված կաժը կծկելիս):

Գրի առավ՝

Մելիքսեթ Տեր-Ղազարյան

1948 թ. մարտի 7
Երևան

13

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

Բըլբիւն ասաց կուրբի խավքյուն.
«Ընչի՞» կուլտս կուց կուց արուն.
Ապա ի՞նչ անեմ խետ իմ սէֆիլ ծէթիկ ծոքյերաց.
Պորէօվ կպոցվի կուկյո կյորիւն:
Յես քյե կառնեմ վէր իմ սինտմ թեվերաց,
Քանեմ տընեմ վէր էն պանցրիկ սարերաց.
Տուռ կպոնտմ դելս հարավ քյամուն,
Կուտ կուտամ վէր էն պանցրիկ սարերաց.
Ճիւր կուտամ վէր էն պաղ տխպըրներաց:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

Հիւսիւն, լիւսիւն, սըփ խաչա լիւսիւն,
 Պիւղծարար վէր տըսնըխընդյին,
 Մէկ խօրօտ բլբուլ էճով իմ խէրանց իկյին,
 Պահ իտիր մէջ վտրթընոցին,
 Իրեք ըրտնդ տտունիկ խաղ ասաց,
 Իրեք ըյն էլ իմ սէֆիլ կարիբին:
 Կարիբ, քյո կարիբութեն շատ չտթին էր էն
 տոճին տարին,
 Թէ նուշ ուտի թէ շտքյոր,
 Սիրտս սեւ էր, իրեսս տեղին,
 Թէ ալ խայնի թէ կումաշ,
 Սիրտս սեւ էր, իրեսս տեղին:

ՊԱՆԴՈՒԽՏ ՄԱՐԴԸ ԵՎ ԻՒՐ ԿԻՆՐ

Մարդ.— Սրտիկ, ինչ անեմ, սրտիկ, խե քյե չէլո խուն.
 Կիշեր կյտնդլըտվոր, ցէրէյ(կ) վիրավոր.
 Յօթ տիր ստֆոր եմ աբե,
 Մէկ էլ կանեմ հոյտը ստֆորի.
 Շամ կուզես՝ քյե կութնի պիրեմ,
 Կութնի կուզես՝ քյե շամ պիրեմ,
 Քյէօշկ կուզես՝ քյե քյէօշկ շինեմ,
 Հոյտբա քյե ջըզմտ ճամխեմ՝
 Վոսկի նալէքյն ի վէրէն.
 Հոյտբա քյե քյոմտոր ճամխեմ՝
 Վոսկի պոլնիսնը վէրէն:

Ին.— Ի՞նչ անեմ քյո կութնի շամէն,
 Ի՞նչ անեմ քյո քյէօշկը-սարէն,
 Ի՞նչ անեմ քյո քյոմտոր ջըզմէն.

Միրոս ի սեւ, իրեւըս տեղին,
 Ծեռս ի ծոցս, ամփոյս իրիսիս,
 Խացս ի խարամ, ճիւրս ի լեզի:
 — Պանցրիկ սարեր, ցածրացէք,
 Գյուացող կյետեր, տոտրեցէք
 Իմ կարիքի ճամբսի մօտ արէք
 Իմ կարիք շոտ ուր տեղ խասուցէք:
 — Կարիք, էն ճամբոյս, ինչ տիւ կը քշէիս,
 Քյար քյաղած, ավազնը մաղած էյնի.
 Էն տխպիւր, ինչ տիւ ճիւր կը խմես,
 Պնզ վոսկի, պնզկալն ապէկի.
 Էն քյաղաք, վոր տիւ կը մըտնես,
 Կյըրէօղի դոֆթոր չը կյըրվես.
 Էն տուն, որ տիւ կը նըստես,
 Տեղ վորթ, պիւլնրն ըռտն.
 Էն շուկէն, վոր տիւ կը մըտնես,
 Հըմէն կայնեն, տիւ նըստես,
 Էն բողոս, ինչ տիւ կանես,
 Թանգյ ծախես, էժտն վըճարես.
 — Պտն կէր, պտներս թօղիցի
 Ծիւր տըրի ծամերս լըվոցի,
 Սիւրտահին կյինի լըցիցի,
 Բոգիէն արաղ լըցիցի,
 Տիմոց իրկանս կընոցի:
 — Չարկամս տէմս առեց.
 — Դո՞ր կէրթոս, ասաց, քյո իրիյն ի մեռե,
 Իրկանտ արնոտ շապիքյն եմ պիրե.—
 Վոտնիյս առեց էն տապան քյարին,
 Կոտրավ սիւրտահին, թոփով էն նըռան կյինին:
 Քյո տուն ավիրի, չարկամ, քյո տուռ փոյվի,
 Քյո տուն մէջ տապան քյարին,
 Քյո տուռ պիտէր տիմոց կյըրէօղին.
 Կյըրէօղ քյո տուն մըտնէր, քյո ծէթ-պէտ խորտէր.
 — Քյո տուն շէն կէնա, պորէկամ,
 Տիւ բոխտըվոր էլնես, պորէկամ,
 Խորտր առի քյեզնից, պորէկամ.

Նորոթա սար նըրոթ կը վողէր,
Պըռկներտ շաքյոր կը մաղէր:
— Ըռհոն մինգրներ խըրխըրիցի,
Կազիֆա պոռոցեր տըրիցի,
Վէր իրկանս էրտսին կընոցի:

Մարդ. — Էն վա՛վ ի վէր էրտըսին,
Կանաչ լալէն իրիսին.
Անթառամ ծաղիկ ես կյուլիւ,
Պալասան ծաղիկ ես կնուլիւ:

Գին. — Վոչ անթառամ ծաղիկ եմ կյուլիւ.
Վոչ պալասան ծաղիկ եմ կնուլիւ:
Իկիր եմ վէր քյո էրտըսին պո՛ն տնելու,
Ցէրէկ ել՝ մուտ անելու,
Գիշեր քյո ծոց պառկելու:
Նըստա ըռհընօվ քյե խօվ արիցի,
Վորթէօվ քյըռտիհյո ժողվիցի.
Ետ ձիկ ան քյո ծոց անուշ քյուն,
Ետ ձիկ իզին տո՛ւ էրթում իմ խօր տուն:

Մարդ. — Վոչ քյե կառնեմ իմ ծոց անուշ քյուն,
Վոչ իզին կուտամ էրթոս քյո խօր տուն:
Քյե կը պախեմ սախում էրէրում,
Չում կյո լիսին առավուտուն.
Բոժնէօվ քյե սանասար կըտրեմ,
Քյե խըզմոքյոր պրոնեմ,
Քյե պողնիս ճամխեմ:

Տ. Նավասարդյան, Հայ ժողովրդական
հեքիաթներ, հտ. 2, 1890, էջ 99—101

Գիտ. ուղղագրության վերածեց՝
Մելիքսեթ Տեր-Ղազարյան

ԼԱՃ Ի ՊԻՐԵ, ԼԱՃ

Լաճու մօր տարեք արտեր,
Ռեհան քյադի, վորթ խոտոտա,
Լաճ ի պիրե, լաճ:

Ախչկա մօր տարեք արտեր,
Սոխ քյախընքի քիթ կծկծա,
Քյաժ ի պիրե քյաժ:

Լաճու մօր քյահլան ձիանք,
Խետն ել ջորի, էրթա խէրանց,
Լաճ ի պիրե, լաճ:

Ախչկա մօր գոռո իշանք
Թող պոչ չըլնի, վրէն ծծղանք,
Քյաժ ի պիրե, քյաժ:

Լաճու մօր շաքրէ շարբաթ
Տվէք խմի, սիրտ քյախցրանա,
Լաճ ի պիրե, լաճ:

Ախչկա մօր սիմնդէ վոիկ,
Էփէք ուտի, թող խամ չըլնի,
Թող խոտ չլնի,
Քյաժ ի պիրե, քյաժ:

Լաճու մօր սյովան օթախ, պատեր չիւնի,
Թող մէչ քյըլնի, թող խով ըլնի,
Լաճ ի պիրե, լաճ:

Ախչկա մօր տարեք փակյախ,
Պատեր կու ի, թող մէչ քյըլնի,
Քյաժ ի պիրե, քյաժ:

Էմինյան Ազգ. ժող. հտ. 2, էջ 158
(Սարգիս Հայկունու հավաքածոյից)

ԺՈՂՈՎԴԴԱԿԱՆ

Ինգյա թաղէ թաղ աղչէմ ձարիցի,
 Տվի թաբաղէմ թղթիկ առիցի,
 Աչքիս արտըսունք թանաք արիցի,
 Շողշողուն մատկերս կալամ արիցի,
 Սրտիս դարդեր դափթար արիցի,
 Ստամբէօլ քյաղաք չօրէօխկիցի.
 Կարիպն ի նստեր վէր օտար փուղցին,
 Կարիպն ախ կանի իւր խօր խէրանին:

Կանչեմ ջան արե,
 Սարեր լացուցեմ,
 Շատ կարիք կուրբաթ
 Զամխէն դարցուցեմ:

Ինչի՞ կուլաս կուց կուց արուն,
 Թէ՞ գէօ իրե պարի կարուն,
 Քյե կառնեմ վէր իմ թեվերուն,
 Կը թռնեմ վէր պանցրիկ սարերուն,
 Պահ կը տնեմ մէջ քյարերուն,
 Էրդիս կը պանամ դէմ խով քյամուն,
 Տուռ կը պանամ կարիւրներուն,
 Կարիւրիս մեռնեմ իւր ճամխըներուն:

Կանչեմ ջան արե,
 Սարեր լացուցեմ,
 Շատ կարիք կուրբաթ
 Զամխէն տարցուցեմ:

Ծովուն խաֆքըմ կէր, անուն էր արոր,
 Վզիկն էր էրկէն, սրտիկն սեվավոր,
 Կապեմ բէշարէն¹ էրթամ խետ ինոր,
 Էն իմ դարդ կիտէր ես էլ գէօ ինոր:

¹) Լաստափայտ:

Բօստան էմ տրեր վէր էնա տարին,
Ձէլավ մէկ շամամ էօրէօխկեմ յարին,
Աստված շէն պախեր էս տարվան տարին,
Ձէլավ մէկ շամամ էօրէօխկեմ յարին.
Շամամ թօռօմավ, իմ յար խոռվավ:

Արե, յար, արե,
Խոռվ մի' մնա,
Աստըվորիս մալ
Ծի քյե չի մնա:

Բախչէմ եմ տնկեր թիւրէն իւրմէնէն,
Աստված ծի չիտուր, շիւքր եմ իւրմէնէն.
Բախչէմ եմ ցաներ, սադա բիւքար ի,
Իմ յարոչս մեռնեմ թաժա նուրար ի.
Աժուժ եմ ցաներ, սադա ասմայ ի
Իմ յարոչս մեռնեմ կլօխ յազմայ ի
Խէրիկս էր խօվիվ, ախպէրս կառնարած.
Կարիբիս մեռնեմ իւր ճամխընեւադ:

Կանչեմ յար արե,
Խոռվ մի' մնա,
Աստըվորիս մալ
Ծի քյե չի մնա:

Բախչէմ եմ տնկեր վորթ խազար թավուր,
Մէչ հմեն վորթին իմ վորթին էր քաֆուր,
Շահ բլբիւն իջավ վէր իմ վորթին խուր,
Լէզուս քյե կինի, սիրտս քյե խուրուվու,
Աչքերդ ի թուխ թուխ քնքվերդ փէրիշան
Իմ մատի մատնիկ կուտամ քյե նշան.
Որ չես ազատար գէօհան սուրբ նշան,
Թարթըփներտ ի կըռընկու ճիվան:

Արե յար արե,
Խոռվ մի' կենա,

Աստըվորիս մալ
Ծի քյե չի մնա:

Էլանք ավզընոց¹, ավզէն ճուր կուկէր,
Քյաֆուր վորթ պացվե անուշ խոտ կուկէր,
Արե՛ յար արե մեր պակի մօտէն
Մեր պակն ի լցվե քյո անուշ խոտէն,
Ես նռան կիւնի, դու անուշ քյասա,
Տիւ լից, տիւ խմի քյո դարդ ծի ասա,
Անչանք կանչեմ սարեր լացուցեմ
Շատ կարիր կուրբաթ ճամխէն տարցուցեմ:

Արե յար արե
Խոզ մի՛ մնա,
Աստըվորիս մալ
Ծի քյե չի մնա:

Էրէկ էվարին² վէր Կեմայ դարին
Թվանքյով զարկին բրինգար արին,
Խարբիկ մ տարէք իմ նազլու յարին,
Առնի տեղ-դարման կյա վէր իւր յարին:
Էրէկ էվարին ոչխար վէր պէրին,
Կթեմ թուխ մաքին, լցեմ սուրահին,
Էօրէօխկեմ յարին:

Կանչեմ յար արե,
Խոզ մի՛ կենա,
Աստըվորիս մալ
Ծի քյե չի մնա:

Էրկինքն ի ամբեր, կուկա մարմար ծիւն,
Կխալի կաթի վէր մալուլ մարթուն,
Մեկ Էս եմ մալուլ, թէ աշխարհս բիթուն,
Էսօրն ի ամբեր կուկա անձրե ու ծիւն,

¹) Ավազուտ վայր.

²) Երեւելէն.

Ախ, երբ կէլնի որ իմ յար կյա մեր տուն,
էսօր ինչ օր ի. ուրպաթ ու պախս ի
Ճոռաւորմ յար ունեմ տէլ նորախարս ի.
Խորած վարդապետ կասի շխասս ի:

Կանչէմ յար արե,
Խոօվ մի՛ մնա,
Աստըվորիս մալ
Ծի քյե չի մնա:

Տեր Սարգսյանց, Պանդուխտ
վանցին, էջ 85—89.

18

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐ՝

* * *

Մտեր ես իգին խաւող կը քաղես,
Շամամ ծըծւերովդ շաքար կը մաղես,
Շող շող մատներովդ մարգրիտ կը շարես,
Թուխ թուխ աչքերովդ ձիկ ել կը խապես,
Ալմաստ խանչըլով սրտիյս կը դաղես:
Աչքերդ ի թուխ թուխ, քնքերդ փարիշան,
Հստանըթօլ ոսկիմ կուտամ քե նշան:

* * *

Ախչիյ նազերով, քալաշ ծամերով,
Ծամերտ իստըկեմ սըրմայ թելերով:
Ախչիկ, տիւ քելի, ես անեմ ոտիկ,

1) Այս և հետագա բոլոր նմուշներում սլահաւանդում է աղբյուրների
ուղղագրութիւնը: Խմբ.:

էրկուսս գիրկը ծոց մէջ փալախոտին,
 Ես պառկեմ քոյ ծոց մէջ նշխուն էօդին:
 Ախչիկ, տիւ քելի, քոյ ճանբախ նեղ ի,
 Էրկու ծըծեկացդ մէջ քնու տեղ ի.
 Աբի թէ պաքի՝ անխալել մեղր էր,
 Որ էն մեղր խալէր՝ իմ դարդին տեղ էր:

* * *

Ախչիկ, քոյ գլէօխ արծըթէ թաս ի,
 Ծօ տղայ, քոյ գլէօխ սըրմալի ֆասս ի,
 Խորած վարդապետ կասի չըխասս ի,
 Թէ խաս, թէ չըխաս՝ մօ ձիյ կաբիւլ ի:

* * *

Ծըծեերտ կողնձե՝ ես ասի ծուռ էր,
 Խորած վարդապետ կասէր թէ ծուռ էր,
 Թէ ծուռ, թե խասուն մօ ձիյ կաբիւլ էր:

Ախչիկ, ախչիկ, աղօշի,
 Քոյ պաք խաղար կուռուշի,
 Քոյ պաք հարքաշին մի՛ տայ,
 Քոյ պաք կէրթայ կուրիսի:

Տ. Նավասարդյան, Հայ յողովրդական հեքիաթներ, հտ. Զ,
 1890, էջ 102—103

19

ԳԷՕՎԱՆԻ

(Պարերգ վասպուրականի գավառաբարբառով)

Աշըղ նստե սազ կանի,
 Բլբիւլ վարդից հազ կանի,
 Իմ եար չի գայ նազ կանի
 Վեր իմ սրտին խազ կանի:

Բլբիւլ վարդին ի կաթօտ
Իմ նշխուն հարն ի խօրօտ
Խօրօտ հարս առնեմ էրթամ
Նստեմ վարդի թփի մօտ:

Աստղերն անուշ փէլք կուտան
Խօրօտ հարիս վէլք կուտան,
Եարիս ուզող ի իկե,
Պառցուցէք էն վիճր կուտան:

Եար չի քնե արթուն ի
Թշի վէրէն վարդ ունի.
Չը քնելուն սարար կայ
Սրտի վէրէն դարդ ունի:

Սարեր սմբիւլ ի պիւսե
Իմ հարն կարգալ ի ուսե
Նստե նամայ կը գրի,
Ախ... դարտերս կը քրքրի:

Տնդող տալով գետ կուգայ,
Իմ հար էն վիճր խեւ կուգայ
Ախ... հարալու իմ սրտից
Արընգետ փոթե կուգայ:

Էկաւ անուշիկ գեարիւն,
Իմ հարն ի շատ քաղցրարուն
Եար աչքով, ունքով կանի
Ախ... գիկ ձեռաց կտանի:

Եար, ծիյներդ մարմար թախթ ի,
Արքավութեն դրախտ ի
Էրանեկ քե տանողին,
Մէնակ մէրի՞կս քէբախտ ի:

Եար լիւսնկի խեւ քեոր ի,
Կանաչուկ ծաղկի ձեոր ի,

Արտամտու խնձեռքի,
Բռնախոզի մեղքը կը ծորի:

Միբան խասե, նոր բարի.
Նարոջ պաքը նուբարի.
Կարմիր թշեր թէ կըծեմ՝
Սրտիս խոցեր կը խըմրի:

Իմ եար սարերաց լեռքի,
Իրիսները պիւլեռքի,
Ինեմ սար-քար փնդըռեմ
Խենք էնոր պեսն էն դեռ՞քի:

Իմ եարն ի բըտրի լիւսին,
Էրկընուց անուշ լիւսին,
Արի՛, թառի իմ ուռին՝
Էրթանք ման գեանք միասին:

Թռի, թռի մօտ արի,
Ջանիդ մեռնեմ շուտ արի,
Ալւան-ալւան ծաղիկներ
Սրտիդ վէրէն զարկ, արի:

Արտամըտու կարմըրիկ
Խնձեռքը կը խօտոտաս,
Էյ խօբօտի տիւ աղջիկ,
Ասա էն վի՞ր պիտի տաս:

Ասա իւծնեմ կարմիր ձին,
Սարեր, ձորեր ես շուռ տամ,
Իմ եարոջ սիրտ գողցողի
Սեւ սիրտ՝ գէլու բաժին տամ:

Արար աշխար էկա ման,
Նար չը կնտա քո նման
Իմ եար սարերաց Զէհրան՝
Աշխար թափեր ի սէյրան:

Ուռի ծառը զով կանի,
Վէրէտ անուշ հով կանի,
Էն սարերաց զով քեամի՜ն՝
Ծամերդ առե կը տանի:

Բաժ-պուսուլդ ի ձեւաւոր,
Սիրտս արիւր սեւաւոր.
Եար ջան, եր որ պայտենք
Արեւ կանենք մե քեաւոր:

Էրթամ Վարաք ուխտ անեմ,
Քե ասողերով թուղթ անեմ,
Թշէդ ջուխտայմ՝ պաք առնեմ,
Ձեռնէդ բռնեմ տուն տանեմ:

Աղօթբանի շողերով
Բէօշակներաց տակ կէճնես,
Անուշ, անմախ խոտերով՝
Ուշքըս գլխուցս կը տանես.

Տառցի, էրթանք Բէօշակներ,
Գնէրպիւկից փունջ կապեմ,
Գնէրպիւկից փունջ կապեմ,
Քո մարմար տէօշ զարտըրեմ:

Եար ջան խասանք Էդէստար,
Տափեմ սրտիդ սուսուժար
Գլէօխ գլխի տանք խաբար,
Քանի խաւաթ ի դար-բար:

Չինարի բաժիդ մեռնեմ
Եար, ըստեղծողիդ մեռնեմ,
Տիւ վաթանիս ծաղիյն ես
Վաթանիդ խողին մեռնեմ:

Եար, քաֆուր վարդի փունջ ես,
Ես կը պօռամ, տիւ մունջ ես,

Տոռ կը տփեմ չես պանա,
Տնիկս կանես վէրանա:

Փախար էլար վերին տար,
Կաքըններաց պեոն մտար,
Կաքըններաց պեոն մտար
Սիրտս արիր բրինտար:

Ուռենու տակ ման կուգաս
Առուի ափը եան կուգաս,
Տիւն հազարան բլբլիւն
Դնդընալէն տուն կուտան:

Առուի ափը նստեր ես,
Կլոր բլակ քշտեր ես
Կլոր բլակ քշտեր ես,
Կը լուսս քեո լիւս իրես:

Կայներ ես դեխ աղօթրան,
Իրեսըդ խաչ կը խանես,
Մարալ տիսուտ եմ հեյրան
Ներիք ի զիկ խաչ խանես:

Ախ... եարալու խաւք եմ ես,
Անսիրտ եարոջ խաղքն եմ ես.
Փշի վէրա եմ թառե,
Դէլ եարոջ խամ չեմ առե:

Էրթամ եարքս փընտոհմ,
Գնէրպիւկի փնջի մէջ,
Բըլբիւլ դառնամ ու կանչեմ՝
Կարմիր վարդի թփին մէջ:

Ձմեռն եկաւ պիւք արաց,
Բըլբիւլն ինգաւ սուք արաց.
Իմ եար անսիրտ՝ անաստուած՝
Դարդիս հիչ դարման չարաց:

Հայկ Տեկանց

«Գեղարվեստ», 1917, № 6, էջ 198—199

ՅԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ ԿՆՈՋ

Մաշտե՛մ իբրկս մկայ տո՛ր ի¹,
 Ո՞ր խանի քունջ² կծկուերի,
 Ուր³ խեղճ կնիկ միտ կը բերի՞,
 Թէ ջիբ ջիբ⁴ ան զիկ⁵ մոռցերի:

Գիշեր չուր⁶ լոս ես ինքն ապով⁷
 Կ'ուլամ. կուրցամ աչքերս լալով,
 Ոռպեղերու⁸ պէս նստելով՝
 Կ'ընցունեմ օրս ան ու ցաւով...

Տարին անցաւ թուղթ չի գրէյ⁹
 Լոկ բարեւէն զրկեր ի մէյ¹⁰.
 Ի՞նչ չար պերան զիկ անիծեյ¹¹
 Որ Վարդան ուր¹² Սրբիկ մոռցեյ¹³

Յիսուսի սէր կը սիրես Վարդան
 Դառցի՛ արէ՛¹⁴ Վան վեր քո տան,
 Խեղճ Սրբեկէզ լաց ու շիւան¹⁵
 Սրբի, ըստէ՛ տիւր գերեզման:

Թէ որ չիգաս՝ ես ցաւերով
 Կը մեռնիմ, կը ծածկեն սև հողերով.
 Ի՞նչ շահ որ դիւ առանց Սրբիկ
 Խեղճ կ'ելնես քո ճիծ պծերով¹⁷:

«Մեղոս», 1863, էջ 21

¹ Արդյոք երեկս հիմա ո՛ւր է:— ² Անկյունը:— ³ յուր:— ⁴ բոլորովին:—
⁵ զիս:— ⁶ մինչև:— ⁷ համար, վասն:— ⁸ օրբեայրի:— ⁹ գրեց:— ¹⁰ մեզ:—
¹¹ անիծեց:— ¹² յուր:— ¹³ մոռցավ:— ¹⁴ ե՛կ:— ¹⁵ սուգը:— ¹⁶ հետո:— ¹⁷ աղաք-
 ներով:

Մի նմուշ Վանա բարբառից

Յիսուսի Քրիստոսի ծառայ քոյ ծնող մօրից, քոյ տան անտիւորից, Մանուշակից, Շուշանից, Միկոյից, Գինավարդից, նորակթիթ Տիգրանից—իմ էրկու աչքի լոս որդի Մխթարին: Որդի, քոյ ոտաց մատաղ էլնիմ, գիւ գեճը ես, չէլնի հիւանդ ես, էս ութ շաբաթ կէլնի որ քեզնից թուղթ չենք առե. մեր ըստեղաց ցաւ մե հէրիք չի, գիշեր ցերեկ էլ արտսունք կըթափենք, կ'ասենք մաշտենք ի՞նչիս ի մեր յուս և ապաւէն Մըխթար ջան: Մեր լեզին կըկտորի եք քոյ թուղթն անգլննայ: Մէկ դիւ իր մընացե մեր ապաւէն, գիւ էլ քոյ ոտով գնացիր կուրիսար վէր մե: Մէր մեռնի արիւռուդ:

Հոգիս էլնի, բենիցդ կտրած չորս մանէթն առինք, չորս շաբաթ ինորով քաջքիցինք: Էլ բան չէր մնացե որ ծախի, տի հացի: Տղէյներաց լաց ու կոծից տրկցներն իմցան. գնացին թաղականին ասին, գիշրով գաղտիկ մէկ ջվալ ալիւր, քիչ մ'էլ վառելիս, էրկու նուկաչափ էլ եղ ժողուիցին բերին, ըսկուն ինչ կրակ լցին վէր գլխուս: Չուժ հէրու ես օրական տասն աղքտի հաց կուտի, մկայ էնտեղ հասանք որ թաղական մե հաց տայ: Սև շիւարի թաղական—թաղական ո՞ր մէկին տայ, ո՞րտեղից տայ: Ահա գէօ էն էլ խըլըսաւ, ի՞նչ պիտի անեմ էնա ձէթկիկ ձագերաց հետ—չեմ գիտե, Աստուած ինոնց ձէն լսի: Անուշ բաներից վաղուց ձեռ քաշեր են, ցամաք հաց էլ չէլնի ի՞նչիս կէլնի, դէ դիւ ասա: Ես քոյ կանաչ կտրիճ ժուս կուճոփ էլած աղբէրներ մոռցեր եմ, մկայ իսոնց դարդ եմ ինկե, կ'իրիցեմ, կըմրկեմ, ձեռս ճար չկայ:

Որդի, մէր մեռնի ոտացդ. աչքի տե Ստամբէօլն աղէյցեր ի գնա էնտեղ, էլմ էնտեղն աղէկ ի, մեզնից զատանալուն զատացեր ես, պալթի ճար մ'անես: Գէօ կ'ասես Էդա տեղ չուժ կէս գիշրին կը բանես. Զէօրէօվ ամսական երկու մանէթ կը կըտրես բենիցդ: Դէ ես չէ դիւ, որդի, ամսական էրկու մանէթով եօթ հոգի ի՞նչիս կերակլեմ, թողդ հալաւ, հագեստ, կրակ-ճրագ:

Շատ բարեւ քո տանանտիւորից իմ գլխավորին: Աստծու սիրուն, ինչ կ'անես արա, օրմ շոտ թող արե վէր քոյ տան տեղաց: Ես մշայ, իրիցայ: Էլ չեմ կանայ քաշե: Տիգրան աստծու օր ձիկ կը ծըվրթի, կ'ասի՝ գնա իմ հայրիկ բե, էն ձիկ հա անուշ զատ կի բիրէր, դու չես բիրե: Ճոչերն, ասենք, հասկցեր են մեր սե հալ, պսկտներն իսկի խօսք չեն հասկնայ: Գոյ ձեռ պաքեմ, օրմ շոտ արե, չում ե՞ր աչկենք, ե՞ր պիտի լոս բացուի վեր մե: Ա՛խ, էս ի՞նչ սե խաւար էր, որ էկաւ վեր մէ, մեր դուռ փակեց, մեր տուն աւերեց: Իսկի չէ դիւ աղէկ էլնիր, մեկ էլ մարմնաւոր աչքով մէյմէկու տիսնինք, քո տղէյներն էլ ուրախնին: Ա՛խ, էրանեկ էն օր:

Սե տարուայ իրիկուն:

«Արձագանք», 1897, № 10, էջ 2

ԲԱՌԱՐԱՆ ՎԱՆԻ ԲԱՐԲԱՌԻ

Դրաբար	Վան	Մոկք	Ոգմի
